

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔԸ ԵՎ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՃԱՆԱԶՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ (22-23 ԱՊՐԻԼ 2025)

ISBN 978-9939-892-49-8



9 789939 892498

Երևան 2025

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ
ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔԸ ԵՎ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՃԱՆԱԶՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԸ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ

(22-23 ԱՊՐԻԼ, 2025)

ՄԵՍՐՈՊ ԱՐՔ. ԱՇԺԵԱՆ
ՄԱՏԵՆԱՇԱՐ
259



ARCH.MESROB ASHJIAN
BOOK SERIES
259

ԵՐԵՎԱՆ
2025

ՀՏԴ 94(479.25)(082)

ԳՄԴ 63.3(5Հ)Գ43

Հ 241

*Ժողովածուն հրատարակման է երաշխավորվել ՀՀ ԳԱԱ
Պատմության ինստիտուտի գիտական խորհրդի կողմից:*

*Խմբագիրներ՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ա. Մարուքյան
պ.գ.թ. Ա. Բաբլունյան*

Հայ ժողովրդի ազգային զարթոնքը և Հայոց ցեղասպանության
Հ 241 միջազգային ճանաչման գործընթացը. միջազգային գիտաժողովի
(22-23 ապրիլ 2025) նյութերի ժողովածու / Խմբ. Ա. Մարուքյան, Ա. Բաբլունյան.- Եր.: ՀՀ ԳԱԱ Պատմության ինստի-
տուտ, 2025.- 305 էջ:

*Հայ ժողովրդի ազգային զարթոնքը և Հայոց ցեղասպանության
միջազգային ճանաչման գործընթացը. միջազգային գիտաժողովի
22-23 ապրիլ 2025) նյութերի ժողովածու / Խմբ. պ.գ.դ., պրոֆեսոր
Ա. Մարուքյան, պ.գ.թ. Ա. Բաբլունյան/, Եր., ՀՀ ԳԱԱ Պատմության
ինստիտուտ, 2025, 301 էջ:*

«Հայ ժողովրդի ազգային զարթոնքը և Հայոց ցեղասպանության
միջազգային ճանաչման գործընթացը» միջազգային գիտաժողովի
նյութերի ժողովածուն (22–23 ապրիլի, 2025 թ.) ներառում է զեկու-
ցումներ և գիտական հոդվածներ, որոնք ներկայացնում են հայ Ազ-
գային զարթոնքի պատմական ուղին, ինչպես նաև Հայոց ցեղասպա-
նության ճանաչման և դատապարտման գործընթացը՝ միջազգային
իրավունքի, պատմագիտական, քաղաքագիտական և մշակութաբա-
նական տեսանկյուններից: Ժողովածուն կարևոր հարթակ է ներկա-
յացված թեմաների վերաբերյալ ակադեմիական քննարկումների,
ինչպես նաև ժամանակակից մարտահրավերների և խնդիրների վեր-
լուծության համար:

ՀՏԴ 94(479.25)(082)

ԳՄԴ 63.3(5Հ)Գ43

ISBN 978-9939-892-49-8

©Պատմության ինստիտուտ, 2025

Ավագ Հարությունյան
Հայաստան, պ.գ.թ., ՀԱԱ
avag.harutyunyan@yandex.ru

ԻՆՉՊԵՍ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆՇՎԵՑ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 50- ԱՄՅԱԿ

*Հիմնաքառեր*¹ Հայոց ցեղասպանություն, 50-ամյա տարելիցի միջոցառումներ, ցույցեր, Խորհրդային Հայաստան, Արցախի հիմնահարց, ԽՍՀՄ, Սփյուռք

Մուտք

1960-ական թվականները նշանավորեցին Խորհրդային Հայաստանի և ողջ աշխարհի հայության վերագարթոնքը, որի գագաթնակետը 1965 թ. Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցի համազգային ոգեկոչումն էր: Ի թիվս բազում ենթակայական և առարկայական խոչընդոտների՝ Խորհրդային Հայաստանում Հայոց ցեղասպանության 50-ամյակի ոգեկոչումը¹ կախված էր տիրող վարչա-հրամայական հասարակարգի դիմադրության հաղթահարման խնդրի հետ: ՀԽՍՀ կուսակցական-պետական ղեկավարությունից քաղաքական խիզախություն էր պահանջվում Մոսկվայից թույլտվություն ստանալու, իր իսկ ներսում գոյություն ունեցող ապագգային ընդդիմությունը չեզոքացնելու և Հայոց Ցեղասպանության 50-ամյակին բազմակողմանի նախապատրաստվելու համար:

Ի վերջո, առանձին բացառություններից և բնականաբար՝ հայրենադարձներից ու սասունցի-մշեցիների սերունդներից զատ, խորհրդահայությունը մեծամասամբ տեղյակ չէր մոտեցող տարե-

¹ Մանրամասն տե՛ս Հայոց Ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը (փաստաթղթերի և նյութերի ժողովածու), Եր., 2005: ՀԽՍՀ պաշտոնական ժամանակագրությունում, որտեղ իրադարձությունները ներկայացված են ամենօրյա կտրվածքով, 50-ամյակը մոռացության է մատնված: Տե՛ս Հայաստանի կոմունիստական կուսակցության պատմության համառոտ ժամանակագրություն, 1920-1980, Եր., 1981:

լիցի մասին, քանզի նրան տարիներ շարունակ միանգամայն այլ կերպ էին դաստիարակել: Եվ անգամ նման պայմաններում շուտով պարզվեց, ընդ որում՝ բոլորի համար զարմանալի կերպով, որ յուրաքանչյուր խորհրդահայ համակվել է Հայոց ցեղասպանության 50-ամյակի ոգեկոչմամբ, ուստի ամենայն պատվախնդրությամբ դառնում է խորհրդային մտածելակերպին անհարիր պայքարի մասնակիցը:

Յակով Ջարոբյանի ֆենոմենը

ՀԽՍՀ ղեկավարությունը՝ հանձինս ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յա. Ջարոբյանի, ի գորու եղավ հաղթահարել բոլոր դժվարությունները: Հարկ է նշել, որ Յա. Ջարոբյանը սեփական անձի և գերդաստանի ճակատագրով (1914 թ. գաղթել էր ծննդավայր Արդվինից և ոտքով Ռոստով հասել, ապա մինչև 1949 թ. Հայաստանից դուրս ապրել) զգացել էր Հայոց ցեղասպանության արհավիրքները: Ուստի, Խորհրդային Հայաստանի և անուղղակի նաև՝ սփյուռքահայության համար պատասխանատվություն ստանձնելով, նա կարողացավ ամբողջատիրական վարչակարգի պայմաններում առաջ քաշել և իրականություն դարձնել ակամայից՝ որոշակի հակախորհրդային երանգավորում ձեռք բերող համազգային միջոցառումները, որոնք արմատապես հեղաշրջեցին խորհրդահայության մտածելակերպը, ձևավորեցին միանգամայն նոր հոգեկերտվածք:

1960 թ. դեկտեմբերի 28-ից դառնալով ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար, Յա. Ջարոբյանն անմիջապես ձեռնամուխ եղավ ազգային ծրագրերի իրականացմանը: 1961 թ. սկզբին նա ՀԿԿ Կենտկոմի ազիտքարոզչական բաժնում ստեղծեց արտասահմանյան կապերի ենթաբաժինը՝ պահանջելով, որ վարիչ Կ. Դավլաբյանը երկու շաբաթը մեկ զեկուցի Սփյուռքի վիճակի մասին²: Այսինքն, արդեն 1961 թ.-ից Յա. Ջարոբյանը սկսել էր լրջորեն նախապատրաստվել Հայոց ցեղասպանության 50-ամյակի ոգեկոչման և Սփյուռքի հետ կապերի ամրապնդման գործին:

²Տե՛ս Դավլաբյան Կ., Հուշապատում, Եր., 1998, էջ 62:

1964 թ. ապրիլի 10-ին ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը «Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտե ստեղծելու մասին» որոշում ընդունեց: Միաժամանակ, համապատասխան պետական մարմիններին հրահանգվեց ըստ ամենայնի աջակցել և նպաստել նորաստեղծ հաստատության գործունեությանը³: Կոմիտեի ստեղծումը ոչ միայն պետական-կազմակերպական բարձրագույն հոգածության առարկա դարձրեց ոլորտը, այլև էապես ընդարձակեց և զարգացրեց Հայրենիք-Սփյուռք կապերը: Ընդամենը մի քանի տարվա ընթացքում կատարվեց հսկայական աշխատանք: Այսպես, եթե 1958 թ. կապ էր պահպանվում 23 երկրների 53 կազմակերպությունների հետ, ապա 1965 թ. սկզբին միայն կոմիտեի գծով կապ էր ձևավորվել 42 երկրի 860 կազմակերպության և անհատի հետ: 1965 թ. մարտի 2-ին ՀԿԿ Կենտկոմի նախագահությունն ընդունեց արտասահմանում հայրենակիցների հետ մշակութային կապերի ընդլայման միջոցառումների մասին որոշում⁴:

Պայքար Հայոց ցեղասպանության ոգեկոչման իրավունքի համար

1964 թ. հուլիսի 16-ին Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն Ծատուր Աղայանը, ՀԽՍՀ ԳԱ Արևելագիտության սեկտորի վարիչ Հովհաննես Ինճիկյանը և ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսության բաժնի վարիչի տեղակալ Ջոն Կիրակոսյանը նամակ հղեցին ՀԿԿ Կենտկոմին՝ ներկայացնելով «Արևմտյան Հայաստանում հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի միջոցառումների անցկացման մասին» միջոցառումների կազմակերպման ծրագիր⁵:

Արդեն 1964 թ. դեկտեմբերի 13-ին Յա. Զարոբյանը «1915 թվա-

³ Տես՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 42, թթ. 95-97: Կոմիտեի կանոնադրությունը ՀԿԿ կենտկոմի նախագահությունը հաստատեց 1964 թ. ապրիլի 28-ին: Տես ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 43, թ. 40: Նախարարների խորհուրդը 1964 թ. մայիսի 26-ին որոշում ընդունեց: Տես ՀԱԱ, ֆ. 113, ց. 94, գ. 191, թթ. 2-3; գ. 192, թ. 2:

⁴ Մանրամասն տես՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 7, թթ. 19-23:

⁵ Մանրամասն տես՝ նույն տեղում, ց. 44, գ. 54, թթ. 66-73:

կանին հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի առթիվ միջոցառումների մասին» նամակ հղեց ԽՄԿԿ Կենտկոմին, որտեղ հարցը ներկայացվեց հիմնավոր և պատմականորեն փաստարկված: Կարևորելով Սփյուռքի գոյությունը՝ հատկապես շեշտվում էր «հակահեղափոխական, ազգայնական Դաշնակցություն կուսակցությանը հակազդելու անհրաժեշտությունը» և ընդգծվում 200 հազար հայի հայրենադարձության փաստը: Միննույն ժամանակ շեշտվում էր Հայոց ցեղասպանության 50-ամյակի նշման գաղափարա-քաղաքական նշանակությունը, և եզրակացվում. «Նպատակահարմար ենք գտնում այդ տարեթվի 50-ամյակը նշել Խորհրդային Միության կոմունիստական կուսակցության լենինյան ազգային քաղաքականության լիակատար հաղթանակի, տնտեսության, մշակույթի, գիտության ոլորտներում վերածնված հայ ժողովրդի հսկայական ձեռքբերումների ցուցադրման նշանի ներքո: Այդ ամբողջ աշխատանքը պետք է իրականացվի այնպես, որպեսզի բացասաբար չազդի հարևան երկրների և մասնավորապես Թուրքիայի հետ ԽՍՀՄ փոխհարաբերության բարելավման քաղաքականության վրա և նպատակ հետապնդի, որ ժողովուրդների պատմության մեջ համանման ողբերգություն այլևս չկրկնվի»⁶:

Անշուշտ, այս գործընթացում կարևոր նշանակություն ունեցավ նաև Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի կոթող կառուցելու մասին ՀԿԿ Կենտկոմի նախագահության 1965 թ. փետրվարի 15-ի որոշումը⁷:

1965 թ. մարտի 9-ին ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը հաստատեց «Հայերի կոտորածի 50-ամյակի նախապատրաստման հետ կապված միջոցառումների» քարոզչական և գործնական աշխատանքի ծրագիրը⁸: Հայոց ցեղասպանության 50-ամյակին առնչվող յուրաքանչյուր հարց, մանավանդ, երբ այն վերաբերում էր գաղափարաքաղաքական կողմին, գտնվում էր հանրապե-

⁶ ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 54, թթ. 170-174:

⁷ Տես՝ նույն տեղում, ց. 45, գ. 6, թ. 171:

⁸ Տե՛ս նույն տեղում, գ. 18, թթ. 1-2, 4-5, 8-10:

տության ղեկավարության ուշադրության կենտրոնում: Օրինակ, 1965 թ. ապրիլի 23-ին ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը հաստատեց ՀԽՍՀ պետական տեսակետն արտահայտող պաշտոնական հոդվածը և հանդիսավոր նիստում Վ. Համբարձումյանի զեկուցումը⁹:

1965 թ. ապրիլի 24-ին Օպերայի և Բալետի թատրոնում տեղի ունեցավ «1915 թվականի և եղեռնի զոհերի հիշատակին նվիրված Երևան քաղաքի հասարակայնության ներկայացուցիչների ժողով», որին ներկա էր ՀԽՍՀ ամբողջ ղեկավարությունը և Վազգեն Ա. կաթողիկոսը: Արժե հիշատակել, որ ժողովին հնարավոր էր մասնակցել միայն ՀԿԿ Կենտկոմի տրամադրած հատուկ հրավիրատուսով: Ժողովը հակիրճ ճառով բացեց ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության նախագահ Նազուշ Հարությունյանը¹⁰: Ելույթներն ավարտվում էին խորհրդային ավանդույթին հարիր բուռն ծափահարությունով, իսկ ծրագրված համերգը չկայացավ միայն հավաքված ցուցարարների բողոքից հետո: Հասկանալի է, որ այս ժողովն ավելի շատ արդեն սովորական դարձած հանդիսավոր նիստ էր, քան սգո և ոգեկոչման երեկո: Սակայն, արդեն իսկ նման ժողովի գումարումը, երբ նման միջոցառումներն առանց բացառության կատարվում էին կոմունիստական տոների կամ հոբելյանների առիթով, անտարակույս ուներ կարևոր նշանակություն: Իր կազմակերպական թերություններով հանդերձ, այն ամբողջ ԽՍՀՄ-ում առաջին ոչ խորհրդային միջոցառումն էր՝ այն էլ զուտ ազգային թեմայով:

Միջոցառումներ և ցույցեր

1965 թ. ապրիլի 24-ին Երևանում տեղի ունեցան համազգային երթեր և հանրահավաքներ, որոնց մասնակցեցին տասնյակ հազարավոր հայորդիներ: Ցույցը սկսվեց առավոտյան ժամը 10-ին Լենինի հրապարակում, որի ընթացքում ելույթներ ունեցան ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Ա. Քոչինյանը, ԳԱ նախա-

⁹ Նույն տեղում, գ. 20, թ. 74:

¹⁰ «Սովետական Հայաստան», 1965, ապրիլի 25:

գահ Վ. Համբարձումյանը, ՀԿԿ Երևանի քաղկոմի քարտուղար Բ. Մուրադյանը, Գրողների միության նախագահ Էդ. Թոփչյանը, Ս. Խանգադյանը: Ցուցարարները ՀԽՍՀ ղեկավարությանը փոխանցեցին ԽՄԿԿ Կենտկոմին, ԽՍՀՄ Նախարարների խորհրդին և Գերագույն խորհրդի նախագահությանը հասցեագրված նամակ, որը պարունակում էր հետևյալ խնդրանքը՝ Հայկական ԽՍՀ-ին հանձնել Ղարաբաղը, Նախիջևանը և ԽՍՀՄ տարածքում հայերով բնակեցված պատմական հայկական հողերը: Այնուհետև ցուցարարները հավաքվեցին Օպերայի և Բալետի շենքի հրապարակում և նրանցից ավելի քան հարյուր հոգի ներս մտան շենք, որպեսզի ներկայացնեն իրենց պահանջները: Շենքում գտնվող կուսակցական-խորհրդային վերնախավը հեռացավ, և միայն Վազգեն Ա կաթողիկոսը փորձեց հանգստացնել երիտասարդներին: Ինչևէ, թե ապրիլի 24-ին և թե հաջորդ օրը բոլոր խաղաղ ցուցարարների նկատմամբ ձեռնարկվեցին խորհրդային վարչա-հրամայական համակարգին հարիր պատժիչ գործողություններ: Պետք է նշել, որ ապրիլի 24-ին Երևանում կազմակերպված միտինգը և ցույցերը կրում էին խաղաղ բնույթ, չէին հետապնդում հակապետական նպատակ և միտված էին զուտ ազգային հիմնախնդիրների բարձրաձայնմանը¹¹:

1965 թ. ապրիլի 28-ին ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը որոշում ընդունեց «Երևանում 1965թ. ապրիլի 24-ին տեղի ունեցած անկարգությունների փաստերի մասին»: Արվեց խորհրդային համակարգին բնորոշ վարչա-հրամայական քննադատություն¹²: 1965 թ. ապրիլի 29-30-ին տեղի ունեցավ ՀԿԿ Կենտկոմի ընդլայնված պլենումը, որը դրական գնահատեց կոմկուսի աշխատանքը¹³:

¹¹ Որպես ասվածի վկայություն՝ տես ՀԿԿ Կենտկոմին ուղղված ցույցերի մասնակից և ականատես գրող Մկրտիչ Արմենի 1965 թ. ապրիլի 26-ի մանրամասն զեկուցագիրը: Տե՛ս ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 165, թթ. 2-10:

¹² Տե՛ս՝ ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 20, թթ. 28-35:

¹³ Նույն տեղում, գ. 1, թթ. 2-4: գ. 2, թթ. 31-63, 71: գ. 4, թթ. 34-49, 61-64:

Մայր Աթոռի և Գրողների միության դերը

Հարկ է առանձնահատուկ ուշադրություն դարձնել Մայր Աթոռ Ս. Էջմիածնի քայլերին: 1964 թ. օգոստոսի 17-ին Վազգեն Առաջինը կոնդակում հրահանգում էր, ո «ա. յառաջիկայ 1965 տարին հռչակուի մեր Եկեղեցիին և համայն մեր ժողովուրդին համար ազգային սուգի և աղօթքի տարի, բ. Հայաստաննայց բոլոր եկեղեցիներուն մեջ ապրիլ 24-ին տեղի ունենան կրօնական յատուկ արարողութիւններ և հոգեհանգստեան պաշտօններ, աղօթելու համար բիրաւոր նահատակներու հոգւոց խաղաղութեան և լուսաւորման համար, գ. բոլոր հայ եկեղեցական համայնքներուն և գաղութներուն մեջ, Հայ Եկեղեցւոյ հովանիին ներքն, անխտիր բոլոր հայկական միութեանց համերաշխ գործակցութեամբ, կազմակերպուին համազգային յուշի և յարգանքի հանդիսաւոր հաւաքոյթներ, դասախօսութիւններ, գրական-գեղարվեստական նիստեր հայ և այլազգի հասարակութեանց համար, նուիրած Ապրիլյան Եղեռնին»¹⁴:

Վազգեն Առաջինը Հայոց ցեղասպանության 50-ամյակի առթիվ 1964 թ. սեպտեմբերի 24-ին նամակներ հղեց Հռոմի Պողոս Զ պապին, Մոսկվայի և Համայն Ռուսաստանի Պատրիարք Ալեքսիին, Քենտերբիի Արքեպիսկոպոս և Համայն Անգլիայի Միտրոպոլիտ Մայքլ Ռեմգիին, Եկեղեցիների համաշխարհային խորհրդի ընդհանուր քարտուղար Վիսսեր դ'Հուֆտին¹⁵:

1965 թ. ապրիլի 24-ին Հայոց ցեղասպանության 50-ամյակի միջոցառումներ տեղի ունեցան Մայր Աթոռում: Վազգեն Առաջինը պատարագ մատուցեց, կատարվեց հոգեհանգիստ, ապա Մայր Տաճարի հյուսիսային կողմում նահատակների հուշարձանի հիմնարկեքի օրհնություն, որն ավարտվելու էր 1965 թ. հոկտեմբերին: Ապրիլի 25-ին Մայր Տաճարում հանդիսավոր պատարագ մատուցվեց, ապա գումարվեց հուշի նիստ¹⁶: Միջոցառումներին ներկա էին Հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահ Կ. Դավաթյա-

¹⁴ «Էջմիածին», 1964, Ը-Թ, էջ 3-5:

¹⁵ Տե՛ս նույն տեղում, ԺԱ, էջ 8-9:

¹⁶ Տե՛ս նույն տեղում, 1965, ԵԶԷ, էջ 106-113:

նը, անվանի մտավորականներ Մ. Սարյանը, Կ. Մելիք-Օհանջանյանը, Կ. Զարյանը:

1965 թ. հոկտեմբերի 31-ին Վազգեն Ա կաթողիկոսը ամբողջ հոգևոր դասի և հյուրերի ուղեկցությամբ Մայր Տաճարի հյուսիսային կողմում բացեց Հայոց ցեղասպանության նահատակների հուշարձանը, որի հեղինակն անվանի ճարտարապետ Ռաֆայել Իսրայելյանն էր¹⁷: Հատկանշական է, որ այս միջոցառումը զուգահեռաց Վազգեն Ա-ի գահակալության 10-ամյակին, որին ներկա էին նաև քույր եկեղեցիների պետերը:

Հայոց ցեղասպանության 50-ամյակը նշելու ամբողջ գործընթացում հարկ է առանձնահատուկ անդրադառնալ նաև Հայաստանի գրողների միության գործունեությանը: 1965 թ. ապրիլի 23-ին գրողների տանը անցկացվեց նահատակ գրողների հիշատակին նվիրված երեկո: Այն բացեց Ստեփան Զորյանը, ելույթ ունեցան Վաղարշակ Նորենցը, Գևորգ Էմինը, Անահիտ Սահինյանը, Հրաչյա Հովհաննիսյանը, Սիլվա Կապուտիկյանը: Լուսավորության աշխատողների տանը կազմակերպվեց երեկո՝ նվիրված «1915 թվին թուրք ջարդարարների կողմից զազանաբար սպանված հայ գրողների հիշատակին»¹⁸:

Հայոց ցեղասպանության նահատակ հայ մտավորականների մասին տպագրվեցին բազմաթիվ հոդվածներ, որոնցում երկարատև հանիքավի մոռացությունից հետո վերաբժնորվեցին և ըստ արժանվույն գնահատվեցին նրանց ստեղծագործությունները: 1965 թ. ապրիլի 27-ին տեղի ունեցավ Հայաստանի Խորհրդային գրողների միության կուսկազմակերպության դռնբաց ժողովը¹⁹, որի ժամանակ, ցավոք, չտրվեց Հայոց ցեղասպանության և նրա 50-ամյակի քաղաքական գնահատականը:

¹⁷ Տե՛ս «Էջմիածին», 1965, ԺԱ-ԺԲ, էջ 44-49:

¹⁸ «Գրական թերթ», 1965, ապրիլի 23:

¹⁹ Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 170, ց. 1, գ. 158, թթ. 29-78:

Հայրենիք-Սփյուռք կապերի ընդլայնումը և Արցախի հարցը

Հայոց ցեղասպանության 50-ամյակի միջոցառումները նշելու ամբողջ գործընթացում կարևոր քարոզչական քայլ պետք է համարել «Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի» պաշտոնաթերթ «Հայրենիքի ձայն» թերթի հրատարակման մասին ՀԿԿ Կենտկոմի նախագահության 1965 թ. հունվարի 26-ի որոշումը²⁰։ Յա. Զարոբյանը 1965 թ. փետրվարի սկզբին ԽՄԿԿ Կենտկոմին հղած նամակում հիմնավորեց նման թերթի հրատարակման անհրաժեշտությունը և քաղաքական նշանակությունը։ 1965 թ. մարտի 10-ին ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարությունն ընդունեց որոշում, որի հիման վրա ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը ապրիլի 6-ին վերջնական որոշեց թերթի լույսընծայման հարցը։ Ի տարբերություն հանրապետական մյուս պաշտոնաթերթերի՝ թերթի խմբագրական կոլեգիան հաստատվեց առանց կուսակցական-պետական գործիչների։ Փաստորեն, սկիզբ առնելով Հայոց ցեղասպանության 50-ամյակի շրջանում, համազգային զարթոնքի շնորհիվ «Հայրենիքի ձայն» շաբաթաթերթն անուրանալի դերակատարություն ունեցավ Հայրենիք-Սփյուռք կապերի ամրապնդման գործում։

1965 թ. հունվարի 26-ին ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը որոշում ընդունեց 1965 թ. 6000 հայրենադարձների ընդունման մասին։ Կուսակցական և գործադիր իշխանություններին պարտավորեցրին լուծել հայրենադարձների ընդունման և տեղավորման հետ կապված բոլոր հարցերը։ Հաստատվեց հայրենադարձների ընդունման և տեղավորման կառավարական հանձնաժողով՝ Նախարարների խորհրդի նախագահի առաջին տեղակալ Սուրեն Մովսիսյանի գլխավորությամբ²¹։

1965 թ. հոկտեմբերի 19-ին Յա. Զարոբյանը և Ա. Քոչինյանը դիմեցին ԽՄԿԿ Կենտկոմին և ԽՍՀՄ Նախարարների խորհրդին՝ հայրենադարձությունը շարունակելու խնդրանքով՝ հաշվի առնե-

²⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 15, թ. 51-52։

²¹ Տե՛ս նույն տեղում, թ. 48։

լով դրա «քաղաքական մեծ օգուտը»²²: ԽՍՀՄ Նախարարների խորհուրդը 1966 թ. օգոստոսի 9-ի որոշմամբ ՀԽՍՀ Նախարարների խորհրդին թույլատրեց 1966-1970 թթ. իրականացնել հայերի հայրենադարձություն՝ յուրաքանչյուր տարի 1000 մարդ հաշվարկով՝ նախապես ապահովելով նրանց աշխատանքի տեղավորման և բնակարան տրամադրելու պայմանները: Այդ գործընթացի կազմակերպումն ու համակարգումը հանձնարարվեց պետական լիազոր մարմնի՝ ՀԽՍՀ Նախարարների խորհրդին կից Արտասահմանից վերադարձող հայերի ընդունման և տեղավորման կոմիտեին²³:

Հայոց ցեղասպանության 50-ամյակի համազգային զարթոնքով էր պայմանավորված նաև **Արցախի հիմնահարցի** բարձրացումը: Այդ հարցի լուծման նպատակով հասարակայնության ներկայացուցիչները բազմաթիվ դիմում-նամակներով դիմել էին ԽՄԿԿ և ՀԿԿ Կենտկոմներին: Նման պահանջով 1966 թ. ԽՄԿԿ 23-րդ համագումարին, ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Բրեժնևին, Ադրբեջանի և Հայաստանի կոմկուսների կենտկոմների առաջին քարտուղարներ Վ. Ախունդովին ու Ա. Քոչինյանին էին դիմել Հայաստանի գիտական և ստեղծագործական ներկայացուցիչները²⁴: ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղարության հանձնարարությամբ, քննարկելով այս դիմումները և նկատի ունենալով, որ Ղարաբաղի և Նախիջևանի հիմնահարցերի բարձրաձայնումը լայն արձագանք և հավանություն է ստացել հանրապետության հասարակայնության շրջանում, ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը և ՀԽՍՀ Նախարարների խորհրդի նախագահ Բ. Մուրադյանը 1966 թ. սեպտեմբերի 30-ին ԽՄԿԿ Կենտկոմին ուղղված նամակով հանգամանալից պատմական հիմնավորումով ներկայացրին ՀԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղը և Նախիջևանը միացնելու հարցը²⁵:

²² Տե՛ս 'ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 45, գ. 42, թ. 79:

²³ Տե՛ս 'ս նույն տեղում, ց. 46, գ. 48, թթ. 4-5:

²⁴ Մանրամասն տե՛ս նույն տեղում, գ. 65բ, թթ. 1-51:

²⁵ Մանրամասն տե՛ս նույն տեղում, գ. 65ա, թթ. 1-9:

1967 թ. նոյեմբերի 29-ին տասնյակ հազարավոր քաղաքացիների ներկայությամբ հանդիսավոր պայմաններում Ծիծեռնակաբերդում վերջապես բացվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշահամալիրը: ՀԿԿ Կենտկոմի նորընտիր առաջին քարտուղար Ա. Քոչինյանի գլխավորությամբ ներկա էր ՀԽՍՀ կուսակցական-պետական ամբողջ ղեկավարությունը, մտավորականության սերունդը: Միջոցառումը հեռուստատեսությամբ և ռադիոյով հեռարձակվեց ամբողջ հանրապետությամբ²⁶:

Հայոց ցեղասպանության ոգեկոչումը Խորհրդային Հայաստանում 1970-1980-ականներին

1975 թ. ապրիլի 14-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն հաստատեց «1915 թ. հայերի ցեղասպանության 60-ամյակի կապակցությամբ միջոցառումների մասին» համալիր ծրագիր²⁷: Խորհրդահայ իրականության մեջ առաջին անգամ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Կ. Դեմիրճյանը հանդես եկավ հեռուստատեսությամբ, իսկ ՀԽՍՀ կուսակցական-պետական ղեկավարությունը ծաղկեպսակներ դրեց անմար կրակին²⁸: 1975 թ. նոյեմբերի 12-ին Կ. Դեմիրճյանը դիմեց ԽՄԿԿ Կենտկոմին հայերի հայրենադարձության շարունակման թույլտվության հարցով²⁹:

1985 թ. ապրիլի 16-ին ՀԿԿ Կենտկոմի բյուրոն հաստատեց «Հայերի ցեղասպանության 70-ամյակի կապակցությամբ միջոցառումների մասին» համալիր ծրագիր³⁰: Մինչ այդ, 1985 թ. հունվարի 25-ին Կ. Դեմիրճյանը դիմել էր ԽՄԿԿ Կենտկոմին ապրիլի 24-ը ՀԽՍՀ Գերագույն խորհրդի նախագահության հրամանագրով «Ցեղասպանության զոհերի հիշատակի օր» հռչակելու խնդրանքով³¹: Սակայն, ԽՄԿԿ Կենտկոմի քաղբյուրոն 1985 թ. փետրվարի

²⁶ Տե՛ս «Սովետական Հայաստան», 1967, նոյեմբերի 30:

²⁷ ՀԱԱ, ֆ. 1, ց. 55, գ. 32, թթ. 2-3:

²⁸ Տե՛ս **Դավաքյան Կ.**, Հուշապատում, էջ 191:

²⁹ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 55, գ. 81, թթ. 122-123:

³⁰ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 77, գ. 89, թթ. 70-71:

³¹ Տե՛ս նույն տեղում, ց. 127, գ. 418, թթ. 2-հակ:

21-ի նիստում մերժեց այդ օրենսդրական առաջարկությունը³²: 1987 թ. մարտի 27-ին Կ. Դեմիրճյանն արդեն երկրորդ անգամ նույն հարցով դիմեց ԽՄԿԿ Կենտկոմին³³: Ու թեև երկու անգամ էլ Կ. Դեմիրճյանը հարցը նախօրոք համաձայնեցրել էր ԽՍՀՄ ՊԱԿ-ի հետ, այնուհանդերձ, այս անգամ էլ այն չընդունվեց:

Նույն հարցի շուրջ 1988 թ. սեպտեմբերի 12-ին Ս. Գորբաչովին դիմեց ՀԿԿ Կենտկոմի նորընտիր առաջին քարտուղար Ս. Հարությունյանը³⁴: Այս անգամ պատասխանը ճարահատյալ դրական էր, քանզի Արցախյան ազատագրական պայքարը թափ էր հավաքում, և Մոսկվան այն սաստելու նախկին վարչահրամայական ներուժն այլևս չուներ:

1988 թ. նոյեմբերի 22-ին ՀԽՍՀ Գերագույն խորհուրդն ընդունեց օրենք «Օսմանյան Թուրքիայում հայերի 1915 թվականի ցեղասպանության դատապարտման մասին» և ապրիլի 24-ը հայտարարեց «Հայերի ցեղասպանության զոհերի հիշատակի օր»³⁵: Եվ 1990 թ. հունվարի 8-ին՝ Հայաստանում խորհրդային իշխանության մայրամուտին, ՀԿԿ Կենտկոմի բյուրոն հաստատեց Հայոց ցեղասպանության 75-ամյակի միջոցառումների ծրագիրը³⁶:

Եզրակացություն

Խորհրդային Հայաստանում Հայոց ցեղասպանության 50-ամյակի պետական բարձր մակարդակով նշումը կարևոր բարոյահոգեբանական և քաղաքական խթան հանդիսացավ հետագա տարիներին այդ ուղղությամբ կատարված աշխատանքների համար: 1965 թ. ապրիլի 24-ին խորհրդային ամբողջատիրության պայմաններում հայ ժողովուրդն առաջին անգամ բարոյապես և հոգեպես, իսկ ՀԽՍՀ կուսակցական-գործադիր իշխանություննե-

³² Տե՛ս «Голос Армении», 2005, 17 марта.

³³ Տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 127, գ. 418, թ. 3-հալ.:

³⁴ Տե՛ս նույն տեղում:

³⁵ «Բանբեր Հայաստանի արխիվների», 1989, N 2, էջ 5: Այս օրենքը ՀՀ օրենսդիր մարմինների կողմից ընդունված առաջին և առայժմ միակ ակտն է, որ վերաբերում է Հայոց ցեղասպանությանը:

³⁶ Մանրամասն տե՛ս ՀԱԱ, ֆ. 1, ց. 84, գ. 40, թթ. 2-9:

ըը պետական բարձր մակարդակով ճանաչեցին ու բազմակողմանի նշեցին 1915 թ. Հայոց ցեղասպանության 50-ամյակը: Փաստորեն, խորհրդային ամբողջատիրության պայմաններում հայ ժողովուրդը կազմակերպված ձևով ոչ խորհրդային, ոչ կոմունիստական քաղաքական բնույթի ազգային-հայրենասիրական ակցիա իրականացրեց:

Ճիշտ է, ՀԽՍՀ օրենսդիր բարձրագույն մարմինը՝ Գերագույն խորհուրդը, համապատասխան իրավական որոշում չընդունեց, սակայն Հայոց ցեղասպանության 50-ամյակի համատարած ձևով նշելն ինքնին ունեցավ կարևոր քաղաքական նշանակություն: ԽՄԿԿ Կենտկոմը և պաշտոնաթերթ «Պրավդա»-ն ստիպված եղան որոշակի դժկամությամբ և հայեցողաբար ճանաչել հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործությունը: Կոմունիստական ամենատիրության համակարգում գտնվող Խորհրդային Հայաստանի մայրաքաղաք Երևանի կենտրոնում վեր հանեց Հայոց ցեղասպանության նահատակների հիշատակը հավերժացնող հուշահամալիրը: Հայաստանին և հայությանը հուզող հիմնախնդիրների հարցում ԽՍՀՄ ղեկավարության վերաբերմունքը որոշ չափով փոխվեց: 1965 թ. ապրիլի 24-ի ցույցը և Հայոց ցեղասպանության 50-ամյակի միջոցառումների համազգային ընդգրկումները հանգեցրին նրան, որ ԽՍՀՄ կենտրոնը գնաց որոշակի զիջումների և վերանայեց Խորհրդային Հայաստանի ու հայ ժողովրդի նկատմամբ վարվող քաղաքականությունը:

1965 թ. ապրիլի 24-ը հերթական և սովորական մի տարի էր մարդկության պատմության մեջ, աշխարհի համար մի առօրեական տարեթիվ, նման նախընթաց և հաջորդ բոլոր օրերին: Այդպես էր բոլորի, բայց, ո՛չ հայերի համար: Հայերն, այդ օրը Մեծ Սուգը պայքարով ոգեկոչելով, իրենց սրտում և հոգում անթաղ Նահատակների պատգամի արժևորմամբ վճռակամ էին այդ նույն աշխարհին ապացուցելու և ընդունել տալու Հայոց ցեղասպանության փաստը, որն այլևս դադարեց միմիայն հայերի սեփականությունը լինելուց և դարձավ ամբողջ աշխարհի խղճի փորձաքարը: 1965 թ. ապրիլ 24-ը հայերի համար որոշակի հոգեբանա-

կան պատնեշի հաղթահարում էր՝ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում համազգային միասնության դրսևորմամբ սեփական երկրին ու համաշխարհային հանրությանը համանման ոճիրներից ապահովագրելուն ուղղված պայքարի մեկնարկ:

1965 թ. ապրիլյան ցույցերի մասնակիցները գերազանցապես երիտասարդներ էին, որոնք ազգային ոգով իրենց հետագա ուղին կերտեցին 1970-1980-ական թվականներին շարունակված Հայոց ցեղասպանության ոգեկոչումների, Սփյուռքում ծավալված նորոյա Զինյալ պայքարի, և ապա՝ Ղարաբաղյան շարժման ու Հայաստանի Հանրապետության անկախության վերահաստատման ճանապարհին:

Аваг Арутюнян

Армения, к.и.н, НАА

avag.harutyunyan@yandex.ru

КАК ОТМЕЧАЛОСЬ 50-ЛЕТНЯЯ ГОДОВЩИНА ГЕНОЦИДА АРМЯН В СОВЕТСКОЙ АРМЕНИИ

Ключевые слова: Геноцид армян, мероприятия посвященные 50-летней годовщине, митинги, Советская Армения, Арцахский вопрос, СССР, армянская диаспора.

Проведение массовых мероприятий, посвященных 50-летию Геноцида армян в Советской Армении в условиях господствовавшей административно-командной общественной системы послужило важным морально-психологическим и политическим стимулом для дальнейшей деятельности в данном направлении в последующие годы. В центре столицы Советской Армении, находящейся под коммунистическим тоталитарным правлением, был воздвигнут Мемориальный комплекс памяти жертв Геноцида армян. В 1965 году демонстрация 24 апреля и всенародное освещение

мероприятий, посвященных 50-летию Геноцида армян, заставили коммунистическое общество СССР понять и почувствовать, что армянский народ уже достиг такого уровня самосознания и самоорганизации. Фактически, впервые за годы советской власти армянский народ в полной мере организованно осуществил национально-патриотическую акцию политического характера, не имеющую советский или коммунистический характер. Участниками апрельских демонстраций 1965 года были преимущественно молодые люди — поколение, которому суждено было пройти путь от борьбы за признание и осуждение Геноцида армян до Карабахского движения и восстановления независимости Армении.

Avag Harutyunyan

Armenia, PhD in History, NAA

avag.harutyunyan@yandex.ru

HOW WAS CELEBRATED THE 50-TH ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE IN SOVIET ARMENIA

Keywords: Armenian Genocide, events dedicated to the 50th anniversary, protest rallies, Soviet Armenia, Artsakh issue, USSR, Armenian Diaspora.

The holding of mass events dedicated to the 50th anniversary of the Armenian Genocide in Soviet Armenia under the prevailing administrative-command public system served as an important moral-psychological and political stimulus for further activities in this direction in the following years. In the center of the capital of Soviet Armenia, which was under communist totalitarian rule, the Memorial Complex of the Victims of the Armenian Genocide was erected. In 1965, the demonstration of April 24 and the nationwide coverage of the events dedicated to the 50th anniversary of the Armenian Genocide made the

communist society of the USSR understand and feel that the Armenian people had already reached such a level of self-awareness and self-organization. In fact, for the first time in the Soviet period, the Armenian people carried out a fully organized national-patriotic action of a political nature that did not have a Soviet or communist character. The participants of the April 1965 demonstrations were predominantly young people — a generation that was destined to move from the struggle for the recognition and condemnation of the Armenian Genocide to the Karabakh Movement and the restoration of Armenia's independence.

Արմեն Մարուքյան
Հայաստան, պ.գ.դ., պրոֆեսոր, ԳԱԱ ՊԻ
mararmts@yahoo.com
ORCID: 0009-0007-4926-0654

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԵՎ
ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԳՈՐԾՆԹԱՑԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՅՐ
ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ
ԳՈՐԾՈՒՄ**

*Հիմնաբառեր*¹ Հայոց ցեղասպանություն, Օսմանյան կայսրություն, միջազգային ճանաչման և դատապարտման գործընթաց, Հայաստան, Սփյուռք, Թուրքիա, պետությունների խորհրդարաններ, միջազգային կազմակերպություններ, հետևանքների հաղթահարում:

Պետությունների կողմից ցեղասպանության հանցագործության ճանաչումը ենթադրում է իշխանության երեք ճյուղերից որևէ մեկի՝ օրենսդիր, գործադիր կամ դատական մարմնի կողմից այդ հանցագործության փաստն արձանագրող որոշման, բանաձևի, հայտարարության, օրենքի կամ դատական ակտի ընդունում:

1915 թ. մայիսի 24-ին Անտանտի տերությունների՝ Ռուսաստանի, Մեծ Բրիտանիայի ու Ֆրանսիայի կողմից ընդունված համատեղ հռչակագիրը փաստորեն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի սկիզբն ազդարարող առաջին պաշտոնական փաստաթուղթն է¹, որը հիշյալ երկրների գործադիր իշխանությունների կողմից միաժամանակ ընդունված որոշում էր: 1918 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին օսմանյան խորհրդարանի քննարկումների արդյունքում ընդունված հայերի զանգվածային բնաջնջման համար «իրավական» հիմք հանդիսա-

¹ Sté u Международные отношения в эпоху империализма, Документы из архивов Царского и Временного правительства. 1914–1917, 14 января – 23 мая 1915, подготов. Ф. О. Нотович и др., серия III, т. 7, ч. 2, 1935, с. 252.

ցած «Տեղահանության մասին» ժամանակավոր օրենքը չեղարկելու², հայերի կոտորածներին գնահատական տալուց խուսափող թուրքական նոր կառավարությանը վստահության քվե տալու մերժման, պատերազմի ժամանակ երիտթուրքական կառավարության կատարած հանցագործությունների, այդ թվում՝ հայերի կոտորածների հետաքննությամբ զբաղվող խորհրդարանական «Հինգերորդ հանձնախմբի» ստեղծման³ որոշումներով և 1919 թ. թուրքական ռազմական տրիբունալների կողմից երիտթուրքական կառավարության ղեկավարների նկատմամբ կայացված վճիռներով⁴, ըստ էության, թուրքական պետության օրենսդիր ու դատական մարմինները թեև անուղղակիորեն, բայց նույնպես ճանաչեցին հայերի ցեղասպանության փաստը: Ցավոք, այս կարևոր փաստերը պատշաճ ձևով չեն օգտագործվում Թուրքիայի Ժխտողականության դեմ մղվող տեղեկատվական պատերազմում՝ ստիպելով, որ նա սկսի արդարանալ, թե ինչու է վարում Հայոց ցեղասպանության Ժխտողական քաղաքականություն այն դեպքում, երբ թուրքական պետության օրենսդիր ու դատական մարմինները դեռ 1918-1919 թթ. փաստացի ճանաչել են հայ ժողովրդի նկատմամբ իրագործված այդ հանցագործության փաստը:

Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակի 50-րդ տարելիցից՝ 1965 թվականից մեկնարկեց հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործությունը ճանաչելու ու դատապարտելու միջազգային գործընթացի նոր փուլ, որը դրսևորվեց տարբեր պետությունների հիմնականում օրենսդիր մարմինների կամ դրանց պալատների կողմից ընդունված հայտարարությունների և բա-

² Տե՛ս **Տարսեան Վ.**, Հայկական ցեղասպանությունը խորհրդարանային եւ պատմագիտական քննարկումներով, Ուոտթաուն, 1995, էջ 19:

³ Տե՛ս **Kévorkian R.**, «La Turquie face à ses responsabilités. Le process des criminels Jeunes-Turcs (1918-1920)», «Revue d'histoire de la Shoah», janveir-août, 2003, pp. 425-435.

⁴ Տե՛ս Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի: Առաջաբանը, թարգմանությունը և ծանոթագրությունները **Ա. Հ. Փափազյանի**, Եր., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1988, էջ 126:

նաձևերի միջոցով, որոնք, սակայն, պարտադիր չեն այդ երկրների գործադիր իշխանությունների համար: Ակնհայտ է, որ պետության արտաքին քաղաքականությունն իրականացվում է գերազանցապես գործադիր իշխանության միջոցով, իսկ Հայոց ցեղասպանությունը խորհրդարանական բանաձևերով ճանաչած երկրների իշխանության գործադիր մարմինները, որպես կանոն, այդ հարցի վերաբերյալ կամ խուսափում են դիրքորոշում հայտնել կամ նույնիսկ օրենսդրի որոշմանը հակառակ տեսակետ են արտահայտում: Դժվար է ակնկալել, որ նման երկրները Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման ուղղությամբ կձեռնարկեն գործուն քայլեր: Իսկ Հայոց ցեղասպանության փաստը օրենքով ճանաչած երկրներում այդ որոշումը պարտադիր է դառնում նաև իշխանության գործադիր մարմնի համար և իր արտահայտությունն է գտնում նաև այդ երկրի արտաքին քաղաքականության մեջ:

Հայոց ցեղասպանությունը ճանաչած պետություններից դեռևս միայն չորս երկրների խորհրդարաններն են այդ փաստն ամրագրել օրենքով՝ Ֆրանսիան՝ 2001 թ.⁵, Ուրուգվայը՝ 2004 թ.⁶, և Արգենտինան՝ 2004 թ. և 2007⁷ թ., Չիլին՝ 2024 թ.⁸: Շվեյցարիայի, Սլովակիայի, Հունաստանի ու Կիպրոսի խորհրդարաններն էլ բանաձևերով ճանաչել ու դատապարտել են Հայոց ցեղասպանությունը, իսկ այնուհետև ընդունել օրենքներ, որոնցով իրենց երկրներում քրեականացրել են ցեղասպանությունների, այդ թվում՝ Հայոց ցե-

⁵ St' u Genocid armjan: otvetstvennost' Turcii i obyazatel'stva mirovogo soobshchestva, dokumenty i kommentarii. sost., otv. redaktor, avtor predislavija i kommentaria d.i.n., professor **Ю. Г. Барцеров**, изд. "Гардарики", т. 2, ч. 1, М., 2003, с. 818.

⁶ St' u The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, Documents & Declarations compiled and with an introduction by **H. Sassounian**, Glendale, 2015, p. 73.

⁷ St' u Argentina Law, http://www.armenian-genocide.org/Affirmation-374/current_category.7/affirmation_detail.html

⁸ St' u Chile Law https://www.armenian-genocide.org/Affirmation.959/current_category.7/affirmation_detail.html

դասպանության ժխտումը⁹: Բելգիայում և Շվեդիայում նույնպես մարդկության դեմ կատարված հանցագործությունների և ցեղասպանությունների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության, ժխտման համար 45 հազար եվրոյի տուգանքից մինչև մեկ տարվա ազատազրկման պատասխանատվություն է սահմանված: Ֆրանսիայի խորհրդարանը երեք անգամ՝ 2006 թ., 2012 թ. և 2016 թ. ընդունեց ցեղասպանությունների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքներ, սակայն երկրի Սահմանադրական խորհուրդը դրանք հակասահմանադրական ճանաչեց¹⁰: Հայոց ցեղասպանության ժխտման քրեականացման օրենքների ընդունումը գործնականում դժվարեցնում է տվյալ երկրների տարածքում հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության կասկածի տակ դնելը, քանզի ժխտողների համար քրեական պատասխանատվություն է նախատեսվում:

Միջկառավարական ու ոչ կառավարական միջազգային կազմակերպությունների ընդունած որոշումների հետ մեկտեղ տարբեր պետությունների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևերը հանդիսանում են հայ ժողովրդի նկատմամբ իրագործված այդ հանցագործության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացի հիմքը: Այս առումով չափազանց կարևոր է, թե տարբեր պետությունների օրենսդիր մարմինների ընդունած փաստաթղթերը Հայոց ցեղասպանության ճանաչումից ու դատապարտումից զատ ինչպիսի բովանդակություն են պարունակում: Տարբեր երկրների խորհրդարանների կողմից ընդունված փաստաթղթերում պատմական փաստերի ստույգ ներկայացումը, կատարված իրադարձությունների ճշգրիտ գնահատականներն ու որակումները, ինչ խոսք, բարձրացնում են դրանց կշիռն ու նշանակությունը: Հակա-

⁹ Տե՛ս **Մարության Ա.**, Հայոց ցեղասպանության հիմնահարցը համաշխարհային քաղաքականության ազդեցիկ դերակատարների՝ Թուրքիայի հետ հարաբերությունների համատեքստում, Եր., «Տիր» հրատ., 2015, էջ 189:

¹⁰ Տե՛ս **Մարության Ա.**, Պատմություն և իրավունք, Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու դեմ ուղղված Պիեռ Նորայի փաստարկները, «ՎԷՄ» համահայկական հանդես, 2013, 2(42), էջ 10-31:

ռակ պարագայում դրանք նմանվում են հերթական ձևական փաստաթղթերի, որոնք թեն քանակական առումով ավելացնում են Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրների թիվը, սակայն որակական տեսակետից չեն նպաստում այդ հանցագործության պատշաճ դատապարտմանը և առավել ևս՝ հայ ժողովրդի խախտված իրավունքների վերականգնմանը: Խորհրդարանների ընդունած հայտարարություններում ու բանձներում երբեմն կարելի է հանդիպել հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության տարբեր որակումների, պատմական փաստերի ոչ ճշգրիտ գնահատականների, նկատվում են նաև վիճելի ձևակերպումներ և հակասական դատողություններ: Այդ հանգամանքից ելնելով, անհրաժեշտություն է առաջանում բովանդակային վերլուծության ենթարկել Հայոց ցեղասպանության ճանաչման խորհրդարանական փաստաթղթերը՝ վեր հանելով դրանց առավելություններն ու թերությունները:

Քանի որ խոսքն այնպիսի ծանր միջազգային քրեական հանցագործության մասին է, ինչպիսին ցեղապանությունն է, ապա չափազանց կարևոր է, որ ճանաչման փաստաթղթերում հստակեցված լինեն այդ հանցագործության հանցակազմի տարրերը՝ օբյեկտը, օբյեկտիվ կողմը, սուբյեկտը և սուբյեկտիվ կողմը: Հայոց ցեղասպանությունը ճանաչող յուրաքանչյուր փաստաթղթի արժեքն ու նշանակությունը պարզ է դառնում հետևյալ հարցերին տրված պատասխանների առկայությունից կամ բացակայությունից՝ ո՞վ է հանցագործության գոհը, ի՞նչ բնույթի հանցագործություն է կատարվել և ի՞նչ հետևանքներ է այն ունեցել տուժող կողմի վրա, ու՞մ կողմից է իրականացվել հանցագործությունը և ի՞նչ շարժառիթներով ու նպատակներով է առաջնորդվել հանցագործություն կատարողը: Խորհրդարանական փաստաթղթերը գնահատելիս նաև ուշադրության պետք է դարձնել, թե արդյո՞ք անդրադարձ է կատարվում Հայոց ցեղասպանության այնպիսի փաստական հանգամանքներին, ինչպիսիք են՝ հանցագործության կատարման վայրը, ժամանակը և գոհերի թիվը: Այս տեսակետից նախևառաջ կարևոր է այն փաստի ամրագրումը, որ ցեղասպանությունն իրագործվել է հայ ժողովրդի հայրենիքում՝ Արևմտյան

Հայաստանում, ինչի հետևանքով հայերը զրկվել են իրենց բնօրրանի մեծագույն մասից: Հայոց ցեղասպանության իրագործման ժամանակահատվածի հստակեցումը կարևոր է այնքանով, որ այդ հանցագործության իրագործման ժամանակը չսահմանափակվի միայն խորհրդանշական 1915 թվականով: Բնչ խոսք, 1915 թ. հայերի բնաջնջման քաղաքականությունը հասավ իր գագաթնակետին, սակայն դա բնավ չի նշանակում, որ այդ թվականին է հանցագործությունը սկսվել կամ ավարտվել: Հանցագործության կատարման ժամանակը սահմանափակելով 1915 թ.-ով հանիրավի նվազեցվում են հանցագործության ծավալները, իսկ Հայոց ցեղասպանությունը դիտարկվում է լոկ Առաջին աշխարհամարտի իրադարձությունների հոլովություն: Այդպիսով, թուրքական իշխանությունների պատասխանատվության հարցը առնվազն տարալուծվում է, եթե ոչ՝ արդարացվում պատերազմական հանգամանքներով: Հայոց ցեղասպանության իրագործման ժամկետը 1915 թվականով կամ Առաջին աշխարհամարտի տարիներով չսահմանափակելով ամրագրվում է այն իրողությունը, որ XIX դարի վերջին տեղի ունեցած համիդյան կոտորածները եղել են այդ հանցագործության սկզբնավորումը և 1918-1923 թթ. այն շարունակվել է նաև երիտթուրքերին փոխարինած քեմալական վարչակարգի կողմից:

Հայոց ցեղասպանության ճանաչման փաստաթղթերում գոհերի թվին անդրադառնալու պարագայում չափազանց կարևոր է, որ նշվի համընդհանուր ընդունելություն ստացած 1.5 միլիոն թիվը: Այս հանգամանքը կարևոր է այնքանով, որ գոհերի այլ թիվ նշելով և այդ հարցում խառնաշփոթ առաջացնելով, պարարտ հող չստեղծվի պատմության կեղծարարների ու Հայոց ցեղասպանության ժխտողների համար:

Հանցագործության փաստական հանգամանքների հստակեցումից բացի, խորհրդարանական փաստաթղթերը պետք է գնահատվեն նաև Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման հարցադրումների պատասխանների տեսանկյունից: Ցեղասպանության գոհ դարձած հայ ժողովրդի ժառանգներին յուրաքանչյուր ընդունված բանաձևում հետաքրքրում են հետևյալ

հարցադրումների պատասխանները՝ արդյո՞ք Հայոց ցեղասպանությունը ճանաչող պետությունը բավարարվում է միայն ճանաչումով, թե՞ նաև դատապարտում է այդ հանցագործությունը և թուրքական իշխանությունների ժխտողական քաղաքականությունը, արդյո՞ք կոչ է արվում Թուրքիային որպես Օսմանյան կայսրության ինքնությունը շարունակող պետության, ճանաչել այդ հանցագործությունը և առերեսվել սեփական պատմության սև էջերին և արդյո՞ք ընդունվում է հայ ժողովրդի խախտված իրավունքների վերականգնման, այսինքն՝ Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման անհրաժեշտությունը:

Հայոց ցեղասպանության փաստական հանգամանքների հստակեցման տեսակետից կարևոր է խորհրդարանական բանաձևերում հանցագործությունն իրագործած սուբյեկտների հիշատակումը: Փաստաթղթերից շատերում նշվում է, որ հանցագործությունն իրագործվել է Օսմանյան կայսրության կամ օսմանյան կառավարության կողմից (Լիբանան, Կանադա, Բելգիա, Սլովակիա, Չիլի, Բոլիվիա): Որոշ պետությունների խորհրդարանների բանաձևերում էլ որպես հանցագործության սուբյեկտ մատնանշվում են ոչ թե թուրքական պետությանը, այլ երիտթուրքական վարչակարգը կամ «Միություն և առաջադիմություն» կուսակցությունը (Գերմանիա, Վենեսուելա):

Թեև հայերի զանգվածային բնաջնջման քաղաքականության «ցեղասպանություն» որակումով այդ հանցագործության կանխամտածված բնույթն արդեն իսկ ենթադրվում է, այդուհանդերձ, որոշ երկրների օրենսդիր մարմինների ընդունած փաստաթղթերում լրացուցիչ ձևով ընդգծվում է հայերի դեմ կատարված հանցագործության նախապես ծրագրված և ազգայնամոլ գաղափարախոսության՝ պանթուրքիզմի հիման վրա կատարված լինելու հանգամանքը (Արգենտինա, Շվեյցարիա, Շվեդիա, Բոլիվիա):

Խորհրդարանների փաստաթղթերում հանցագործության կատարման վայրին (արեալին) անդրադառնալիս գործածվում են տարբեր աշխարհագրական եզրույթներ: Հիմնականում նշվում է, որ Հայոց ցեղասպանությունն իրագործվել է Օսմանյան կայսրությունում (Շվեյցարիա, Շվեդիա, Լիտվա, Իտալիա, Վենեսուելա):

լա, Ավստրիա, Լյուքսեմբուրգ): Որոշ երկրների խորհրդարանների բանաձևերում որպես հայերի ցեղասպանության իրագործման տարածք նշվում է «Անատոլիան» (Կանադա, Գերմանիա, Բուլղարիա, Դանիա): Նման ձևակերպումների կողքին հանդիպում են այլ պետությունների խորհրդարանների ընդունած փաստաթղթեր, որոնցում հայոց ցեղասպանության իրագործման տարածք է նշվում «Արևմտյան Հայաստանը» կամ «Հայաստանը» (Հայաստան, Ռուսաստան, Սլովակիա, Չիլի):

Որպես հանցագործության կատարման ժամկետ խորհրդարանական բանաձևերում հիմնականում նշվում է Հայոց ցեղասպանության խորհրդանշական տարեթիվը՝ 1915 թ.: Որոշ երկրների խորհրդարանների ընդունած փաստաթղթերում էլ հանցագործության կատարման ժամկետի մասին հիշատակումն առհասարակ բացակայում է և միայն ապրիլի 24-ն է նշվում որպես Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օր (Իտալիա, Վենեսուելա, Հունաստան): Կան պետություններ, որոնց օրենսդիր մարմինների ընդունած փաստաթղթերում Հայոց ցեղասպանության իրագործման ժամկետը սահմանափակվում է Առաջին աշխարհամարտի տարիներով (Շվեյցարիա, Լեհաստան, Ավստրիա): Միայն Լիբանանի, Արգենտինայի, Չիլիի և Սլովակիայի խորհրդարանների ընդունած փաստաթղթերում է նշված 1915-1923 թթ., իսկ Ռուսաստանի Պետդումայի 1915 թ. ապրիլի 14-ի բանաձևում՝ 1915-1922 թթ.¹¹:

Փաստաթղթերում անդրադարձ է կատարվել նաև ցեղասպանության զոհ դարձած հայ ժողովրդի վրա այդ հանցագործության ունեցած հետևանքներին: Գրեթե բոլոր բանաձևերում ցեղասպանության իրագործումով զոհված հայերի թիվը նշվում է մեկ ու կես միլիոն: Մի քանի երկրների խորհրդարանական փաստաթղթերում ընդգծվում է, որ ցեղասպանության իրագործմամբ հայերը զրկվեցին իրենց նախնիների հողերից, հայրենիքից, ինչպես նաև

¹¹ St 'u Заявление Государственной Думы Федерального Собрания Российской Федерации "Об осуждении Геноцида армянского народа в 1915-1922 годах" от 14 апреля 1995 года, Собрание законодательств РФ, М., 1995, N 17, с. 1497.

ունեցվածքից (Կիպրոս, Արգենտինա, Կանադա): Հատկանշական է, որ որոշ երկրների խորհրդարաններ իրենց ընդունած բանաձևերում ոչ միայն ընդունել են ցեղասպանության իրագործմամբ հայ ժողովրդի խախտված իրավունքների վերականգնման անհրաժեշտությունը, այլև սատարել են հայ ժողովրդին այդ իրավունքների վրականգնման պայքարում (Կիպրոս, Արգենտինա, Վենեսուելա, Չիլի, Բոլիվիա):

Եվրամիության անդամ որոշ պետությունների խորհրդարանների ընդունած բանաձևերում Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության փաստի ճանաչման անհրաժեշտությունը դիտարկվում է Եվրամիությանը Թուրքիայի անդամակցելու հարցի համատեքստում (Իտալիա, Շվեդիա, Նիդեռլանդներ): Որոշ երկրների խորհրդարաններ էլ Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը դիտարկվում է հայ-թուրքական հարաբերությունների հաստատման ու զարգացման համատեքստում (Բելգիա, Շվեյցարիա, Գերմանիա, Նիդեռլանդներ): Դրանից ելնելով, եվրոպական մի շարք երկրների խորհրդարաններն իրենց բանաձևերն ավարտում են Հայոց ցեղասպանությունը ճանաչելու Թուրքիային ուղղված կոչերով (Բելգիա, Շվեդիա, Իտալիա, Նիդեռլանդներ, Լիտվա, Ավստրիա, Լյուքսեմբուրգ): Որոշ երկրների խորհրդարանների ընդունած փաստաթղթերում դատապարտվում է Թուրքիայի ժխտողական քաղաքականությունը և պատմական փաստերի նենգափոխման գործելառճը, ընդգծելով, որ դա կարող է հանգեցնել նման հանցագործությունների կրկնությանը (Արգենտինա, Կանադա, Շվեյցարիա, Գերմանիա, Սլովակիա, Բոլիվիա, Դանիա):

Պետությունների օրենսդիր մարմինների Հայոց ցեղասպանության ճանաչման փաստաթղթերը պայմանականորեն կարելի է բաժանել պաշտոնական և ոչ պաշտոնական ճանաչումների:

Հայոց ցեղասպանությունը խորհրդարանական մակարդակով ոչ պաշտոնապես ճանաչած պետություններ են այն երկրները, որոնց օրենսդիր մարմիններում հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության ճանաչման գործընթացը ընթացակարգային կամ բովանդակային տեսակետից ավարտին չեն

հասցվել: Ընթացակարգային տեսակետից Հայոց ցեղասպանության ճանաչումն ավարտին չհասցրած պետությունները երկպալատ օրենսդիր մարմնով երկրներն են, որոնց խորհրդարանների պալատներից միայն մեկն է համապատասխան փաստաթուղթ ընդունել: Այս առումով Հայոց ցեղասպանության ճանաչումն ավարտին չեն հասցրել Հարավային և Հյուսիսային Ամերիկայի երկպալատ օրենսդիր մարմնով պետություններից Բրազիլիան, Պարագվայը և Մեքսիկան, իսկ եվրոպական երկրներից՝ Չեխիան: Բովանդակային տեսակետից Հայոց ցեղասպանության ճանաչումն ավարտին չհասցրած պետություններից է Բուլղարիան, որի խորհրդարանը թեև ընդունել է համապատասխան բանաձև, սակայն հայերի զանգվածային բնաջնջման քաղաքականությունը «ցեղասպանություն» չի որակել¹²:

Խորհրդարանական մակարդակով Հայոց ցեղասպանության ճանաչման և դատապարտման գործընթացի ուսումնասիրության արդյունքում կարող ենք արձանագրել, որ հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործությունը պաշտոնապես ճանաչվել է 28 (Ուրուգվայ, Կիպրոս, Արգենտինա, Հայաստան, Ռուսաստան, Կանադա, Հունաստան, Լիբանան, Բելգիա, Ֆրանսիա, Շվեդիա, Վատիկան, Իտալիա, Շվեյցարիա, Սլովակիա, Նիդեռլանդներ, Լեհաստան, Գերմանիա, Վենեսուելա, Լիտվա, Զիլի, Բոլիվիա, Ավստրիա, Լյուքսեմբուրգ, Դանիա, ԱՄՆ, Սիրիա, Լատվիա), իսկ ոչ պաշտոնապես՝ 5 (Բրազիլիա, Պարագվայ, Չեխիա, Բուլղարիա, Մեքսիկա) պետությունների կողմից:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության խորհրդարանական ճանաչման աշխարհագրությունը հիմնականում սահմանափակվում է Եվրոպայի, Հյուսիսային և Հարավային Ամերիկայի պետություններով: Ասիայում Հայոց ցեղասպանությունը ճանաչվել է միայն Լիբանանի և Սիրիայի կողմից: Խորհրդարանական մակարդակով Հայոց ցեղասպանության ճանաչման աշխարհագրությունը որոշակի ազդեցությունն է ունենում նաև տարբեր պետությունների խորհրդարանների ընդունած բանաձևերի բովանդակության

¹² St' u The Armenian Genocide. The World Speaks Out 1915-2015, p. 40.

վրա: Եվրոպական երկրները, աշխարհագրորեն ավելի մոտ գտնվելով Թուրքիային, սերտորեն համագործակցում են վերջինիս հետ առևտրատնտեսական ու ռազմաքաղաքական ոլորտներում, ուստի Հայոց ցեղասպանությունը ճանաչող այդ պետությունների խորհրդարանների բանաձևերում նկատելի են անորոշ ձևակերպումներն ու փաստերի զգուշավոր ներկայացումը: Ի տարբերություն եվրոպական երկրների՝ Հարավային Ամերիկայի պետությունները սերտ հարաբերություններ չունեն Թուրքիայի հետ, կաշկանդված չեն այդ երկրի հետ համագործակցությունը վտանգելու հարցում, ուստի այդ երկրների խորհրդարանների կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևերում հանցագործության փաստական հանգամանքները ներկայացվում են ավելի հստակ, իսկ որակումներն ու ձևակերպումներն անաչառ են և օբյեկտիվ:

Այս լույսի ներքո միանգամայն բնական պետք է համարել, որ Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման հայտարարություն կամ բանաձև ընդունելիս ցանկացած պետություն, այդ թվում՝ Հայաստանին բարեկամ երկրները, նման քաղաքական որոշումներ կայացնելիս նախևառաջ առաջնորդվում են իրենց ազգային-պետական շահերով և հետո միայն ձգտում ընդառաջել հայկական համայնքի և հայ ժողովրդի ձգտումներին:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացում կարևոր և ուրույն նշանակություն ունեն նաև միջազգային կազմակերպությունների կողմից հայ ժողովրդի նկատմամբ իրագործված այդ հանցագործության շուրջ ծավալված քննարկումները և կայացրած որոշումները: Անշուշտ, առաջին հերթին կարևորություն են ներկայացնում միջազգային միջկառավարական կազմակերպություններում, մասնավորապես Ազգերի լիգայում Հայաստանի մանդատի, անդամակցության ու Հայկական հարցի շուրջ ծավալված քննարկումներն ու դրանց արդյունքում ընդուն-

ված բանաձևերը¹³, ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովի Խտրականության կանխարգելման և փոքրամասնությունների պաշտպանության ենթահանձնաժողովում ընդունված երկու գեկույցներում Հայոց ցեղասպանության մասին հիշատակում պարունակող պարբերությունների արձանագրումը¹⁴, Եվրախորհրդարանի կողմից «Հայկական հարցի քաղաքական լուծման մասին» բանաձևի¹⁵ ընդունումը:

Հարկ է նշել, որ ի տարբերություն միջազգային միջկառավարական կազմակերպությունների, Հայոց ցեղասպանությունը ճանաչած ու դատապարտած միջազգային ոչ կառավարական կազմակերպություններն իրենց որոշումներում ավելի անկաշկանդ են և նրանց գնահատականները պայմանավորված չեն այս կամ այն երկրների շահերով ու միջպետական հարաբերություններով: Ուրթեն ոչ կառավարական կառույցների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման բանաձևերը իրավական տեսակետից հայեցողական են, այդուհանդերձ, դրանք կարևոր նշանակություն ունեն հայանպաստ միջազգային հասարակական կարծիքի ձևավորման առումով և նույնպես նպաստում են Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման գործընթացին:

Միջազգային ոչ կառավարական կառույցներից Հայոց ցեղասպանությունը ճանաչել ու դատապարտել են այնպիսի կազմակերպություններ, ինչպիսիք են՝ Խաղաղության կոմմունակիցների համաշխարհային կոնգրեսը (1965 թ.), Եկեղեցիների Համաշխար-

¹³ Տե՛ս **Барцеров Ю.**, Армянский вопрос в Лиге наций, “Вестник Армянского института международного права и политологии в Москве”, N 2, М., 2004, с. 155-206, տե՛ս նաև Махмуран Г. Г., Лига наций, Армянский вопрос и Республика Армения, Ер., НАН РА ИИ, 1999, с. 133.

¹⁴ Տե՛ս **Մսրըլեան Զ.**, Ջանքեր՝ ՄԱԿ-ի 30-րդ պարբերութեան վերահաստատման ուղղութեամբ, «Հայկազեան հայագիտական հանդես», հատոր LԲ, Պէյրուք, 2012, էջ 432:

¹⁵ Տե՛ս European Parliament Resolution on a political solution to the Armenian question, Doc. A2-33/87, http://www.europarl.europa.eu/intcoop/euro/pcc/aag-pcc_meeting/resolutions/1987_07_20.pdf

հային Խորհուրդը¹⁶ (1983, 1989 թ.), Ժողովուրդների մշտական տրիբունալը¹⁷ (1984 թ.), Ցեղասպանագետների միջազգային ասոցիացիան¹⁸ (1997, 2005, 2007 թ.), Երիտասարդների քրիստոնեական ասոցիացիան (2002 թ.), Նոբելյան մրցանակակիրների կազմակերպությունը (2007 թ.) և այլն:

Ամփոփելով տարբեր երկրների խորհրդարանների և միջազգային կազմակերպությունների կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման որոշումների վերլուծությունը, կարող ենք արձանագրել, որ թեև դրանք չեն հանգեցնում Թուրքիայի կողմից այդ հանցագործության ճանաչման վերահաստատմանը, այդուհանդերձ, այդ կերպ ոչ միայն բարոյական և քաղաքական ճնշում է գործադրվում թուրքական իշխանությունների վրա՝ սահմանափակելով նրանց ժխտողական քաղաքականության հնարավորությունները, այլև իրավաքաղաքական հիմքեր են նախապատրաստվում Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման ուղղությամբ քայլեր ձեռնարկելու համար: Թերևս այս գիտակցությունից ելնելով է, որ թուրքական իշխանությունները մեծ ջանքեր են գործադրում ամեն մի նոր երկրի կողմից խորհրդարանական մակարդակով Հայոց ցեղասպանության ճանաչումը կանխելու համար:

¹⁶ Տե՛ս **Գասպար Ա.**, Հայ ազատագրական պայքարն ու ահաբեկչությունը, Լոս Անձելես, «Նավասարդ», 1989, էջ 144:

¹⁷ Տե՛ս Միջազգային հանրությունը դատապարտում է Հայոց ցեղասպանությունը, կազմող և ներածականի հեղինակ Լ. Ա. Բարսեղյան, Եր., 1999, էջ 5-7:

¹⁸ Տե՛ս **Հովհաննիսյան Ն.**, Արմենոցիդը ճանաչված ցեղասպանություն է, Եր., «Զանգակ - 97», 2010, էջ 223:

Армен Марукян

Армения, д.и.н., профессор, ИИ НАН

mararmts@yahoo.com

ORCID: 0009-0007-4926-0654

ЗНАЧЕНИЕ ПРОЦЕССА ПРИЗНАНИЯ И ОСУЖДЕНИЯ ГЕНОЦИДА АРМЯН В ПРЕОДОЛЕНИИ ПОСЛЕДСТВИЙ ДАННОГО ПРЕСТУПЛЕНИЯ

Ключевые слова: Геноцид армян, процесс международного признания и осуждения, Армения, Диаспора, Турция, парламенты государств, международные организации, преодоление последствий.

Геноцида армян официально признали парламенты 28 государств, а неофициально – 5 государств во сновном Европы, Северной и Южной Америки. В Азии Геноцид армян признали только Ливан и Сирия. География признания Геноцида армян на парламентском уровне также оказывает определённое влияние на содержание резолюций, принимаемых парламентами различных государств. Европейские страны, находясь географически ближе к Турции, тесно сотрудничают с ней в торгово-экономической и военно-политической сферах, поэтому в резолюциях признающих Геноцид армян парламентов этих стран замечаются неоднозначные формулировки и неточное изложение фактов. В отличие от европейских стран, государства Южной Америки не имеют столь тесных отношений с Турцией, не боятся ставить под угрозу сотрудничество с этой страной, поэтому в резолюциях парламентов этих стран о признании Геноцида армян фактические обстоятельства изложены более четко, а квалификации и формулировки в основном объективны.

Обсуждения и решения, принятые международными организациями относительно Геноцида армян также имеют

большое значение в процессе международного признания и осуждения совершенного в отношении армянского народа преступления.

Хотя решения парламентов различных стран, а также международных организаций о признании и осуждении Геноцида армян не приводят к подтверждению Турцией этого преступления, тем не менее, таким образом не только оказывается моральное и политическое давление на турецкие власти, ограничивая их возможности в политике отрицания, но и подготавливаются правовые и политические основания для принятия мер по преодолению последствий Геноцида армян. По всей видимости, именно в силу этого турецкие власти прилагают значительные усилия, чтобы не допустить признания Геноцида армян на парламентском уровне каждой новой страной.

Armen Marukyan

Armenia, Doctor of Science in History, Professor,
Institute of History, NAS RA

mararmts@yahoo.com

ORCID: 0009-0007-4926-0654

IMPORTANCE OF THE PROCESS OF RECOGNITION AND CONDEMNATION OF THE ARMENIAN GENOCIDE IN OVERCOMING THE CONSEQUENCES OF THIS CRIME

Keywords: Armenian Genocide, process of international recognition and condemnation, Armenia, Diaspora, Turkey, parliaments of states, international organizations, overcoming the consequences.

The Armenian Genocide has been officially recognized by the parliaments of 28 countries, and unofficially by 5 countries, mainly in Europe, North and South America. In Asia, the Armenian Genocide has

been recognized only by Lebanon and Syria. The geography of recognition of the Armenian Genocide at the parliamentary level also has a certain impact on the content of resolutions adopted by the parliaments of various countries. European countries, being geographically closer to Turkey, closely cooperate with it in the trade-economic and military-political spheres, therefore, in the resolutions of the parliaments of these countries recognizing the Armenian Genocide, ambiguous wording and inaccurate presentation of facts are noticed. Unlike European countries, the South American countries do not have such close relations with Turkey, are not afraid to jeopardize cooperation with this country, therefore, in the resolutions of the parliaments of these countries on the recognition of the Armenian Genocide, the factual circumstances are set out more clearly, and the qualifications and formulations are mostly objective.

Discussions and decisions taken by international organizations regarding the Armenian Genocide are also of great importance in the process of international recognition and condemnation of the crime committed against the Armenian people.

Although the decisions of parliaments of various countries, as well as international organizations on the recognition and condemnation of the Armenian Genocide do not lead to Turkey confirming this crime, nevertheless, in this way not only moral and political pressure is exerted on the Turkish authorities, limiting their opportunities for denial policy, but also legal and political grounds are prepared for taking measures to overcome the consequences of the Armenian Genocide. Apparently, it is for this reason that the Turkish authorities are making significant efforts to prevent the recognition of the Armenian Genocide at the parliamentary level by each new country.

Mohammad Reza Alam

Iran, Professor of History Department,
Shahid Chamran University of Ahvaz

alam@acu.ac.ir

ORCID: 0009-0005-8700-6011

Abbas Eghbal Mehran

Iran, PhD student in History,
Shahid Chamran University of Ahvaz

abass.em1987@gmail.com

ORCID: 0000-0002-5184-3003

EXAMINING THE ROLE OF DIASPORA COMMUNITIES IN THE INTERNATIONAL PROCESS OF RECOGNIZING AND CONDEMNING THE ARMENIAN GENOCIDE

Keywords: Diaspora communities, recognition, international condemnation, Armenian Genocide.

Abstract

Armenian diaspora communities act as an effective force in the process of international recognition and condemnation of the Armenian Genocide. By creating public awareness of the history and realities of the genocide, these communities play a key role in attracting the attention of the media and international institutions. Cultural, educational, and research activities, along with holding conferences and seminars, help promote historical facts. Lobbying governments and international organizations to adopt resolutions and official statements condemning the genocide is also another of these communities' actions. Social networks and digital media also help spread diaspora messages and garner public support. In general, diaspora communities, through their solidarity and coherent activities, continue to preserve the

memory of the Armenian Genocide and strive for justice and its recognition at the global level. This research seeks to answer the following questions: 1. How can diaspora communities influence the process of international recognition of the Armenian Genocide? 2. What factors influence the success or failure of diaspora communities in garnering international support for condemnation of the Armenian Genocide? The research findings indicate that by building social and political networks, diaspora communities can help raise global awareness of the Armenian Genocide and, as a result, put more pressure on governments and international organizations to recognize this event. Cultural, economic, and political factors in diaspora communities, such as education level, financial capabilities, and political relations with host countries, have a direct impact on their success in garnering international support for condemnation of the Armenian Genocide.

Introduction

The Armenian Genocide was a state-organized process to cleanse and destroy a people with a history and identity on a large scale. The crime of the Armenian Genocide, the development of the Ottoman Turkish state, is a historical fact of immense suffering that occurred to a great nation in the silence of the claimants. All Armenians had a unique history at some point in the past centuries. But today, every Armenian victim or survivor of the massacre has a personal history of their dark days. If the diaspora community has anything to do to keep alive the memory of the Armenian martyrs of the genocide, it is not to become a hero, because if in distant times the children of the Armenian heroes were counted as fingers on the hand, today everyone from infants to eighty-year-old grandparents are heroes. They endured such unbearable hardships and bitterness and died heroically in the name of the nation and religion. The Armenian diaspora is one of the oldest and most influential immigrant communities in the world, which experienced widespread dispersion, especially following the tragic events of the Armenian Genocide between 1915 and 1923. Spread

across the world, especially in the United States, France, Russia, Lebanon, and Iran, this community has been able to play an important role in preserving the cultural identity and transmitting the Armenian historical heritage. Despite being far from their homeland, the Armenian diaspora has maintained a strong bond with Armenia and has engaged in extensive economic, political, and social activities in support of this country. The influence of the Armenian diaspora in cultural, economic, and political fields is extensive. These communities have played an important role in preserving the Armenian heritage and strengthening ties with the homeland by establishing cultural institutions and support organizations. Their efforts to draw attention to issues such as recognizing the Armenian Genocide are also another aspect of the diaspora's influence.

The Role of Diaspora Communities in Condemning Genocide

It seems that crimes against humanity are mass crimes committed against a civilian population, and the most serious form of these crimes can be considered the killing of groups of people¹. The Armenian population scattered throughout the world is considered a prominent example of diaspora on a global scale in order to preserve the roots of identity and continue the connection with the homeland and attachment to their ancestral land. The diaspora as a political actor may have a high influence on its homeland, the extent of which is measured based on the balance of power between the homeland and the diaspora². One of the most serious crimes in international criminal law is the crime of genocide. The crime of genocide is recognized as a crime in both international practice and in international treaties and the statutes of international criminal courts. “Genocide is any of the

¹ **Werle G.**, Crimes against Humanity in Contemporary International Law, «Legal Journal», N 39, 2008, p. 59.

² **Babaei M., Moslemmi M. Y.**, The Complexities of the Relations between the Armenian Diaspora and the Government of Armenia. Quarterly Journal of Central Asian and Caucasus Studies, 25(107), 2019, p. 65.

following acts committed with intent to destroy, in whole or in part, a national, ethnical, racial or religious group, as such: 1) Killing members of the group; 2) Causing serious bodily or mental harm to members of the group; 3) Deliberately inflicting on the group conditions of life calculated to bring about its physical destruction, in whole or in part; 4) Imposing measures calculated to prevent births within the group; 5) Forcibly transferring children of the group to another group”³. The Armenian diaspora is one of the oldest and most influential immigrant communities in the world, which experienced widespread dispersal, especially following the tragic events of the Armenian Genocide between 1915 and 1923. This community, scattered throughout the world, especially in the United States, France, Russia, Lebanon, and Iran, has been able to play an important role in preserving the cultural identity and transmitting the Armenian historical heritage. Despite being far from their homeland, the Armenian diaspora has maintained a strong connection with Armenia and has engaged in extensive economic, political, and social activities in support of this country. One of the main challenges of the Armenian diaspora is the loss of generational identity among young people. As time passes and they integrate into host societies, new generations of the diaspora become less familiar with the Armenian language, history, and culture. This process increases the risk of losing cultural identity and connection with the homeland. On the other hand, social pressures and the desire to keep up with the dominant culture of the host countries often cause young people to distance themselves from Armenian traditions and values. The Armenian diaspora in the Middle East has had a profound impact on the preservation and promotion of Armenian culture and art. Armenian schools established in various cities in the Middle East have played an important role in transmitting the Armenian language, literature, and history to new generations. These schools, often run by

³ **Tavakoli J.**, "Review and Analysis of Genocide in International Law", Qanun Yar, Autumn, 2019, Year 3 - Issue 11, p. 315.

Armenian churches and organizations, in addition to providing general education, have special programs for learning the Armenian language and learning about Armenian culture and traditions. Armenian churches have also served as one of the main cultural centers in the Middle East. These churches are used not only as religious centers, but also as spaces for celebrations, weddings, and cultural events. The Armenian Church of St. Gregory in Beirut and the Vank Church in Isfahan are prominent examples of these cultural spaces that have helped preserve the Armenian identity. As one of the first destinations for Armenian immigration after the 1915-1923 genocide, the Middle East has played an important role in the formation and establishment of the Armenian diaspora. Early migrations to Lebanon, Syria, Iraq, and Iran paved the way for the formation of large Armenian communities in these countries. These immigrants, often fleeing humanitarian and political disasters in the Ottoman Empire, settled in the Middle East with the aim of preserving their identity and creating a new life.

The Armenian diaspora generally has two national and international perspectives regarding Armenians and their homeland. Although the Armenian diaspora has various organizations and associations, among them three Armenian organizations, all of which operate in the United States, are more important. An examination of the views of these associations, which in a way carry the title of representing the Armenian diaspora around the world, indicates that they have the same goals. The Armenian National Committee of America (ANCA), the Armenian American Assembly (AAA), and the United States-Armenia Public Affairs Committee (USAPAC) are among the largest Armenian organizations in the world that, on behalf of the Armenian diaspora around the world, pursue the interests of Armenians outside Armenia and inside Armenia. The Armenian diaspora outside Armenia has generally focused its actions on four main issues so far, as follows: 1. Recognition of the Armenian Genocide, 2. Declaration of autonomy for Nagorno-Karabakh. 3 Support for Section 907 of the Freedom Protection Act 4. Expanding relations between

Armenia and the United States (Moradi, 2010). The power of the Armenian collective memory, which stems from their diasporic life, has influenced their nationalistic identification, which has created tension in the relations of Iranian Armenians with the outside group and has led them towards an introverted and closed social life (Rasuli, 2015: 313). Armenians in the Middle East have played a very important role in the fields of trade, industry, and services. In Lebanon, the Armenian community is known as one of the main pillars of the country's economy. Armenians have been very active in manufacturing industries, retail trade, and import and export. The Beirut Stock Exchange and large trading companies have witnessed the successes of many Armenian businessmen who have been able to find a special place in these markets. The Armenian diaspora in the Middle East has faced various challenges. Wars, political instability, and economic crises in host countries have been among the factors that have affected the activity of this community. However, there are also many opportunities for the development and expansion of the impact of this diaspora. One of the most important concerns of the Armenian diaspora is the preservation of cultural and linguistic identity among younger generations. As time passes and distance from the homeland passes, many young people in the diaspora become more familiar with the culture of their host countries, which can lead to a decrease in their connection with the Armenian cultural heritage. The Armenian language, which is one of the main pillars of cultural identity, is often marginalized among new generations, giving way to local languages. Bureaucratic obstacles in Armenia are one of the factors inhibiting the economic participation of the Armenian diaspora. Many members of the diaspora are willing to invest in economic and social projects in Armenia, but complex administrative processes, lack of transparency in law enforcement, and problems related to property rights discourage them from doing so. Internal disputes between different groups of the Armenian diaspora are one of the major challenges affecting the cohesion and harmony of these communities. These disputes are usually

caused by historical, cultural, and political differences between Western Armenians (survivors of the Ottoman Empire) and Eastern Armenians (immigrants from the Soviet Union and surrounding areas).

The Armenian diaspora generally has two national and international perspectives regarding Armenians and their homeland. Although the Armenian diaspora has various organizations and associations, among them three Armenian organizations, all of which operate in the United States, are more important. An examination of the views of these associations, which in a way carry the title of representing the Armenian diaspora around the world, indicates that they have the same goals. The Armenian National Committee of America (ANCA), the Armenian American Assembly (AAA), and the United States-Armenia Public Affairs Committee (USAPAC) are among the largest Armenian organizations in the world that, on behalf of the Armenian diaspora around the world, pursue the interests of Armenians outside Armenia and inside Armenia. The Armenian diaspora outside Armenia has generally focused its actions on four main issues so far, as follows: 1. Recognition of the Armenian Genocide, 2. Declaration of autonomy for Nagorno-Karabakh. 3 Support for Section 907 of the Freedom Protection Act 4. Expanding relations between Armenia and the United States⁴. The power of the Armenian collective memory, which stems from their diasporic life, has influenced their nationalistic identification, which has created tension in the relations of Iranian Armenians with the outside group and has led them towards an introverted and closed social life⁵. Armenians in the Middle East have played a very important role in the fields of trade, industry, and services. In Lebanon, the Armenian community is known as one of the main pillars of the country's economy. Armenians have been very

⁴ **Moradi A.**, The Armenian Diaspora; Perspectives and Potentials of Influence, Institute of International Relations, 2009.

⁵ **Rasouli M.**, A Look at the Extra-Group Relations of the Armenian Diaspora Based on the Concept of "Collective Memory" (An Anthropological Study on Iranian Armenians), Social Sciences, 2015, p. 313.

active in manufacturing industries, retail trade, and import and export. The Beirut Stock Exchange and large trading companies have witnessed the successes of many Armenian businessmen who have been able to find a special place in these markets. The Armenian diaspora in the Middle East has faced various challenges. Wars, political instability, and economic crises in host countries have been among the factors that have affected the activity of this community. However, there are also many opportunities for the development and expansion of the impact of this diaspora. One of the most important concerns of the Armenian diaspora is the preservation of cultural and linguistic identity among younger generations. As time passes and distance from the homeland passes, many young people in the diaspora become more familiar with the culture of their host countries, which can lead to a decrease in their connection with the Armenian cultural heritage. The Armenian language, which is one of the main pillars of cultural identity, is often marginalized among new generations, giving way to local languages. Bureaucratic obstacles in Armenia are one of the factors inhibiting the economic participation of the Armenian diaspora. Many members of the diaspora are willing to invest in economic and social projects in Armenia, but complex administrative processes, lack of transparency in the implementation of laws, and problems related to property rights discourage them from doing so. Internal disputes between different groups of the Armenian diaspora are one of the major challenges affecting the cohesion and harmony of these communities. These disputes usually stem from historical, cultural, and political differences between Western Armenians (remains of the Ottoman Empire) and Eastern Armenians (immigrants from the Soviet Union and surrounding areas). The Armenian diaspora has considerable human and financial capacity, and if fully utilized, it will have considerable power in pursuing its goals. Despite the recent passage of the resolution on the Armenian Genocide in the US Congress, the Armenian diaspora has not yet had significant success in lobbying for Armenian interests. Armenia's special position and geopolitical weakness, geographical

dependence (being landlocked), energy dependence, competition between the West and Russia in the Caucasus, Armenia's serious challenge with its two eastern (Turkey) and western (Azerbaijan) neighbors, the US alliance with Azerbaijan and Turkey as enemies and political rivals of Armenia, and the differences in some views of Armenian leaders with the Armenian diaspora can be considered the most important obstacles that the Armenian diaspora faces, and as a result, they have difficulty achieving their goals ⁶.

Conclusion

Armenian diaspora communities act as an effective force in the process of international recognition and condemnation of the Armenian Genocide. These communities play a key role in attracting the attention of the media and international institutions by creating public awareness of the history and realities of the genocide. If Mesrop Mashtots invented the Armenian alphabet for the first time and caused the Golden Age of Armenian literature, and also Movses Khorenatsi, the father of Armenian history, wrote early Armenian literature. These diaspora communities, as a third party in keeping identity, language, history and ideals alive by combining economic and scientific networks, should not fail to play a role. Cultural, educational and research activities, in addition to holding conferences and seminars, help to promote historical facts. Also, lobbying governments and international organizations for the adoption of official declarations and statements condemning the genocide is another action of these communities. Social networks and digital media also continue to spread diaspora messages of solidarity and coherent activities to preserve the memory of the Armenian Genocide and strive for justice and its recognition at the global level. In fact, by creating social and political networks, diaspora communities can help raise global awareness of the Armenian Genocide

⁶ **Moradi A.**, The Armenian Diaspora; Perspectives and Potentials of Influence, Institute of International Relation, 2009.

and, as a result, exert greater pressure on governments and international organizations to recognize this event. Cultural, economic and political factors in diaspora communities, such as level of education, financial capabilities, and political dimension with host countries, have a direct impact on their success in garnering international support for the condemnation of the Armenian Genocide.

Մոհամմադ Ռեզա Ալամ

Իրան, Պատմության ամբիոնի պրոֆեսոր,
Ահվազի Շահիդ Չամրանի անվան համալսարան
alam@acu.ac.ir

ORCID: 0009-0005-8700-6011

Աբբաս Եղբալ Մեհրան

Իրան, Պատմության ամբիոնի դոկտորանտ,
Ահվազի Շահիդ Չամրանի անվան համալսարան
abass.em1987@gmail.com

ORCID: 0000-0002-5184-3003

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԵՎ
ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՈՒՄ ՍՓՅՈՒՌՔԻ ԴԵՐԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ**

Հիմնադրամեր՝ Սփյուռք, ճանաչում, միջազգային
դատապարտում, Հայոց ցեղասպանություն:

Հայկական սփյուռքը կարևոր դեր է կատարում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացում: Բացի ընդունող երկրներում հայկական ինքնության լեզվի, պատմության և սովորույթների պահպանումից, Սփյուռքի համայնքները կարևոր դեր են խաղում Հայոց ցեղասպանության մասին հանրության իրազեկվածությունը բարձրացնելու, այդ

հարցի վրա լրատվամիջոցների և միջազգային կազմակերպությունների ուշադրությունը սևեռելու գործում: Համաժողովների և սեմինարների անցկացումից բացի, համայնքային կառույցների մշակութային, կրթական և հետազոտական գործունեությունը նպաստում է Հայոց ցեղասպանության վերաբերյալ պատմական փաստերի տարածմանը:

Հայկական համայնքների գործունեության մեկ այլ ոլորտ է կառավարությունների և միջազգային կազմակերպությունների շրջանում իրականացվող լոբբինգը՝ Հայոց ցեղասպանությունը դատապարտող պաշտոնական հայտարարություններ և հայտարարություններ ընդունելու նպատակով: Հայկական համայնքները սոցիալական մեդիայի միջոցով նույնպես շարունակում են տարածվել Հայոց ցեղասպանության հիշատակը պահպանելու և միջազգային մակարդակով արդարության հասնելու իրենց ուղերձները: Ստեղծելով սոցիալական և քաղաքական ցանցեր՝ հայկական համայնքները ճնշում են գործադրում կառավարությունների և միջազգային կազմակերպությունների վրա՝ հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործությունը ճանաչելու և դատապարտելու հարցում: Հայկական սփյուռքի համայնքներին բնորոշ մշակութային, տնտեսական և քաղաքական գործոնները, ինչպիսիք են կրթական մակարդակը, ֆինանսական ռեսուրսները և ընդունող երկրներում ունեցած քաղաքական հարաբերությունները, նպաստում են Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու ուղղությամբ նրանց ձեռնարկվող ջանքերի հաջողությանը:

Мохаммад Реза Алам

Иран, профессор кафедры истории,
Университет имени Шахида Чамрана в Ахвазе

alam@acu.ac.ir

ORCID: 0009-0005-8700-6011

Аббас Эгбал Мехран

Иран, аспирант кафедры истории,
Университет имени Шахида Чамрана в Ахвазе

abass.em1987@gmail.com

ORCID: 0000-0002-5184-3003

ИССЛЕДОВАНИЕ РОЛИ ДИАСПОРЫ В ПРОЦЕССЕ МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ И ОСУЖДЕНИЯ ГЕНОЦИДА АРМЯН

Ключевые слова: диаспора, признание, международное осуждение, Геноцид армян.

Армянская диаспора имеет важную роль в процессе международного признания и осуждения Геноцида армян. Помимо сохранения армянской идентичности: языка, истории, обычаев в странах проживания, общины армянской диаспоры играют ключевую роль в привлечении внимания СМИ и международных организаций, повышая осведомлённость общественности об истории и реалиях Геноцида армян. Помимо проведения конференций и семинаров, культурная, образовательная и исследовательская деятельность общинных структур способствует распространению исторических фактов.

Другой сферой деятельности армянских общин является лоббирование в правительствах и международных организациях принятия официальных деклараций и заявлений, осуждающих Геноцид армян. Социальные сети и цифровые медиа также

продолжают распространять послания общин армянской диаспоры о солидарности и согласованных действиях по сохранению памяти о Геноциде армян и достижению справедливости на международном уровне. Создавая социальные и политические сети, общины способствуют повышению глобальной осведомлённости о Геноциде армян и, как следствие, оказывают определенное давление на правительства и международные организации с целью признания данного преступления. Культурные, экономические и политические факторы, присущие общинам армянской диаспоры, такие как уровень образования, финансовые возможности и политические отношения в принимающих странах, оказывают непосредственное влияние на их успех в привлечении международной поддержки для осуждения Геноцида армян.

Վահրամ Հովյան

Հայաստան, քաղաքագիտության մագիստրոս, ԵՊՏՀ

vhovyan@yandex.ru

ORCID: 0000-0002-2177-4887

**ՀԱՅՈՑ ԾԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ ԵՎ
ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ՀԱՐՅՈՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԻՐԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ
(REALPOLITIK) ԼՈՒՑՄԻ ՆԵՐՔՈ**

Հիմնաբառեր՝ Հայոց ցեղասպանություն, միջազգային ճանաչում, շահեր, Թուրքիա, ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա, Գերմանիա, Սիրիա:

Համաձայն միջազգային հարաբերությունների վերաբերյալ քաղաքական իրատեսության (ռեալիզմ) դպրոցի՝ պետություններն իրենց արտաքին քաղաքականության բնագավառում առաջնորդվում են եթե ոչ բացառապես, ապա առավելապես իրենց հաշվենկատ (պրագմատիկ) շահերով¹: Բարոյական այնպիսի կատեգորիաներ, ինչպիսիք են պատմական արդարությունը, խիղճը, մարդասիրությունը և այլն, միջազգային հարաբերություններում այս ուղղության մեջ հիմնականում տեղ չունեն կամ լավագույն դեպքում ունեն երկրորդական նշանակություն: Այս լույսի ներքո՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման վրա ազդող գործոնները հիմնականում եղել են երկուսը. ա) տվյալ պետության հարաբերությունները Թուրքիայի հետ,

¹ St' u **Donnelly J.**, Realism, in Burchill S. at al, Theories of International Relations, Third edition, New York, Palgrave Macmillan, 2005, pp. 29-54; **Ломкарев И. Д.**, Международно-политическая мысль: От истоков к современности: Учеб. пособие для студентов вузов — М.: Издательство «Аспект Пресс», 2021. — сс. 99-116; **Atoyan, V., Brosius, L., & Hovyan, V.**, Comparative Analysis of National Security Strategies of Armenia in the Context of Political Realism, Liberalism, and Marxism. Journal of Political Science: Bulletin of Yerevan University, 2(3(6), 2023, pp. 11–31. <https://doi.org/10.46991/JOPS/2023.2.6.011>

ավելի ստույգ՝ այդ հարաբերություններում առկա հակասությունները և բ) հայ համայնքների, մասնավորապես՝ նրանց լոբբիստական կազմակերպությունների ծավալած գործունեությունը:

Հատկապես միջազգային հարաբերություններում կարևոր դերակատարություն ունեցող պետությունները (ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա, Գերմանիա և այլն) անդրադարձել են Հայոց ցեղասպանության խնդրին միայն այն ժամանակ, երբ քաղաքական հակասություններ են ունեցել Թուրքիայի հետ: Այս դեպքում Հայոց ցեղասպանության ճանաչումը ծառայեցվել է որպես գործիք Թուրքիայի վրա ճնշում գործադրելու համար: Ինչ վերաբերում է Միլիտրքի համայնքների գործունեությանը, ապա հայկական լոբբիստական կառույցների (Հայ դատի գրասենյակներ և այլն) գործադրած ջանքերը Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ արդյունավորվել են հատկապես այն ժամանակ, երբ դրանք համընկել են տվյալ պետության արտաքին քաղաքական նպատակների հետ: Հակառակ պարագայում այդ ջանքերը հիմնականում արդյունք չեն տվել: Սա առավել ակնհայտ երևում է ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման օրինակով:

Այսպես, չնայած երկարամյա պայքարին, միայն 2021 թ. ԱՄՆ-ն լիարժեքորեն ճանաչեց Հայոց ցեղասպանությունը: Նախ Կոնգրեսի երկու պալատները 2019 թ. ընդունեցին Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևը²: Ապա Նախագահ Զ. Բայդենը 2021 թ. ապրիլի 24-ի իր ուղերձներում կիրառեց «ցեղասպանություն» եզրույթը³:

Թեև ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման

² Տե՛ս ԱՄՆ Ներկայացուցիչների Պալատը ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձև, <https://genocide-museum.am/arm/30.10.2019-USAcongress.php> (մուտք՝ 15.06.2025); ԱՄՆ Սենատը միաձայն ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող եվ դատապարտող բանաձևվը, https://genocide-museum.am/arm/news-H_RES150.php (մուտք՝ 15.06.2025)

³ Տե՛ս ԱՄՆ նախագահ Զո Բայդենի հայտարարությունը Հայկական հիշատակի օրվա առիթով, 24 ապրիլ, 2021, <https://genocide-museum.am/arm/-php> (մուտք՝ 15.06.2025)

ուղղությամբ որոշակի հաջողություններ նախկինում էլ են արձանագրվել⁴, սակայն, համարվում է, որ Վաշինգտոնը պաշտոնապես ճանաչել է Հայոց ցեղասպանությունը վերոհիշյալ երկու բանաձևերի, ինչպես նաև նախագահ Ջո Բայդենի կողմից «ցեղասպանություն» եզրույթի կիրառման տեսքով:

Արդ, ինչո՞վ էր պայմանավորված Հայոց ցեղասպանության ճանաչումը ԱՄՆ-ի կողմից դրանից ավելի քան 105 տարի անց: Դա առավելապես պայմանավորված էր այդ շրջանում Վաշինգտոն-Անկարա միջպետական հարաբերություններում առկա լուրջ կնճիռներով՝ սիրիական, մասնավորապես, քրդական հարցում, Թուրքիայի կողմից հակաօդային պաշտպանության ռուսական C-400 համակարգերի գնման և այլ հարցերում: Գաղտնիք չէ, որ Անկարան միշտ էլ բացասաբար է տրամադրված եղել Սիրիայի քրդերի անկախական շարժումների նկատմամբ և ամեն կերպ, այդ թվում՝ ռազմական միջամտության ճանապարհով՝ ձգտել է չեզոքացնել դրանք: Մինչդեռ քրդական գործոնը կարևոր քաղաքական խաղաքարտ է եղել Վաշինգտոնի ձեռքում, ուստի, սիրիական ճգնաժամի ամբողջ ընթացքում այդ երկրի քրդերը վայելել են ԱՄՆ-ի աջակցությունը:

Մյուս խնդիրը Անկարա-Վաշինգտոն հարաբերություններում Թուրքիայի կողմից Ռուսաստանից հակաօդային պաշտպանության C-400 համակարգերի ձեռք բերումն էր: Համոզվելով, որ ԱՄՆ-ից «PATRIOT» տեսակի հակաօդային պաշտպանության համակարգերի ձեռքբերումն իրատեսական չէ, Թուրքիան գնաց իր օդային տարածքի պաշտպանության հարցը Ռուսաստանից համապատասխան սպառազինություն ձեռք բերելու միջոցով լու-

⁴ Տե՛ս **Նահապետյան Հ.**, Ո՞ր խորհրդարանն է առաջինը ճանաչել Հայոց ցեղասպանությունը, «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 1, 2013, https://www.noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=6853 (մուտք՝ 15.06.2025)

⁵ Տե՛ս, **Фельгенгауэр П.**, «Источник мира» от Эрдогана: Сбрасывая бомбы на курдов в Сирии, Турция рискует поссориться с Западом, Новая Газета, № 114 от 11 октября 2019.

ծելու ճանապարհով, ինչը հանգեցրեց Վաշինգտոնի կոշտ հակազդեցությանը: Ըստ ԱՄՆ-ի՝ ռուսական սպառազինությունները համատեղելի չեն արևմտյան սպառազինությունների հետ, հետևաբար, չեն կարող ինտեգրվել դրանց հետ: Բացի այդ, մտավախություն կար, որ C-400 համակարգերի միջոցով Ռուսաստանը կարող է հետախուզական գործողություններ իրականացնել ամերիկյան և առհասարակ ՆԱՏՕ-ական ինքնաթիռների նկատմամբ:

Չնայած ամերիկյան կողմի նախազգուշացումներին՝ Անկարան ռուսական C-400 համակարգեր ձեռք բերելու մտքից հրաժարվելու որևէ նշան ցույց չէր տալիս և, ի վերջո, ձեռք բերեց դրանք: Ուստի, Վաշինգտոնը Անկարայի վրա ճնշում գործադրելու նպատակով ի թիվս այլ գործողությունների, ինչպիսիք էին, օրինակ, F-35 ռազմական ինքնաթիռների արտադրությունից թուրքիային դուրս թողնելը, F-16 ռազմական ինքնաթիռների արդիականացման և նոր խմբաքանակի մատակարարման գործարքների կասեցումը, գնաց նաև հայկական խաղաքարտը օգտագործելու ճանապարհով, որի դրսևորումն էր Հայոց ցեղասպանության ճանաչումը:

2025 թ., ԱՄՆ նորընտիր նախագահ Դ. Թրամփն իր ապրիլի 24-ի ուղերձում խուսափեց «ցեղասպանություն» եզրույթի կիրառումից՝ դրա փոխարեն կիրառելով «Մեծ եղեռն» արտահայտությունը⁶: Մենք՝ հայերս, սովորաբար անձնավորում ենք քաղաքականությունը: Ըստ այդմ՝ գտնում ենք, որ ԱՄՆ նախկին նախագահ Զ. Բայդենը հայասեր էր, այդ պատճառով էլ ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, մինչդեռ ներկա նախագահ Դ. Թրամփը գործարար է, գործարար կապեր ունի ադրբեջանցիների հետ, այդ պատճառով էլ խուսափում է «ցեղասպանություն» եզրույթի կիրառումից: Իրականում, սակայն, հատկապես ԱՄՆ-ի նման գերտերության պարագայում անձի գործոնը վճռորոշ դեր չունի ար-

⁶ Տե՛ս **Հովսեփյան Ա.**, Իրավունք ունե՞նք մեր ցեղասպանված նախնիների ձայնը չդառնալու, «Ազգ», թիվ 16, 2-8 մայիս 2025:

տաքին քաղաքականության բնագավառում, ամեն ինչ թելադրվում է գերտերության շահերով: Բայդենի նախագահության շրջանում հարկավոր էր ճնշում գործադրել Անկարայի վրա, ուստի և խաղարկվում էր հայկական խաղաքարտը, իսկ Թրամփի օրոք նման անհրաժեշտություն այլևս չկա: Ավելին, Վաշինգտոն-Անկարա հարաբերությունները, հատկապես Սիրիայում Բաշար ալ Ասադի իշխանության տապալման հետևապատկերին, որում գործուն դերակատարություն ունեցավ Թուրքիան, ներկայումս վերելք են ապրում:

Գերմանիան ևս 2016 թ. հունիսի 2-ին՝ Հայոց ցեղասպանությունից 101 տարի անց, Բունդեսթագի ընդունած բանաձևով ճանաչեց Հայոց ցեղասպանությունը⁷: Կարծում ենք, դա պայմանավորված էր այդ ժամանակ՝ 2015-2016 թթ., Եվրոպայում սրված գաղթականների ճգնաժամով: Միլիոնավոր գաղթականներ Մերձավոր Արևելքից և Հյուսիսային Աֆրիկայից ապօրինի կերպով անցնում էին Եվրոպա, և մարդկային այդ հեղեղը կասեցնելու համար Եվրոպան կարիք ուներ Թուրքիայի աջակցությանը: Վերջինս դիտվում էր որպես մի երկիրը, որը պետք է ընդուներ, իր մեջ կլաներ միլիոնավոր գաղթականների և այդ կերպ կանխեր նրանց հետագա թափանցումը Եվրոպա:

Հայտնի է, որ Թուրքիան այնպիսի պետություն է, որը երբեք էժան չի վաճառում իր բարեկամությունը կամ ծառայությունները որևէ մեկին: Երբ նրա կարևորությունը բարձրանում է որևէ գերտերության համար, ապա ձգտում է առավելագույն օգուտներ քաղել դրանից: Արդ, գաղթականների հոսքը դեպի Եվրոպա կասեցնելու համար Թուրքիան սկսեց տարատեսակ պահանջներ ներկայացնել ԵՄ-ին և դրա առանձին անդամ պետություններին՝ ընդհուպ մինչև ԵՄ-ին լիարժեք անդամակցություն: Այս հոդվածի վրա էլ առաջացան տարաձայնություններ ԵՄ-Թուրքիա հարաբե-

⁷ Տե՛ս Գերմանիայի Բունդեսթագում ընդունված Հայոց ցեղասպանության վերաբերյալ բանաձևի տեքստը, <https://genocide-museum.am/arm/Germany.php> (մուտք՝ 15.06.2025)

րություններում, և Անկարայի վրա ճնշում գործադրելու նպատակով էլ կրկին խաղարկվեց հայկական խաղաքարտը՝ ի դեմս Գերմանիայի Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևի ընդունման:

Այս համատեքստում հատկանշական է 2025 թ. գարնանը Գերմանիայի նախագահ Ֆ. Վ. Շթայնմայերի այցը Հայաստան և Ադրբեջան: Հայաստան այցի շրջանակներում արարողակարգի համաձայն Գերմանիայի նախագահն այցելեց Ծիծեռնակաբերդի Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր, սակայն նրա պաշտոնական կայքում այդ մասին որևէ լրատվություն և լուսանկար չտեղադրվեց⁸: Մինչդեռ Հայաստանից հետո Ադրբեջան այցելելով՝ Շթայնմայերը այցելեց Բաքվի Շեհիդների պուրակ, և այդ մասին թե՛ լրատվություն և թե՛ լուսանկար հարպարակվել է նրա պաշտոնական կայքում⁹: Հավելենք, որ Հարավային Կովկաս հիշյալ այցի ժամանակ ադրբեջանական կողմի բողոքի հետևանքով Գերմանիայի նախագահը սոցցանցի իր էջից հեռացրել է նաև Արցախի դրոշը:

Հարկ է հաշվի առնել, որ Գերմանիան խորհրդարանական հանրապետություն է, որտեղ իշխանության առաջնային մարմինը խորհրդարանն է, ինչը նշանակում է, որ վերջինիս ընդունած ակտերը, տվյալ պարագայում՝ Բունդեսթագի ընդունած բանաձևը Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին, պետք է կողմնորոշիչ լինեն իշխանության այլ հաստատությունների գործունեության համար: Նախագահական կամ կիսանախագահական հանրապետություններում, որտեղ իշխանության ճյուղերն ավելի ինքնուրույն են իրարից, կարող է և այդպես չլինել: Արդ, չնայած Գերմանիայի՝ խորհրդարանական հանրապետություն լինելու հանգամանքին և չնայած Բունդեսթագի համապատասխան բա-

⁸ Տե՛ս **Հովսեփյան Ա.**, Բնչո՞ւ է նախագահ Շթայնմայերը խուսափում իր էջում հրապարակել Ծիծեռնակաբերդ, Սուրբ Էջմիածին իր այցի մասին, «Ազգ», թիվ 12, 4-10 ապրիլ 2025:

⁹ Տե՛ս **Հովսեփյան Ա.**, Ոչ մի քննադատություն Ալիններին, «Ազգ», թիվ 13, 11-17 ապրիլ 2025:

նաձևին, Գերմանիայի նախագահը խուսափել է իր պաշտոնական կայքում Հայոց ցեղասպանության զոհերի հուշահամալիր այցի վերաբերյալ լրատվություն և լուսանկար հրապարակելուց:

Ֆրանսիան այն երկիրն է, որը ոչ միայն օրենքի ուժով ճանաչել է Հայոց ցեղասպանությունը (2001 թ. հունվարի 29), այլև ապրիլի 24-ը հռչակել է որպես Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի ոգեկոչման օր: Համապատասխան հրամանագիրը նախագահ է. Մակրոնը ստորագրել է 2019 թ. ապրիլի 10-ին¹⁰: Բարձր գնահատելով Ֆրանսիայի նվիրվածությունը մարդասիրական արժեքներին, այնուամենայնիվ, կարծում ենք, որ 2019 թ. նման հրամանագրի ստորագրումը պայմանավորված էր նաև Թուրքիայի հետ ունեցած սուր հակասություններով, հատկապես՝ Մերձավոր Արևելքում և Միջերկրական ծովում¹¹:

Ռուսաստանի Պետական Դոման ևս 1995 թ. ընդունել է Հայոց ցեղասպանությունը ճանաչող որոշում¹²: Կարծում ենք, սա էլ պայմանավորված էր 1990-ականներին մոլեգնող չեչենական անջատականությամբ: Թուրքիան այն երկիրն էր, որը 1990-ականներին գործուն անջակցություն էր ցուցաբերում Հյուսիսային Կովկասում ծավալվող անջատողական շարժումներին:

2020 թ. փետրվարի 13-ին Սիրիայի խորհրդարանը՝ Ժողովրդական ժողովը, նույնպես ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձև¹³: Ուշագրավ է, որ այդ

¹⁰ Ապրիլի 24-ը Ֆրանսիայում հռչակվեց Հայոց ցեղասպանության հիշատակի ազգային օր, <https://genocide-museum.am/arm/11.04.2019-Macron.php> (մուտք՝ 15.06.2025)

¹¹ Воронкова Т., Влияние турецкого фактора на средиземноморскую политику Франции при президенте Э. Макроне, Проблемы национальной стратегии, № 4 (67), 2021, сс. 114-129.

¹² Տե՛ս Պետական Դոմայի հայտարարությունը 1915-1922թթ. հայ ժողովրդի ցեղասպանության դատապարտման մասին, https://genocide-museum.am/-arm/Russia_Duma_Resolution.php (մուտք՝ 15.06.2025)

¹³ Տե՛ս Սիրիայի խորհրդարանը ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող և դատապարտող բանաձև, <https://genocide-museum.am/-arm/13-February.2020.php> (մուտք՝ 15.06.2025)

գործընթացը սկսվել էր դեռևս 2015 թ., ինչը, ընդունված կարծիքի համաձայն, պայմանավորված էր Հայոց ցեղասպանության 100-ամյակով: Իրականում, կարծում ենք, այն ավելի շուտ պայմանավորված էր «Արաբական գարնան» հանգամանքով և այդ ժամանակ Սիրիայում մոլեգնող քաղաքացիական պատերազմով: Իսկ Թուրքիան այն երկիրն է, որը Սիրիական ճգնաժամի ծագումից (2011 թ.) ի վեր ամեն կերպ աջակցել է Բաշար ալ Ասադի իշխանության դեմ կովող ապստամբներին: Հատկանշական է, որ նախքան «Արաբական գարունը» սիրիական իշխանությունները՝ նախագահ Բաշար ալ Ասադի գլխավորությամբ, մի ընթացք տուրք տալով Թուրքիայի հետ մերձեցմանը, ոչ միայն ոգևորություն չէին ցուցաբերում Հայոց ցեղասպանությունը ճանաչելու և դատապարտելու հարցում, այլև գնում էին այդ հարցում որոշակի սահմանափակումների ճանապարհով:

Այսպիսով, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցը, լինելով արդարության, բարոյականության և մարդասիրության հարց, իրականում վերածվել է քաղաքական շահարկման առարկայի և ծառայեցվում է տարբեր երկրների շահերին: Այն շահարկվել է նաև տարբեր պետությունների ներքաղաքական պայքարում, ընտրությունների ժամանակ տարբեր քաղաքական ուժեր, ձգտելով իրենց կողմը գրավել տեղի հայ համայնքի համակրանքը, նախընտրական արշավների ժամանակ խոստումներ են տվել հաղթելու դեպքում ճանաչել ու դատապարտել Հայոց ցեղասպանությանը:

Այս ամենով է պայմանավորված, որ.

ա) Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրների կողմից չկա միասնական մոտեցում այդ հարցի նկատմամբ: Ոմանք այն ճանաչել են օրենքի ուժով, ոմանք՝ բանաձևի, ոմանք՝ որոշման: Ոմանք, ճանաչելով Հայոց ցեղասպանությունը, միաժամանակ քրեականացրել են դրա ժխտումը, մյուսները՝ ոչ:

բ) Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը առ այսօր առավելապես ունեցել է բարոյական նշանակություն՝ առանց քաղաքական կամ իրավական հետևանքների, առանց որևէ հա-

տուցման: Հատուկենտ դեպքերում է, որ Հայոց ցեղասպանությունը ճանաչող փաստաթուղթը պարունակում է նաև հատուցման կամ այդ հանցագործության հետևանքների հաղթահարման անհրաժեշտության մասին դրույթ: Սակայն այդ դրույթներն էլ խիստ ընդհանրական և անորոշ են ձևակերպված: Հստակ չէ, թե ինչ հատուցման մասին է խոսքը՝ տարածքային, գույքային, դրամական, թե այլ: Բացի այդ, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման դրույթ պարունակող փաստաթղթերը հիմնականում ընդունվել են այն երկրների կողմից, որոնք աշխարհագրորեն հեռու են Թուրքիայից, հետևաբար, մեծ առնչություններ չունեն վերջինիս հետ (խոսքը լատինաամերիկյան երկրների մասին է). ոչ իրենք կարող են մեծ ազդեցություն ունենալ Թուրքիայի վրա, ոչ էլ հակառակը: Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման խնդիրն առ այսօր գործնականում առնչվում է միայն ապահովագրական կազմակերպությունների կողմից մասնավոր վնասի հատուցմանը, ինչն էլ իրականում բախվում է լուրջ իրավական խոչընդոտների:

Ասվածին կարելի է ավելացնել և այն, որ Հայոց ցեղասպանությունը ճանաչած երկրները շարունակում են պահպանել և զարգացնել իրենց հարաբերությունները Թուրքիայի հետ՝ վերջինիս համարելով իրենց դաշնակիցը (ԱՄՆ) կամ ռազմավարական գործընկերը (Ռուսաստան):

Ելնելով վերոգրյալից՝ կարելի է ասել, որ առավել կարևոր է ոչ այնքան Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչումը, որքան դրա ճանաչումը հանցագործ պետության՝ Թուրքիայի կողմից: Իսկ Թուրքիայի կողմից Հոյոց ցեղասպանության ճանաչմանը կարելի է հասնել տարբեր եղանակներով՝ ճնշման, համագործակցության և այլն: Բնավ պարտադիր չէ ազգային նպատակներին հասնել պատերազմի միջոցով: Կարելի է հասնել նաև համագործակցության միջոցով: Այս առումով ուսանելի նախադեպ է Գերմանիայի վերամիավորումը 1990 թ., որը տեղի ունեցավ ոչ թե թշնամանքի, այլ համագործակցության միջոցով: Ի դեպ, ՆԱՏՕ-ի գծով Գերմանիայի դաշնակիցները (Ֆրանսիա, Մեծ Բրիտանիա)

Ժամանակին դեմ են եղել վերջինիս վերամիավորմանը, և դա իրականություն է դարձել Խորհրդային Միության գործուն աջակցության շնորհիվ:

Սակայն ինչպիսի եղանակ էլ կիրառվի Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում, առանցքային կարևորություն ունի Հայոց պետականության համակողմանի (տնտեսական, ռազմական, ժողովրդագրական, գիտակրթական և այլն) զարգացումը և ամրապնդումը: Մեր կարծիքով, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման հարցում ՀՀ և Սփյուռքի կողմից պետք է որդեգրվեն հետևյալ երեք ուղենիշները.

- Ազգային պետականության համակողմանի հզորացում,
- Սփյուռքի ձուլման վտանգների նվազեցում,
- Դաշնակիցների ճիշտ ընտրություն,

Առաջնորդվել իրատեսական մոտեցումներով, հաշվենկատ շրջահայացությամբ՝ չտրվելով ռոմանտիզմին, զերծ մնալով ուռճացված ակնկալիքներից, քանզի դրանց չիրականացումը կարող է հանգեցնել հիասթափության:

Ваграм Овян

Армения, магистр политологии, ЕГЭУ

vhovyan@yandex.ru

ORCID: 0000-0002-2177-4887

ВОПРОС МЕЖДУНАРОДНОГО ПРИЗНАНИЯ И ОСУЖДЕНИЯ ГЕНОЦИДА АРМЯН ПОД СВЕТОМ ПОЛИТИЧЕСКОГО РЕАЛИЗМА (REALPOLITIK)

Ключевые слова: Геноцид армян, международное признание, интересы, Турция, США, Россия, Франция, Германия, Сирия.

Согласно теории политического реализма международных отношений, государства в сфере внешней политики в большей степени руководствуются своими прагматичными интересами. В данном контексте можно выделить следующие факторы, влияющие на процесс международного признания и осуждения Геноцида армян: а) противоречия данного государства с Турцией и б) деятельность общин Армянской диаспоры.

Исходя из этих реалий процесс международного признания и осуждения Геноцида армян, будучи вопросом справедливости, морали и гуманизма, в действительности превратился в политический фактор и использовался в интересах разных стран. Данный вопрос превратился также в объект спекуляции во внутривнутриполитической борьбе тех или иных стран. А усилия армянских лоббистских структур (комитетов «Ай дата» и т. д.) по признанию и осуждению Геноцида армян, как правило, были эффективными в особенности тогда, когда совпадали с целями внешней политики данного государства.

Вышеупомянутым обусловлено то, что:

- У политических элит признавших Геноцид армян государств нет единого подхода к данному вопросу. Некоторые из этих стран признали и осудили данное преступление на уровне закона,

некоторые приняли резолюции или заявления. Определенные страны также приняли законы о криминализации отрицания Геноцида армян.

- Процесс международного признания и осуждения Геноцида армян до сих пор в большей степени носил моральное значение, без каких-то политических или юридических последствий. Более того, многие из признавших данное преступление стран продолжают сохранить и развивать свои отношения с Турцией.

На основе вышесказанного можно отметить, что в этом процессе существенным является признание Геноцида армян со стороны именно преступного государства – Турцией, которой можно добиться разными способами: давлением, сотрудничеством и т.д. Какой бы способ не был выбран для этой цели, для армянского народа и Армении первоочередным должно быть всестороннее развитие и усиление армянской государственности.

Vahram Hovyan

Armenia, Master in Political Science, YSEU

vhovyan@yandex.ru

ORCID: 0000-0002-2177-4887

THE ISSUE OF INTERNATIONAL RECOGNITION AND CONDEMNATION OF THE ARMENIAN GENOCIDE UNDER THE LIGHT OF POLITICAL REALISM (REALPOLITIK)

Keywords: The Armenian Genocide, international recognition, interests, Turkey, USA, Russia, France, Germany, Syria.

According to the theory of political realism in international relations, states are guided to a greater extent by their pragmatic interests in the sphere of foreign policy. In this context, the following factors can be identified that influence the process of international

recognition and condemnation of the Armenian Genocide: a) the contradictions of this state with Turkey, b) the activities of the Armenian Diaspora communities.

As a result, the issue of international recognition of the Armenian Genocide, being an issue of justice, morality and humanism, in fact has turned into a political factor and has been exploited in favor of the interests of various countries. It has been speculated in intra-political struggle too. And the efforts of Armenian lobbying structures (The Committees of Armenian Cause, etc.) to recognize and condemn the Armenian Genocide were, as a rule, effective, especially when they coincided with the foreign policy goals of a given state.

The above is due to the fact that:

- There is not a joint approach by the countries, who have recognized the Armenian Genocide, towards that issue. Some of them have recognized it at the level of law, some adopted resolutions or statements. Certain countries have also passed laws criminalizing the denial of the Armenian Genocide.

- The process of international recognition and condemnation of the Armenian Genocide has so far been largely of moral significance, without any political or legal consequences. Moreover, many of the countries that have acknowledged this crime continue to maintain and develop their relations with Turkey.

On the base of the abovementioned, it can be said that the recognition of the Armenian Genocide by just Turkey is more important, than its international recognition. Whatever the method chosen for this goal, the comprehensive development and strengthening of Armenian statehood must be a top priority for the Armenian people and Armenia.

Մարիամ Թոփակյան
Հայաստան, ԵՊՀ ասպիրանտ
mariam.topakyan@ysu.am
ORCID: 0009-0005-4925-2158

**ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՃԱՆԱԶՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ**

Հիմնաբառեր՝ Ֆրանսահայ կազմակերպություններ, Հայոց ցեղասպանություն, ճանաչում, ֆրանսահայ համայնք, հայ-ֆրանսիական հարաբերություններ, քաղաքական երկխոսություն, Թուրքիա, օրենքի նախագծեր:

Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացում առանցքային դերակատարություն են ունեցել և շարունակում են ունենալ սփյուռքահայ համայնքները: Ֆրանսահայությունը, լինելով պատմականորեն ամուր կազմավորված ու ակտիվ քաղաքական, մշակութային և գիտակրթական դաշտ ունեցող համայնք, հանդես է եկել որպես գաղափարական, կազմակերպչական ու օրենսդրական ճնշման հզոր ուժ՝ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացում:

Դարերի պատմություն, ուրույն դիմագիծ ունեցող ֆրանսահայ համայնքն աչքի է ընկնում իր ամուր կազմակերպական կառուցվածքով, որի շարժիչ ու ամրապնդող ուժը եղել և մնում են ներհամայնքային տարաբնույթ կազմակերպություններն ու միությունները, որոնցից շատերը, բացի ներհամայնքային խնդիրներից, ինչպես անցյալում, այսօր էլ մտահոգված են համազգային նշանակության հիմնահարցերով՝ փորձելով ոչ միայն աջակցել հայնպաստ որոշումների, ծրագրերի կամ նախաձեռնությունների իրականացմանը, այլ նաև տեղական իշխանությունների և միջազգային հանրության ուշադրությունը հրավիրել այդ իրո-

ղությունների վրա՝ դրանք մշտապես քաղաքական օրակարգում պահելով՝ հասնելու հայության համար կարևորագույն կենսահարցերի հանգուցալուծմանը:

Հայ-ֆրանսիական հարաբերությունների համատեքստում իր ուրույն տեղն ունի Հայոց ցեղասպանության հիմնահարցը, որի միջազգային ճանաչմանն ու դատապարտմանն են ուղղված սփյուռքահայ համայնքների ջանքերը: Բացառություն չէ նաև ֆրանսահայ համայնքը, որը տարիների ընթացքում հաջորդական քայլեր ձեռնարկեց՝ Հայոց ցեղասպանության խնդիրն ամենատարբեր մակարդակներով և նախաձեռնություններով ներկայացնելու ֆրանսիական իրականության բոլոր ոլորտներում, որոնք նպաստեցին Ֆրանսիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանը՝ այդ գործընթացում օրինակ հանդիսանալով այլ երկրների համար¹:

Տարիներ շարունակ Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչմանն ու դատապարտմանն են ուղղված սփյուռքահայ՝ այս դեպքում ֆրանսահայ հասարակական, մշակութային, կրթական, բարեսիրական, ինչպես նաև լոբբիստական կազմակերպությունների գործունեությունն ու նախաձեռնությունները, որոնք աշխարհաքաղաքական բազմապիսի զարգացումների և փոփոխությունների պայմաններում էլի ավելի համընդգրկուն են դարձել՝ ներառելով հայության համար կարևորագույն նշանակություն ունեցող հիմնահարցերի համապարփակ շրջանակ:

Ֆրանսահայ համայնքը ներկայացված է մի շարք փոխկապակցված կազմակերպություններով, որոնց գործունեության հիմնական ուղղություններն են՝ քաղաքական լոբբինգ, իրավական պայքար, հանրային կարծիքի ձևավորում և մշակութային հիշողության պահպանում: Սա կարող ենք դիտարկել որպես «փափուկ ուժի» (soft power) դասական օրինակ՝ համայնքի կողմից

¹ Loi n° 2001-70 du 29 janvier 2001 relative à la reconnaissance du génocide arménien de 1915, 29.01.2001, <https://www.legifrance.gouv.fr/loda/id/JORFTEXT-000000403928/>.

պետական որոշումների վրա ազդելու գործում²:

1990-ական թվականների սկզբից Ֆրանսիայում գործում էր «Ապրիլի 24» կոմիտեն, որը 2001 թ. հոկտեմբերի 21-ին հրավիրված արտահերթ ընդհանուր ժողովում վերանվանվեց «Ֆրանսիայի հայկական կազմակերպությունները համակարգող խորհուրդ»³ (այսուհետ՝ ՖՀԿՀԽ – Մ.Թ.)՝ ուրվագծելով իր գործունեության հիմնական նպատակները՝ դրանք գլխավորապես կառուցելով ներհամայնքային և համահայկական խնդիրների շուտափույթ հանգուցալուծման տեսլականի վրա: Այն այսօր առավել ակտիվորեն մասնակցում է ծավալվող քաղաքական գործընթացներին, հանդիպում պետական պաշտոնյաների հետ, կազմակերպում է Հայոց ցեղասպանության տարելիցին նվիրված բազմապիսի միջոցառումներ և քայլերթեր: ՖՀԿՀԽ-ն ունի պաշտոնական գործընկերային հարաբերություններ ինչպես Ֆրանսիայի նախագահի աշխատակազմի, այնպես էլ Սենատի և Ազգային ժողովի տարբեր խմբակցությունների հետ: Հասկանալի է ամենամյա հանդիպում-ընթրիքը Ֆրանսիայի Հանրապետության նախագահի հետ, որտեղ քննարկվում են ոչ միայն Հայոց ցեղասպանության, այլ նաև հայության հիմնարար շահերին առնչվող բազմաբովանդակ հարցեր⁴: Կազմակերպության գործունեության ակնառու օրինակներից են 2015 թ. Հայոց ցեղասպանության 100-րդ տարելիցին նվիրված միջոցառումների կազմակերպումը⁵, 2020-2023 թթ. ֆրանսիական մի շարք քաղաքների քաղաքապետարաններում Արցախի դրոշի բարձրացման խորհրդանշական քայ-

² Nye J., Soft power: The means to success in world politics, Foreign Policy (80), 1990, pp. 153–154, https://www.belfercenter.org/sites/default/files/pantheon-files/files/publication/joe_nye_wielding_soft_power.pdf.

³ CCAF, Histoire, <https://ccaf.info/histoire>.

⁴ Coprésident de CCAF: la France réaffirme la nécessité de la reconnaissance internationale du Génocide arménien, 24.04.2019, <https://armenpress.am/fr/article/972474>.

⁵ Lancement du programme des événements du Centenaire du Génocide Arménien avec la participation du Président français à Paris, 28.01.2015, <https://france.mfa.am/fr/news/2015/01/28/28.01.2015fr/2560>.

լերի իրականացումը՝ որպես քաղաքական ուղերձի արտահայտություն⁶: Ամփոփելով կարող ենք նշել, որ կազմակերպության ջանքերով միայն վերջերս՝ 2022-2024 թթ., կազմակերպվել են 35 հանրային միջոցառումներ, 4 միջազգային գլխաժողով, 3 ցուցահանդես, Հայոց ցեղասպանության ժխտողականության դեմ ներկայացվել են 2 օրենսդրական առաջարկներ⁷:

Առ այսօր ՖՀԿՀԽ-ի անդամ կազմակերպություններն են «Ֆրանսահայ Կապույտ խաչը», Ֆրանսիայի ՀՅԴ գրասենյակը, «Նոր սերունդ» միությունը, ՀԲԸՄ-ն, ՀՄԸՄ-ն, Հայ դատի պաշտպանության հանձնաժողովը, «Համազգային հայ կրթական և մշակութային միությունը», «Սասուն» և «Սուրբ խաչ» ասոցիացիաները և այլն: Գործում են նաև երեք տարածաշրջանային գրասենյակներ՝ Իլ-դը-Ֆրանս (Փարիզ և հյուսիսային շրջաններ), Կենտրոն (Լիոն և կենտրոնական շրջաններ), Հարավ (Մարսել և հարավային շրջաններ)⁸: Կառույցը միավորում է ոչ միայն քաղաքական, այլև հասարակական, գիտակրթական, մշակութային կազմակերպությունների, հետևաբար, ամենատարբեր հետաքրքրություններ ունեցող ֆրանսահայ շրջանակների, որոնք, ինչպես նկատելի է, էլ ավելի մասշտաբային ու ծավալուն են դարձնում կազմակերպության աշխատանքները՝ այդպիսով կառույցին տալով գործունեության ծավալման առավել հարուստ գործիքակազմ և նոր հնարավորություններ:

Իր ակտիվ գործունեությամբ աչքի է ընկնում «UGAB France»-ը՝ «Հայկական բարեգործական ընդհանուր միության» Ֆրանսիայի մասնաճյուղը, որը գլխավորում է կրթական և մշակութային նախաձեռնությունները: Այն կազմակերպել է ցեղասպանության մասին ցուցահանդեսներ՝ Փարիզի քաղաքապետարանում, կրթա-

⁶ Huge Armenian Rally in Paris Seen through the Eyes of an American-Armenian Participant, 21.10.2020, <https://mirrorspectator.com/2020/10/21/huge-armenian-rally-in-paris-seen-through-the-eyes-of-an-american-armenian-participant/>.

⁷ CCAF, <https://annuaire-entreprises.data.gouv.fr/entreprise/conseil-de-coordination-des-organisations-armeniennes-de-france-ccaf-792327827>.

⁸ CCAF Membres, <https://ccaf.info/membres>.

կան սեմինարներ՝ ֆրանսիական դպրոցներում և համալսարաններում, հանդես գալիս կրթական ու մշակութային ամենատարբեր ծրագրերով ու նախաձեռնություններով⁹: Կազմակերպության գործունեության ռազմավարական առաջնահերթություններից էր Հայոց ցեղասպանության մասին ուսուցման ինտեգրումը Ֆրանսիայի պետական դպրոցների պատմության ուսումնական ծրագրում՝ BAC-ի մակարդակում¹⁰: Իսկ 2021 թ.-ից ֆրանսիական հանրակրթական դպրոցներում գործարկվեց «Mémoire partagée» խորագիրը կրող ծրագիրը, որը ներառում էր նաև Հայոց ցեղասպանության մասին իրազեկվածության մակարդակի բարձրացման հարցը¹¹: Պետք է նշել նաև, որ «Զարմանազան» արևմտահայերենի ուսուցման ծրագիրը, որը գործում է Ֆրանսիայում և գրանցված է Ֆրանսիայի կրթության և երիտասարդության նախարարությունում, 2024 թ.-ից ընդլայնել է իր գործունեության շրջանակը: Ինչպես գիտենք, ծրագիրը նպատակ ունի խթանել արևմտահայերենի ուսուցումը և պահպանել հայկական մշակույթը սփյուռքում¹²:

Ակտիվորեն հանդես են գալիս նաև տեղական մշակութային կենտրոնները (Maison de la Culture Arménienne (Marseille, Décines, Valence), որոնք ծառայում են որպես հիշողության տարածման և հանրային իրազեկման օղակներ՝ արդյունավետորեն համագործակցելով քաղաքապետարանների և կրթական հաստատություն-

⁹ UGAB France, Notre Histoire, <https://ugabfrance.org/who-we-are#paragraph-id-893>.

¹⁰ Հայոց ցեղասպանությունը Ֆրանսիայում ներառված է 3-րդ դասարանի կրթական ծրագրում, 21.09.2015, <https://armenpress.am/hy/article/819360>:

¹¹ Semaine de la Mémoire 2021: les replays sont disponibles! 27.09.2021, <https://www.observatoireb2vdesmemoires.fr/publications/semaine-de-la-memoire-2021-les-replays-sont-disponibles>.

¹² Զարմանազան 2023. արևմտահայերենով ամառնային ծրագիրը տեղի պիտի ունենայ Ֆրանսայի Ալպեան լեռներում, 20.01.2023, <https://orer.eu/hy/-/2023/01/20/zarmanazan-2023-france/>:

ների հետ¹³: Այսպես, 2005 թ.-ից մինչև 2023 թ. կենտրոնների կողմից ներկայացրել են 20 ժամանակավոր ցուցադրություններ՝ ակտիվորեն համագործակցելով տեղական իշխանությունների հետ¹⁴:

Այսօր ֆրանսահայ ներհամայնքային կառույցներից հատկապես եռանդուն գործունեություն է ծավալում «Հայ դատի հանձնախմբի» Ֆրանսիայի գրասենյակը (Armenian National Committee of France)¹⁵: Պետք է նշել, որ կազմակերպություններն իրենց գործունեության գերակայություն և առաջնահերթություն են համարում Հայոց ցեղասպանության ճանաչումը և դատապարտումը եվրոպական կառույցների ու երկրների կողմից: Բացի այդ, կարևորում են Թուրքիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման և հատուցմանը հասնելը, այսինքն՝ հայոց պահանջատիրությանն ուղղված գործունեությունը, դրա կազմակերպումը, ինչպես նաև հայերի ցեղասպանության ժխտողականության դեմ պայքարն ու որոշ երկրներում արդեն գործող ժխտողականության քրեականացումը, ինչն ապագայում կբացառի նմանատիպ իրողությունների կրկնությունը՝ պատմական իրադարձություններ, որոնց ծանր հետևանքներն առ այսօր կրում է ողջ մարդկությունը:

Այսինքն, ֆրանսահայ կազմակերպությունների գործունեությունն առաջին հերթին ուղղված է ֆրանսիական իշխանությունների՝ հայության համար բախտորոշ հիմնահարցերի՝ այդ համատեքստում Հայոց ցեղասպանության վերաբերյալ իրազեկվածության մակարդակի բարձրացմանը, այդ խնդիրների առնչությամբ նրանց դիրքորոշումների բացահայտմանը, դրանց

¹³ Maison de la Culture Arménienne, A propos de nous, <https://mcadecines.com/a-propos-de-nous/>.

¹⁴ Maison de la Culture Arménienne, <https://mcadecines.com/>.

¹⁵ ANC France welcomes Senate's pro-Armenian resolution, expects the same from the National Assembly, 16.11.2022, <https://en.armradio.am/2022/11/16/anc-france-welcomes-senates-pro-armenian-resolution-expects-the-same-from-the-national-assembly/>.

գնահատմանը, արձագանքին և այդ ուղղությամբ համապատասխան քայլերի ու նախաձեռնությունների իրականացմանը՝ ներկայացնելով հայության, այսինքն՝ ֆրանսահայ համայնքի ու միաժամանակ ամբողջ աշխարհի հայության միասնական տեսակետներն այդ հիմնահարցերի վերաբերյալ՝ ծառայելով նաև իբրև կապող կամուրջ համայնքի և նրա ընտրած պաշտոնական շրջանակների միջև:

Ֆրանսահայ լոբբիստական կազմակերպությունների համառ ջանքերի արդյունքում էր, որ 1998 թ. Ֆրանսիայի խորհրդարանը ճանաչեց Հայոց ցեղասպանության փաստը¹⁶, իսկ 2001 թ. Ֆրանսիայի Սենատն ընդունեց Հայոց ցեղասպանության փաստը ճանաչելու մասին օրենքը¹⁷, պատմական իրողություն, որն իր գրանցած արդյունքներով և նշանակությամբ նոր պատմափուլ նախանշեց Հայոց ցեղասպանության՝ առ այսօր ծավալվող միջազգային ճանաչման ու դատապարտման գործընթացում:

Դեպքերի նմանօրինակ զարգացումը չէր կարող ազդեցություն չունենալ ֆրանս-թուրքական հարաբերությունների վրա: Թուրքական կողմի սպառնալիքները հաճախ հասնում էին աննախադեպ չափերի՝ փորձելով կասեցնել ֆրանսիական իշխանությունների հայանպաստ քայլերը և չեզոքացնել նրանց հայամետ դիրքորոշումները: Թուրքական կողմը նախևառաջ սպառնում էր դադարեցնել ֆրանս-թուրքական համագործակցությունն ինչպես քաղաքական, այնպես էլ ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող և փոխշահավետ առևտրատնտեսական ոլորտում¹⁸: Սա-

¹⁶ Il y a vingt ans, les députés français votaient la reconnaissance du génocide arménien, 29.05.2018, <https://www.lefigaro.fr/international/2018/05/29/01003-20180529ARTFIG00112-il-y-a-vingt-ans-les-deputes-francais-votaient-la-reconnaissance-du-genocide-armenien.php>.

¹⁷ La France a reconnu le génocide arménien de 1915, 30.01.2001, https://www.lemonde-e.fr/archives/article/2001/01/18/la-france-a-reconnu-le-genocide-armenien-de-1915_138503_1819218.html.

¹⁸ Տե՛ս **Topakyan M.**, The Issue of the Armenian Genocide in France-Turkey Relations, Region and the World, 2025 (1), Yerevan, pp. 15-16.

կայն, պետք է նշել, որ այս ամենը միանշանակ չէր. դրանք, ինչպես տեսանք, ընդամենը սպառնալիքներ էին, իսկ երկկողմ փոխշահավետ առևտրատնտեսական հարաբերությունները շարունակում էին նույն տեմպով զարգանալ և ժամանակի ընթացքում էլ ավելի ընդլայնվել և ամրապնդվել¹⁹: Բացի այդ, ֆրանսիական իշխանությունները, հաշվի առնելով ֆրանս-թուրքական հարաբերությունների նշանակությունը, միաժամանակ չէին կարող հաշվի չառնել նաև բազմամարդ ֆրանսահայ համայնքի դերը՝ որպես ազդեցիկ ընտրազանգվածի, որի քաղաքական կշիռը նույնպես կարևորագույն նշանակություն և դեր կարող էր ունենալ հետագա քաղաքական գործընթացներում ու իրադարձություններում:

2001 թ.՝ Ֆրանսիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումից հետո, հաջորդ կարևոր փուլն էր հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության ժխտման քրեականացումը Ֆրանսիայում: 2012 թ. ընդունված ժխտողականությունը քրեականացնող օրենքը բախվեց Ֆրանսիայի Սահմանադրական խորհրդի դիմադրությանը, որը հակասահմանադրական ճանաչեց այն՝ հղում անելով խոսքի ազատությանը²⁰: 2016 թ. երկրի նախագահի աշխատակազմի և ՖՀԿՀԽ-ի ճնշման ներքո ընդունվեց նոր օրինագիծ, որով ցեղասպանության ժխտումը քրեականացվում էր ոչ թե պատմական տեսակետ ունենալու հիմքով, այլ՝ ռասայական ատելության տարածման հարթությունում: Այստեղ կարելի է խոսել «ռազմավարական իրավական ճկունության» մասին, որը կիրառեցին ֆրանսահայ իրավաբանները՝ խնդիրն առաջ տանելու համար²¹:

¹⁹ Տե՛ս **Թովակյան Մ.**, Ֆրանսիա-Թուրքիա հարաբերությունները ձևավորող տեսական հիմքերը, երկկողմ հարաբերությունները կարգավորող իրավապայմանագրային դաշտը, «Տարածաշրջան և աշխարհ», 2025, հ. 3, Եր., էջ 35-36:

²⁰ Proposition de loi visant à réprimer la contestation de l'existence des génocides reconnus par la loi, 29.02.2012, <https://www.vie-publique.fr/loi/20852-proposition-de-loi-visant-reprimer-la-contestation-de-l'existence-des>.

²¹ Pénaliser la négation du génocide arménien par une nouvelle loi, <https://www.luiipresident.fr/francois-hollande/engagement/nouvelle-loi-penalisant->

Այսինքն, ֆրանսահայ լոբբիստական կազմակերպությունների հիմնական օրակարգային խնդիրը Ֆրանսիայի, ապա նաև միջազգային հանրության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչմանն ու դատապարտմանը հասնելն էր, և այս ամենի հետ կապված որոշակի հաջողությունների հասնելուն գուգահեռ օրակարգային հիմնախնդիր դարձավ նաև Արցախի Հանրապետության միջազգային ճանաչման գործընթացին սատարելը՝ հաշվի առնելով նաև Արցախյան հիմնախնդրի առնչությամբ ֆրանսիական կողմի պաշտոնական դիրքորոշումն ու քաղաքականությունը²²։ Այս ամենն արդյունքն էր այն բանի, որ ժամանակի ընթացքում հայկական սփյուռքը սկսել էր ավելի պարզորոշ գիտակցել, որ Արցախյան հիմնախնդիրն առնվազն պակաս կարևոր չէ հայապահպանության և հայրենիքի պահպանության տեսանկյունից, ուստի հայկական լոբբիստական խմբերը և կազմակերպությունները սկսել էին ակտիվորեն զբաղվել նաև այս հիմնախնդրով, այդ թվում՝ Արցախի միջազգային ճանաչման հարցով։ 2020 թ. Արցախյան 44-օրյա պատերազմից, շուրջ 10 ամիս տևած շրջափակումից ու Ադրբեջանի կողմից 2023 թ. սեպտեմբերյան ագրեսիայի հետևանքով Արցախի ամբողջական հայաթափումից հետո, 2024 թ. հունվարի 17-ին Ֆրանսիայի Սենատը ընդունեց բանաձև, որով դատապարտեց Ադրբեջանի կողմից Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային ժառանգության ոչնչացման քաղաքականությունը։ Բանաձևը կոչ էր անում միջազգային հանրությանը՝ ապահովել հայկական մշակութային և կրոնական ժառանգության պաշտպանությունը, և պահանջում Ադրբեջանի հետա-

negation-du-genocide-armenien-355/. Տե՛ս նաև **Մարտիկյան Ա.**, Պատմություն և իրավունք. Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնելու դեմ ուղղված Պիեր Նորայի «փաստարկները», «Վեմ» համահայկական հանդես, Եր., 2013, N 2, էջ 10-31:

²² Տե՛ս **Թովակյան Մ.**, Ֆրանսիայի Հանրապետության դիրքորոշումը և քաղաքականությունը Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ, «Գիտական Արցախ», հ. 3 (6), Եր, 2020, էջ 270-271:

ցումը ՅՈՒՆԵՍԿՕ-ի համապատասխան կոմիտեից²³: Նույն թվականի հունվարին Փարիզի Բաստիլի հրապարակում անցկացվեց «Լեռնային Ղարաբաղ. վտանգված հայկական ժառանգություն» խորագրով բացօթյա ցուցահանդեսը, որը կազմակերպվել էր Փարիզի քաղաքապետարանի և «L'Œuvre d'Orient» կաթոլիկ կազմակերպության համագործակցությամբ՝ ներկայացնելով Լեռնային Ղարաբաղի պատմական և մշակութային ժառանգության 30 բացառիկ լուսանկար²⁴:

Ֆրանսահայ կազմակերպությունները հաճախ բողոքի ակցիաներով էին հանդես գալիս թուրք կամ ադրբեջանցի քաղաքական գործիչների պաշտոնական այցերի կապակցությամբ՝ փորձելով ներագդել ֆրանսիական իշխանությունների վրա՝ կանխելու համար նրանց կողմից հակահայկական նախաձեռնությունների իրականացումը: Այդ աշխատանքները շարունակվում են առ այսօր:

Հայոց ցեղասպանության թեման լայնորեն քննարկվում էր նաև ֆրանսիական գիտական, մշակութային, հասարակական շրջանակների կողմից: Հայոց ցեղասպանության վերաբերյալ առ այսօր կատարվում են ուսումնասիրություններ, կազմվել են փաստաթղթերի և արխիվային նյութերի ժողովածուներ, որոնք նպաստում են ֆրանսիական իշխանությունների հայանպաստ դիրքորոշումների ամրապնդմանը և նրանց կողմից Հայոց ցեղասպանության վերաբերյալ նոր նախաձեռնությունների իրագործմանը: Ֆրանսահայ կազմակերպությունները շարունակաբար իրականացնում են հանրային իրազեկման արշավներ, ինչպես օրինակ՝

²³ Տե՛ս Ֆրանսիայի Սենատն ընդունեց Հայաստանի Հանրապետության տարածքային ամբողջականությանն աջակցող, Ադրբեջանի նկատմամբ պատժամիջոցներ և հայ բնակչության՝ Լեռնային Ղարաբաղ վերադարձի իրավունքի երաշխիքներ պահանջող բանաձև, 17.01.2024, <https://france.mfa.am/hy/news/2024/01/17/Armenie/12466>:

²⁴ Փարիզի Բաստիլի հրապարակում կազմակերպվել է «Լեռնային Ղարաբաղ՝ վտանգված հայկական ժառանգություն» խորագիրը կրող բացօթյա ցուցահանդես, 10.01.2024, <https://www.aravot.am/2024/01/10/1393027/>:

Հայոց ցեղասպանության մասին փաստավավերագրական ֆիլմերի ցուցադրություններ՝ համագործակցությամբ ARTE²⁵, France 3²⁶, Le Monde²⁷ պարբերականի հետ: Իրենց կրթամշակութային և գիտական ազդեցությամբ կարևորագույն նշանակություն ունեցան Հայոց ցեղասպանագիտության թեմայով Ֆրանսիայում համալսարանական դասընթացները՝ Սորբոնի, INALCO-ի և Sciences Po-ի շրջանակներում, երիտասարդության ներգրավմամբ՝ «100 ans, 100 voix» երիտասարդական հարթակի միջոցով²⁸: Այս աշխատանքների արդյունքում, ըստ 2022 թ. IPSOS-ի կողմից ներկայացված տվյալների, ֆրանսիացիների ավելի քան 77%-ը տեղյակ է Հայոց ցեղասպանության մասին, ինչը զգալի ձեռքբերում է համեմատած եվրոպական այլ երկրների հետ²⁹:

Բացի այդ, Ֆրանսահայ կազմակերպությունները համագործակցում են Ֆրանսիայում գործող ինչպես հրեական, այնպես էլ հրեականության ժխտման դեմ պայքարող կառույցների հետ՝ համախմբելով պայքարը պատմական արդարության հաստատման շուրջ: Բազմաթիվ համատեղ ծրագրեր են իրականացվել «Shoah»

²⁵ Le génocide arménien, <https://educ.arte.tv/program/le-genocide-armenien>.

²⁶ France 3 films documentary about Armenian Genocide, 27.08.2015, <https://armenpress.am/en/article/816520>.

²⁷ «Une histoire de fou » : Guédiguian se souvient du génocide arménien, 20.05.2015, https://www.lemonde.fr/festival-de-cannes/article/2015/11/10/une-histoire-de-fou-guediguian-se-souvient-du-genocide-armenien_4637459_766360.html#:~:text=de%20Cannes%202025-%2C2%AB%20Une%20histoire%20de%20fou%20%C2%BB%20%3A%20Gu%C3%A9diguian%20se%20souvient%20du%20g%C3%A9nocide,la%20justice%20et%20le%20pardon.

²⁸ L'Arménie commémore les 100 ans du génocide, 24.04.2015, <https://www.francebleu.fr/infos/international/l-armenie-commemore-les-100-ans-du-genocide-1429856189>.

²⁹ Five Billion People Worldwide Recognize the Armenian Genocide, 08.12.2015, <http://asekose.am/en/post/five-billion-people-worldwide-recognize-the-armenian-genocide>.

հիշատակի հիմնադրամի³⁰ և «Mémorial de la Shoah»-ի³¹ հետ: Այդպիսով, ֆրանսահայ կազմակերպությունները ստեղծել են քաղաքացիական համագործակցության լայն ցանց: Բազմաթիվ միջոցառումներ կազմակերպվում են նաև Ֆրանսիայում գործող ասորի, թամիլ և աֆրիկյան համայնքների հետ: Այս համագործակցությունները հիմք են ստեղծում ցեղասպանությունների համադրության քաղաքականության համար՝ առաջին հերթին պայքար ժխտողականության ընդհանուր դաշտում (օրինակ՝ Yad Vashem-ի և Mémorial de la Shoah-ի հետ համատեղ ֆորումների կազմակերպումը՝ ցեղասպանությունների համեմատական վերլուծության թեմայով)³²:

Ֆրանսիայում տարիների ընթացքում ավելանում են նաև Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված հուշարձանների թիվը: 2023 թ. հունիսի 25-ին՝ Բորդո քաղաքում, տեղադրվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքար, որի պատվանդանին փորագրված է. «Ի հիշատակ 1915 թվականի ցեղասպանության 1.500.000 հայ զոհերի և Լեոնային Ղարաբաղի նահատակների, Ֆրանսիայի համար զոհված հայերի հիշատակին»³³:

Ֆրանսահայ համայնքի ծավալված ակտիվ գործունեությունից բացի, հայանպաստ դիրքորոշումների ամրապնդման գործում կարևոր նշանակություն ունեցան հայ-ֆրանսիական երկկողմ հաճախակի փոխայցելությունները, որոնց օրակարգում մշտա-

³⁰ USC Shoah Foundation commemorates 110th Anniversary of the Armenian Genocide, 15.04.2025, <https://armenianweekly.com/2025/04/10/usc-shoah-foundation-commemorates-110th-anniversary-of-the-armenian-genocide/>.

³¹ Armenian National Archive, Shoah Memorial of Paris to conduct studies for genocide prevention, 24.09.2015, <https://armenpress.am/en/article/989190>.

³² Holocaust Remembrance Day and Armenian genocide: A moment of shared remembrance – opinion, 23.04.2025, <https://www.jpost.com/opinion/article-851146>.

³³ Ֆրանսիայի Բորդո քաղաքում տեղադրվեց Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված խաչքար, 25.06.2023, https://lyon.mfa.am/hy/news/2023/06/25/ly_bor/11729:

պես առկա էր Հայոց ցեղասպանության հիմնախնդիրը³⁴:

Այսինքն, Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը Ֆրանսիայի Հանրապետությունում չնայած ներքին և արտաքին որոշակի խոչընդոտներին, ըստ էության, հաջողել է: Ֆրանսիայում Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման վերաբերյալ տարբեր ժամանակաշրջաններում հայտարարություններով ու ելույթներով հանդես են եկել ֆրանսիական քաղաքական վերնախավի բազմաթիվ ներկայացուցիչներ: Վերլուծելով այդ ելույթները՝ կարելի է եզրակացնել, որ դրանով նրանք ձգտում էին նաև ստանալ բազմամարդ և ազդեցիկ հայ համայնքի աջակցությունը՝ սեփական քաղաքական նպատակներին և հետաքրքրություններին հետամուտ լինելով: Փաստենք նաև, որ Ֆրանսիայի Հանրապետության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը վճռորոշ նշանակություն ունեցավ հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության միջազգային ճանաչման և դատապարտման գործընթացում:

Ամփոփելով, կարելի է նշել, որ ֆրանսահայ կազմակերպությունները և կառույցներն ինչպես նախկինում, այնպես էլ ներկայումս ծավալում են նպատակային եռանդուն գործունեություն՝ հանուն Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման և դատապարտման, պատմական արդարության վերականգնման, ինչպես նաև աշխարհասփյուռ հայության շահերի ու իրավունքների պաշտպանության, և, ի վերջո, ազգային ինքնության պահպանման և ամրապնդման՝ շարունակական փոփոխությունների և աշխարհաքաղաքական ամենատարբեր զարգացումների պայմաններում:

Այսպիսով, ֆրանսահայ համայնքի կազմակերպված, բազմաշերտ և հետևողական գործունեությունը նպաստել է ոչ միայն Ֆրանսիայում, այլ նաև ԵՄ երկրների շրջանակներում Հայոց

³⁴ **Թովակյան Մ.**, Ֆրանսիայի Հանրապետության քաղաքականությունը Հայոց ցեղասպանության հարցում, ԵՊՀ ՈՒԳԸ գիտական հոդվածների ժողովածու երիտասարդական գիտական պարբերական, հումանիտար և հասարակական գիտություններ, 1.3(33), Եր., 2020, էջ 390-391:

ցեղասպանության ճանաչման գործընթացի առաջխաղացմանը: Նրանք կարողացել են զուգահեռաբար օգտագործել քաղաքական լոբբինգը, հանրային կարծիքի ձևավորումը, իրավական պայքարը և կրթությունը՝ ստեղծելով օրինակելի մոդել: Ֆրանսահայ համայնքի փորձն արդեն արտահանվում է միջազգային հարթակներ՝ որպես լոբբիստական և քաղաքացիական ակտիվության մոդել: Հայկական դիվանագիտությունը հաճախ հենվում է ֆրանսահայ կառույցների՝ ԵՄ, ՄԱԿ և UNESCO մակարդակներում ունեցած կապերի և հեղինակության վրա:

Եվ, կարելի է փաստել, որ Ֆրանսահայ համայնքը հանդիսանում է պարա-դիվանագիտական դերակատար, որը գործում է պետության կողքին, բայց ոչ դրա փոխարեն: Ֆրանսահայության փորձը կարող է ծառայել որպես կարևոր ուղեցույց՝ ցեղասպանություն վերապրած այլ ժողովուրդների համար՝ իրենց պատմական իրավունքի պաշտպանության և ճանաչման պայքարում:

Мариам Топакян

Армения, аспирант ЕГУ

mariam.topakyan@ysu.am

ORCID: 0009-0005-4925-2158

ДЕЯТЕЛЬНОСТЬ АРМЯНО-ФРАНЦУЗСКИХ ОРГАНИЗАЦИЙ В ПРОЦЕССЕ ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН

Ключевые слова: армяно-французские организации, Геноцид армян, признание, армянская община Франции, армяно-французские отношения, политический диалог, Турция, законодательные инициативы.

Армянская община Франции, одна из самых влиятельных в Армянской диаспоре, отличается своей многовековой историей и прочной организационной структурой. Ее основу составляют

многочисленные общинные организации, которые не только сохраняют армянскую культурную идентичность, но и активно участвуют в продвижении вопросов, имеющих национальное значение. Эти организации способствуют принятию проармянских решений, программ и инициатив на местном и национальном уровнях во Франции. Их последовательные усилия обеспечивают сохранение приоритетности армянских вопросов в политической повестке Французской Республики.

Одним из ключевых направлений их деятельности стало международное признание и осуждение Геноцида армян, что в 1998 году было провозглашено приоритетом внешней политики Республики Армения. Армянская община Франции сыграла решающую роль в этом процессе, проводя масштабные информационные и правозащитные кампании в различных слоях французского общества. Благодаря этим усилиям Франция официально признала Геноцид армян, став примером для других стран в деле восстановления исторической справедливости.

Цель данного исследования - осветить действия и достижения армяно-французских общинных организаций в продвижении процесса признания и осуждения Геноцида армян. Работа анализирует их стратегические подходы, достигнутые результаты и общий эффект их деятельности как во Франции, так и за её пределами.

На сегодняшний день эти организации продолжают оставаться активными и эффективными. Проявлением их постоянной деятельности является высокий уровень осведомлённости французских властей в данном вопросе, постоянное наличие армянской тематики во внутренней и внешней политике Франции, а также принятие ряда проармянских резолюций. Своей неустанной деятельностью армянская община Франции не только сохраняет историческую память, но и оказывает влияние на формирование государственной политики и общественного мнения в поддержку национальных интересов Армении.

Mariam Topakyan

Armenia, PhD student of YSU

mariam.topakyan@ysu.am

ORCID: 0009-0005-4925-2158

THE ACTIVITIES OF FRENCH-ARMENIAN ORGANIZATIONS IN THE PROCESS OF RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE

Keywords: French-Armenian organizations, Armenian Genocide, recognition, French-Armenian community, Armenian-French relations, political dialogue, Turkey, legislative initiatives.

The French-Armenian community, one of the most influential in the Armenian Diaspora, is distinguished by its centuries-old history and robust organizational structure. At the heart of its strength lie various inter-community organizations that not only preserve cultural identity but also engage in advocacy on issues of national significance. These organizations actively promote pro-Armenian decisions, programs, and initiatives at the local and national levels in France. Their consistent efforts ensure that matters of vital importance to Armenians remain on the political agenda of the French state.

A key focus of these organizations has been the international recognition and condemnation of the Armenian Genocide, which has been declared as a top foreign policy priority of the Republic of Armenia since 1998. The Armenian community of France has played a critical role in this cause, undertaking continuous advocacy through diverse initiatives across French society. Thanks to these efforts, France officially recognized the Armenian Genocide, becoming an example for other countries in restoring historical justice.

The purpose of this study is to highlight the actions and accomplishments of French-Armenian inter-community organizations in advancing the recognition of the Armenian Genocide. It aims to examine their strategic approaches, the milestones they have reached,

and the broader impact of their work within France and beyond.

Notably, these organizations continue to be active and effective today. Their ongoing advocacy is reflected in the high level of awareness among French authorities, the passage of several pro-Armenian resolutions, and the broader visibility of Armenian issues in France's domestic and international affairs. Through their enduring efforts, the French-Armenian community not only preserves historical memory but also shapes policy and public discourse in support of Armenian national interests.

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱԶՈՒՄԸ ՇՎԵԴԻԱՅՈՒՄ

Հիմնաքառեր՝ Շվեդիա, Հայոց ցեղասպանություն, ցեղասպանության ճանաչում և դատապարտում, ցեղասպանության մասին բանաձև, Ռիքսդագ, Եվրոպայի հայերի միություն, Բյորն Սյոդեր:

Շվեդիան, արևմտյան այլ երկրների պես, տակավին 1890-ականների համիդյան կոտորածների ժամանակաշրջանից տեղյակ է եղել հայերի նկատմամբ Օսմանյան կայսրությունում կիրառվող ցեղասպանությանը: Մասնավորապես ուշագրավ է, որ 1910-ականներին, երբ «ցեղասպանություն» եզրը տակավին չէր շրջանառվում, որոշ սկանդինավցիներ գործածել են այն: Շվեդ քաղաքական գործիչ Յալմար Բրանթինգը 1917 թ. իր մի ելույթում Օսմանյան կայսրությունում հայ ազգաբնակչության զանգվածային կոտորածները բնութագրել է որպես «կազմակերպված և սիստեմատիկաբար իրագործված ցեղասպանություն»՝ օգտագործելով «folk-mord» եզրը¹, որ բառացի ազգասպանություն է նշանակում: Նմանապես դանիացի Օգե Մեյեր Բենեդիկտսենը 1925 թ. հրատարակած իր գրքում օգտագործել է «folkemord» եզրը:

Շվեդիայում Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացը սկսվել է XX դարի վերջին՝ տեղի հայ համայնքի ակտիվիստների և հայկական հետաքրքրություններ ունեցող մի քանի շվեդ մտավորականների նախաձեռնությամբ: Առաջին անգամ Հայոց ցեղասպանությունը ճանաչելու վերաբերյալ քայլեր կատարել է Շվեդիայի հայկական միությունները համադրող կենտրոնը (նախագահ՝ Կարո Հակոբյան): Այդ կենտրոնի նախաձեռնությամբ

¹ Տե՛ս «Social-Demokraten», Stockholm, 28.03.1917:

1999 թ. դեկտեմբերի 4-ին Ուփսալայում կայացած խորհրդակցական հանդիպման ժամանակ կազմվել է Հայոց ցեղասպանության ճանաչման հանձնաժողով²: Հիմնական անդամներ են ընտրվել ազգագրագետ, պրոֆեսոր Օքե Դաունը, պատմաբան Նիլս Լյովը, հանձնաժողովին օժանդակել են 1999–2002 թթ. Շվեդիայի խորհրդարանի հայազգի պատգամավոր, արտաքին հարաբերությունների հանձնաժողովում ձախ կուսակցության ներկայացուցիչ Մուրադ Արթինը և տարբեր շվեդ գործիչներ: Ծնունդով իրաքահայ Մուրադ Արթինն առաջինն էր, որ 1999 թ. Շվեդիայի խորհրդարանում՝ Ռիքսդագում, կոչ է արել ճանաչել Օսմանյան կայսրությունում 1915 թ. հայերի, հաջորդ տարի դրան գումարված՝ նաև հույների, ասորիների և արամեացիների ցեղասպանությունը, սակայն խորհրդարանը մերժել է այդ առաջարկը³:

2000 թ. հունվարի 20-ին Ստոկհոլմի ազգագրության ինստիտուտում Օքե Դաունի և Հայոց ցեղասպանության հատուկ հանձնաժողովի նախաձեռնությամբ տեղի է ունեցել Մեծ եղեռնին նվիրված սեմինար⁴: Նույն թվականի հունվարի 26-28-ին Շվեդիայի վարչապետ Յորան Փերսոնի ղեկավարությամբ Ստոկհոլմում կայացել է միջազգային գիտաժողով՝ նվիրված ցեղասպանության ենթարկված ժողովուրդներին, առաջին հերթին՝ հրեաներին: Այդ միջոցառմանը հայերը հրավիրված չեն եղել, ինչն արդարացի վրդովմունք է առաջացրել հայության շրջանում, բազմաթիվ բողոքի նամակներ են հղվել վարչապետին: Սակայն գիտաժողովի ընթացքում մի քանի անգամ հիշատակվել է հայ ժողովուրդը. մասնավորապես հունվարի 28-ին վարչապետ Փերսոնը Թուրքիայի և բոլոր մասնակից երկրների ներկայությամբ տվել է Հա-

² Տե՛ս Զեղասպանության ճանաչման հետքերով, «Նոր հորիզոն», Ուփսալա, 2000, թ. 2-3, էջ 4:

³ **Հովհաննիսյան Ա.**, Հպարտ եմ, որ Շվեդիան ճանաչեց Հայոց ցեղասպանությունը. հարցազրույց վանեցի Մուրադ Արթինի հետ, <https://news.am/arm/news/304068.html> (մուտք՝ 20.02.2016):

⁴ Տե՛ս Հայկական ցեղասպանության նվիրված սիմպոզիում Ստոքհոլմում, «Նոր հորիզոն», Ուփսալա, 2000, թ. 1, էջ 2-3:

յաստանի անունը՝ այդպիսով կանաչ լույս վառելով ապագա գործունեության համար: «Կարող ենք եզրակացնել, որ վարչապետի այդ հայտարարությունը մեծ նշանակություն ունի մեզ համար, քանի որ դրանով Շվեդիայի պետությունից և ժողովրդից ակնկալվելիք գործնական քայլերի համար հող է նախապատրաստվում», – գրվել է շվեդահայ մամուլում⁵:

Եվ իսկապես, նույն 2000 թ. մարտի 29-ին Ռիքսդագը, վավերացրել է հայերի նկատմամբ Օսմանյան կայսրության իրականացրած ցեղասպանությունը ճանաչելու անհրաժեշտությունը: Ունկնդրելով Արտաքին քաղաքականության հանձնախմբի՝ հայերի ցեղասպանության ճանաչման և դատապարտման մասին զեկույցը, խորհրդարանը միաձայն ընդունել է հանձնախմբի պատրաստած բանաձևը: Արտաքին հարաբերությունների հանձնախումբն իր զեկույցում գրել է. «Հայ ժողովրդի ցեղասպանության պաշտոնական հայտարարությունը և ճանաչումը կարևոր ու անհրաժեշտ է: 1985 թ. ՄԱԿ-ը և Եվրոպական Խորհրդարանը հաստատեցին, որ Օսմանյան կայսրությունը XX դարի սկզբում ցեղասպանություն է իրականացրել հայ ժողովրդի նկատմամբ: Արտաքին գործերի մշտական հանձնաժողովը կարծում է, որ որքան ավելի բաց Թուրքիան լինի, այնքան ուժեղ կլինի Թուրքիայի ժողովրդավարական ինքնությունը: Ուստի կարևոր է, որ անկողմնապահ անկախ և միջազգային հետազոտություններ իրականացվեն հայ ժողովրդի նկատմամբ կատարված ցեղասպանության վերաբերյալ: Չափազանց կարևոր է, որ 1915 թ. և դրանից հետո տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ բաց և պատմական ըմբռնում զարգացվի: Այս առումով բարելավումը կարևոր կլինի նաև ամբողջ Կովկասի տարածաշրջանում կայունության և զարգացման համար»⁶:

⁵ Հունվարի 26-28-ին Ստոքհոլմում տեղի ունեցավ հիմնականում հրեաների ցեղասպանությանը նվիրված միջազգային կոնֆերանս, «Նոր հորիզոն», Ուփսալա, 2000, թ. 1, էջ 4:

⁶ Sweden Parliament Report March 29, 2000, http://www.genocide-museum.am/eng/Sweden_Parliament_Report.php (մուտք՝ 22.08.2005):

Այս տեքստը պաշտոնապես չի ընդունվել, սակայն փաստացի կատարվել է առաջին քայլը՝ Շվեդիայում Հայոց ցեղասպանության պետականորեն ճանաչման հարցը մտել է քննարկման փուլ: Շվեդիայում սկսել են կազմակերպվել Հայոց ցեղասպանությանը նվիրված համաժողովներ: Այսպես, 2001 թ. ապրիլի 24-ին Շվեդիայի հայկական միությունները համադրող կենտրոնի նախաձեռնությամբ Ստոկհոլմում նշվել է Հայոց ցեղասպանության 86-րդ տարելիցը, որին զեկուցումներով հանդես են եկել Օքե Դաունը, Յորան Գյունները և այլ շվեդ և հայ մտավորականներ⁷: Ժամանակ առ ժամանակ Ռիքսդագի անդամներն արժարժել են այդ հարցը ոչ միայն Շվեդիայում, այլև համաեվրոպական կառույցներում: Այսպես, 2002 թ. Եվրախորհրդարանում Հայոց ցեղասպանության պաշտոնական ճանաչման հարց է բարձրացրել շվեդական կանաչների խմբակցության անդամ Փեր Գարթոնը: 2005 թ. օգոստոսին Շվեդիայի Ժողովրդական կուսակցությունը (լիբերալները) իրենց կուսակցության համագումարում ճանաչել է 1915 թ. ցեղասպանությունը՝ առաջարկելով, որ *«Եվրոպական Միությունը պետք է ուժեղ ճնշում գործադրի Թուրքիայի վրա՝ ճանաչելու հայերի, ասորիների, սիրիացիների, քաղղեացիների և պոնտացի հույների նկատմամբ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ իրականացված ցեղասպանությունը»*:

2008 թ. հունիսին մի շարք պատգամավորների կողմից ներկայացված Հայոց ցեղասպանության ճանաչման նախագիծը դարձյալ քննարկվել է Շվեդիայի խորհրդարանում և մերժվել: Ըստ շվեդաբնակ պատմաբան Վահագն Ավետյանի՝ *««Դագեն» թերթում (2008 թ. հունիսի 13) պատգամավոր Ալֆ Սվենսոնը (քրիստոնյա-դեմոկրատ) մատնանշել է, որ խորհրդարանն, ի վերջո, անուղղակիորեն ճանաչում է ցեղասպանությունը, երբ ասվում է, որ «Հանձնաժողովը հասկանում է, որ այն, ինչ պատահել է հայերին, ասորիներին և քաղղեացիներին Օսմանյան կայսրության օրոք, հա-*

⁷ Տե՛ս **Հակոբյան Կ.**, Շվեդիայում մեծ հանդիսությամբ նշվեց ցեղասպանության 86-րդ տարելիցը, «Նոր հորիզոն», Ուփսալա, 2001, թ. 2, էջ 1-2:

վանաբար, դիտվում է որպես ցեղասպանություն»: Կարող է այդպես թվալ, բայց տեսնենք, թե ինչ է նշանակում Թուրքիայում 1915 թ. ցեղասպանությունն իր իսկական բնույթով ճանաչելու մերժումը: Հենց այնպես, ինչպես գիտնականները նշել են խնդրագրում (ստորագրել են ավելի քան 60 համաշխարհային առաջատար ցեղասպանագետներ), ցեղասպանությունը ճանաչելուց հրաժարվելը ոչ այլ ինչ է, քան դրա ժխտմանն աջակցել: Շվեդիայի խորհրդարանի որոշումն արագորեն գաղտնալսել են թուրքական լրատվամիջոցները և լուրը հրապարակվել է մի քանի թերթերում: «Հուրիեթը» (2008 թ. հունիսի 14) մեջբերում է «Արդարություն և զարգացում» կուսակցության անդամ Էգեման Բադրշին (այսինքն՝ նույն «դեմոկրատական» ուժերին, որոնք Շվեդիայի Արտաքին գործերի կոմիտեն ցանկանում է խթանել) և վարչապետի խորհրդականին՝ իր երախտագիտությունը հայտնելով Շվեդիայի խորհրդարանին «այսպես կոչված ցեղասպանության» վերաբերյալ «հայկական պնդումները» մերժելու համար: Ըստ տեքստի շարունակության՝ «Մոտ 300,000 հայեր և առնվազն հավասար թվով թուրքեր սպանվել են քաղաքացիական ընդհարումների ժամանակ, երբ հայերը, Ռուսաստանի աջակցությամբ, 1915 թ. ոտքի են կանգնել օսմանցիների դեմ»: Այսպիսով, այժմ Շվեդիայի խորհրդարանի կողմից աջակցվող հայերն են, որ սպանել են ավելի շատ թուրքերի և քրդերի և ոչ թե հակառակը, իսկ «անուղղակիորեն ճանաչված» ցեղասպանությունը պարզապես «հայկական պնդումներ» են:Նմանատիպ հրապարակումներ են ունեցել «Զաման», «Թրրքիշ ուիքլի» և այլ թերթեր: Եթե այժմ սրանք են Թուրքիայի լիբերալ ուժերը, կարելի է պատկերացնել, թե ինչ են արել «ծայրահեղական» կազմակերպությունները Շվեդիայի ցեղասպանության ժխտման հետ կապված:

....Այն 37 պատգամավորները, որոնք քվեարկել են 1915 թ. ցեղասպանության ճանաչման օգտին, արժանի են ամենայն գովասանքի և պատվի, հատկապես նրանք, ովքեր արհամարհում են իրենց կուսակցական գծերն ու ներկայացված ապատեղեկատվությունը և փոխարենը հետևում են իրենց սեփական սկզբունք-

ներին և առկա փաստերին: Ճանաչումը մերժելու օգտին կողմ քվեարկած որոշ պատգամավորների հարցաքննությունից հետո պարզ դարձավ, որ այդ հարցում տեղեկացվածություն գրեթե չկա: Պատգամավորները քիչ թե շատ կուրորեն հետևել էին արտգործնախարարության «հանձնարարականին»: Այսպիսով, սխալ որոշման և պատգամավորների շրջանում առկա ապատեղեկատվության մեղքի մի մասը պետք է բարդվի մեր կազմակերպությունների վրա, որոնք պետք է ժամանակին պատգամավորներին տրամադրեին ճիշտ տվյալներ, բանաձևեր, զեկույցներ և այլն»⁸:

Ռիքսդագում Հայոց ցեղասպանության ճանաչման նախագիծը դարձյալ շրջանառության մեջ է դրվել նույն 2008 թ. աշնանը: Հոկտեմբերի 2-ին ընդդիմադիր կուսակցությունները՝ սոցիալ-դեմոկրատները, կանաչները, լիբերալները և ձախերը, ստորագրել են Շվեդիայի խորհրդարանի որոշումը՝ բաղկացած չորս կետից կազմված առաջարկներից: Մեջբերենք փաստաթղթի համապատասխան հատվածները.

«1. *Խորհրդարանը կառավարությանը հայտարարում է իր որոշման մասին՝ համաձայն առաջարկության, որը վերաբերում է Շվեդիայի կողմից 1915 թ. հայերի, ասորիների/սիրացիների/քաղդեացիների և պոնտոսյան հույների ցեղասպանության ճանաչմանը:*

1.1. *Խորհրդարանը կառավարությանը հայտարարում է իր որոշման մասին՝ համաձայն առաջարկության, որ Շվեդիան պետք է գործի ԵՄ-ի և ՄԱԿ-ի շրջանակներում՝ 1915 թ. ցեղասպանության միջազգային ճանաչման համար, որը վերաբերում է հայերին, ասորիներին/սիրիացիներին/քաղդեացիներին և պոնտոսյան հույներին:*

1.2. *Խորհրդարանը կառավարությանը հայտարարում է իր որոշման մասին՝ համաձայն առաջարկության, որ Շվեդիան պետք է*

⁸ **Avedian V.**, One Week after Sweden Rejected Recognition of the 1915 Genocide. <https://www.armenica.org/editorial/ledare080621.html> (մուսը՝ 30.07.2016):

գործի՝ Թուրքիային դրդելու ճանաչել 1915 թ. հայերի, ասորիների/սիրիացիների/քաղղեացիների և պոնտոսյան հույների ցեղասպանությունը:

2. Նախապատմություն

«Կենդանի պատմության ֆորումը» պետական կառույց է, որն իր առաքելությունն իրականացնում է՝ հենվելով Հոլոքոսթի վրա՝ աշխատելով հանդուրժողականության, ժողովրդավարության և մարդու իրավունքների հետ կապված խնդիրների ուղղությամբ: Մարդկության պատմության մութ էջերը լուսաբանելով՝ մենք ցանկանում ենք ազդել ապագայի վրա»:

Այսպես է բնորոշվում մի հաստատություն, որը գործում է Շվեդիայի կառավարության հանձնարարությամբ և կրթություն է տրամադրում, այդ թվում՝ 1915 թ. ցեղասպանության վերաբերյալ: Պատմության դասերը ժողովրդավարական հասարակությունների հիմնաքարերից են. մենք սովորել ենք մեր սխալներից և ձգտում ենք ավելի լավ ապագայի՝ կանխելով անցյալի սխալների կրկնությունը:

Սակայն ապագա սխալների կանխումը, հատկապես եթե դրանք հայտնի են պատմությունից, հնարավոր չէ, եթե բացահայտորեն չճանաչվեն կատարված հանցագործությունները: Այդ իսկ պատճառով, պատմության կեղծումը վտանգավոր գործիք է, որը նպաստում է պատմության մութ էջերի կրկնությանը:

1915 թ. ցեղասպանությունն առաջին հերթին ընդգրկեց հայերին, ասորիներին/սիրիացիներին/քաղղեացիներին և պոնտոսյան հույներին, սակայն հետագայում այն ազդեց նաև այլ փոքրամասնությունների վրա: Թուրանական մեծ կայսրություն ստեղծելու «Թուրանի» երազանքը ստիպեց 19-րդ դարի վերջին օսմանյան ղեկավարներին ձգտել էթնիկապես համասեռ դարձնել Օսմանյան կայսրության մնացորդներին: Դա իրականացվեց Առաջին համաշխարհային պատերազմի քողի տակ, երբ կայսրության հայ, ասորի/սիրիացի/քաղղեացի և պոնտոսյան հույն բնակչությունը գրեթե ամբողջությամբ ոչնչացվեց: Հետազոտողների գնահատմամբ՝ սպանվել կամ անհետացել է շուրջ 1,500,000 հայ, 250,000-

500,000 ասորի/սիրիացի/քաղդեացի և մոտ 350,000 պոնտոսյան հույն:

Կարճ ժամանակահատվածում, երբ 1918 թ. Օսմանյան Թուրքիան պարտություն կրեց, մինչ Մուստաֆա Քեմալի զլխավորած թուրքական ազգային շարժման ուժեղացումը, ցեղասպանության հարցը բացահայտ քննարկվել է: Քաղաքական և ռազմական առաջնորդները կանգնում էին դատարանի առջև՝ մեղադրվելով «պատերազմական հանցագործությունների» և «մարդկության դեմ հանցագործությունների» համար: Նրանցից շատերը դատապարտվեցին մահապատժի կամ ազատազրկման: Դատավարությունների ընթացքում բացահայտվեցին Օսմանյան կայսրությունում ազգային փոքրամասնությունների նկատմամբ իրականացված հետապնդումների սարսափելի մանրամասները: Այսպիսով, Թուրքիան անցնում էր այն նույն փուլով, ինչ Գերմանիան՝ Երկրորդ աշխարհամարտից հետո:

Մակայն այս գործընթացը երկար չտեսց: Թուրքական ազգային շարժման վերելքն ու սուլթանության լուծարումը հանգեցրին դատավարությունների կասեցմանը, և մեղադրյալների մեծամասնությունն ազատ արձակվեցին: Գրեթե ողջ քրիստոնեական բնակչությունը՝ հայերը, ասորիները/սիրիացիները/քաղդեացիները և պոնտոսյան հույները, վտարվեցին այն տարածքներից, որտեղ հազարավոր տարիներ ապրել էին⁹:

Փաստաթղթի 3-րդ կետում նշվում են 1948 թ. ՄԱԿ-ի կոնվենցիայի սահմանումը ցեղասպանության մասին և այն երկրները, որոնք պաշտոնապես ճանաչել են Հայոց ցեղասպանությունը, իսկ 4-րդ կետը վերաբերում է Եդենի վերաբերյալ շվեդական տեղեկացվածությանը, մեջբերվում են շվեդական մամուլում 1915–1917 թթ. հայերի կոտորածների վերաբերյալ վկայություններից, հատվածներ շվեդ զինվորական, դիվանագետ և զրող Էյնար աֆ Վիր-

⁹Տե՛ս <https://view.officeapps.live.com/op/view.aspx?src=https%3A%2F%2Fdata.r-iksda-gen.se%2Ffil%2F2724427A-B13B-4B78-9955-B9AAC44D5B45&wd-Origin=BROWSELINK> (մուտք՝ 5.06.2011):

սենի, Ցեղասպանության ականատես (1875–1946) «Մի ազգի սպանությունը» գրքից:

Փաստաթուղթը եզրափակվում է այսպես. «Շվեդիայի կողմից ճշմարտության և պատմական փաստի ճանաչումը չպետք է որևէ կերպ խոչընդոտի ո՛չ Թուրքիայում բարեփոխումների գործընթացին, ո՛չ էլ Թուրքիայի՝ ԵՄ-ին անդամակցելու բանակցություններին: Վերոհիշյալի հիման վրա մենք գտնում ենք, որ Շվեդիան պետք է ճանաչի 1915 թ. ցեղասպանությունը, որը իրականացվել է հայերի, ասորիների/սիրիացիների/քաղղեացիների և պոնտոսյան հույների նկատմամբ: Խորհրդարանը պետք է այս դիրքորոշումը ներկայացնի կառավարությանը:

Բացի այդ, մենք կարծում ենք, որ Շվեդիան պետք է միջազգային մակարդակում, ԵՄ-ի և ՄԱԿ-ի շրջանակներում, հանդես գա 1915 թ. հայերի, ասորիների/սիրիացիների/քաղղեացիների և պոնտոսյան հույների ցեղասպանության միջազգային ճանաչման օգտին: Խորհրդարանը պետք է այս դիրքորոշումը ներկայացնի կառավարությանը:

Քանի դեռ այնպիսի մի երկիր, ինչպիսին Շվեդիան է, չի դիմակայում Թուրքիային առկա փաստերի և պատմական ճշմարտության առնչությամբ, Թուրքիան չի կարող գնալ դեպի ավելի բաց հասարակություն, ամուր ժողովրդավարություն և իր հնարավորությունները լիովին բաց անել ԵՄ անդամակցության համար: Ուստի, Շվեդիան պետք է գործի՝ Թուրքիային դրդելու ճանաչել 1915 թ. հայերի, ասորիների/սիրիացիների/քաղղեացիների և պոնտոսյան հույների ցեղասպանությունը: Խորհրդարանը պետք է այս դիրքորոշումը ներկայացնի կառավարությանը»¹⁰:

Քննարկումները շարունակվել են հետագա երկու տարիներին ևս: Շվեդ քաղաքական գործիչները միանշանակ չեն ընդունել հարցը: Այսպես, 2009 թ. Շվեդիայի արտգործնախարար Կառլ Բիլ-

¹⁰ St´u Sweden Parliament Resolution, https://www.armenian-genocide.org/Affirmation.414/current_category.7/affirmation_detail.html (մուտք՝ 17.10.2025)

դը, պատասխանելով պատգամավոր Մեսիլիա Վիքսթրյոմի հարցմանը՝ հայտարարել է. «Շվեդիան Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած 1915 թ. դեպքերը չի ճանաչում որպես ցեղասպանություն» և որ չնայած պատմական փաստերին, հարցի լուծումը քաղաքական գործիչների պարտականությունը չէ: Այս առթիվ Վահագն Ավետյանը նշել է, որ Բիլդի խոսքերը հակասում են ցեղասպանության վերաբերյալ ՄԱԿ-ի Միջազգային կոնվենցիային, որը ստորագրել է Շվեդիան¹¹:

2008 թ. հոկտեմբերի 2-ի փաստաթղթի ստորագրումից երկու տարի անց միայն, 2010 թ. մարտի 11-ին Շվեդիայի խորհրդարանը վերջապես ընդունել է Օսմանյան կայսրությունում հայերի, ասորիների և հույների դեմ իրականացված ցեղասպանության մասին բանաձևը: Նախատեսվել էր այն Ռիքսդագում քննարկման դնել մարտի 17-ին: Վերջին պահին, սակայն, խորհրդարանի օրակարգում փոփոխություններ են կատարվել. հայտարարվել է, որ նույն օրը՝ մարտի 17-ին, Շվեդիա պետք է ժամանի Թուրքիայի վարչապետ Էրդողանը: Պարզ է, որ արտգործնախարար Բիլդը չէր ցանկանում նման հարց քննարկել, երբ Ստոկհոլմում է լինելու Թուրքիայի վարչապետը և ռիսկ կա, որ այդ նախագիծը կարող է հաստատվել, այդ իսկ պատճառով քննարկումը կայացել է մեկ շաբաթ շուտ:

«Ռոյթերզ» լրատվական գործակալությունը, հաղորդելով Ռիքսդագի կողմից նախագծի ընդունման մասին, նշել է. *«Համոզված ենք, որ Շվեդիան պետք է գործունեություն ծավալի Եվրամիության և ՄԱԿ-ի շրջանակներում՝ 1915 թ. իրադարձությունները որպես ցեղասպանություն ճանաչելու ուղղությամբ: 1915 թ. ցեղասպանության ճանաչումը ոչ միայն յուրատեսակ փոխհատուցում կհանդիսանա ազգային այն խմբերի ու փոքրամասնությունների ներկայացուցիչների համար, որոնք շարունակում են բնակվել Թուրքիայում, այլև կնպաստի այդ երկրի հետագա զարգաց-*

¹¹ Շվեդիայի արտգործնախարար. Շվեդիան չի ճանաչում հայերի ցեղասպանությունը, <https://www.7or.am/am/news/view/3486/> (մուտք՝ 6.12.2010):

մանր: Թուրքիան չի կարող ժողովրդավարական պետություն համարվել, քանի դեռ այնտեղ ժխտվում է անցյալի իրական պատկերը», – ասված է Ռիքսդագի բանաձևում¹²:

Մինչ քվեարկությունը «Ազատություն» ռադիկալյանի հետ զրույցում Վահագն Ավետյանը ընդգծել էր, որ շվեդական խորհրդարանում ներկայացված բոլոր կուսակցությունները, բացառությամբ մեկի, 1915 թ. իրադարձությունները ճանաչում են որպես ցեղասպանություն: Չնայած դրան՝ միայն քաղաքական դաշտի ձախ հատվածն է պատրաստ եղել այս մոտեցումն ամրագրել օրենսդրական կարգով: Իշխող քաղաքական ուժերը՝ լիբերալները, քրիստոնյա-դեմոկրատները և կենտրոնամետ կուսակցության ներկայացուցիչները, վերահաստատել էին իրենց այս մոտեցումը՝ հատուկ հայտարարություններ հրապարակելով: Բանաձևի ընդունման համար պահանջվում էր նվազագույնը 175 քվե, մինչդեռ օրինագծին աջակցող երեք ձախակողմյան կուսակցությունները 2009 թ. ընտրություններից հետո Ռիքսդագում ունեցել են ընդամենը 171 քվե¹³:

«Ռոյթերզ» լրատվական գործակալությունը, վկայակոչելով շվեդական «Աքթյուեյթ» հեռուստաալիքին, փոխանցել է նաև, որ, ինչպես և Միացյալ Նահանգների Կոնգրեսի Ներկայացուցիչների պալատի արտաքին հարաբերությունների հանձնաժողովում Հայոց ցեղասպանությունը ճանաչող թիվ 252 բանաձևի քվեարկությունից հետո, Թուրքիան արագորեն դատապարտել է քվեարկությունը, չեղարկել հաջորդ շաբաթ վարչապետ Էրդողանի նախատեսված այցը Ստոկհոլմ և հետ է կանչել իր դեսպանին Ստոկհոլմից: «Մենք խստորեն դատապարտում ենք այս որոշումը: Մեր ժողովուրդը և մեր կառավարությունը մերժում են այս որոշումը՝ հիմնված մեծ սխալների վրա և անհիմն», – ասվել է Էրդողանի գրասենյակի հայտարարության մեջ:

¹² Ստամբուլյան Գ., Շվեդիայի խորհրդարանը ճանաչեց Հայոց ցեղասպանությունը, <https://www.azatutyun.am/a/1980734.html> (մուտք՝ 25.03.2010):

¹³ Նույն տեղում:

Նույն թվականի ապրիլի 23-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանն ընդունել է Շվեդիայի խորհրդարանի «Շվեդիա-Հայաստան» բարեկամության պատգամավորական խմբի նախագահ Անելի Էնոքսոնին և խմբի անդամ Կառլ Ֆրեդրիք Մալմին, որոնք եռանդուն դերակատարություն են ունեցել Հայոց ցեղասպանության ճանաչման բանաձևի ընդունման գործում: Շվեդ պատգամավորներն ընդգծել են, որ ցեղասպանությունը ցանկացած պարագայում մնում է ցեղասպանություն, և այլ անունով այն չի կարելի կոչել: *«Մեզ համար Հայոց ցեղասպանության ճանաչման ուղղությամբ գործադրած ջանքերն անհրաժեշտ էին, քանի որ արդարության վերականգնմանն էին ուղղված: Մենք Շվեդիայի խորհրդարանում ճանաչման օգտին դժվարին աշխատանք ենք կատարել և համարում ենք, որ Հոլոքոսթի համար հրեաներից ներողություն խնդրած Գերմանիայի օրինակով, Թուրքիան ևս պետք է ընդունի իր մեղքն ու ներողություն խնդրի հայերից»*, – ասել են պատգամավորներ Անելի Էնոքսոնն ու Կառլ Ֆրեդրիք Մալմը¹⁴: Ի դեպ, վերջիններս իրենց գործունեության համար պարգևատրվել են ՀՀ Ազգային ժողովի Պատվո մեդալով:

2011 թ., երբ Հայոց ցեղասպանությունը ճանաչվեց, Թուրքիան ջանքեր էր գործադրում, որպեսզի հաջորդ տարի Ռիքսդագում հարցը նորից քննվի և հերքվի: Այդ ընթացքում շվեդաբնակ համայնքի գործիչ, Եվրոպայի հայերի համագումարի այդ ժամանակվա նախագահ Կարո Հակոբյանը 2010 թ. ապրիլի 20-ին հանդիպել է ընդդիմադիր երկու հիմնական՝ Շվեդիայի Սոցիալ-դեմոկրատական և Չախ կուսակցությունների առաջնորդների հետ, որոնք գլխավոր դերակատարություն են ունեցել Ռիքսդագի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման հարցում: Իսկ ապրիլի 28-ին Հակոբյանը հանդիպում է ունեցել վարչապետ Ֆրեդրիք Ռայնֆելդի հետ և հստակ նշել, որ կառավարությունը պիտի լինի ոչ թե ցեղասպանություն կատարածների, այլ տուժածների կողմից:

¹⁴ Շվեդ պատգամավորներ. «Հայոց ցեղասպանության ճանաչմանն ուղղված ջանքերն անհրաժեշտ էին», <https://hetq.am/hy/article/594> (մուտք՝ 27.07.2011):

Նման հանդիպումները ևս ունեցել են որոշակի ազդեցություն, և Շվեդիայի կառավարությունն այլևս միանշանակ ականջալուր չի եղել Թուրքիայի հորդորներին: Հակոբյանը վարչապետին է հանձնել Հայոց ցեղասպանության ճանաչման գործընթացի ու դրան հաջորդած իրադարձությունների վերաբերյալ ԵՀՀ-ի նամակը, որտեղ ասվում է, որ ավելի քան տասը տարի քննարկումներից և առաջարկություններից հետո, Ռիքսդագը 1915 թ. հայերի, ասորիների և պոնտացի հույների ջարդերը վերջապես որակել է որպես ցեղասպանություն, որի մասին լուրը տուժած ազգերը և ժողովրդավարության ջատագույնները խանդավառությամբ են ընդունել ողջ աշխարհում:

ԵՀՀ-ի կողմից «Արմենպրեսին» տրամադրված նամակում նշված է. *«Մենք՝ հայերս, սպասում էինք, որ աշխարհի ամենից ժողովրդավար երկրներից մեկի՝ Շվեդիայի վարչապետը, բնականաբար, պաշտպան պիտի կանգնեի արդարության, ժողովրդավարության եւ խաղաղության համար տարվող պայքարին, սակայն ցավոք՝ Ձեր դիրքորոշումը հուսադրող չեղավ մեզ համար: Հատկապես զարմանքի տեղիք տվեց, երբ տեղեկացանք, որ Շվեդիայի վարչապետը հեռախոսազրույցի ընթացքում Թուրքիայի վարչապետին իր ասիտսանքն է հայտնել կատարվածի վերաբերյալ:*

Մինչեւ անգամ թուրքական լրատվությունները հաղորդեցին, որ Շվեդիայի վարչապետը ներողություն է խնդրել Էրզրոանից: Մարտի 14-ին Դուք ռադիոյով հայտարարեցիք, որ կառավարությունը քննարկում է Ռիքսդագի որոշումը եւ Ձեր վարչապետության օրոք կառավարությունը չի հետևելու Ռիքսդագի Ցեղասպանության ճանաչման այս որոշմանը:Մենք այն կարծիքին ենք, որ հայերի, ասորիների և պոնտացի հույների դեմ կատարված ցեղասպանությունը ոչ միայն պատմաբաններին է վերաբերում, այլ նաև քաղաքական գործիչներին եւ, առավել ևս, Շվեդիայի վարչապետին: Մեր սպասելիքն է, որ Շվեդիայի վարչապետը պաշտպան կանգնի այն կողմին, որը կորցրել է կյանք, հարստություն, մշակույթ ու զրկվել է խաղաղ ապրելու իրավուն-

քից մի երկրում, ուր նրա պապերը հազարավոր տարիներ, նախքան նոր տերերի կողմից բռնազրավումը, ապրել ու գոյատևել են: ...Եվրոպայում ավելի քան մեկ միլիոն հայեր, ինչպես նաև շվեդահայեր, սպասելիք ունեն, որ եվրոպական երկրներն ու Շվեդիան սատար կկանգնեն Հայաստանին և նրա ժողովրդին, որովհետև նրանք այժմ խիստ ճնշումների են ենթարկվում իրենց հարևան երկրների՝ Թուրքիայի և Ադրբեջանի կողմից, որոնք պահանջում են ամեն ինչ՝ փոխարենը չզիջելով ոչինչ:

Հաշտեցման վերջին գործընթացի ձախողումն այդ է վկայում: Մենք չենք կասկածում, որ Շվեդիան իր ներդրումը կունենա նաև գույգ երկրներում տարվող ժողովրդավարացման գործընթացում»¹⁵:

Ու թեև Շվեդիայի խորհրդարանի՝ 2010 թ. ընդունած Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևին և կառավարությանը հղած հորդորին՝ հետևելու իր օրինակին, Շվեդիայի կառավարությունը մինչ օրս պաշտոնապես չի ճանաչում Հայոց ցեղասպանությունը՝ համարելով այն վիճելի հարց¹⁶: 2018 թ. հունիսի 8-ին Շվեդիայի արտաքին գործերի նախարար Մարգոտ Վալսթրյոմը շվեդական SVT հեռուստաընկերությանը տված հարցազրույցում խոսել է երկրի կառավարության կողմից Հայոց ցեղասպանության հնարավոր ճանաչման մասին: Լրագրողը նախարարին հարց է ուղղել ցեղասպանության ճանաչման մասին, ինչին ի պատասխան Վալստրյոմը նշել է, որ այժմ դա հնարավոր չէ, սակայն չի բացառել հետագայում հարցի քննարկումը: 2019 թ. Շվեդիայի խորհրդարանի պատգամավոր, Ռիքսդագի նախկին փոխխոսնակ և հայ ժողովրդի բարեկամ Բյորն Սյոդերը Շվեդիայի կառավարության կողմից Հայոց ցեղասպանությունը պաշտոնապես չճանաչելը դավաճանություն է որակել. «*Այն, որ մեր խորհր-*

¹⁵ Եվրոպայի Հայերի համագումարի նախագահը հանդիպել է Շվեդիայի վարչապետին <https://armenpress.am/hy/article/601297> (մուտք՝ 01.09.2012):

¹⁶ Շվեդիայի կառավարության կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը ներկայում հնարավոր չէ. Շվեդիայի ԱԳՆ, <https://tert.am/am/news/-2018/06/08/armenian-genocide/2707838> (մուտք՝ 18.06.2018):

դարանը ճանաչել է ցեղասպանությունը, անձնական հպարտության առիթ է հանդիսանում: Միննույն ժամանակ էս հիասթափված և դավաճանված եմ զգում նրանով, որ շվեդական կառավարությունը մինչև օրս չի ճանաչել այն, ինչ խորհրդարանը խնդրել է: Սոցիալ-դեմոկրատները 2014 թ. նախընտրական շրջանում խոստացել էին պաշտոնապես ճանաչել ցեղասպանությունը, եթե հաղթեին ընտրություններում: Չնայած նրան, որ նրանք ընտրություններին հաղթեցին, հետո հաղթեցին նաև 2018 թ., նրանք այդ խոստման կատարումը ձախողեցին, և էս այն դիտարկում եմ, որպես մեր կառավարության ու վարչապետի կողմից կատարված գանգվածային դավաճանություն»¹⁷:

2023 թ. ապրիլի 23-ին Բյորն Սյոդերը, որ դարձել է Շվեդիայի խորհրդարանի հայ-շվեդական բարեկամության խմբի ղեկավար, հայտարարել է, որ երկրի արտգործնախարարությունից խնդրել են իրենց խմբի անդամներին քննարկել Հայոց ցեղասպանության գոհերի հիշատակի միջոցառումը չեղարկելու՝ հարցը պատճառաբանելով, որ այն կարող է վնասել Շվեդիայի՝ ՆԱՏՕ-ին միանալու հեռանկարներին: Իրականում այն կապված է այդ երկրի վրա Թուրքիայի ճնշումների հետ¹⁸:

Այսպիսով, կարող ենք ասել, որ ինչպես մի շարք երկրների դեպքում, Շվեդիայի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչումը նույնպես տակավին կես ճանապարհին է: Համանման է Գերմանիայի խորհրդարանի պարագան, երբ 2016 թ. հունիսի 2-ին Բունդեսթագն ընդունեց Հայոց ցեղասպանությունը ճանաչող բանաձևը, որին, սակայն, չհաջորդեց նրա կիրառումը գործադիր իշխանության կողմից: Ինչպես տեսանք, հիմնականում տեղական հայ համայնքի և մի խումբ հայասեր շվեդների հետևողական ջանք-

¹⁷ **Շոդիկյան Ն.**, Երբեք չի կարելի մոռանալ Հայոց ցեղասպանությունը. Բյորն Սյոդերը Շվեդիայի կառավարությանը կոչ է անում ճանաչել այն, <https://armenpress.am/hy/article/979626> (մուտք՝ 14.02.2019):

¹⁸ Շվեդիան հետ կկանգնի՝ Հայոց ցեղասպանության ճանաչումից. Աղազարյանի ստորագրահավաքը Թովմայանի դեմ. Լուրեր, <https://factor.am-/637575.html> (մուտք՝ 19.08.2023):

քերի շնորհիվ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցը մտել է շվեդ քաղաքական կյանքի օրակարգ, և Շվեդիայի խորհրդարանը 2010 թ. ճանաչեց Հայոց ցեղասպանությունը համապատասխան բանաձևով՝ հորդորելով երկրի կառավարությանը պաշտոնապես ճանաչել այն: Սակայն տարբեր պատճառներով Շվեդիայի կառավարությունը շարունակում է հրապարակայնորեն չարտահայտել իր վերջնական դիրքորոշումը խնդրի վերաբերյալ և բանաձևին չտալ օրենքի ուժ:

Արժվի Բախչյան

Армения, к.ф.н., Институт истории НАН

artsvi@yahoo.com

ORCID: 0000-0001-8637-6946

ПРИЗНАНИЕ ГЕНОЦИДА АРМЯН В ШВЕЦИИ

Ключевые слова: Швеция, Геноцид армян, признание и осуждение геноцида, резолюция о геноциде, Риксдаг, Европейская армянская федерация, Бьорн Седер.

Процесс признания Геноцида армян в Швеции начался в конце XX века по инициативе активистов местной армянской общины и нескольких шведских интеллектуалов, интересовавшихся армянской тематикой. Первые шаги в направлении признания Геноцида армян были предприняты координационным центром армянских союзов Швеции (председатель Гаро Акопян). По инициативе этого центра в декабре 1999 года в Уппсале состоялась консультативная встреча, в ходе которой была создана комиссия по признанию Геноцида армян.

29 марта 2000 года парламент Швеции (Риксдаг) единогласно принял подготовленную Комитетом по внешней политике резолюцию о признании и осуждении геноцида, совершенного

против армян в Османской империи во время Первой мировой войны. Хотя это и не было официальным признанием, данный шаг стал первым конкретным проявлением: вопрос признания Геноцида на государственном уровне вошел в повестку дня Швеции.

После многолетних обсуждений 11 марта 2010 года парламент Швеции окончательно принял резолюцию о признании геноцида, совершенного против армян, ассирийцев/ сирийцев/ халдеев и понтийских греков в Османской империи. Турция оперативно осудила голосование и отозвала своего посла из Стокгольма.

Несмотря на резолюцию шведского парламента и его призыв к правительству последовать его примеру, правительство Швеции до сих пор официально не признало Геноцид армян, считая это спорным вопросом. Как и в случае с рядом других стран, признание Геноцида армян в Швеции все еще остается на полпути. В основном благодаря последовательным усилиям местной армянской общины и группы шведов, защитников Армении, вопрос признания вошел в повестку шведской политической жизни, и парламент Швеции признал Геноцид армян соответствующей резолюцией, призвав правительство официально признать его. Однако по различным причинам шведское правительство по-прежнему воздерживается от публичного выражения своей окончательной позиции по этому вопросу.

Artsvi Bakhchinyan

Armenia, Ph.D. in Philology,

Institute of History of NAS

artsvi@yahoo.com

ORCID: 0000-0001-8637-6946

THE RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE IN SWEDEN

Keywords: Sweden, Armenian Genocide, recognition and condemnation of genocide, genocide resolution, Riksdag, European Armenian Federation, Björn Söder.

The process of recognition of the Armenian Genocide in Sweden began at the end of the 20th century through the initiative of activists from the local Armenian community and several Swedish intellectuals interested in Armenian issues. The first steps toward the recognition of the Armenian Genocide were taken by the coordinating center of the Armenian unions of Sweden (President: Garo Hakopian). At the initiative of this center, a consultative meeting was held in Uppsala in December 1999, during which a commission for the recognition of the Armenian Genocide was formed.

On March 29, 2000, the Swedish Parliament (Riksdag) unanimously adopted a resolution prepared by the Foreign Affairs Committee regarding the recognition and condemnation of the genocide committed against Armenians during the First World War in the Ottoman Empire. Although this was not an official recognition, it marked the first concrete step: the issue of state-level recognition of the Genocide entered the discussion phase in Sweden.

After years of debates, on March 11, 2010, the Swedish Parliament finally adopted a resolution recognizing the genocide committed against Armenians, Assyrians/Syriacs/Chaldeans, and Pontic Greeks in the Ottoman Empire. Turkey swiftly condemned the vote and recalled its ambassador from Stockholm.

Despite the resolution of the Swedish Parliament and its appeal to the government to follow its example, the Swedish government has not officially recognized the Armenian Genocide to this day, considering it a contentious issue. As in the case of several other countries, Sweden's recognition of the Armenian Genocide still remains halfway. Mainly due to the consistent efforts of the local Armenian community and a group of pro-Armenian Swedes, the issue of recognition entered the agenda of Swedish political life, and the Swedish Parliament recognized the Armenian Genocide through an appropriate resolution, urging the government to officially recognize it. However, for various reasons, the Swedish government continues to refrain from publicly stating its final position on the matter.

Անի Ֆիշենկճեան

Հայաստան, պ.գ.թ., ԳԱԱ ՊԻ

fishenkjianani@gmail.com

ORCID: 0009-0000-0476-8816

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ
ՍՈՒՐԻԱՀԱՅ ՀԱՄԱՐԱԿԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒ
ԿՈՂՄԷ 1960-1980-ԱԿԱՆ ԹԹ.**

*Հիմնաքառեր*¹ Ցեղասպանության Յիսնամեակ, հայ համայնք, Սուրիա, ոգեկոչում, հասարակական շրջանակներ, յուշակոթող, քաղաքականացում, պահանջատիրություն

Ներածություն

Կիլիկահայության մեկ հատուածը, հազիւ ճողոպրած սպանդէն ու աշխարհացրիւ դարձած Մերձաւոր՝ Միջին Արեւելքի երկիրներու իր գաղթակայաններուն մէջ՝ սկսած էր ամէն տարի Ապրիլ 24-ին ոգեկոչել բազմաթիւ նահատակներուն յիշատակը: Նորագաղթեալներու համար Ապրիլ 24-ը դարձած էր սուգի օր:

Ուսումնասիրութիւնները կը վկայեն, որ Դամասկոսի առաջնորդանիստ վանքին մէջ տեղական /արաբական/ իշխանութեան ներկայացուցիչներու ներկայութեամբ եւ արտօնութեամբ, Յունաց պատրիարքի, անգլիացի եւ ֆրանսացի սպաներու, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոսի մասնակցութեամբ, 1918 թ. Հոկտեմբերի 28-ին տեղի կ'ունենան ազգային սգահանդէս «վասն հոգւոց նահատակաց» եւ հոգեհանգիստի կարգ¹:

1918 թ. զինադադարէն ետք, Մեծի Տանն Կիլիկիոյ կաթողիկոս ՆՍՕՏՏ Սահակ Բ. Խապայեան արքայրէն Ատանա վերադարձին²,

¹ Տե՛ս <https://genocide-museum.am/arm/ARMENIAN-GENOCIDE-VICTIMS-.php>

² Տե՛ս **Եղիայեան Բ.**, Ժամանակակից Պատմութիւն Ժամանակակից պատմութիւն կաթողիկոսութեան հայոց Կիլիկիոյ (1914 1972), Անթիլիաս, 1975, էջ 427:

1919 թ. Մեպտեմբեր 27-ին կը ձեռնարկէ «Արարա»ի ճակատամարտը խորհրդանշող յուշարձանին բացումին: Սահակ կաթողիկոս անձամբ կը նախագահէր համագգային սգահանդէսը: Ան իր խօսքով կը մերժէ «սգահանդէս» բառը եւ կը բանաձեւէ նահատակութեան իմաստը³:

Նոյն թուականի Դեկտեմբերին Հալէպի մէջ Ազգային իշխանութիւններու միացեալ ջանքերով, բոլոր հայերու մասնակցութեամբ եւ միասնական ուժով տեղի կ'ունենայ Նահատակաց առաջին սգատօնը: Թափօրը ճամբայ կ'ելլէ Հալէպի Սալիպէ թաղամասի մէջ գտնուող Սրբոց Քառասնից Մանկանց մայր եկեղեցին⁴ . **«Արցունքով լեցուած էին բոլորին աչքերը: Իւրաքանչիւր ներկայ ունէր նուազագոյնը քանի մը նահատակ: Բնութիւնն ալ կու լար, ամպամած երկինքին արցունքները հոսեցնելով սգակիր բազմութեան վրայ»**⁵:

Ամենայն Հայոց վեհափառին հրամանով էջմիածինի կաթողիկոսութեան դիւանը 26 Մարտ 1920 թ. շրջաբերական⁶ մը կը հրապարակէ եւ Հայաստանի Հանրապետութեան եկեղեցիներուն մէջ նոյն տարուան Զատիկուան մեռելոցին, 1915-ի Մեծ Եղեռնին զոհուած մտաւորականներուն եւ հոգեւորականներուն յիշատակին հոգեհանգստեան պաշտօն կատարելու հրահանգը կը փոխանցէ:

Սակայն, Մեծ Եղեռնի յիշատակի առաջին ոգեկոչումները տեղի կ'ունենային անկախ Հայաստանի սահմաններէն դուրս՝ Պոլսոյ մէջ եկեղեցական եւ աշխարհական սգահանդէս 12 Ապրիլ 1919 թ. եւ Պեռլինի մէջ 20 Մարտ 1919 թ.⁷:

³ Աշրգեան Շ., Մեծ Եղեռնի առաջին ոգեկոչումները 1919-1920, «Կանթեղ», գիտական հոդվածների ժողովածու, թիվ, 1, Երևան, 2004, էջ 132:

⁴ Տե՛ս <https://genocide-museum.am/arm/ARMENIAN-GENOCIDE-VICTIMS-26.01.2019.php>.

⁵ Ճեպէճեան Հ., Յուշեր, ապրուած կեանքեր եւ տակաւին, <https://old.hayernaysor.am/cl/archives/309930>. տես նաեւ, <https://genocide-museum.am/arm/ARMENIAN-GENOCIDE-VICTIMS-26.01.2019.php>.

⁶ Աշրգեան Շ., նշուած աշխատութիւն, էջ 132:

⁷ Աշրգեան Շ., նշուած աշխատութիւն, էջ 132:

Մեր աշխատանքի նպատակն է ուսումնասիրել 1965-1980-ական թուականներու Սուրիոյ համայնքային կառոյցներու նախաձեռնութեամբ կազմակերպուած միջոցառումները նուիրուած Ապրիլի 24-ին: Թեմայի շարադրանքը մեր կողմէ առաջին փորձն է . յօդուածը կը միտի իրագել դարձնել Հայոց ցեղասպանութեան ոգեկոչման գործընթացը Սփիւռքի համայնքներու, յատկապէս Սուրիոյ մէջ յիսնամեակէն առաջ /համառօտ/ եւ վերջը, 50-ամեայ տարելիցի Հայրենիք-Սփիւռք ոգեկոչման նախապատրաստական աշխատանքները եւ այդ միջոցառումներու ներագոյեցութիւնը երրորդ սերունդի ճանաչման գործընթացի վրայ:

Ոգեկոչումը յիսնամեակէն առաջ

Քննարկուող ժամանակաշրջանին սկիզբ առած էր Սփիւռքի կազմաւորման գործընթացը: Ցեղասպանութենէն ետք վերապրող հայութիւնը սփռուած էր աշխարհով մէկ: Տարբեր մայրցամաքներու վրայ հին գաղթավայրերը համալրուած էին նոր գաղթականներով: Հայաշատ բնակավայրերու մէջ սկսած էին գործել համայնական կառոյցներ՝ եկեղեցիներ, դպրոցներ, մշակութային օժախներ: Հայրենակցական միութիւններ կազմակերպուած կամ վերակազմակերպուած կը շարունակէին իրենց համագաւառացիներուն, համաքաղաքացիներուն օժանդակութիւնը: Կարելոր աշխատանք կը տանէին բարեսիրական կազմակերպութիւններ «ազգահաւաքման» աշխատանքներով: Որբանոցներէն ներս կատարուած հսկայական աշխատանքը առաջին հերթին պէտք է նպաստէր մխիթարելու եւ կեանքի նոր հանգրուանի ուղենիշը դառնալու անտիրական հայ որբուկին: Այս պատասխանատու աշխատանքը կը տարուէր ինքնութեան պահպանման համար: Ապրիլ 24-ի ոգեկոչումը թէեւ տարին մէկ անգամ եկեղեցւոյ եւ մշակութային կառոյցներու կազմակերպութեամբ կը նշուէր, որպէս յուշատօն, բայց ազգային կուսակցութիւններու եւ անոնց քոյր կառոյցներէն, դպրոցներէն եւ յատկապէս հայ ընտանիքէն ներս ամենօրեայ թեման էր, երբ յատկապէս տան մէջ կը գոյատեւէին

վերապրած սերունդի մը ներկայացուցիչները:

Դպրոցներէն ներս միջոցառումներուն նուիրուած ասմունքի, շարադրական մրցոյթներ կը կազմակերպուէին, որոնց թեման Ապրիլ 24 էր:

Սուրիոյ մէջ Նահատակներու յիշատակը մոռացութեան չմատնելու մտադրութեամբ եգիպտահայ Աղեքսանդրիաբնակ տիար Բարսեղ Պալըզեան կ'որոշէ Հայոց Ցեղասպանութեան զոհերուն նուիրուած ձեռնարկել Տէր Զօրի մէջ յուշարձանի մը կառուցումը, որ ամենախօսուն վկան պիտի հանդիսանար: Ան իր ողբացեալ մօր յիշատակին սոյն մատուռը կ'անուանակոչէ՝ Ս. Հռիփսիմէ: Պալըզեանի իրարայաջորդ նիւթական օժանդակութեամբ կը սկսի այս ծրագիրը յաջողութեամբ պսակուիլ⁸:

1931 թ. եկեղեցոյ մէջ կ'ամփոփուի Ապրիլեան Եղեռնի նահատակներու աճիւններէն մաս մը: Սակայն 1959 թ. ետք քանի մը տասնամեակ այս եկեղեցին կիսաքանդ եւ անխնամ կը մնայ:

1959 թ. Սեպտեմբեր 6-ին, խորանաձեւ համեստ յուշարձան մը կը զետեղուի այդ աճիւններուն վրայ: Յուշարձանին պաշտօնական բացումը կը կատարուի 15 Նոյեմբեր 1959 թ.⁹:

Աւելի քան երկու երեք տասնամեակ անբաւարար էր, որ վերապրող հայը կարենար ոտքի կանգնիլ: Ան գաղթականի կարգավիճակէն դուրս եկաւ աւանդապահը դառնալով նախնիներու փոխանցած աւանդին: Ընտանիքէն, եկեղեցիէն եւ դպրոցէն սորվեցաւ յիշատակել, մեծարել իր նահատակները, բան մը, որ օրէնքի պիտի վերածուէր ինքնաբերաբար:

1920-ականներէն մինչեւ 1960-ականներու առաջին կէտը, ամէն տարի Սփիւռքի մէջ Ապրիլ 24-ը նշուեցաւ հայութեան մէջ վառ պահելով Ցեղասպանութեան հաւաքական յիշողութիւնը, Արեւմտեան Հայաստանի յուշը, ազգային իրաւունքներու գիտակցութիւնը, պայքարող-պահանջատէրի մշտաբթուն տրամադրութիւնը՝ Թուրքիոյ դէմ: Այդ բոլորը փոխանցուեցաւ մամուլի, յու-

⁸ Տե՛ս, «Եփրատ», 21 Նոյեմբեր 1931, Ե. տարի, թիւ 446:

⁹ «Հասկ», ԻԸ. տարի, թիւ 12, Անթիլիաս, 1959, էջ 511:

շագրութեամբ եւ տօնախմբութեան միջոցով: Նոյն թուականներուն ձեռնարկները առաւելապէս սեւեռուած էին դէպի անցեալ, բանախօսութեամբ եւ կամ պատգամով վառ պահելու նահատակներուն յիշատակը:

Հայոց ցեղասպանութեան յիսնամեակի ոգեկոչում

1920-1940-ական թուականներուն արդէն կազմակերպուած էին Սփիւռքի համայնքները: 1946-1949 թթ. Մեծ հայրենադարձութիւնը մէկ կողմէ ոգեւորած էր Սփիւռքի համայնքներու հայութիւնը, իսկ միւս կողմէ պատճառ հանդիսացած ձեւաւորուած համայնքներու լուծարման:

1950-ականներու երկրորդ կիսուն արաբական ազգայնականութեան եւ համայնավարութեան բախումէն ծագած յեղափոխական ցնցումներուն հետեւանքով Միջին Արեւելքի համայնքներու հայութեան դէմ շղթայազերծուած քաղաքական հալածանքներն ու կրթական սեղմումները պատճառ դարձան արտագաղթի եւ մտաւորականներու թիւի նօսրացումի՝ Սուրիայէն դէպի Լիբանան. այնտեղ կեանքը առաւել խաղաղ էր եւ չկային սահմանափակումներ: Արտագաղթի պատճառ հանդիսացած էր նաեւ դէպի Օոցի երկիրներ մեկնիլը, որ գուտ աշխատանքային բնոյթ կը կրէր:

Քաղաքական, տնտեսական եւ ընկերային շուրջ կէս դար տիրող իրավիճակը, ողջ Յիսնամեակ մը սգացող, յատկապէս Սփիւռքի հայութեան յաջորդող տարիները անկիւնադարձային պիտի ըլլային: Յիսնամեակ մը լռութեան դատապարտուած հայրենիքին մէջն իսկ կամք պիտի արտայայտուէր քանդելու «լռութեան պատը»:

1960-ական թուականներու Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմիտէի առաջացումը, նոր հայրենադարձութեան կազմակերպումը, խոր թմբիւնէն զարթնումի հրաւեր էր ողջ հայութեան, որոնք միմեանց միջեւ ստեղծուած կապերու շնորհիւ հաղոդակցման նոր ուղիներ որոնեցին:

Հայրենիքի-Սփիւռքի հայութիւնը քաջատեղեակ էր, որ Յե-

դասպանական թուրքի կողմէ իրագործուած արարքը կը բոլորէր յիսնամեակ մը. ուստի սոյն թուականէն առաջ միասնութեան յորդորներն ու կոչերը հնչեցին Հայ Առաքելական եկեղեցւոյ զոյգ վեհափառներու կողմէ:

Յիսնամեակի մասին Սփիւռքի հայութեան ուղղուած առաջին խօսքը Մեծի Տանն Կիլիկիոյ Խորէն Ա. Կաթողիկոսին 16 Օգոստոս 1964 թ. Կոնդակն էր¹⁰: Իսկ Յիսնամեակի առաջին ոգեկոչումը տեղի ունեցաւ Ատիս Ապապայի մէջ, 24 Յունուար 1965 թ. Ամենայն Հայոց Կաթողիկոս Վազգէն Ա. եւ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս Խորէն Ա.-ին մասնակցութեամբ: Անկէ Խորէն Ա. Կաթողիկոս կոչ յղեց համայն հայութեան յայտարարելով Յիսնամեակի տարուան բացումը¹¹:

Կաթողիկոսի կրօնաշունչ, հայաշունչ կոնդակը, որ «սրտագրաւ ուժ» ունէր եւ լուսաւոր հորիզոններ կը բանար գիտակից, նախանձախնդիր հայու միտքի եւ հոգիին մէջ, հաւաքական աշխատանքով կազմակերպուելիք ձեռնարկներու ուրուագիծ մըն էր.

1. Աղօթքի, ինքնամփոփման, յարգանքի եւ հոգեկան հաղորդութեան բացառիկ առիթի պէտք է վերածել 1965 թ.:

2. Դրական բնոյթ պէտք է որ ունենան բոլոր տեսակի արտայայտութիւնները:

3. Խոհեմութեամբ, աչալըջութեամբ եւ հեռատեսութեամբ պէտք է արտայայտուիլ եւ գործել:

4. Պէտք է ներդաշնակել աշխատանքները գործակցութեան սերտ մթնոլորտի մը, ոգիի մը մէջ, որ կոչուած է ամրացնելու հայ ժողովուրդի ներքին անքակտելի միութիւնը¹²:

1960-ականներու առաջին տարիներէն, արդէն, Պէյրութը դար-

¹⁰ «Հասկ», ԼԴ. տարի, թիւ 8-9, Անթիլիաս, 1964, էջ 229-238: «Հասկ», ամսագիր, ԼԴ.տարի, թիւ 4, Անթիլիաս, 1965, 121-130:

¹¹ **Աշըղեան Շ.**, Լիբանանահայ գաղութը եւ Հայկական Յեղասպանութեան հարցը (1965-1975), «Հայկազեան հայագիտական հանդէս», ԻԵ. տարի, Պէյրութ, 2005, էջ 349:

¹² «Հասկ», ԼԳ. տարի, թիւ 12, Անթիլիաս, 1964, էջ 359-361:

ձած էր հայ քաղաքական կուսակցություններուն վերին մարմիններու նստավայրը՝ փոխարինելով Փարիզն ու Եգիպտոսը: Առաջին անգամ Սփիւռքի պատմութեան մէջ քաղաքական ղեկավարութիւնն ու կրօնական իշխանութիւնը կեդրոնացան նոյն գաղութին մէջ: Լիբանանի մէջ հայ քաղաքական կուսակցությունները ազատօրէն կը գործէին, եւ տեղական քաղաքական-պետական ազդեցիկ շրջանակներու հետ անմիջական կապի մէջ էին: Լիբանանի հայ համայնքը կը ներկայացնէր քաղաքական կշիռ իր քուէով եւ պետական խորհրդարանին մէջ ունեցած 5 հոգինոց ներկայացուցչական անձնակազմով. կը յատկանշուէր համախմբուածութեամբ, մշակութային հայեցի կենսունակ առօրեայով, հայահոծ խարիսխով: Լիբանանի հայ համայնքը, որուն թիւը 1960-ականներու կէսերուն աւելի քան 125 հազար էր, կարելորդ դեր ունէր երկրի յատկապէս առեւտրական եւ մշակութային կեանքին մէջ¹³:

Յիսնամեակը համազգային կերպով ոգեկոչելու հովանաւորութիւնը, քաղաքական կուսակցություններուն փոխարէն, պաշտօնապէս ստանձնեց հայ կրօնական ղեկավարութիւնը՝ Պէյրութ իր կեդրոնէն: Հայկական շատ մը համայնքներու մէջ եւս Յիսնամեակի ոգեկոչման կեդրոնական մարմիններ կազմուեցան հայ համայնքներու եկեղեցական պետերու հրաւերով եւ անոնց հովանաւորութեամբ¹⁴:

Ինչպէս ամենուրեք, Սուրիոյ տարածքին կը տեղադրուին յուշակոթողներ իբրեւ խորհրդանիշ հայ-արաբ զոյգ ժողովուրդներուն նահատակներուն նուիրուած, որպէս հաւաքական կնիք պահանջատիրութեան:

Բացի Տէր Զօրէն, յուշարձաններ կը կանգնեցնեն՝

–Քեսապցի Անշիրիմ Նահատակներուն Յիշատակին: «Քեսապ, 24 Ապրիլ, 1964»¹⁵:

–Դամասկոսի մէջ եւս, 1965 թ. կը տեղադրուի յուշակոթող

¹³ Աշըգեան Շ., նշուած աշխատութիւն, էջ 335-336:

¹⁴ Նոյն տեղը, էջ 342:

¹⁵ Զոլաքեան Յ., «Քեսապ», Ա. հատոր, Հալէպ, 1995, էջ 266:

մը, հեղինակ՝ Կ. Գարակեօզեան, Ազգային Առաջնորդարանի հովանաւորութեամբ եւ անհատ բարերարներու կողմէ: Իսկ 1965 թ. կը վերանորոգուի եւ կը բարեկարգուի Ս. Կիլիւնազարեանի կողմէ, հեղինակ Ֆուատ Նահիաս, հովանաւորը՝ Ն. Սարաֆեան:

-Լաթաքիոյ Ս. Աստուածածին եկեղեցւոյ շրջափակին մէջ, 24 Ապրիլ 1977 թ., կը կանգնեցնեն ապրիլեան նահատակներու նուիրուած յուշակոթող՝ մտայղացում, իրագործում եւ բարերարութիւնը՝ Լաթաքիահայ Երջանիկ Կարպուշեանի:

-1970-1980-ական թուականներուն Եղեռնի Նահատակներու նուիրուած յուշարձաններ կը տեղադրուին Հալէպի Քառասնից մանկանց Ս. եկեղեցւոյ, Ս. Գէորգ, Գամիշլիի, Ռաս Ուլ Այնի, Սուրիոյ այլ քաղաքներու մէջ նաեւ:

Այս բոլորը տեղի կ'ունենային տեղական իշխանութեան իրազեկմամբ եւ արտօնութեամբ: Այնպէս որ պետական սահմանափակումները երբեք խոչընդոտ չհանդիսացան, որ վարժարաններէն ներս լոյս տեսնող պարբերականներու բովանդակութեան մէջ ներգրաւուին եղեռնի արտացոլումը, Արեւմտեան Հայաստանի գաւառներու վերաբերեալ տեղեկութիւններ: Եղեռնի տարբեր ամեակներու նուիրուած յօդուածներ, յուշագրութիւններ:

Ի դէպ, քննարկուող ժամանակահատուածին Սուրիոյ նոր իշխանութեան հրահանգով դադրած էր հայկական մամուլի հրապարակումը՝ մէկ պետական թերթ ունենալու նպատակով: Դպրոցներէն վերացուցած էին հայագիտական առարկաները, հայերէն դասապահերու նուագումը դպրոցական դասատախտակէն՝ սկսած էր խաթարել հայերէնի լեզուամտածողութեան զարգացումը: Լեզուի պահպանման ազդակներ հանդիսացան՝ Կիրակնօրեայ դպրոցները, մշակութային կառոյցները եւ գործող Հայրենակցական միութիւնները, որոնք համագործակցելով միւս համայնքներու համահայրենակցական մարմիններուն հետ ձեռնարկեցին Յուշամատենաներու պատրաստութեան ու հրատարակութեան: Մամուլին փոխարինեց Միութեանց կանանց կազմակերպութիւններու նախաձեռնութեամբ վերադարձ դէպի աւելունքներ. այս առնչութեամբ նոր սերունդի իրազեկ դարձուցին

հայկական գորգագործութեան, ասեղնագործութեան մասին եւ կազմակերպեցին հայկական տարազներու ցուցադրութիւն: Հայրենիք-Սփիւռք կապերը, շնորհիւ Սփիւռքահայութեան հետ մշակութային կապի կոմտէի, առաւել սերտաձ ապրեցաւ եւ նպաստեց յառաջընթացի:

Աշակերտական պարբերականներու՝ «Բարձունք», «Բանբիտ», «Ծիլեր», եւ միութենական կազմակերպութիւններու հանդէսներու մէջ, ներգրաւուեցան եւ այլն, ուր կ'արտացոլուէին դպրոցներէն ներս պատի թերթի պատրաստութիւնը, որ թոյլատրուած էր կրթութեան նախարարութեան կողմէ:

1940-ականներուն, ֆրանսական մանդատի տարիներուն, պարտադրուած լեզուն ֆրանսերէն էր: Սուրիոյ յետանկախութեան տարիներուն պետական լեզուի՝ արաբերէնի իմացութիւնը նպաստեց հայ արաբական թարգմանական գրականութեան ծաղկման:

Միջոցառումներու մաս կազմեց գրականութեան ծաղկումը, յատկապէս թարգմանական գրականութիւնը վերելք ապրեցաւ, արաբերէնէ հայերէն եւ հայերէն արաբերէն թարգմանական արուեստը, ուր սկզբնական շրջանին մեր հայրենի գրողներու գործերը հրամցուեցան արաբ ընթերցողին, եւ փոխադարձաբար:

Այս բոլոր տուեալները նպաստեցին, որ Սփիւռքի մէջ զարգանայ քաղաքական նոր մտածողութիւն եւ անոր հիման վրայ ալ մշակուի Հայ Դատի նոր ռազմավարութիւն: Սակայն մեր յօդուածի թեման իր մէջ չի ներարեր խօսիլ այս նոր իրավիճակի մասին, այլ միայն՝ այն նախաձեռնութիւններուն ու միջոցառումներուն մասին, որոնք իրազեկ դարձուցին տեղացի արաբ նոր սերունդին եւս այս պատուհասի մասին:

Այս առնչութեամբ Սուրիոյ պետական համալսարաններէն ներս՝ սեմինարներ, դասախօսաշարքեր, ցուցահանդէսներ կը կազմակերպուին, ուր տեղացիներուն կը հրամցուի հայկական մշակոյթը, հայ-արաբ ժողովուրդներու դարաւոր բարեկամութեան պատմական հոլովոյթը: Թեմի եւ երիտասարդական կազմակերպութիւններու նախաձեռնութեամբ կը մեծարուին այն

աշիրապետերը, որոնք մօտիկ անցեալին փորձած էին անապատի աւազներուն վրայ նոր կեանք շնորհած էին որբուկներուն, հայ կանանց եւ աղջիկներուն յատկապէս:

Տէր Զօրի յուշահամալիրի մտայղացումը եւ կառուցումը

1969 թ. աշնան տեղի կ'ունենայ հանդիպումը Բարերար՝ Հայկազուն Գահուէճեանի եւ հայրենի ճարտարագէտ՝ Ռաֆայէլ Իսրայէլեանի: Վերջինս իր ուխտը կատարելու համար Գահուէճեանին եւ ուրիշ երկու անձերու հետ Տէր Զօրի փոխարէն կ'ուղեւորուի Մէսքէն:

1970 թ. Գահուէճեան յուշարձանի կառուցման մտայղացումառաջարկը կը ներկայացնէ Բերիոյ Հայոց Թեմի Առաջորդ Տ. Տաթև Սրբազան Արք.Սարգիսեանին: Սակայն ինչ ինչ պատճառներով պրն. Հայկազուն դրական արդիւնքներ չի ստանար իր յաճախակի հետապնդումներով հանդերձ:

Երկարատեւ համբերութենէն ու սպասումէ ետք եկած էր այն օրինեալ պահը, երբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոս՝ Նորին Սուրբ Օծութիւն Տ. Տ. Գարեգին Բ-ի Սուրիա այցելութեան ընթացքին պրն. Գահուէճեան յարմար առիթ նկատելով կը տեսակցի Կաթողիկոսին հետ ներկայացնելով համազգային տարողութիւն ունեցող առաջարկը, որ բաւական ժամանակէ ի վեր անպատասխան կը մնար: Վեհափառը յուզումով կը դիմաւորէ եւ իր օրհնութեամբ կը թելադրէ, որ անյապաղ գործի անցնին եւ Տէր Զօրի մէջ կանգնեցնեն Յուշարձան-Համալիրը:

Գահուէճեան կը փոխանցէ խոստացած նիւթական օժանդակութիւնը 26 Մարտ 1984 թ.: Ազգային Իշխանութեան կողմէ տուեալ կառոյցի նախագիծի պատրաստութեան համար մրցոյթ կը յայտարարուի նիւթական վարձատրութեամբ: Բազմաթիւ աշխատութիւններէն մրցանակի կարժանանայ՝ Երեւանի շրջանաւարտ ճարտարապետ Սարգիս Պալմանուկեանին ներկայացուցած նախագիծը: Այսպիսով կը սկսի այս հրաշափառ գործին ընթացքը: Օրհնեալ ըլլան բոլոր անոնք, որոնք որեւէ ճիգ չխնայեցին այդ գործի յաջողութեան:

Մեծի Տանն Կիլիկիոյ Հայրապետը կը հետապնդէ շինարարական գործը: 31 Յունուար 1986 թ. կ'ընդունուի յուշահամալիրի նախագիծը քննական յանձնաժողովի մանրակրկիտ ուսումնասիրութենէն ետք, եւ խորհրդակցութեամբ՝ Կիլիկիոյ կաթողիկոսութեան:

Բերիոյ Հայոց Թեմի Ազգ. Իշխանութիւնը 1984 թ. վաւերացուցած էր Տէր Զօրի յուշահամալիրի կառուցումը եւ կազմուած էր յատուկ մարմին, որպէսզի իրականացուէր ողջ հայութեան երազանքը: Ներկայացուած նախագիծերէն կ'ընտրուի հալէպահայ ճարտարապետ՝ Սարգիս Պալմանուկեանի գործը: Յուշահամալիրի կառուցման միտքը առնուած էր «Ս. Երրորդութեան երկրորդ անձնաւորութեան՝ Յիսուս Քրիստոսի կեանքէն՝ Գողգոթայէն սկսեալ մինչեւ խաչելութիւն, ապա՝ նահատակութիւն եւ վերջապէս հրաշափառ Յարութիւն»:

1985 թ. Մայիսի 9-16 Մեծի Տանն Կիլիկիոյ Ս. Աթոռի Վեհափառ Հայրապետ՝ Ն.Ս.Օ.Տ.Տ. Գաբրէլին Բ. Կաթողիկոս, Բերիոյ Հայոց Թեմի կատարած իր հովուապետական այցելութեան ընթացքին պատմական ուխտագնացութեամբ Տէր Զօր մեկնեցաւ Թեմի Առաջնորդ՝ Տ. Սուրէն Ս. Արք. Գաթարոյեանի հետ, 12 Մայիս 1985 թ., որպէսզի Ս. Նահատակաց եկեղեցւոյ հիմնաքարի օծումը կատարեն: Առ այդ յիշենք, որ մատուռի անուանակոչումը «Նահատակաց եկեղեցի», նախօրօք կանխակոչուած էր:

Անկասկած անհրաժեշտութիւն կը նկատուէր նախաձեռնել, ծրագրել եւ գործարկել ազգովի հայասպանութեան հիմնական վայրի՝ Տէր Զօրի մէջ «Նահատակաց» յուշահամալիրի կառուցումը, որ պիտի ունենար ինքնուրոյն դրոշմը հայ ժողովուրդի յիշողութեան մէջ: Սուրիոյ հայկական համայնքի հետեւողական աշխատանքները, ի վերջոյ, յանգեցուցին երկրի խորհրդարանի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման բանաձեւի ընդունման: Ստորեւ կը ներկայացնենք Օսմանեան կայսրութեան կողմէ իրականացուած հայերու ցեղասպանութեան վերաբերեալ Սուրիոյ Ժողովրդական ժողովի /Ազգային ժողովի/ բանաձեւը.

«Սուրիոյ Արաբական Հանրապետութեան Ժողովրդական Ժո-

դովը կը դատապարտէ եւ կը ճանչնայ քսաներորդ դարու սկիզբը Օսմանեան կայսրութեան կողմէ հայ ժողովուրդի դէմ իրականացուած ցեղասպանութեան յանցագործութիւնը: Ժողովը կը դատապարտէ նաեւ այս յանցագործութիւնը ժխտելու եւ պատմական ճշմարտութիւնը խեղաթիւրելու որեւէ փորձ՝ որ կողմէ ալ կատարուի: Ան կը հաստատէ, որ այս յանցագործութիւնը մարդկութեան դէմ իրագործուած ամենասարսափելի եւ դաժան յանցագործութիւններէն մէկն է:

Թէեւ ժողովը իր լիակատար համակրանքը կը յայտնէ բարեկամ հայ ժողովուրդին, ան կը յիշեցնէ, որ հայերը, սուրիանիները, ասորիները եւ այլ ժողովուրդներ նոյն ժամանակաշրջանին ենթարկուած են օսմանցիներու կողմէ իրականացուած, համակարգուած «էթնիկ զտումներու» եւ զանգուածային կոտորածներու: Ան կոչ կ'ուղղէ աշխարհի խորհրդարաններուն, միջազգային հանրային կարծիքին եւ ողջ միջազգային համայնքին ճանչնալ եւ դատապարտել յանցագործութիւնը»¹⁶:

Եզրակացութիւն

1960-ական թուականներու կէսերէն սկսեալ, ողջ Սփիւոքի մէջ քաղաքական զօրաշարժն ու Հայ Դատի պայքարը, որ առաջ տարուեցաւ առանց ոչ մէկ պետական զօրակցութեան անհրաժեշտութեան, առանց ոչ մէկ «հզօր պետականութեան» յաջողեցաւ լրութեան դատապարտուած եւ «մոռցուած» Հայոց Ցեղասպանութիւնը բերել միջազգային օրակարգ եւ արձանագրել անոր ճանաչումի առաջին, թէկուզ եւ անխուսափելիորէն սահմանափակ, յաջողութիւնները:

Եղեռնի ոգեկոչման հաւաքական նախաձեռնութիւնները նպաստեցին ազգային կուսակցութիւններու միջեւ տարակարծութիւններու մասամբ վերացման, միասնականութեան, բայց անկասկած է, որ համայնքներու կազմակերպուածութիւնն ու

¹⁶ St' u Syria People's Assembly Resolution, https://www.armenian-genocide.org/-Affirmation.790/current_category.7/affirmation_detail.html

տեղական իշխանության պայմանները կը տարբերէին երկրէ երկիր: Ղեկավարութիւնը միշտ կը փորձէր նոր միջոցներ որոնել յարգանք եւ պատիւ վայելելու արաբ բարեկամներու քով:

Սուրիոյ խորհրդարանի այս բանաձեւը ոչ միայն քաղաքական ու բարոյական աջակցութեան արտայայտութիւն էր հայ ժողովուրդին, այլ նաեւ տարածաշրջանային պատմական յիշողութեան վերականգնման եւ արդարութեան հաստատման ուղղուած քայլ: Ան կը փաստէ, որ ցեղասպանութեան ճանաչումը կը գերազանցէ ազգային սահմանները՝ դառնալով համամարդկային արժէք, որ միաւորիչ է բոլոր ժողովուրդներու համար, որոնք կ'իսած են պատմական տառապանքը եւ կը ձգտին խաղաղ համակեցութեան ու պատմական ճշմարտութեան վերականգնման:

Ани Фишенкчян

Армения, к.и.н., Институт истории НАН

fishenkjianani@gmail.com

ORCID: 0009-0000-0476-8816

ПАМЯТЬ О ГЕНОЦИДЕ В ОБЩЕСТВЕННЫХ КРУГАХ АРМЯН СИРИИ В 1960-1980 ГГ.

Ключевые слова: Пятидесятилетие Геноцида армян, армянская община, Сирия, дань памяти, общественные круги, мемориал, политизация, требование признания Геноцида армян.

В 1965 году впервые в Армении на государственном уровне отмечалась пятидесятилетняя годовщина Геноцида армян. На протяжении примерно полвека общинами Спюрка, совместно с епархиальными и культурными организациями проводились памятные траурные мероприятия. Жизнь в закрытой провинциальной среде в 1960-ые гг. заставила сирийских армян действовать более осмотрительно. Это было второе поколение переживших Геноцид людей. Говоря об исторической памяти и

одновременно используя возможности искусства, театра, литературы и художественного перевода, они предпринимали шаги для того, чтобы приобщить к памятным мероприятиям даже арабскую интеллигенцию, взаимосвязывая проблему признания Геноцида с Палестинским вопросом.

В статье исследуется проблема памяти о Геноциде армян в общественных кругах сирийских армян в 1960-1980 гг. Упоминается о внутривойсковых и внутриэкономических реалиях Сирии после 1950-х гг., которые могли стать препятствием для проведения публичных памятных мероприятий.

Несмотря на межобщинную и внутривойсковую напряженность, церковь, оставаясь центром притяжения для всех армян, ежегодно проводила общие памятные церемонии.

Вернувшись в Сирию из разных иностранных вузов и вооруженная новыми идеями армянская молодежь уже более осмотрительно действовала в школах и различных объединениях, направляя соотечественников на сохранение исторических ценностей, воспитывая в них дух гражданской ответственности и самосознания. В память о невинно убиенных в разных городах и других населённых пунктах армяне Сирии воздвигали памятники, ставшие символами и призывом к справедливости двух братских народов — армянского и арабского.

Ani Fishenkjian

Armenia, Ph.D. in History,
Institute of History of NAS

fishenkjianani@gmail.com

ORCID: 0009-0000-0476-8816

MEMORY OF THE GENOCIDE IN PUBLIC CIRCLES OF ARMENIANS IN SYRIA IN THE 1960S-1980S

Keywords: Fiftieth Anniversary of the Genocide, Armenian

community, Syria, tribute to memory, public circles, memorial, politicization, demand for recognition of the Armenian Genocide.

In 1965, the fiftieth anniversary of the Armenian Genocide was celebrated for the first time in Armenia at the state level. For about half a century, the communities of the Diaspora, together with diocesan and cultural organizations, held memorial mourning events.

Life in a closed provincial environment in the 1960s forced the Syrian Armenians to act more cautiously. They were the second generation of Genocide survivors. Speaking about historical memory and simultaneously using the possibilities of art, theater, literature, and literary translation, they took steps to involve even the Arab intelligentsia in commemorative events, interlinking the problem of Genocide recognition with the Palestinian issue.

The article examines the problem of Genocide memory in public circles of Syrian Armenians in the 1960s-1980s. It mentions the internal political and economic realities of Syria after the 1950s, which could become an obstacle to holding public commemorative events.

Despite the intercommunal and internal political tensions, the church, remaining the center of attraction for all Armenians, annually held common memorial ceremonies.

Having returned to Syria from various foreign universities, armed with new ideas, the Armenian youth acted more cautiously in schools and numerous associations, guiding their compatriots to preserve historical values, nurturing in them the spirit of civic responsibility and self-awareness. In memory of the innocent victims, in various cities and other settlements, the Armenians of Syria erected monuments that became symbols of the call for justice of two fraternal peoples - the Armenians and Arabs.

Մեղա Օհանեան
Հայաստան, պ.գ.թ. ԳԱԱ ՊԻ
dajad.seta@gmail.com
ORCID: 0009-0005-
2139-2968

**ՀԱՅ ԺՈՂՈՎՈՒՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՕՆՔԸ ԵՒ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱԶՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԻՐԱՔՈՒՄ**

Հիմնաբառեր՝ Իրաքահայ գաղութ, Հայոց Ցեղասպանություն, 100-ամեայ տարելից, Արաբական երկիրներ, Միջազգային ճանաչում, արաբ մտաւորականներ:

Մուտք

Հայկական հարցի՝ պատմական, իրաւական եւ մարդասիրական հիմնահարցերը բազմիցս արծարծուած են: Այդ ժողովուրդի մը հարցն է, որ պայքարած է ինքնորոշման իրաւունքի իրացման եւ անկախ պետութիւնը իր ազգային պատմական ամբողջական հողին վրայ հաստատելու համար¹: Այս կապակցութեամբ Հայոց ցեղասպանութեան համընդհանուր ճանաչման ու դատապարտման համար հայկական տարբեր կազմակերպութիւններ պայքարեցան եւ տակաւին կը շարունակեն պայքարիլ յանուն արդարութեան եւ վերջնական յաղթանակի տեսլականով:

1965 թ. հայ ժողովուրդի պատմութեան մէջ կարելուք անկիւնաքար մը եղաւ, երբ պայքարի ընթացքը թեւակոխեց քաղաքական փուլ: Այդ հանգամանքներու բերումով եւ առաւել ցայտուն կերպով դրսեւորուեցաւ Հայրենիքէն ներս, քանզի արտասահմա-

دكتور حافظ برجاس – الشتات الارمني والذاكرة القومية – اللجنة المركزية في العراق لحياء الذكرى المئوية
للابادة الجماعية الارمنية على يد الاتراك العثمانيين – صفحة 4

(**Դոկտ.Պրճաս Հաֆէզ** Դանիայի Արաբ Ակադեմիայի աշխատակից
ակադեմիկոս է): Հայկական Սփիւռքը եւ ազգային յիշողութիւնը, էջ 4:

նի տարածքին ապրող սփիւոքահայերը տարիներ շարունակ ոգեկոչած էին յիշատակը մեր միլիոնատր նահատակներուն անընդմեջ եւ յաւուր պատշաճի, հրապարակաւ կամ սահմանափակուած ազգային կազմակերպութիւններով:

Յիշատակութեան արժանի է այն, որ Իրաքի մէջ հայերու անցեալի եւ ներկայի պատմութեան, մշակոյթի եւ ինքնութեան նկատմամբ հետաքրքրութիւնը նշանակալիօրէն աւելցեր է, յատկապէս Հայոց ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցին առթիւ տեղի ունեցած միջոցառումներէն ետք²: Այդ առումով կարելոր են՝ արաբ հետազօտող դոկտ. Սընար Էլ Ճամիլի բազմաթիւ ուսումնասիրութիւնները հայ ժողովուրդի մասին³, դոկտ. Ճուատ Ք. Էլ Պէյտանիի, բոլորիս քաջածանօթ, խմբագրած հայամետ յօդուածները եւ հեղինակած մենագրութիւնները՝ հայ ժողովուրդի անցած պատմական ուղիի մասին, ինչպէս նաեւ Իրաքի ու Հայաստանի միջեւ գիտական, մշակութային հնարաւոր փոխ-յարաբերութիւններու ծրագիրները⁴:

Միջոցառումներ Հայոց Ցեղասպանութեան 100-ամեայ տարելիցին առթիւ – Երաք

Անցեր է ամբողջ դար մը, եւ օսմանեան կայսրութեան ժա-

² الدكتور حميد الهاشمي – الارمن العراقيون -التاريخ – الثقافة الهوية – دار روزنامه – سويسرا 2016 (Պոկտ. Համիտ Էլ Հաշմի, Իրաքի Հայերը, Պատմութիւն, մշակոյթ, ինքնութիւն, Ռուզնամէ հրատարակչութիւն, Զուիցերիա, 2016, 234 էջ): Բազմաթիւ գիտական յօդուածներ տարբեր մակարդակի մասնագէտներուն կողմէ, ինչպէս նաեւ մագիստրոսական եւ պատմական թեկնածուական ուսումնասիրութիւններ:

³ الدكتور سيار الجميل، الارمن العراقيون – الجذور والاعصان – الخصوصية والاسرار الحيوية، ايلاف للنشر المحدودة 2010-10-21 صحيفة الكترونية

(Պոկտ. Սընար Ալ Ճամիլ, Իրաքի Հայերը Արմատներ եւ Ճիւղեր, առանձնայատկութիւններ եւ կենսական գաղտնիքներ, Իլաֆ հրատարակչութիւն, 21-10-2010, էլեկտրոնային թերթ):

⁴ الدكتور جواد كاظم البيضاوي – ارمينينا في ظل المعاهدات – اارات للطباعة والنشر والتوزيع – بغداد، 2010

(Հայաստանը միջազգային պայմանագրերու ստուերին տակ, «Արարատ» հրատ., Պաղտատ, 2020):

ռանգները՝ Թուրքիոյ նոր կառավարիչները, դեռեւս կը ժխտեն ճշմարտութիւնը: Դժոխային տանջանքներէն փրկուածները, կը հիւրընկալուին եւ ապաստան կը գտնեն արաբական երկիրներուն մէջ՝ ժամանակի ընթացքին դառնալով տուեալ երկրի օրինապահ քաղաքացիները: Հաստատուելով Միջագետք՝ ցանկալով պահպանել իրենց ազգութիւնը, պատմութիւնը, եւ զաւակներուն ջամբել հայեցի դաստիարակութիւն, հայերը ունեցան մարգական-մշակութային միութիւններ, կազմակերպուեցան տուեալ երկիրներուն մէջ որպէս կրօնա-համայնք:

Արդէն անցած է հարիւր տարի եւ հայ ժողովուրդը կը սպասէ, որ յանցագործները պատասխանատուութեան ենթարկուին եւ վերականգնուին իրենց իրաւունքները:

Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին առթիւ, Իրաքի մէջ տեղի կ'ունենան բազմաթիւ միջոցառումներ: Այս առթիւ, եւ յիշեալ միջոցառումները յաւուր պատշաճի ներկայացնելու համար, Իրաքի հայոց թեմի առաջնորդ՝ Տ. Աւագ արք. Ասատուրեանի եւ Իրաքի Ազգային Կեդրոնական Վարչութեան հրաւերով 2013 թ. սկիզբը կը ստեղծուի համակարգող Կեդրոնական յանձնաժողով, որուն որոշումով եւ նախաձեռնութեամբ տեղի պիտի ունենային Իրաքի մէջ կազմակերուելիք եւ կայանալիք բոլոր ձեռնարկները ողջ տարուան ընթացքին⁵: Յանձնաժողովի կազմին մէջ կ'ընդգրկուին թեմէն ներս ծառայող քահանայ հայրեր, ներկայացուցիչներ համայնքին մէջ գործող հասարակական կազմակերպութիւններէն՝ Պաղտատի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութիւնը, Հայ Մարմնամարզական Ընդհանուր Միութիւնը, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւնը եւ Իրաքի Հայ Տիկնանց Մշակութային Միութիւնը, ինչպէս նաեւ Ազգային Տարրական Վարժարանի ուսուցիչ-ուսուցչուհիներ: Իրաքահայերը, ինչպէս իրենց բոլոր ազգակիցները աշխարհի շուրջ, Ցեղաս-

⁵ Տե՛ս Իրաքահայ Թեմի եւ Համայնքի համառոտ պատմութիւն, համահեղինակ եւ խմբագիր Ս. Օհանեան, ՀՀ ԳԱԱ Պատմութեան ինստիտուտի գիտ-խորհուրդի երաշխաւորութեամբ), Երեւան, 2024, էջ 294-298:

պանութեան 100-րդ տարելիցին առթիւ կ'իրականացնեն բազմաթիւ միջոցառումներ, որոնք անգամ մը եւս կու գան հաստատելու Իրաքի հայ համայնքի յարատեւ կենսունակութիւնը եւ ազգապահպան գործունէութիւնը, գօտեպնդուած նախ եւ առաջ իր մայր եկեղեցիով եւ տարաբնոյթ հասարակական կազմակերպութիւններով: Կարեւորենք հետեւեալ ձեռնարկները.

Բողոքի լուռ քայլերթ դէպի թրքական դեսպանատուն

Ապրիլի 23-ի առաւօտեան ժամը 10-ին կը մեկնարկէ իր նախադէպը չունեցող Պաղտատի հայութեան բողոքի լուռ քայլերթը դէպի թրքական դեսպանատուն: Աւելի քան 500 ցուցարարներ գլխաւորութեամբ Իրաքի Հայոց թեմի առաջնորդ Աւագ արք. Ասատուրեանի, քահանայ հայրերու, Ազգային Կեդրոնական վարչութեան եւ միութիւններու վարչութիւններուն անդամներուն, կ'առաջնորդուին դէպի թրքական դեսպանատուն:

Հայերուն հետ ցոյց-քայլերթին իրենց մասնակցութիւնը կը բերեն նաեւ Իրաքի գիտութեան եւ ճարտարարուեստի նախարար՝ Ֆարես Եուսէֆ Ճաճուն, Իրաքի խորհրդարանի քրիստոնէայ երեսփոխան Ժոզէֆ Սլէուա, «Էլ-Մասարաթ» մշակութային եւ լրատուամիջոցներու զարգացման հաստատութեան տնօրէն՝ ալկադէմիկոս դոկտ. Սաատ Սալլում, Պասրայի մէջ քրիստոնէայ համայնքներու խորհուրդին անդամ՝ Նովաք Պետրոսեան եւ շարք մը պաշտօնեաներ, նաեւ՝ ցեղասպանագիտութեան 40 իսլամ մասնագէտներ (իրաքցի եւ արաբական երկիրներէն հրաւիրուած գիտնականներ): Բողոքագիրը կը փակցուի դեսպանատան շէնքին դրան, ինչպէս նաեւ օրինակ մը կը յանձնուի տեղական եւ օտար լրատուամիջոցներուն:

Շաբաթ 2015 թ. Մայիս 23-ին՝ «Հայոց Ցեղասպանութեան ճանաչումը. քայլ դէպի միջազգային խաղաղութիւն» խորագիրով միջազգային գիտաժողով:

Այս աննախադէպ գիտաժողովը կազմակերպուած եւ հովանաւորուած էր իրաքահայ Թեմի Առաջնորդարանի կողմէ եւ Հ.Հ.

դեսպանության մասնակցությամբ՝ համագործակցաբար Պաղ-տատի Պետական Համալսարանի, Իրաքի միջկրոնական երկխոսության խորհուրդի եւ Էլ-Մասարաթ մշակութային եւ լրատուամիջոցներու զարգացման հաստատության⁶:

Գիտաժողովին ներկայ եղան 400-է աւելի անձինք, այդ թուին Իրաքի մէջ ՀՀ դեսպան տիար Կարէն Գրիգորեանը, Իրաքի հանրապետութեան “Թեքնոլոկիաներու” նախարար Ֆարես Ճաճուն, մշակոյթի նախարարի տեղակալ Ֆաուզի Աթրուշին, Իրաքի խորհրդարանի երեսփոխաններ, տարբեր կուսակցութիւններու պատգամաւորներ, տարբեր դաւանանքի պատկանող հոգեւոր առաջնորդներ, Իրաքի քաղաքական, հասարակական, գիտական, կրթական եւ մշակութային շրջաններու ներկայացուցիչներ: Յիշատակութեան արժանի է, որ ելոյթ ունեցողներուն մեծամասնութիւնը իրաքցի եւ արաբական երկիրներէն հրաւիրուած գիտնական-մտաւորականներ էին:

Մայր հայրենիքէն իրենց մասնակցութիւնը բերին պատմական գիտութիւններու դոկտ. պրոֆ. ՀՀ ԳԱԱ (Գիտութիւններու ազգային ակադեմիայի) պատմութեան ինստիտուտի տնօրէն ակադեմիկոս Աշոտ Մելքոնեանը, Հայաստանի գիտութիւններու ազգային ակադեմիայի թղթակից անդամ, գիտութեան վաստակաւոր գործիչ, պատմական գիտութիւններու դոկտոր, փրոֆ. արեւելագետ Նիկոլայ Յովհաննիսեանը, Հայոց պատմութեան, մշակոյթի եւ ցեղասպանութեան վերաբերեալ բազմաթիւ աշխատութիւններու հեղինակ, լիբանանցի գիտնական դոկտ. Սալէի Զէիրետտին⁷, ինչպէս նաեւ իրաքահայ ճարտարագետ, հայրենադարձ Արա Աշճեանն ու ՀՀ ԳԱԱ ինստիտուտի գիտաշխատող

6 الدكتور سعد سلوم — مؤسسة مسارات العراق لتكنولوجيا المعلومات المحدودة - بغداد
Մալլում, Իրաքի Էլ-Մասարաթ մշակութային եւ լրատուամիջոցներու զարգացման հաստատութեան հիմնադիր):

7 الدكتور صالح زهر الدين. Սալէի Զէիրետտին, լիբանանցի գիտնական, 1995 թ. ուսանած է Հայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու Ազգային ակադեմիայի, ինչպէս նաեւ Փարիզի եւ Լիբանանի բարձրագոյն ուսումնական կեդրոններուն մէջ:

պատմական գիտություններու թեկնածու՝ Սեդա Օհանեանը:

«Հայկական մշակութային ժառանգություններ» խորագիրով երեկոյ: Իրաքի Հայ Տիկնանց Մշակութային Միութեան վարչութիւնը, Հոկտեմբերի 17-ին, Հ.Մ.Ը.Մ-ի սրահին մէջ կազմակերպեց «Հայկական մշակութային ժառանգություններ» խորագիրով երեկոյ: Պատմական Հայաստանը խորհրդանշող հսկայ քարտեզի մը վրան տեղադրուած էր 20 խոշոր քաղաքներու հայկական ճարտարապետական յուշարձաններուն մանրակերտները: Ազգային տարագները ներկայացնողները տուեալ շրջանին բնորոշ երաժշտութեան եւ քաղաքի պատմական ակնարկի ներքոյ, քարտեզին վրայ զբաղեցուցած էին իրենց համապատասխան տեղերը:

«Հայոց ցեղասպանությունը դատարանի առջեւ» խորագիրով ներկայացում: Վերոյիշեալ ձեռնարկներու ծիրէն ներս Նոյեմբերի 26-ին, Իրաքի Հայ մարմնակրթական Ընդհանուր Միութեան (ՀՄԸՄ) կազմակերպութեամբ, Պաղտատի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միութեան սրահին մէջ, կը կայանայ Պերձ Զեյթունցեանի «**Ուոքի՛, դատարանն է գալիս**» ներկայացման հիման վրայ, «**Հայոց ցեղասպանությունը դատարանին առջեւ**» խորագրով արաբերէն ներկայացումը բեմադրութեամբ՝ պրն. Յակոբ Սահակեանի եւ ներկայութեամբ՝ արաբ մտաւորականներուն:

Պաղտատի Հայ Երկսեռ Երիտասարդաց Միությունը համագործակցաբար «**Էլ-Մասարաթ**» մշակութային եւ լրատուամիջոցներու զարգացման հաստատութեան հետ, Շաբաթ 6 Փետրուար 2016 թ., կը կազմակերպէ «**Հայոց ցեղասպանութենէն 100 տարի անց**» արաբերէն գիրքի ստորագրման շնորհահանդէսը⁸:

Միջոցառումները կը շարունակուին. 27 Փետրուար 2016 թ., Միությունը կը կազմակերպէ Մայրենի Լեզուի Միջազգային օրուան նուիրուած՝ գրական-գեղարուեստական երեկոյ ներկայութեամբ՝ տիար Կարէն Գրիգորեանի՝ Հ.Հ արտակարգ եւ լիազօր

⁸ 100 عام على الإبادة الأرمنية – حقائق ووثائق عن الجريمة الكبرى بحق الشعب الأرمني والإنسانية – تأليف فكريت البغدادي وعلاء الشريف - بغداد - لبنان - كندا 2015

(Հայոց ցեղասպանութենէն 100 տարի անց, Հեղինակներ՝ Ֆիքրըթ Էլ Պաղտատի եւ Ասլա Էլ Շերիֆ, Պաղտատ, Լիբանան, Քանատա, 2015):

դեսպան յԻրաք, Հոգեշնորհ Հայր Գաբրիել Վրդ. Սարգիսեանի՝ Եզիպտոսի Հայոց թեմի փոխառաջնորդ, որ Իրաքի Առաջնորդ Սրբազան Հօր եւ Ազգային Կեդրոնական Վարչութեան մասնաւոր հրաւերով կ'այցելէր Իրաք. ինչպէս նաեւ Արհ. Հայր Էմմանուէլ Արք. Տապապաղեանը՝ առաջնորդ Իրաքի Հայ Կաթողիկէ թեմին, քահանայ հայրեր, Ազգային Կեդրոնական վարչութեան անդամներ, ինչպէս նաեւ վարչութիւններ քոյր միութեանց:

Իրաքի Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան կազմակերպած միջոցառումները

2015 թ. Մարտ 20-ին, Թաճիրեան սրահին մէջ, Պ. Սեւակի «Օր Ձեռքերը» խորագրով՝ գրական գեղարուեստական երեկոյ: Ձեռնարկը, որ կը հովանաւորուի Իրաքահայ Թեմի Առաջնորդին կողմէ, ներկայ կ'ըլլան Հայ Կաթողիկէ համայնքի Առաջնորդ Գե. րապայծառ Էմմանուէլ Տապապաղեան, ՀՀ Դեսպանութեան կցորդ տիար Ստեփան Գեորգեան, Ազգային Կեդր. Վարչութեան անդամներ, հոգեւորականներ, արաբ հիւրեր եւ հոծ բազմութիւն:

Նոյեմբեր 20-ին ՀԲԸՄ-ը կազմակերպեց «Ազատ Օր» միջոցառումը: Օրուան յայտագիրը կ'ընդգրկէ գրական-գեղարուեստական բաժին, որուն իրենց մասնակցութիւնը կը բերեն իրաքցի արաբ բանախօսներ, անդրադառնալով Հայոց ցեղասպանութեան առնչուող պահանջատիրութեան, վերականգնման եւ պատմական հարցերուն: Յայտագրի կողքին տեղի կ'ունենայ օրուան առիթին հետ առնչուող գեղանկարներու, լուսանկարներու եւ գիրքերու ցուցադրութիւն:

Շնորհանդէս: Հայոց Ցեղասպանութեան 100-րդ տարելիցին նուիրուած հանդիսութիւններու ծիրէն ներս, Իրաքի Կեդրոնական յանձնախումբի կազմակերպութեամբ, Շաբաթ, Ապրիլի 2-ին երեկոյեան ժամը 6:30-ին Պաղատաւի ազգային վարժարանի Կիւլպէնկեան սրահին մէջ տեղի ունեցած է իրաքահայ բանաստեղծ, Արամ սրկ. Քէթէնճեանի՝ «***Մատնքներն ենք Արարատի***» հարիւր քառատողէ բաղկացած «պոէմ»-ի շնորհահանդէսը:

Բացումը՝ Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ Եկե-

դեցույ «Հայ Նահատակ»-ի նորակառույց շենքին՝ համատեղ գծագրությիւններու անհատական ցուցահանդէսի:

Շենքին բացումը տեղի կ'ունենայ Շաբաթ՝ 22 Օգոստոս, 2015 թ. համատեղելով արուեստագէտ՝ Անդրանիկ Օհաննէսեանի գեղանկարներու անհատական ցուցահանդէսը:

Ցուցահանդէսը կը ներառէր 100 գեղարուեստական գծագրութիւններ, (գեղանկարչական կտաւներ) նուիրուած՝ Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին: Ձեռնարկին ներկայ էին ՀՀ արտակարգ եւ լիազօր դեսպան տիար Կարէն Գրիգորեանը, Քրիստոնէական համայնքներու ներկայացուցիչներ եւ այլ Կրօններու Աւանդապահութեան Խորհուրդի անձնատրութիւններ:

Եզրակացութիւն

Այսպիսով, Հայկական հարցը, ինչպէս մարդկութեան խիղճին վրան ծանրացած բոլոր միւս հարցերը, կը սպասէ արդար լուծումներու՝ համաձայն միջազգային իրաւունքի կանոններուն եւ մարդկային ուժին: Եթէ Միաւորուած Ազգերուն Կազմակերպութեան (ՄԱԿ) կողմէն ներկայացուած միջազգային հանրութենէն ակնկալուող լուծումները, տակաւին անյոյս եւ անհասանելի են, ապա ժողովուրդներուն պայքարը եւ իրենց արդար դատը բարձրացնելու նուիրուածութիւնը կը մնայ ազգային իրաւունքները պաշտպանելու միակ ճանապարհը: Այս է այն առաքելութիւնը, ինչին նուիրուած է հայ ժողովուրդը իր ողջ պայքարի ընթացքին, յատկապէս սփիւռքահայերուն կողմէ, որ մեծագոյն դեր ունեցած է ազգային յիշողութեան եւ հայրենի հողին հետ կապի վերակենդանացման գործին: Եթէ Հայոց ցեղասպանութեան հարիւրամեայ տարելիցը այսօր մեզի կը յիշեցնէ 19-րդ դարուն եւ 20-րդ դարուն օսմանցիներուն կողմէն կատարուած կոտորածներու, տեղահանութեան եւ ճնշումներու մասին, ապա հենց այս տառապանքն է, որ հայ ժողովուրդին մէջ ստեղծած է հաստատականութիւն՝ ամուր կապերով կամրջելու հայրենիք-սփիւռք փոխկապակցուածութիւնը, միաժամանակ համարկուելով հիւրընկալ երկիրներու պայմաններուն դառնալով այդ երկրի մէկ մասնիկը, որպէս պար-

տաճանաչ քաղաքացի գիտակից իր պարտավորություններուն եւ պարտավորութիւններուն⁹:

Այս առնչութեամբ այսօր աւելի քան այժմէական եւ անհրաժեշտ է յիշել եւ հաստատել Իրաքի թեմի նախկին Առաջնորդ՝ Աւագ արք. Ասատուրեանի խօսքը եւ պատգամը՝ նորահաս սերունդին՝ նուիրուած Հայոց ցեղասպանութեան 100-րդ տարելիցին առթիւ. «... մնալ Հարազատ մեր նախնիներու թողած աւանդին՝ իր բազմազան երեսներով ու դրսեւորումներով: Ազգի մը համար կենսական է պահպանել ամուր կապն իր արմատներուն հետ՝ երբէք չմոռնալ մեր հարազատ աւանդութիւնները»: Ինչպէս նաեւ «զարգացնել կարողութիւնը մեր ներկան ճշգրտապէս ըմբռնելու այս աշխարհի յարափոփոխ քաղաքական վիճակներուն դիմաց, որոնք բոլորն ալ կը միտին մահացու հարուած հասցնել համրանքով փոքր ազգերու գոյութեան: Նկատի ունիմ, այսպէս կոչուած «աշխարհայնացում» վիշապը, որը ցայտուն հոմանիշն է մշտական կերպով շարունակուող սպիտակ ջարդի»¹⁰:

Сета Оганян

Армения, к.и.н., Институт истории НАН

dajad.seta@gmail.com

ORCID: 0009-0005-2139-2968

НАЦИОНАЛЬНОЕ ПРОБУЖДЕНИЕ АРМЯНСКОГО НАРОДА И ПРОЦЕСС ПРИЗНАНИЯ ГЕНОЦИДА АРМЯН В ИРАКЕ

Ключевые слова: Армянская община Ирака, Геноцид армян, 100-летие, арабские страны, международное признание, арабская интеллигенция.

⁹ Նոյն տեղը:

¹⁰ ՏՐ Աւագ արք. Ասատուրեան, Ապրիլ 24-ը հայ նահատակաց արեան սկիին է, «Էջմիածին», հ. Դ., 2015, էջ 6:

Армянский вопрос широко обсуждался с различных исторических, правовых и гуманитарных точек зрения. Это вопрос народа, который боролся за реализацию своего права на самоопределение и создание независимого государства на своей исторической родине. В связи с этим различные армянские организации боролись за всеобщее признание и осуждение Геноцида армян и продолжают бороться за справедливость и видение окончательной победы.

1965 год стал краеугольным камнем в этой борьбе, которая, в силу различных политических обстоятельств, наиболее ярко проявилась на родине. Представители общин Армянской диаспоры, в том числе иракские армяне, на протяжении десятилетий чтят память миллионов мучеников, различные армянские организации периодически организовывали мероприятия, посвященные памяти жертв Геноцида армян.

Seda Ohanian

Armenia, Ph.D. in History,

Institute of History NAS

dajad.seta@gmail.com

ORCID: 0009-0005-2139-2968

THE NATIONAL AWAKENING OF THE ARMENIAN PEOPLE AND THE PROCESS OF RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE IN IRAQ

Keywords: Armenian community of Iraq, Armenian Genocide, 100th anniversary, Arab countries, International recognition, Arab intellectuals.

The Armenian Question has been much discussed from its

various historical, legal, and humanitarian perspectives. It is the question of a people that has struggled to realize its right of self-determination and establish its independent state on its national, historical and integral land. In this regard various Armenian organizations fought for universal recognition and condemnation of the Armenian Genocide and continue to fight for justice and the vision of final victory.

The year 1965 was a cornerstone in this struggle, which, due to various political circumstances, was more prominently manifested in the Homeland. Representatives of the Armenian Diaspora communities, including Armenians of Iraq, have honored the memory of millions of martyrs for decades, and various Armenian organizations have periodically organized events dedicated to the memory of the victims of the Armenian Genocide.

Կարեն Մկրտչյան
Հայաստան, պ.գ.թ., ԳԱԱ ՊԻ
K86mkrtchyan@gamil.com
ORCID: 0009-0006-2376-0215

ԹԵՀՐԱՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ

Հիմնադրանք՝ Թեհրան, «Հայկական հարցերի ուսումնասիրության կենտրոն», Հայոց ցեղասպանություն, պարսկերեն լեզվով գրքեր, գրաիրատարակչություն, տարելից, իրանցի գործիչներ, նախաձեռնություններ:

Հայոց ցեղասպանության թեմայի արծարծումները որոշակի քննարկումների փուլեր են անցել իրանական հասարակական և քաղաքական-պաշտոնական հարթակներում: Ակնհայտ է, որ այդ գործում իր զգալի մասնակցությունն է ունեցել և ունի Իրանի հայ համայնքը, մասնավորապես, այդ հարցում որոշակի գործունեություն ծավալած միությունները: Այդ տեսակետից ակնառու է Թեհրանի «Հայկական հարցերի ուսումնասիրության կենտրոն»-ը, որի գործունեությանը կփորձենք հակիրճ անդրադառնալ սույն հոդվածում: Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցից հետո Սփյուռքի զանազան գաղութներում կազմակերպվեցին Հ. Յ. Դաշնակցության Հայ Դատի հանձնախմբեր: Դեռևս 1965 թ. Թեհրանում կազմավորվել էր Հայ Դատի գրասենյակ, որը 1982 թ. պաշտոնապես գրանցվեց որպես «Հայկական հարցերի ուսումնասիրության կենտրոն» (այսուհետ՝ ՀՈՒՄԿ) անվամբ: 1994 թ.-ից այն ունի իր առանձին մասնաշենքը, պարսկերեն հրատարակում է «Պայման» պարբերականը¹: Հիշյալ կենտրոնում ներկայումս գրանցված են Հայ Դատի 500 իրանցի հայ բա-

¹ Տե՛ս **Բաղդասարյան Էդ.**, Իրանահայ համայնքի ամբողջական համառոտ պատմություն, հտ. 1, Տորոնտո, 2015, էջ 498:

րեկամներ: Կենտրոնը հրատարակում է Հայ Դատին և Հայոց ցեղասպանությանը առնչվող գրքեր, պատրաստում է փաստագրական ֆիլմեր, թարգմանում օտարերկրյա հեղինակների ուսումնասիրություններ, հրատարակում հայ-իրանական դարավոր բարեկամությանը նվիրված պարսկերեն լեզվով գրքեր և այլն²: Պարբերաբար կազմակերպվում են «կյոռ սեղաններ» և դասախոսություններ՝ նվիրված Հայոց ցեղասպանությանը և արդի քաղաքական հարցերին³: 2003 թ.-ից ՀՈՒՄԿ-ը կազմակերպում է «Հայ դատն այսօր» խորագրով ամենամյա խորհրդաժողովներ:

Հայ Դատի բարեկամներին Հայաստանի և Հայ Դատի օրվա իրադարձությունների մասին իրազեկ դարձնելու նպատակով պարբերաբար հրատարակվում է «Բարեկամ» տեղեկագիրը, որն առաքվում է նշված հասցեատերերին: ՀՈՒՄԿ-ը հավաքում է նաև Հայ Դատին առնչվող նյութեր, լուրեր, ֆիլմեր և այլ աղբյուրներ և դրանք մատչելի դարձնում համայնքի տարբեր միություններին, դպրոցներին և այլն⁴:

Այսպիսով, ՀՈՒՄԿ-ը կարևոր ներդրում ունի գրահրատարակչության ոլորտում՝ իրանցի ընթերցողի սեղանին դնելով հայագիտական արժեքավոր գրականություն: Ավելին, ՀՈՒՄԿ-ն Իրանի հայ համայնքի այն եզակի կազմակերպություններից է, որի կատարած աշխատանքների հիմնական շահառուն իրանցի հասարակությունն է:

Ըստ այդմ, անհրաժեշտ ենք համարում մի քանի օրինակներով հիմնավոր ներկայացնել ՀՈՒՄԿ-ի գործունեությունը իրանական հասարակական կյանքում:

Նախ հարկ է նշել, որ իրանական պատմագրության մեջ Հայոց ցեղասպանության խնդրին են անդրադարձել Ռեզա Ալի Դիվանբեկին, Սայիդ Նաֆիսին, Մ. Աֆշարը, իսկ անվանի պատմաբան

² Տե՛ս **Բադայան Գ.**, Իրան հանրագիտարան, Եր., Հեղ. հրատ., 2011, էջ 497:

³ Տե՛ս **Բայբուրդյան Վ.**, Իրանի հայ համայնքը. արդի հիմնախնդիրներ, Եր., «Լուսակն», 2013, էջ 108-109:

⁴ Տե՛ս **Ահարոնեան Լ.**, Փոթորկոտ կեանքիս օրերը, Թեհրան, «Սալես» հրատ., 2010, գիրք Բ, էջ 1921-1922:

Իսմայիլ Ռայինը, որը մշտապես հետաքրքրություն է դրսևորել հայ ժողովրդի պատմության, մշակույթի և առհասարակ նրա պատմական ճակատագրի նկատմամբ, հատուկ մենագրություն է նվիրել Հայոց ցեղասպանության հարցի լուսաբանմանը, որը 1973 թ. պարսկերեն լույս է տեսել Թեհրանում «Հայերի համընդհանուր կոտորածները օսմանյան սուլթանների տիրապետության շրջանում» վերնագրով⁵։ Մինչդեռ, հայ արևելագիտության մեջ տասնամյակներ շարունակ գերիշխող է եղել այն տեսակետը, թե իրանական խոսույթում Հայոց ցեղասպանության հարցին եզակի անդրադարձ եղել է XX դարի պարսկական ռեալիստական գրականության հիմնադիրներից մեկի՝ նշանավոր արձակագիր Մոհամմադ Ալի Ջամալզադեի կողմից։ Նրա ստեղծագործությունները եղել են Խորհրդային Միության արևելագետ բանասերների ուսումնասիրության առարկան, իսկ նորավեպերն ու պատմվածքները թարգմանվել են ռուսերեն, հայերեն և այլ լեզուներով⁶։ Ինչպես գրում է Հ. Մովսիսյանը, Առաջին համաշխարհային պատերազմի սկզբին երիտասարդ Ջամալզադեն գտնվում էր Բեռլինում։ Մի առիթով նա գործուղման է մեկնում Բադդադ, որտեղ հասնելու համար պետք է անցներ Թուրքիայի վրայով։ Այդ դժվարին ճանապարհորդության ընթացքում նա ականատես է լինում օսմանյան կառավարության ժանդարմների կողմից հայերի նկատմամբ կատարած գազանաբարո խոշտանգումների ու սպանությունների շատ տեսարանների, որոնց մասին նա 1971 թ. Ժնևից իր գրությունները ուղարկում է Թեհրանում լույս տեսնող

⁵ Տե՛ս **Բայբուրյան Վ.**, Պարսիկ պատմաբանները Հայոց ցեղասպանության մասին, «Միհր» ամսագիր, Եր., թիվ 2 (53) 2005, մարտ, էջ 24-31։ Տե՛ս նաև՝ **Իսկանդարյան Գ.**, Իրանի դիրքորոշումը Հայոց ցեղասպանության նկատմամբ, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ և ժողովուրդներ, XXIV, Եր., 2005, էջ 101-110։ Տե՛ս նաև՝ **Իսմայիլ Ռային**, Հայերի կոտորածները, «Հայաստան», 1999, 219 էջ։

⁶ Տե՛ս **Մովսիսյան Հ.**, Պարսիկ անվանի գրողը հայկական ցեղասպանության մասին, Պատմա-բանասիրական հանդես, Եր., 1987, թիվ 2, էջ 231-234։

«Հուր» ամսագրին, որտեղ և նրանք տպագրվում են⁷:

Եվ ահա, պատմագիտական մտքի վրա նոր լույս է սփռում պատմական գիտությունների թեկնածու Գրիգոր Առաքելյանի հեղինակած «Մոհամմադալի Ֆորուլին և Հայոց ցեղասպանությունը» հրապարակումը, որի մեջ ներկայացվում են Ֆորուլիի գրքի առաջին գլխի վերծանությունը, նույն գլխի հայերեն թարգմանությունը՝ անհրաժեշտ ծանոթագրություններով⁸: Իրանում Հայոց ցեղասպանության թեմային անդրադարձած մտավորականների շրջանակը գլխավորում է Համայիլ Ռայինը: Սակայն, մինչև Ռայինը, Հայոց ցեղասպանության թեմային անդրադարձել է Փեհլիների շրջանի վարչապետ Մոհամմադալի Ֆորուլին, ում Հայոց ցեղասպանությանը նվիրված գրառումները ձեռագրի տեսքով պահպանվում են Իրանի մեջլիսի արխիվում: Մանրամասն ուսումնասիրելով 1803 թ.-ից Մեծ Բրիտանիայում լույս տեսնող «ԳԼՈԲ» (The Globe London newspaper – Կ.Մ.) պարբերականի տարբեր համարներում զետեղված Հայկական հարցին վերաբերող նյութերը, նա այդպես էլ չի կարողացել գտնել իր գլխավոր հարցի՝ «հայոց ապստամբության ինքնաբուխ լինելու» մասին պատասխանը՝ շարունակելով մտքում պահել ցեղասպանության «տարերայնության» վարկածը: Ի դեպ, նա 1925-1942 թթ. որոշ ընդմիջումներով զբաղեցրել է Իրանի վարչապետի պաշտոնը: Ըստ Ֆորուլիի՝ «Հայերը խռովարարության ու ապստամբության նկատմամբ որևէ հակվածություն չունեն»⁹: Խոսքը վերաբերում է թուրքական պատմագիտության մեջ ներկայացված այն կեղծ թեզին, թե հայերը իբր պատրաստվում էին ապստամբության:

Այսպիսով, իրանական գիտական շրջանակներին Հայոց ցեղասպանության թեման հասանելի է եղել մինչև ՀՈՒՄԿ-ի գործունեության ծավալումը: Ահա թե ինչու ՀՈՒՄԿ-ի գործունեությունը նաև համահունչ է հանրամատչելի գրականության տարածումը:

⁷ Տե՛ս «Հուր» ամսագիր, Թեհրան, 1971, N 2:

⁸ Տե՛ս **Առաքելյան Գ.**, Մոհամմադալի Ֆորուլին և Հայոց ցեղասպանությունը, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2019, 58 էջ:

⁹ Տե՛ս նույն տեղում, էջ 13:

Ինչևէ, սույն հետազոտության նպատակն է հարցին անդրադառնալ ՀՈԻՄԿ-ի գործունեության դիտանկյունից՝ լուսաբանելով նրա նախաձեռնությամբ իրականացված միջոցառումների ընթացքում իրանցի մտավորականների արտահայտած տեսակետները: Միաժամանակ կրկնությունից խուսափելու նպատակով զերծ կմնանք պատմագիտական գրականության մեջ առկա տեսակետները մանրամասն քննարկելուց:

Հիշարժան է պարսիկ գիտաշխատող *Քալե Բայարթի*՝ Հայոց ցեղասպանության ճանաչման և ժխտման հարցերով զեկուցումը 2001 թ. ապրիլի 17-ին ՀՈԻՄԿ-ի և «Հայ հասարակական միության» («Հայ ակումբ») սրահում տեղի ունեցած դասախոսությանը¹⁰: Ահա թե ինչ է գրել այդ մասին Հայկական հարցին ու հայ ժողովրդի պատմությանը պարսիկ ընթերցողին ծանոթացնելու նպատակ հետապնդող «Արաքս» գրական, մշակութային, հասարակական շաբաթաթերթը. *«Ձեռնարկը հատկապես շահավետ էր նրանով, որ եղենի մասին խոսվում էր պարսկերենով՝ Խորհրդարանի պատգամավորների եւ մեծ թվով պարսիկ հյուրերի համար»*¹¹: Ակնհայտ է, որ պարսկերենով դասախոսության կազմակերպումը նպատակ է ունեցել իրանահայությանը մտահոգող հարցերը դարձնել իրանական սոցիալական մյուս շերտերի քննարկման առարկան և այդպիսով ձևավորել տասնյակ միլիոնավոր մարդկանց հանրային կարծիքը Հայոց ցեղասպանության թեմայի վերաբերյալ:

Հարկ է նշել, որ որոշ դեպքերում տարբեր մոտեցումներ են նկատվել իրանական հասարակության կողմից Հայոց ցեղասպանության հիմնահարցի հանդեպ՝ սկսած չեզոքությունից մինչև պարզապես որևէ միջոցառմանը մասնակցության հրաժարումից:

¹⁰ Տե՛ս «Ալիք» օրաթերթ, թիվ 74 (18296), 18.04.2001, էջ 1, 8:

¹¹ «Արաքս» շաբաթաթերթ, ԺԵ տարի, թիվ 14-15 (97-98), մարտ-ապրիլ, 2001, էջ 7: Տե՛ս նաև **Մկրտչյան Կ.**, Հայոց ցեղասպանության տարելիցների հիշատակումը Իրանի հայ համայնքում 2000-2003 թթ., Հայոց պատմության հարցեր, Հ. 21, Խմբ. խորհուրդ՝ **Ա. Մելքոնյան, Ա. Խառատյան** և ուրիշներ, Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2020, էջ 120-130:

2000 թ. դեկտեմբերի 2-7-ին «Tehran times» օրաթերթը հանդես է եկել քաղաքական վերլուծություններով՝ հիմնվելով այն իրողության վրա, որ Հայոց ցեղասպանության հարցը ԻԻՀ խորհրդարանում օրակարգ մտցնելու խնդիրը մեծ արձագանք է գտել իրանական, թուրքական և անգամ ԱՊՀ երկրների մամուլում: «Газета СНГ» թերթը «Իրանը միանում է ցանցին և Թուրքիան ցնցված է» վերնագրով հոդվածում նշել է, որ Թեհրանը մտադիր է միանալ այն երկրների շարքերին, որոնք ցանկանում են Հայոց ցեղասպանության գործոնից առավելագույն շահույթ ստանալ՝ ավելացնելով, որ ամենայն հավանականությամբ ԻԻՀ մեջլիսը մինչ ընթացիկ տարվա վերջը կհաստատի օրինագիծը: Թերթը նշել է, որ Թեհրանը հավանաբար մտադիր է վախեցնել Անկարային, որպեսզի Թուրքիան մի շարք երկրների առջև ծառացած խնդիրներում փոխզիջման գնա և, ըստ երևույթին, այդ հեռանկարները խուճապ են առաջացրել Անկարայում, որն ակնհայտ երևում է մի շարք թուրք դիվանագետների ելույթներից: Հատկանշական է, որ ընդգծվում էր, որ օրինագիծը նախապատրաստվել է Մեջլիսում (Իսլամական խորհրդարան – Կ.Մ.) Հյուսիսային իրանահայության պատգամավոր Լևոն Դավթյանի կողմից և մոտ օրերս օրինագիծը Մեջլիսի քննարկման կհանձնվի՝ ավելացնելով, որ, ըստ Դավթյանի, այն հաստատվելու հնարավորությունները բավականին մեծ են¹²:

Սակայն ուշագրավ է թերթի կատարած կանխատեսումը, ըստ որի «Իրանն ամեն դեպքում հաղթող կլինի»: Իրականում նման եզրակացության համար հիմք էր ծառայում այն, որ եթե այն մտներ օրակարգ և չընդունվեր, ապա դրա փոխարեն Իրանը կարող է Թուրքիայից պահանջել, որպեսզի նա երկկողմ և տարածաշրջանային խնդիրներում մի շարք փոխզիջումների գնա: Հետաքրքրական է, որ իրադարձությունների որոշակի դրամատիկ զարգացմանը նպաստում էր նաև այն, որ ԻԻՀ Արտաքին գործերի նախարարության խոսնակ Համիդրեզա Ասեֆին մամուլին հայտ-

¹² Տե՛ս նաև ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական արխիվ, ց. 2, գ. № 158, թթ. 25-26:

նել էր, որ Մեջլիսն անկախ օրենսդիր մարմին է և կարող է ընդունել ցանկացած որոշում և Արտաքին գործերի նախարարությունը չի կարող որևէ քայլ ձեռնարկել¹³:

Այսպիսով, իրանական քաղաքական կյանքում Հայոց ցեղասպանության հարցի քննարկումը մեծ արձագանքներ է գտել և՛ տեղական, և՛ միջազգային մամուլում: Սակայն իրանական կողմի՝ հարցին հետամուտ չլինելու որդեգրած դիրքորոշման և Թուրքիայից հնարավոր տնտեսական բնույթի ինչ-ինչ խնդիրների պատճառով այն դուրս է մղվել խորհրդարանի օրակարգից: Այլ կերպ ասած՝ Հայոց ցեղասպանության ճանաչման հարցն Իրանում, անկախ այդ երկրում տիրող իշխանական համակարգից, մշտապես եղել է Թուրքիայի հետ երկկողմ հարաբերությունների կարգավորման, երբեմն նաև՝ ճնշման միջոց: Թեհրանում և Իրանի մյուս քաղաքներում անցկացվող Հայոց ցեղասպանության տարելիցների ոգեկոչմանը նվիրված միջոցառումների ընգրկվածության աստիճանից կարելի է պատկերացում կազմել տվյալ ժամանակահատվածում Իրան-Թուրքիա հարաբերությունների մակարդակի մասին: Ի դեպ, 2002 թ. Իրանի Բարձրագույն հոգևոր խորհրդի ֆինանսական աջակցությամբ իրանցի և հայ կինեմատոգրաֆիստները նկարահանում են Հայոց ցեղասպանությանը նվիրված «Արարատ» վավերագրական ֆիլմը¹⁴: Հարկ է նկատել, որ գրաքննության պայմաններում այդպիսի բովանդակությամբ ֆիլմի նկարահանումը որոշակիորեն խոսում է Հայոց ցեղասպանության հարցի վերաբերյալ ԻԻՀ-ի դիրքորոշման մասին: Տեղին է նշել, որ դեռևս 1979 թ. Իսլամական հեղափոխության առաջնորդ Այաթոլլահ Խոմեյնիի խոսքով՝ Իրանն այն պետությունը չէ, իսկ պարսիկներն էլ այն ժողովուրդը չեն, որ հայերի նոր ցեղասպանություն կազմակերպեն¹⁵: Այսպիսով, վավերագրական բնույթի

¹³ Տե՛ս ՀՀ ԱԳՆ Պատմադիվանագիտական արխիվ, ց. 2, գ. № 158, թ. 26:

¹⁴ Տե՛ս «Հայաստանի Հանրապետություն» պաշտոնաթերթ, 29.10.2002:

¹⁵ Տե՛ս **Հովհաննիսյան Ն.**, Այաթոլլահ Խոմեյնիի մոտեցումը Խորհրդային Միության հետ հարաբերությունները կարգավորելու հարցում և դիրքորոշումը Հայաստանի ու հայության հանդեպ, Հայաստան-Իրան. 20 տարի համա-

ֆիլմի արտադրությունը համեմատաբար դյուրին է եղել իրանական կողմի հետ իրագործելը, քան արվեստի մյուս տեսակի ժանրերի դեպքում¹⁶: Կարելի է նշել, որ հենց այդ կերպ դրսևորվել են իրանական պաշտոնական դիրքորոշման որոշ նրբություններ, որոնք պաշտոնապես դժվար կլինեին արտահայտել, մինչդեռ այդ ֆիլմին աջակցությամբ Հայոց ցեղասպանության հարցում պաշտոնական Թեհրանի որդեգրած խուսափողական քաղաքականության պայմաններում որոշակի բարենպաստ տպավորություն է ստեղծվել հայության համար: Հայոց ցեղասպանության հարցին հանգամանորեն անդրադարձել է «Iran Economics» ամսագիրն իր 2004 թ. հունիսի համարում «Հայերը՝ արհեստավարժ և սահմանափակված» վերնագրով ծավալուն հոդվածում: Նախքան բուն նյութին անցնելը ընդգծվել է, որ «1915 թ. ապրիլին կատարված Հայոց ցեղասպանությունը հստակորեն չդատապարտելը պատճառ է դարձել, որ առ այսօր աշխարհում շարունակվեն տարբեր ազգերի դեմ իրականացվող ցեղասպանությունները»¹⁷: Այսպիսով, թեմայի վերաբերյալ այդ գնահատականը կարելի է համարել 2000-ականների սկզբների իրանական մամուլի առավել անաչառ և կիրառված բառերերի ընտրության հարցում դիպուկ հրապարակումներից մեկը: Հետաքրքրական է, որ իրանահայ անվանի բարերար, հասարակական գործիչ Լևոն Ահարոնյանն իր հուշերում անդրադառնալով Հայոց եղեռնի ոգեկոչման հարցին, առանձնացնում է 91-րդ տարեկիցի (2006 թ. – Կ.Մ.) առիթով կազմակերպված ձեռնարկը, որին մասնակցել է Իսլամական խորհրդարանի պատգամավոր պարոն Աֆրուզը՝ որպես օրվա բանախոս¹⁸: Առհասարակ 2000-ական թթ. իրանական հասարակական դաշ-

գործակցության ճանապարհով, միջազգային գիտաժողովի նյութեր, Ե., 2012, էջ 75:

¹⁶ Տե՛ս **Մկրտչյան Կ.**, Հայ-իրանական հարաբերությունները 1991-2005 թթ., Եր., ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտ, 2023, էջ 206:

¹⁷ **Բեգիջանյան Է.**, Իրանական տեսակետները Հայոց ցեղասպանության մասին, Եր., «Էդիթ Պրինտ», 2011, էջ 86-88:

¹⁸ Տե՛ս **Ահարոնյան Լ.**, նշվ. աշխ., էջ 1926:

տը կարծես հետաքրքրված էր Հայոց ցեղասպանության վերաբերյալ տեղեկատվության հրապարակումներով կամ դրանց մասնակցելով: Դա էլ իր հերթին պայմանավորված է այն իրողությամբ, որ ինչպես ՀՈՒՄԿ-ը, այնպես էլ համայնքային այլ կառույցները զգալիորեն ներգրավված էին Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցով:

Ուշագրավ է Իրանահայ գրողների միության կողմից իրականացված «Վերապրողների վկայությունները» պարսկերենով հրատարակումը: 2005 թ. ՀՈՒՄԿ-ը ձեռնարկեց պարսկերենով 30 թույեանոց վավերագրական ֆիլմի պատրաստում: Ստեղծվեցին մոտ 20 համացանցային էջեր և՛ անգլերեն, և՛ պարսկերեն ընթերցողի համար¹⁹: Ակնհայտ է, որ այդ նախաձեռնություններում նպաստավոր է եղել ՀՈՒՄԿ-ի այդ ուղղությամբ կատարած աշխատանքների տարիների փորձառությունը:

2016 թ. հոկտեմբերի 17-ին «ՀՈՒՄԿ» հաստատության նախաձեռնությամբ տեղի ունեցավ պատմաբան Արտակ Մովսիսյանի հեղինակությամբ «Սրբազան լեռնաշխարհ» գրքի պարսկերեն թարգմանության շնորհանդեսը: Գրքի թարգմանիչն է Անահիտ Եղիայանը: Գրքի խմբագիր Մահնազ Մողադդասին ընդգծել է, որ հայերեն տարբերակը կազմված է 80 էջից, սակայն պարսկերեն թարգմանությունը շատ ավելի էջեր է պարունակում ընթերցողին նյութը ավելի մատչելի դարձնող տողատակերի և բացատրությունների առումով: Գրքի հրատարակիչ, գիտահետազոտող, մարդաբան, դոկտոր Մաստումե Էբրահիմին անդրադարձել է Իրանի ու Հայաստանի ժողովուրդների պատմական ընդհանրություններին, կարևորել նրանց խաղաղ գոյակցությունը²⁰:

Հիշարժան է, որ Հայոց ցեղասպանության թեմայից անդին ՀՈՒՄԿ-ն իր գործունեության կիզակետում է պահում նաև **Իրանի**

¹⁹ Տե՛ս **Իսկանդարյան Գ.**, Հայաստան-Իրան հարաբերությունները Հայաստանի անկախության ձեռքբերումից հետո (1991-2014 թթ.), Եր., «Ասմանգուլյան», 2016, էջ 227:

²⁰ Տե՛ս <https://tehranprelacy.com/9-content-hy/news-hy/699-2016102201> դիտումը՝ 29.03.2025:

հայ համայնքի պատմության գիտական ուսումնասիրությունը: 2025 թ. Թեհրանի Հայ դատի հանձնախմբի նախագահ դոկտոր Իսակ Հունանեսյանի հեղինակությամբ հրատարակվել է «Իրանի հայերը և անվանի իրանահայերը» պարսկերենով գիրքը²¹: Հարկ է նկատել, որ գրքի շնորհանդեսին արվեստի և մշակույթի վերլուծաբան Արիասր Դադբեհը, Հանրապետության նախագահի կրոնական փոքրամասնությունների և հասարակական հարցերով հատուկ ներկայացուցիչներ Մահմուդ Ալավին ու դոկտոր Ալի Ռաբին կարևորել են Իրանի բնակչության անբաժան մասնիկը համարվող իրանահայ համայնքի ազնիվ և անվերապահ աշխատանքները:

2018 թ. ապրիլի 22-ին Հայոց ցեղասպանության 103-րդ տարելիցի ծրագրերի շրջանակներում «ՀՈՒՄԿ»-ի նախաձեռնությամբ ոչ-հայ լսարանի համար կազմակերպված միջոցառման ընթացքում Իսլամական խորհրդարանի պատգամավոր և խորհրդարանի դատական հանձնաժողովի անդամ դոկտոր Մոհամմադ Ջավադ Ֆաթհին և միջազգային հարաբերությունների իրանական միության գլխավոր տնօրեն դոկտոր Ջիա Սաբուրին հարգելով ցեղասպանության զոհ դարձած 1,5 մլն հայերի և 750 հազար ասորիների հիշատակը՝ ընդգծել են, որ յուրաքանչյուր Աստվածային կրոն դատապարտում է մարդու սպանությունը²²: 2022 թ. մայիսի 10-ին ՀՈՒՄԿ-ի նախաձեռնությամբ ոչ-հայ լսարանի համար կազմակերպվել է բանախոսական-գեղարվեստական միջոցառում նվիրված Հայոց ցեղասպանության 107-րդ տարելիցին, «Հայ հասարակական միության» («Հայ ակումբի») դահլիճում: Մոհամմադ Բադեր Ամիրանին, որպես առաջին բանախոս, կարևորել է Թուրքիայի դեմ տնտեսական բոյկոտի արշավը: «Նեշանե» հրատարակչության տնօրեն, անգլերենից-պարսկերեն բազմաթիվ թարգմանությունների, ինչպես նաև «Հայաստանի Հանրապե-

²¹ Տե՛ս <https://www.ancnews.info/?p=23368> ղիտումը՝ 21.03.2025:

²² Տե՛ս <https://tehranprelacy.com/9-content-hy/news-hy/1779-2018042401> ղիտումը՝ 29.03.2025:

տություն» երկհատոր գրքի հեղինակ Աթուսա Սամիրին, ներկայացրել է իր վերջին թարգմանություններից՝ Թաներ Աքչամի գրչին պատկանող «Յեղասպանության հրահանգը» գիրքը: Իրանի «Աշխարհաքաղաքականության ինստիտուտի» գիտաշխատող Աֆշին Մոթաղին դատապարտել է Հայոց ցեղասպանությունը, և հիմնարկի անունից պատրաստականություն հայտնել ՀՌԻՄԿ-ի հետ դրան նվիրված համատեղ միջոցառումներ իրականացնել²³: Փաստորեն տվյալ դեպքում երկու կառույցների միջև համագործակցության հիմք է դրվել, ինչը գնահատելի է:

ՀՌԻՄԿ-ի գործունեությունը տասնամյակների կտրվածքով դիտարկելու դեպքում կարող ենք արձանագրել, որ այն առանձնապես չի փոխվել՝ առանցքում ունենալով Հայոց ցեղասպանության թեմայի հանրահռչակումը, արծարծումը իրանական հասարակական և հնարավորության դեպքում պաշտոնական հարթակներում: 2023 թ. մարտի 1-ին Թեհրանի Հայ հասարակական միության սրահում տեղի է ունեցել ՀՌԻՄԿ-ի գործունեության 40-ամյակին նվիրված հանդիսությունը²⁴:

Հարկ է նկատել, որ ՀՌԻՄԿ-ի աշխատանքային օրակարգից դուրս չեն մնացել և ավելին՝ տարբեր ժամանակներում ներառված են եղել նաև տարածաշրջանային սուր խնդիրները, որոնց համատեքստում փորձ է արվել ներկայացնել և քննարկման առարկա դարձնել Հայոց ցեղասպանության հարցը: Այլ կերպ ասած՝ հայությանը մտահոգող խնդիրները դիտարկվել են անցյալի և ներկայի համատեքստում, ստեղծվել պատմական կապեր: Այդ ամենի մեջ կարևորվել է հայ ժողովրդի նկատմամբ իրագործված հանցագործության դատապարտման դրույթը, ինչը կարող էր կանխարգելել նման հանցագործությունների կրկնությունը Մերձավոր Արևելքում: Հենց այդպիսի նախաձեռնություններից է 2016 թ. ապրիլի 27-ին Թեհրանում ոչ-հայ լսարանի համար կազմակերպված «Յեղասպանությունը և ծայրահեղականությունը

²³ Տե՛ս «Ալիք», 12.05.2022, թիւ 89 (24097), էջ 4:

²⁴ Տե՛ս նույն տեղում, 01.03.2023, թիւ 46 (24327), էջ 1, 8:

Հայաստանից-Սիրիա» խորագրով միջոցառումը: Հարկ է նշել, որ այդ միջոցառման կազմակերպիչ հանձնախմբի անունից Իսիկ Հունանեայանը պատմական ակնարկ է կատարել Թուրքիայի կողմից իրականացված Հայոց ցեղասպանության, մշակութային կոթողների ոչնչացման, շարունակվող խեղաթյուրման քաղաքականության, քրդերի, թուրք այլախոհների, ալավիների, ասորիների դեմ իրականացված սպանությունների և ներկայումս Սիրիայում ու Մերձավոր Արևելքի տարածաշրջանում Թուրքիայի խափանարար և զավթողական քայլերի մասին:

Ուշագրավ տեսակետ է արտահայտել այդ միջոցառման հրավիրյալ մասնակից Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Արտաշես Թումանյանը: Նրա խոսքով՝ «... *Մեզ համար կարևոր է Իրանի պետության վերաբերմունքը այս հարցով, թեև Իրանը պետականորեն չի ճանաչել Ցեղասպանությունը, բայց դա չի նշանակում, որ մենք բարեկամական հարաբերությունների մեջ չենք*»²⁵: Փաստորեն իրանցի հյուրերի մասնակցությամբ լսարանին պաշտոնապես փոխանցվել է հայկական կողմի ունեցած այն սպասումը, որ հարևան ու բարեկամ Իրանը հարմար պահի կճանաչի Հայոց ցեղասպանությունը: Թերևս այդ խոսքին ի պատասխան պատահական չէ նույն միջոցառման ընթացքում Հայաստանի Հանրապետությունում Իրանի Իսլամական Հանրապետության արտակարգ և լիազոր դեսպան Ֆարիադ Քոլեյնիի արձագանքը. «*Իրանը, ելնելով իր պատմական քաղաքականությունից և բարոյական հիմունքներից, երբեք անտարբեր չի եղել իրավազրկված ժողովուրդների թափված արյան նկատմամբ, և այսօր Հայաստանը հենց այնպես չի համարվում Իրանի լավագույն բարեկամը*»²⁶:

Արցախում տեղի ունեցած 44-օրյա պատերազմից հետո

²⁵ Տե՛ս <https://tehranprelacy.com/9-content-hy/news-hy/411-2016050101> Հայոց Ցեղասպանութեան 101-րդ տարելիցի առիթով «ՀՈՒՄԿ»-ի նախաձեռնած միջոցառումը՝ ոչ-հայ լսարանի համար - Առաջնորդարան Թեհրանի Հայոց Թեմի դիտումը՝ 11.04.2025: Տես նաև՝ «Ալիք», թիվ 83 (22459) 28.04.2016, էջ 1:

²⁶ Նույն տեղում:

ստեղծված դժվարին պայմաններում Հայոց ցեղասպանության թեմայի քննարկումը, դժբախտաբար գոյատևման նոր խնդիրներ է հարուցել հայության համար: Այս պարագայում ևս իրանցի գործիչներն իրենց կարծիքն արտահայտելու համար օգտվել են ՀՈՒՄԿ-ի հարթակներից: Այդ մասին է վկայում այն, որ 2023 թ. ապրիլի 26-ին Հայոց ցեղասպանության 108-րդ տարելիցին նվիրված միջոցառման ընթացքում «Հայ հասարակական միության» («Հայ ակումբ») սրահում պարսիկ պետական հյուրերի ներկայությամբ միջազգային հարաբերությունների փորձագետ, դոկտոր Էհսան Մովահեդիանն ընդգծել է. *«Կատարելապես սխալ է այն տեսակետը, որ ժամանակավրեպ է Հայոց ցեղասպանությունը, քանի որ այսօր Արցախի ավելի քան չորսամյա շրջափակման հետևանքով հարյուր հազարավոր հայեր նոր ցեղասպանության են ենթակա»*²⁷: Այսպիսով, Ադրբեջանի հակահայ գործողությունների և փաստերի հիման վրա իրանական մտավորականության ներկայացուցիչը կատարել է գիտական և քաղաքական տեսակետներից անաչառ եզրակացություններ:

Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցին Իրանի հայ համայնքի և ԻԻՀ-ում ՀՀ դեսպանության միջև տեղի ունեցած տհաճ միջադեպին լայնորեն անդրադարձել են հայկական և անգամ իրանական արդի տեղեկատվական-սոցիալական տարբեր հարթակներում: Այդ միջադեպը պատճառաբանվում էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման հարցում ՀՀ պաշտոնական և ՀՅԴ կուսակցության քաղաքական դիրքորոշումների տարբերությամբ:

Այդուհանդերձ, իրավիճակի լարվածության մեղմացման հարցում կարևոր էր ՀՅԴ Բյուրոյի անդամ Սևան Դանիելյանի, «Ալիք» հաստատության ներկայացուցիչ Գարո Հովհաննիսյանի, Թեհրանի հայոց թեմի Պատգամավորական ժողովի ատենապետ Սուրիկ Աբնուլայանի և Թեհրանի հայոց թեմի թեմական խորհրդի ատե-

²⁷ <https://tehranprelacy.com/9-content-hy/news-hy/4073-2023042701> ղիտումը՝ 14.04.2025: Տե՛ս նաև՝ «Ալիք», թիվ 77 (24358), 27.04.2023, էջ 2:

նապետ Վարուժ Հովհաննիսյանի այցելությունը Իրանի Իսլամական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանություն և հանդիպումը ՀՀ արտակարգ և լիազոր դեսպան Գրիգոր Հակոբյանի հետ²⁸: Հրապարակված տեղեկատվությունից պարզ է դառնում, որ հանդիպման ընթացքում կողմերը քննարկել են ՀՀ դեսպանության և համայնքի ազգային իշխանության միջև փոխադարձ հարաբերությունների և մշակութային ոլորտում իրանահայության համագործակցության հարցը:

Հատկանշական է, որ հանդիպմանը ցավով անդրադարձ է կատարվել նաև ապրիլի 24-ին, Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցի առիթով Սուրբ Սարգիս եկեղեցու Սրբոց Նահատակաց հուշարձանի մոտ ծաղկեմատույցի արարողության ժամանակ տեղի ունեցած անթույլատրելի միջադեպին: Այսպիսով, կարելի է ասել, որ այդ միջադեպը փակված է, սակայն ակնհայտ է, որ այն իր հետքը թողեց 110-րդ տարելիցի խորապատկերում:

Ամփոփելով նշենք, որ ՀՈՒՄԿ-ը իրանահայ համայնքի տասնյակ այլ կառույցներից տարբերվում է իր ստանձնած գործառույթներով և իր առջև դրված խնդիրներով: Այդ մասին են վկայում այդ կառույցի աջակցությամբ «Պայման» պարսկերենով պարբերականում հրատարակված հոդվածները, որոնցում հանգամանորեն ներկայացված են Հայոց պատմության, գրականության, մշակույթի, ինքնության և բազմաթիվ այլ հարցերի վերաբերյալ ինչպես հայաստանյան, այնպես էլ տեղական հետազոտողների ուսումնասիրություններ: Ակնհայտ է, որ ՀՈՒՄԿ-ի գործունեության առանցքում է Հայոց ցեղասպանության հարցը իրանական հասարակությանը ներկայացնելը, որի ուղղությամբ մշակվել և իրագործվել են բազմաթիվ ծրագրեր: Այդ ծրագրերի միջոցով է, որ հայությանը հոգուղ հարցերի շուրջ ստեղծվել է որոշակի հանրային կարծիք:

²⁸ Տե՛ս «Ալիք» 31.05.2025, թիվ 101 (24927), էջ 8:

Карен Мкртчян

Армения, к.и.н., Институт истории НАН

K86mkrtchyan@gmail.com

ORCID: 0009-0006-2376-0215

О ДЕЯТЕЛЬНОСТИ ТЕГЕРАНСКОГО «ЦЕНТРА ИССЛЕДОВАНИЯ АРМЯНСКИХ ПРОБЛЕМ»

Ключевые слова: Тегеран, «Центр исследования армянских проблем», Геноцид армян, книги на персидском языке, книгоиздание, годовщина, иранские деятели, инициативы.

«Центр исследования армянских проблем» отличается от десятков других структур армянской общины Ирана своими функциями и задачами. Об этом свидетельствуют статьи, опубликованные при содействии этой структуры в журнале «Пайман» на персидском языке, в которых подробно представлены исследования как армянских, так и местных исследователей по истории, литературе, культуре, идентичности и многим другим вопросам.

В основе деятельности «Центра исследования армянских проблем» лежит повестка представления иранскому обществу вопроса Геноцида армян, и в данном направлении были разработаны и реализованы многочисленные программы. С этой целью в основном на персидском языке организуются различные мероприятия для иранских слушателей. За прошедшие десятилетия «Центром исследования армянских проблем» была создана ценная историографическая литература на персидском языке. В начале 2000-х годов в иранской политической речи широко обсуждалась тема Геноцида армян, что также было связано с активной деятельностью «Центра исследования армянских проблем».

Karen Mkrtchyan

Armenia, Ph.D. in History,
Institute of History of the NAS
K86mkrtchyan@gmail.com
ORCID: 0009-0006-2376-0215

ABOUT THE ACTIVITIES OF THE TEHRAN "CENTER FOR THE STUDY OF ARMENIAN ISSUES"

Keywords: Tehran, Center for the study of Armenian issues, Armenian genocide, books in Persian, book publishing, anniversary, Iranian figures, initiatives.

The “Center for the study of Armenian issues” differs from other structures of the Armenian community of Iran in its functions and tasks facing. This is evidenced by the articles published in the Persian-language edition of “Payman” with the support of this structure, which present in detail the research of both Armenian and local researchers on history, literature, culture, identity and many other issues. It is obvious that the activities of the institution of “Center for the study of Armenian issues” are based on presenting the issue of the Armenian Genocide to the Iranian society, in the direction of which numerous programs have been developed and implemented. Thanks to these programs, Armenians have formed a certain public opinion on topical issues.

The activities of the “Center for the study of Armenian issues” are closely linked to the discussion of the Armenian Genocide issue in Iran's socio-political life and the formation of public opinion, as well as with the aim of making it publicly available to official circles. It is for this purpose that various events are organized mainly in Persian for Iranian listeners.

The boundaries of activity extend to the scientific, political and

cultural spheres. The center's publishing activities have been significant on various anniversaries of the Armenian Genocide. Thus, valuable historiographical literature in Persian has been created over the decades.

At the beginning of the 2000s in the Iranian political speech, the topic of the Armenian Genocide was widely discussed, which was also related to the propaganda deployed by "Center for the study of Armenian issues".

Նաիրա Պողոսյան
Հայաստան, ք. գ. թ., դոցենտ, ԵՊՀ
nairapoghosyan@ysu.am
ORCID: 0000-0003-3682-3285

ՍՏԱՍԲՈՒԼԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԹՈՒՐԹԻԱՅՈՒՄ

Հիմնաբառեր՝ Հայոց Ցեղասպանություն, Թուրքիա, հայ համայնք, պատրիարքարան, Ժխտում, Հրանտ Դինք:

Առաջին համաշխարհային պատերազմում Օսմանյան կայսրության պարտությունը և Անտանտի ուժերի մուտքը Կոստանդնուպոլիս պոլսահայ մտավորականության կողմից դիտարկվեց որպես պատերազմի տարիներին հայերի նկատմամբ իրագործված ոճրագործությունների ու դրանց հետևանքների մասին բարձրաձայնելու հնարավորություն: Զարմանալի չէ, որ այս շրջանում պոլսահայ թերթերում քննարկման նյութ են դարձել թե՛ հայ գաղթականության խնդիրները, թե՛ հայերի լքյալ գույքին վերաբերող հարցերը, թե՛ ջարդերի կազմակերպման և իրագործման համար պատասխանատվության հիմնահարցը, ընդ որում՝ երբեմն անսպասելի դիտանկյուններից: Այսպես, օրինակ, «Առավոտ» թերթի համարներից մեկում անդրադարձ է կատարվում անգամ հայերի ցեղասպանության իրագործմանը թուրք կանանց մասնակցության հարցին¹:

Օսմանյան կայսրության տարածքում հայերի դեմ կատարված եղեռնագործությունները վկայակոչելու ու անմեղ զոհերին հարգանքի տուրք մատուցելու նպատակով 1919-1921 թթ. ընթացքում պոլսահայ համայնքային տարբեր կառույցներ նախաձեռնեցին մի

¹ «Առավոտ», 19 մայիս 1919, [https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Aravot%-20KPolis/1919/1919\(4\)_ocr.pdf](https://tert.nla.am/archive/NLA%20TERT/Aravot%-20KPolis/1919/1919(4)_ocr.pdf) (մուտք՝ 21.03.2025)

շարք հանրային միջոցառումներ²: Դրանց թվում պետք է առանձնացնել 1919 թ. ապրիլի 25-ին (հին տոմարով ապրիլի 12-ին) կազմակերպված Ցեղասպանության զոհերի ոգեկոչման արարողությունը, որի շրջանակներում նախ մատուցվեց հոգեհանգստյան պատարագ, ապա տեղի ունեցավ սգահանդես և հայտնի մտավորական, հասարակական գործիչ Թեոդիկի (Թեոդորոս Լափչինճեան, (1873-1928)) հեղինակած «Յուշարձան Ապրիլ Տասնըմեկի» գրքի շնորհանդեսը³: Չնայած մի շարք համայնքային գործիչներ քննադատեցին արարողությունը ոչ բավարար մասնակցության համար⁴, այն հարկ է արժևորել որպես ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա անհրաժեշտությունն իր ցույց դնող առաջին մասշտաբային միջոցառում⁵: Իր հուշերում ա-

² Այս մասին մանրամասն տե՛ս Ոգեկոչման ակունքներում. ապրիլ 24-ը՝ որպես սգո և հիշատակի օր, <https://genocide-museum.am/arm/24.04.2014.php> (մուտքի ամսաթիվ՝ 14.02.2025)

³ 761 հայ մտավորականների մասին տեղեկություններ և լուսանկարներ ներկայացնող այս գիրքը կանադահայ համայնքի ջանքերով Հայոց ցեղասպանության 95-ամյակին ընդառաջ երկլեզու (հայերեն և թուրքերեն) տարբերակով վերահրատարակվել է Ստամբուլում «Belge» հրատարակչության կողմից: St u 11 Nisan Aniti, İstanbul, Belge yayınlari, 2010.

⁴ Մինչ այդ իրականացված միջոցառումների և ստացված արձագանքների մասին մանրամասն տե՛ս **Մարության Հ.**, Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրվա ձևավորումը, զարգացումները, մեթոդյա վիճակը, <https://genocide-museum.am/arm/ARMENIAN-GENOCIDE-VICTIMS-26.01.2019.php> (մուտք՝ 14.02.2025)

⁵ Դեռևս 1918 թ. դեկտեմբերին «Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված «Ազգային նոր տոնը» հոդվածում նշանավոր հայ գրող Երվանդ Օտյանը առաջարկել էր կազմակերպել արարողություն «ի յիշատակ մեր նոր ու գերագոյն մարտիրոսութեան»: Նշելով, որ 1500 տարի հայերը Վարդանանց օրն են նշել որպես «ազգային-կրօնական մեծ յիշատակ», նա գրում է. «Վարդանանք երկու բանին համար ինկան Աւարայրի դաշտին մեջ, քրիստոնէութիւնը եւ ազատութիւնը պահպանելու համար: Արդարն մինչև հիմա ազգային մեծագոյն տօնը պէտք էր համարել զայն: Բայց հիմա՞, երբ մէկ ու կէս միլիոն Հայեր յանուն այդ քրիստոնէութեան և յանուն այդ ազգային ազատութեան մեռան ո՛չ թէ Աւարայրի մը դաշտին վրայ կամ Տղմուտի մը եզերքը, այլ բովանդակ Հայաստանի, Սուրիոյ ու Միջագետքի դաշտերը,

րարողության կազմակերպիչներից հայագետ, գրող-հրապարակախոս Հակոբ Միրունին (1890-1973) այսպես է նկարագրում այն. «Մեր սարքած սգատօնը այլևս ավանդական դարձավ: Այն օրէն որդեգրուեցաւ Ապրիլ 24-ը իբր համազգային սուգի խորհրդանշան»⁶: Պոլսահայերի կողմից Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակը ոգեկոչող միջոցառումների շարքում կարելի է նշել նաև 1919 թ. հայկական Սուրբ Հակոբ գերեզմանատանը մարմարե հուշարձանի տեղադրումը⁷: Վերոնշյալը համադրելով կարող ենք փաստել, որ դեռևս անորոշ և բարդ կիսապատերազմական պայմաններում պոլսահայ մտավորականությունը հանդես է եկել հայերի նկատմամբ արված ոճրագործությունների վկայակոչման, հայերի բարոյական ու նյութական կորուստների ներկայացման տարատեսակ նախաձեռնություններով:

Քեմալական շարժման հաղթանակից և 1923 թ. Թուրքիայի Հանրապետության հռչակումից հետո, սակայն, պոլսահայության կողմից ցեղասպանական իրողությունների բարձրաձայնման բոլոր գործընթացները լիովին կասեցվեցին: Ավելին, ազգ-պետության քեմալական հարացույցում ոչ մուսուլմաններին հատկացված էր «հավաքական օտարի, թշնամու» դերը, որի դեմ միավորումը պետք է դառնար մեծապես կրոնական պատկանելության վրա հիմնված օսմանյան/կայսերական ինքնությունը ազգային/թուրքական ինքնությամբ փոխարինելու հիմնապոլներից մե-

անապատները, լեռներն ու ձորերը իրենց դիակներով ծածկեցին, երբ բոլոր գետերը՝ Եփրատէն ու Տիգրիսէն սկսեալ մինչեւ Ալիս ու Քոպար իրենց դիակներով լեցուցին, մի թէ այլեւս չնսեմանար Վարդանանցը»: «Ժողովուրդ», 23 նոյեմբերի/6 դեկտեմբերի 1918:

http://tert.nla.am/archive/NLA%20TERT/Joxovurd%20Kpolis18/1918/34_ocr.pdf (մուտք՝ 14.04.2025)

⁶ Ոգեկոչման ակունքներում. ապրիլ 24-ը՝ որպէս սգո և հիշատակի օր, <https://genocide-museum.am/arm/24.04.2014.php> (մուտք՝ 14.02.2024)

⁷ Հանրապետության հռչակումից հետո գերեզմանատան ոչնչացումից հետո հուշարձանի ճակատագիրն անհայտ է: Այս մասին տե՛ս **Զարաթուր Ռ.**, Մտքի հաղթանակը Թեոդիկից մինչև Հրանտ Դինք, <https://artmamul.ararat-center.org/?p=18> (մուտք՝ 14.02.2024)

կը⁸: Արդյունքում՝ չնայած 1923 թ. Լոզանի պայմանագրով հայերը հույների և հրեաների հետ մեկտեղ կրոնական փոքրամասնության կարգավիճակ և դրանից բխող որոշակի իրավունքներ ստացան⁹, սակայն հանրապետության գոյության ամբողջ ընթացքում ենթարկվեցին և շարունակում են տարբեր ոլորտներում ենթարկվել խտրական վերաբերմունքի՝ դառնալով պետական խիստ ճնշումների, սահմանափակումների թիրախ¹⁰: Արդյունքում, ինչպես իրավացիորեն նշում է պոլսահայ վերլուծաբան Տիրան Լոքմազյոզյանը. «Զավեշտական է, որ օսմանյան անհավասարության պայմաններում երկրի ամենաբարձր պաշտոններին հասած հայերն այսօրվա «հավասարության» պայմաններում չեն կարողանում դառնալ թեկուզ ամենահասարակ պետական պաշտոնյա»¹¹: Բնական է, որ նմանատիպ պայմաններում մշտական վախի մթնոլորտում ապրող և տարեցտարի նվազող համայնքի կողմից հայերի ցեղասպանության ոգեկոչման մասին խոսք չէր էլ կարող գնալ: Ավելին, թուրքական պաշտոնական քարոզչության կողմից ցեղասպանության ժխտման համատեքստում¹² հայ հա-

⁸ «Օտարացման» քաղաքականության մասին մանրամասն տե՛ս **Crang M.**, *Cultural Geography*, London, 1998, Թուրքիայի Հանրապետության ինքնության կերտման մասին մանրամասն տե՛ս օրինակ **Zakari A.**, *A Modernist Approach Towards Turkish Nationalism: The Case of Language Policies in Early Republican Turkey*, İstanbul, 2016

⁹ Լոզանի պայմանագրի փոքրամասնությունների վերաբերող դրույթները մանրամասն տե՛ս *Treaty of Lausanne*, 1923, <https://jsumundi.com/en/document-treaty/en-treaty-of-peace-treaty-of-lausanne-1923-treaty-of-peace-treaty-of-lausanne-tuesday-24th-july-1923> (մուտք՝ 17.01.2025)

¹⁰ Հանրապետական Թուրքիայում հայերի դրության մասին մանրամասն տե՛ս **Մելքոնյան Ռ.**, Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության (1920-ականներից մինչև մեր օրերը), Երևան, 2010:

¹¹ **Լոքմազյոզյան Տ.**, Ստամբուլահայ համայնք. անցյալը, ներկան, խնդիրները (պատմական ակնարկ) https://www.noravank.am/arm/articles/detail.php-ELEMENT_ID=2348, (մուտք՝ 17.01.2025)

¹² Տարբեր տարիներին ցեղասպանության ժխտմանը ուղղած թուրքական պաշտոնական քաղաքականության դրսևորումների մասին մանրամասն

մայնքը հաճախ պարտադրված կերպով հանդես էր գալիս պետության աջակցի ու պաշտոնական քաղաքականության ջատագովի դերում: Ուշագրավ օրինակ է պոլսահայ ականավոր գործիչներ Թորոս Ազատյանի (1898-1955) և Մարտիրոս Գոչունյանի (1900-1975) նախաձեռնությամբ Թուրքիայի Հանրապետության հիմնադրման 15-ամյակի առիթով «Արմաղան»¹³ ժողովածուի հրատարակումը: Քեմալական գաղափարախոսության հրամայականներին համահունչ ոճով հեղինակները հակադրում են հին օսմանյան և նոր հանրապետական կարգերը՝ գրելով, որ «Հանրապետության լուսաշող արևին տակ իսպառ անհետացան սուլթանական ապականած տիրապետութեան ժառանգ մնացած մոլեռանդութեան, ատելախառն ցանկութեանց վերջին մնացորդներն ալ. և արդիական ըմբռնումներով սնած ու տոգորուած նորահաս սերունդը շնչեց Աթաթիւրքի կերտած քաղաքակրթութեան մաքուր ու կենարար մթնոլորտը, հոյսով ու հավատքով լի»¹⁴: Թուրքաբնակ հայերին, հետևաբար նաև իրենք իրենց «թուրք հայրենիքի հարազատ զաւակ» անվանող Թ. Ազատյանն ու Մ. Գոչունայնը պնդում են, որ «հայերը...գլիտցան օգտվիլ Հանրապետութեան ընձեռած բարիքներէն», և աստիճանաբար կարողանում են հասնել աննախադէպ բարձունքների. «[Ժողովուրդն ունի]բարօրութեան, զարգացման ու մանավանդ իրեն ընծայուած վստահութեան և հո-

տե՛ս **Adalian R. P.**, Republic of Turkey and the Armenian Genocide <https://www.armenian-genocide.org/turkey.html> (մուտք՝ 19.01.2025)

¹³ Ժողովածուի անվանումը պատահական չէր ընտրված: «Արմաղան» բառը թե՛ հայերենում, թե՛ թուրքերենում ունի «ընծա, նվեր» իմաստը: Հայերենում «արմաղան» բառի կիրառության մասին տե՛ս **Մայիսսեանց Ս.**, Հայերեն բացատրական բառարան. Երևան, 1944, էջ 297: Հետաքրքիր է, որ ժողովածուի տպագրությունից հետո վերնագրի շուրջ համայնքային շրջանակներում մեծ վեճ է սկսել, ինչը նաև արտացոլվել է ժամանակի մամուլում: Մեզ հասանելի են Թ. Ազատյանի անձնական արխիվում այս թեմայով հրապարակված նրա հոդվածների սևագրերը: ԳԱԹ, Թ. Ազատյանի ֆոնդ, լր.-2/74-78:

¹⁴ Արմաղան, Իսթանպուլ, 1938, էջ 6:

գածու վերաբերմունքին, որոնք իրենց նախընթացը չեն ունեցած երբեք»¹⁵: Եթե հաշվի առնենք 1930-ականներին ակտիվ ընթացող հայերի ունեզրկման քաղաքականությունը, փոքրամասնությունների լեզուներով խոսելուն վերաբերող կարգաբերումները, կարծում ենք, որ քեմալական դասական քարոզչական տեքստերի կրկնությամբ այս տողերը ոչ թե հեղինակների մտքի արգասիքն են, այլ «թելադրված են» պաշտոնական Անկարայի կողմից և չեն կարող որևէ աղերս անգամ ունենալ 1930-ականների հայկական իրականության հետ:

Նմանապես Երկրորդ համաշխարհային պատերազմի ավարտին ԽՍՀՄ տարածքային պահանջների և 1946-1948 թթ. դեպի Խորհրդային Հայաստան Մեծ հայրենադարձությանը պոլսահայության հնարավոր մասնակցության համատեքստում թուրքական թերթերը սկսեցին հրատարակել հայ համայնքի տարբեր ներկայացուցիչների՝ թուրքական պետությանը ուղղված երախտիքի ու գոհունակության խոսքերով, ոչ մի պարագայում Թուրքիան չլքելու մասին հայտարարություններով հրապարակախոսական հոդվածներն ու հարցազրույցները: Մինչդեռ հետագա տարիներին հրապարակված ԽՍՀՄ հյուպատոսության փաստաթղթերի, ինչպես նաև ականատես-վերապրողների խոսքերով պատերազմի ընթացքում «20 դասակարգ» զորակոչի և «Ունեցվածքի հարկի» մասին օրենքների կիրառման սարսափները սեփական մաշկի վրա զգացած Ստամբուլի հայության մեծ մասը պատրաստ էր հնարավորության դեպքում ընդմիջտ հեռանալ Թուրքիայից¹⁶:

Միևնույն ժամանակ հարկ է ընդգծել, որ մշտական ճնշումներին ու վախի մթնոլորտի խստացմանը հակառակ համայնքային կառույցներն ու հոգևորականությունը մշտապես փորձել են հայապահպան գործունեություն ծավալել, ապահովել կապը Ստամբուլից դուրս բնակվող փոքրաթիվ հայերի հետ, երկրի ծայրագա-

¹⁵ Արմադան, Իսթանպուլ, էջ 6:

¹⁶ Տե՛ս Մելքոնյան Ռ., Պողոսյան Ն., Փախուստ երգրից, Երևան, 2022:

վառներում ապրող հայ երեխաների համար կրթական հնարավորություններ ստեղծել: Այսպես, օրինակ, բավական է հիշատակել Գարեգին արքեպիսկոպոս Խաչատուրյանի (1951-1961), Շնորհք արքեպիսկոպոս Գալուստյանի (1961-1990) պատրիարքության տարիներին գավառներում պահպանված հայության բեկորների հավաքման, հայեցի կրթության նպատակով երեխաներին Ստամբուլ բերելու մեծածավալ աշխատանքները¹⁷: Ավելին, անգամ հանրապետական հեղձուկ մթնոլորտում պատեհ առիթներով համայնքի առավել համարձակ գործիչները նաև որոշ ուշագրավ հայտարարություններով են հանդես եկել: Այսպես, 1965 թ., Հայոց ցեղասպանության 50-ամյակին, ցեղասպանության եղելության մասին թուրք լրագրողների ուղղակի հարցին Շնորհք պատրիարքն ասել է. «1915-ին ես 7 տարեկան էի, մեր 70 հոգանոց գերդաստանից միայն ես ու մայրս ողջ մնացինք: Աքսորի ժամանակ մորս էլ կորցրի, քանի որ նա ստիպված ամուսնացավ մուսուլման մի թուրքի հետ: Հիմա դուք ինձ պատասխան տվեք, թե ուր են իմ ազգականները: Եթե դուք գտնեք այս հարցի պատասխանը, դրանով նաեւ պատասխանած կլինեք ցեղասպանությունը եղե՞լ է, թե՞ ոչ հարցին»¹⁸: Նման համարձակ ու դիմացինին մտածելու տեղիք տվող պատասխանները, սակայն, բնականաբար ավելի շուտ բացառություն էին, իսկ ընդհանուր առմամբ մինչ 1990-ականներ Հայոց ցեղասպանության հարցը լավագույն դեպքում մնում էր համայնքային կյանքի լուսանցքում, իսկ տարբեր պետությունների կողմից դրա ճանաչումը կամ ցեղասպանության շուրջ քննարկումների կազմակերպումն ավելի էր բարձրացնում հայերի նկատմամբ լարված վերաբերմունքը:

Սառը պատերազմի ավարտն ու ԽՍՀՄ փլուզումը առաջ բերեցին ոչ միայն քաղաքական, այլև մշակութային-հասարակական փոփոխություններ ամբողջ աշխարհում: 1990-ականներին,

¹⁷ Տե՛ս **Մելքոնյան Ռ.**, Ակնարկ Ստամբուլի հայ համայնքի պատմության (1920-ականներից մինչև մեր օրերը), Երևան, 2010, էջ 52-54:

¹⁸ **Մելքոնյան Ռ.**, Թուրքիայում հայկական ծագման դրսեվորումների շուրջ, https://noravank.am/arm/issues/detail.php?ELEMENT_ID=467, (մուտք 17.01.2025)

օրինակ, ականատես ենք լինում այսպես կոչված «հիշողության բումին», երբ թրեհդային դարձավ անդրադառնալ տասնամյակներով լռեցված թեմաներին ու առհասարակ ունենալ պատմության նկատմամբ ռեզիդենտական մոտեցումներ, ընդ որում, ոչ միայն գուտ գիտական, այլև ավելի հանրամատչելի մակարդակներում: Այս միտումներն իրենց արտացոլումը գտան նաև Թուրքիայում, որի իշխանությունները եվրաինտեգրման առաջնահերթության շրջանակներում ձգտում էին ստեղծել ժողովրդավար հասարակության պատրանք: Այս մոտեցման բաղադրիչ մասն էր նաև բազմամյա տաբուների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության հարցի քննարկման արգելքի, մասնակի թուլացումը: Արդյունքում, աստիճանաբար հասարակական օրակարգում սկսեցին ակտիվանալ ցեղասպանության մասին ոչ ժխտողական դիրքորոշումները, իսլամացված հայ կանանց ու երեխաների ճակատագրերի մասին պատումները, հայերի կողմից լքված տարածքներում նյութական ու մշակութային ժառանգության շուրջ քննարկումներն ու համատեղ, խաղաղ կյանքի նոստալգիկ պատմությունները:

Հայոց Ցեղասպանության խնդրի ոչ պաշտոնական վերադարձը թուրքական մեդիադաշտ կարելի է համարել Հրանտ Դինքի՝ 1996 թ. ապրիլի 23-ին «Ակօս» թերթում հրապարակված «Ապրիլի 23 ու կեսը՝ հոդվածը», որում հեղինակը նախ խոսում է ապրիլի 23-ի որպես Թուրքիայի ինքնիշխանության տոնի մասին, ապա անդրադառնում ապրիլի 24-ին որպես հայերի համար սգի օրվա ու հետո գրում. «Չգիտեմ՝ էլ ո՞վ կարող է սա ըմբռնել. լինել և՛ հայ, և՛ թուրքաբնակ, տոնել ապրիլի 23-ն իր ողջ ուրախությամբ ու ապրել հաջորդ օրն՝ իր ողջ տխրությամբ... Տեսնես քանի՞ հոգի է այսպիսի երկվություն ապրում: Հեշտ չէ ո՛չ ըմբռնելը, ո՛չ էլ բացատրելը: Հուսամ՝ ոչ ոք երբևէ ստիպված չի լինի ապրել այս երկվությունը: Ախր, ինչպե՞ս է հնարավոր Ապրիլի 23-ը տոնել ավելի ուրախ: Ախր, ինչպե՞ս է հնարավոր Ապրիլի 24-ը ջնջել մարդկանց հիշողություններից: Իրականության մեջ սրանք անլուծելի հարցեր չեն: Մի այլ յուրահաստկությամբ եմ սիրում ես Ապրիլի 24-նե-

րը: Այս օրն էր նաև, որ ամուսնացա իմ սիրելի կնոջ հետ: Ապրիլի 23-ն ու ապրիլի 24-ը կապող գիշերը մենք կյանք տվեցինք մեր առաջին երեխային: Դա Ապրիլի 23-ը չէր, ոչ էլ՝ Ապրիլի 24-ը: Այդ պահը, թերևս, ապրիլի 23 ու կեսն էր»¹⁹:

Տարատեսակ գրքերի ու հրապարակումների, հուշագրությունների, քննարկումների տեսքով 1990-ականների երկրորդ կեսից Թուրքիայի հասարակական դաշտ մտած Հայոց ցեղասպանության ու դրա հետ անշեղորեն կապված տրավմատիկ հիշողության, իսլամացումների, ունեզրկման թեմաները հող նախապատրաստեցին արդեն 2000-ականներին ավելի մեծ ակտիվությամբ հիշատակի երթերի, ապրիլ 24-յան արարողությունների կազմակերպման համար: Ուշագրավ է, սակայն, որ այս դեպքում գործին լծվեցին ոչ միայն և նույնիսկ ոչ այնքան հայկական համայնքային կառույցները, որքան այդ տարիներին տարատեսակ եվրոպական դրամաշնորհներով Թուրքիայում ակտիվ գործունեություն ծավալող հասարակական կազմակերպություններն ու անհատները: Նմանատիպ կազմակերպությունների շարքում պետք է առաջին հերթին առանձնացնել 1986 թ.-ից գործող «Մարդու իրավունքների միությունը» (անգլ. the Association for Human Rights, թուրք. İnsan Hakları Derneği)²⁰, որը 2005 թ.-ից ի վեր Ստամբուլի՝ Հայոց ցեղասպանության իրագործման առումով խորհրդանշական հանդիսացող վայրերում (օրինակ, Ժամանակակից թուրքական ու իսլամական արվեստի թանգարան, որտեղ հայ մտավորականները աքսորից առաջ բանտարկված են եղել, կամ Հայդարփաշա կայարանը, որտեղից հայերին ուղարկել են աքսորի) ակցիաներ, երթեր է իրականացնում: Հայանպաստ գործունեություն ծավալող մեկ այլ կազմակերպություն է 2007 թ. ստեղծված «Ասա վերջ ռասզիզմին և նացիոնալիզմին» միությունը

¹⁹ Ապրիլի 23 ու կեսը, <https://hrantdink.org/hy/hrant-dink/hrant-dink-hodvatsner-/2987-abrili-23-u-gesi> (մուտք՝ 17.01.2025)

²⁰ Տե՛ս <https://www.ihd.org.tr/> (մուտք՝ 17.01.2025)

(անգլ. “Stop” to Racism and Nationalism!, թուրք. *İrkçılığa ve Milliyetçiliğe Dur De!*)²¹, որի ընդլայնման արդյունքում 2014 թ. սկսեց գործել նաև «Ապրիլի 24 հիշատակի հարթակը» (թուրք. 24 Nisan Anma platformu): 2010 թ. ի վեր այս կառույցը Թաքսիմում կազմակերպում է ցեղասպանության զոհերի հիշատակի վկայակոչում և Թաքսիմ հրապարակի շենքերի ճակատներին ցեղասպանությանը վերաբերող կադրերի ցուցադրում: Մական Գեզիի այգու դեպքերից հետո պետությունն ամեն տարի Թաքսիմից ավելի ու ավելի պակաս մարդաշատ վայրերում էր արտոնում միջոցառումների անցկացումը, իսկ «Covid-19»-ի համավարակից հետո առհասարակ արգելում է բացօթյա վայրերում հանրային միջոցառումների անցկացումը: Եվրամիության ուղղորդմամբ ու վերահսկողությամբ աշխատող այս կառույցների միջոցառումներին համայնքի ներկայությունը շատ փոքր է: Անհատների մակարդակում մշտական վախը, լարվածությունն ու տնական հիասթափությունները ստիպում են մարդկանց զգուշավոր լինել: Ինչ վերաբերում է հայերի կողմից իրականացվող միջոցառումներին, ապա ցեղասպանության մասին նյութերի հավաքմանն ու պահպանմանն ուղղված նախագծերի իրականացումով, ինչպես նաև առհասարակ հայությանն ու օսմանյան կայսրությունում հայկական ներկայությանը վերաբերող տեղեկությունների լայնամասշտաբ հրապարակումով առավել ակտիվ են «Հրանտ Դինք» հիմնադրամն²² ու մասամբ «Նոր զարթոնք»²³ կազմակեր-

²¹ Տե՛ս <https://rightsagenda.org/irkciliga-ve-milliyetcilige-dur-de/> (մուտք՝ 17.01.2025)

²² «Հրանտ Դինք» հիմնադրամը, թերևս, ամենամեծ ներդրումն ունի նախացեղասպանական շրջանում երկրի տարբեր մասերում ապրած հայերի կյանքի մասին նյութերի հավաքման ու պահպանման տեսանկյունից: Բացի այդ, հիմնադրամի իրականացրած թուրքական մամուլում «ատելության խոսքի» մշտադիտարկումներն ու դրանց մասին հրապարակված զեկույցները կարևոր գործիք են Թուրքիայում հակահայկականության և առհասարակ այլատյացության մակարդակը հասկանալու համար: Հիմնադրամի բոլոր

պությունը: Համայնքային կառույցները և անգամ Պոլսի հայոց պատրիարքարանն այսօր էլ նախընտրում են լռություն պահպանել կամ շարունակել հանդես գալ պետական քարոզչամեքենայի առաջ քաշած դրույթների շրջանակներում: Այսպես, օրինակ, 2015 թ. պատրիարքարանի կողմից կազմակերպված հոգեհանգստյան արարողության ընթացքում պատրիարքի տեղապահ Արամ Աթեշյանը խոսել էր «ընդհանուր ցավի» և «հայերի ողբերգությունը քաղաքական նպատակներով չօգտագործելու անհրաժեշտության» մասին²⁴: Զարմանալի գուցադիպությամբ նմանատիպ թեզեր իր ցավակցական ուղերձում կրկնել էր նաև Թուրքիայի նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը²⁵: Մեսրոպ արքեպիսկոպոս Մուրաֆյանի մահից հետո ընտրված պատրիարք Սահակ արքեպիսկոպոս Մաշալյանը ևս իր ամենամյա ուղերձներում շեշտադրում է հայ և թուրք ժողովուրդների խաղաղ համակեցության հնարավորությունն ու հարյուրամյա ցավը հաղթահարելով դեպի ապագան շարժվելու անհրաժեշտությունը: Այսպես օրինակ, 2025 թ. ապրիլի 24-ի նրա ուղերձում ասվում է. «Մենք պետք է հիշենք և հիշեցնենք անցյալը, բայց մեկ դար առաջ տեղի ունեցած իրադարձությունները պետք է դիտարկենք ոչ թե որպես անբուժելի վերք, որը բացվեց հենց երեկ, այլ որպես մեր ազգային և կրոնական ուժի, մեր դիմացկունության, մեր կենսունակության

ծրագրերը մանրամասն հասանելի են՝ https://hrantdink.org/en/hrant-dink/-*3565-who-is-hrant-dink (մուտք՝ 17.01.2025)

²³ Նոր Զարթոնի գործունեությանը կարելի է ծանոթանալ կազմակերպության պաշտոնական էջում <https://www.norzartonk.org/> (մուտք՝ 17.01.2025)

²⁴ Türkiye Ermenileri ülkenin ayrılmaz ve sadık bir parçasıdır', <https://www.aa.com.tr/tr/turkiye/turkiye-ermenileri-ulkenin-ayrilmaz-ve-sadik-bir-parcasidir/54152> (մուտք՝ 17.01.2025)

²⁵ Sayın Cumhurbaşkanımızın 24 Nisan 2015 Günü İstanbul Ermeni Patrikhanesi'nde Yapılan Dini Törene Gönderdiği Mesaj Sayın Cumhurbaşkanımızın 24 Nisan 2015 Günü İstanbul Ermeni Patrikhanesi'nde Yapılan Dini Törene Gönderdiği Mesaj, https://www.mfa.gov.tr/sayin-cumhurbaskanimizin-24-nisan-2015-gunu-istanbul-ermeni-patrikhanesi_nde-yapilan-dini-torene-gonderdigi-mesaj.tr.mfa (մուտք՝ 17.01.2025)

և տոկունության անհերքելի ապացույց»²⁶: Շարունակելով ելույթը՝ պատրիարքը նշում է, որ անթույլատրելի է հայերի ցավն օգտագործել քաղաքական նպատակներով, ապա որպես խնդրի շուրջ դրական զարգացման օրինակ հիշատակում նախագահ Էրդողանի ցավակցական ուղերձները: Ուշագրավ կերպով պատրիարքի 2024 և 2025 թվականների ուղերձում նախագահին հղում անող հատվածը տառացիորեն կրկնվում է. «Նախևառաջ, պետք է ընդգծենք, որ պարոն Ռեջեփ Թայիփ Էրդողանը, որպես վարչապետ և նախագահ, Թուրքիայի Հանրապետության պատմության մեջ միակ պետական ղեկավարն է, որը 2015 թվականից ի վեր ամեն ապրիլի 24-ին այս առիթով ուղերձներ է հղել: Այս ուղերձները, ժխտողականության սովորական լեզուն մի կողմ դնելով, կիսում են մեր ցավն ու հարգանքի տուրք մատուցում տեղահանության ժամանակ կյանքը կորցրած մեր ժողովրդի նկատմամբ: Մեր կարծիքով, այս ուղերձները պատշաճ կերպով մեկնաբանվում են որպես դրական քայլեր, որոնք կարող են հիմք հանդիսանալ ապագա մերձեցման համար: Մենք մեր հարգանքն ու երախտագիտությունն ենք հայտնում մեր նախագահին այս արժեքավոր ուղերձների համար, որոնք նա այսօր կրկնում է»²⁷: Այս փոքր մեջբերումից էլ պարզ է դառնում, որ մեր օրերում էլ Պոլսո հայոց պատրիարքարանը փորձում է հավասարակշռված մոտեցումներ ցուցաբերել, հետևել պետական քարոզչական հոլովույթում գերակա միտումներին՝ խուսափելով հնարավոր առճակատումներից:

Գալով թուրքական քաղաքական դաշտում ներկայացված հայերի գործունեությանը՝ պետք է փաստենք, որ տարբեր տարիների պաշտոնավարած հայազգի պատգամավորներից միայն Ժողովուրդների դեմոկրատական կուսակցության կողմից 2015-2023

²⁶ Patrik Maşalyan'ın 24 Nisan anma mesajı <https://www.agos.com.tr/tr/yazi/32472-patrik-masalyan-in-24-nisan-anma-mesaji> (մուտք՝ 17.01.2025)

²⁷ Patrik Maşalyan'ın 24 Nisan mesajı (2024) <https://www.agos.com.tr/tr/yazi/30163/patrik-masalyan-in-24-nisan-mesaji> Patrik Maşalyan'ın 24 Nisan anma mesajı (2025) <https://www.agos.com.tr/tr/yazi/32472/patrik-masalyan-in-24-nisan-anma-mesaji> (մուտք՝ 17.01.2025)

թթ. Թուրքական ազգային մեծ ժողովի պատգամավոր ընտրված Կարո Փայլանն է հենց խորհրդարանի ամբիոնից բազմիցս բարձրաձայնել Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման անհրաժեշտության մասին²⁸, ինչի հետևանքով ենթարկվել է քաղաքական հարձակումների: Կարո Փայլանի գործունեությունը գնահատելիս, սակայն, պետք է հաշվի առնել նրա ձախակողմյան, սոցիալիստական հայացքները, որոնց համատեքստում նա, հանդես գալով ոչ թե որպես հայ ազգայնական գործիչ, այլ ինտերնացիոնալ հումանիստ, գրեթե ամեն տարի ցավակցական ուղերձներ է տարածում նաև այսպես կոչված «Խոջալուի ցեղասպանության» առիթով: Այսպիսով, կարող ենք փաստել, որ Առաջին համաշխարհային պատերազմի ավարտին Հայոց ցեղասպանության բարձրաձայնման կարճատև ակտիվությունը հանրապետության ստեղծումից հետո պետական քարոզամեթոդային ջանքերով ի չիք արվեց: Միայն 1990-ականների հարաբերական ազատականացման մթնոլորտում Թուրքիայում նորից ժամանակավորապես հնարավոր դարձավ խոսել հայերի ցեղասպանության մասին: Ընդ որում, ոչ հայկական հասարակական կառույցներն այս հարցում հաճախ հայկական կազմակերպություններից ավելի ակտիվ ու նախաձեռնող էին: Հայկական համայնքային կառույցների զգուշավոր կեցվածքը կարելի է բացատրել երկրում տիրող մշտական վախի մթնոլորտով, որ 2016 թ. հեղաշրջման չստացված փորձից հետո նորովի արտահայտվեց հասարակական կյանքի բոլոր ոլորտներում, այդ թվում ոչ մուսուլմանների նկատմամբ մոտեցումներում: Մեր կարծիքով, համայնքի «ան-

²⁸ Garo Paylan: Babaannemin Meselesi Nasıl Arkeologlara Birakilabilir? <https://bianet.org/bianet/ifade-ozgurlugu/215527-garo-paylan-babaannemin-meselesinasil-arkeologlara-birakilabilir>; Paylan'dan kendisini tehdit eden Özdağ'a: Meydanı senin gibi faşistlere terk etmezler, <https://www.ermenihaber.am/tr/news/2021/04/27/Paylan-%C3%96zda%C4%9F-Soyk%C4%B1r%C4%B1m/206974> "Ermeni tarihi için 'özerk yapı' fikri Cemil Çiçek'in", <https://bianet.org/bianet/dunya/226404-ermeni-tarihi-icin-ozerk-yapi-fikri-cemil-cicek-in> (մուսր՝ 26.06.2020):

տարբերության» արմատները շատ հստակ են արտացոլված պո-
սահայ գրող, հրապարակախոս Լյուսան Բըչաքչըի այս խոսքե-
րում. «Թուրքիայում ապրող հայերն հայության չափաբաժնով են
տարբերվում: Մեկը միայն անձնագրով է հայ, մյուսը՝ անցյալից
մնացած հիշողություններով: Կան լեզուն իմացողներ, չիմացող-
ներ և քիչ իմացողներ.... Սեղանի մի քանի խորտիկով հայեր....
Եկեղեցի գնացող, տոնից տոն գնացող, հայկական դպրոց գնացած
կամ չգնացած, երեխային հայկական դպրոց ուղարկած կամ դրա
կարիքը բնավ չտեսած.... կյանքն այլազգի մեկի հետ կապած կամ
դրանից խուսափած հայեր.... Այս գործոններից մեկով կամ մի
քանիսով ստեղծված միկրոսոցիալական ապրող հայեր, մենք...
Ապրածդ իրականությունը միշտ մի քիչ պակաս է, ամեն ինչ չի
ներառում: Եթե հայությունը գլխումդ էլ, անունիցդ չի երևում, ան-
վանդ մեջ արտացոլվում է, լեզուն չգիտես, լեզուն գիտես, տանդ
մեջ չի երևում, սեղանիդ ապրում է, հարևանդ է ուրիշ, դու ուզում
ապրեցնել այն, երեխադ է խուսափում... Հայի «քիչ» ու «շատ» լի-
նելու մեջ ես տատանվում: Թուրքիայում չափից ավել թվացող
հայությունդ, Հայաստանում պակաս է...»²⁹:

Наира Погосян

Армения, к.ф.н., доцент, ЕГУ

nairapoghosyan@ysu.am

ORCID: 0000-0003-3682-3285

АРМЯНСКАЯ ОБЩИНА СТАМБУЛА И ПОМИНОВЕНИЕ ГЕНОЦИДА АРМЯН В ТУРЦИИ

Ключевые слова: Геноцид армян, Турция, армянская община,

²⁹ **Bıçakçı L.**, Bir Ermeni'nin Sinavı Ne Zaman Biter, <https://bianet.org-bianet/insanhaklari/186287-bir-ermeni-nin-sinavi-ne-zaman-biter>
(մուսթ՝ 15.02.2020):

Патриархат, отрицание, Грант Динк.

В статье в контексте официальной политики отрицания Геноцида армян в Турецкой Республике коротко представляется деятельность общинных и религиозных структур стамбульских армян, а также подходы отдельных представителей общины по данному вопросу. Проведенное нами исследование позволяет утверждать, что на протяжении десятилетий находясь в атмосфере страха и постоянного давления, армянская община Стамбула зачастую была вынуждена выступать в роли сторонника государственной политики и защитника официальной позиции. Лишь в условиях относительной либерализации 1990-х годов временно появилась возможность заговорить о Геноциде армян в Турции. При этом неармянские общественные организации в этом вопросе зачастую были более активны и инициативны, чем представители армянской общины.

Naira Poghosyan

Armenia, Ph.D. in Filology,

Associate Professor, YSU

nairapoghosyan@ysu.am

ORCID: 0000-0003-3682-3285

THE ARMENIAN COMMUNITY OF ISTANBUL AND THE COMMEMORATION OF THE ARMENIAN GENOCIDE IN TURKEY

Keywords: Armenian Genocide, Turkey, Armenian community, Patriarchate, denial, Hrant Dink.

This article undertakes a brief examination of the activities of community and religious organisations of Istanbul Armenians, as well as the approaches of individual community representatives to this issue in the context of Turkey's official policy of denial of the Armenian

Genocide in the Republic of Turkey. It is evident from the extant research that, owing to the pervasive atmosphere of fear and incessant pressure to which the Armenian community of Istanbul was subjected for many decades, members of the community were frequently compelled to function as advocates of state policy and defenders of the officially endorsed ideology. It was only in the context of relative liberalisation in the 1990s that the subject of the Armenian Genocide could be discussed in Turkey, albeit temporarily. Concurrently, non-Armenian public organisations exhibited a greater degree of activity in addressing these issues in comparison to representatives of the Armenian community.

Աննա Ասատրյան
Հայաստան, պ.գ.թ., ՀՊՏՀ
annaedisoniasatryan@gmail.com
ORCID: 0000-0001-7037-9915

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐԸ 1965 Թ. ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՄԱՍՈՒԼՈՒՄ

*Հիմնաքառեր*¹ մամուլ, Հայոց ցեղասպանություն, Հայկական հարց, Խորհրդային Հայաստան, քարոզչություն, արևմտահայ գրողներ, ազգային զարթոնք:

Ներածություն

Մամուլը եղել և մնում է ոչ միայն տեղեկատվության փոխանցման, այլ նաև՝ հանրային կարծիք ձևավորելու կարևոր գործիք: Ամբողջատիրական երկրներում, մասնավորապես՝ ԽՍՀՄ-ում, զանգվածային լրատվական միջոցները հանդիսացել են պետական քարոզչական մեքենայի անբաժան մասը և գտնվել վերջինիս վերահսկողության տակ: Հետևաբար, «Սովետական Հայաստան», «Ավանգարդ», «Գրական թերթ» պարբերականներում Հայոց ցեղասպանության 50-ամյակի տարելիցին նվիրված հոդվածները հրապարկվել են Կոմունիստական կուսակցության գաղափարաբանության շրջանակներում, ուստի վերոնշյալ հոդվածները գերծ չէին կոմունիստական գաղափարախոսությանը բնորոշ կուսակցության կատարելիության, Խորհրդային Ռուսաստանի «փրկարար» առաքելության, խորհրդային ժողովուրդների «բարեկամության և եղբայրության», միջազգային իմպերալիզմի «կործանարար» քաղաքականության մասին կարգախոսներից: Այս ամենով հանդերձ՝ դրանք կրել են ազգային բնույթ, քանզի հոդվածագիրներն անդրադարձել են Հայկական հարցին, Հայոց ցեղասպանությանը, Արևմտյան Հայաստանի մշակութային ժառանգությանը, ազգա-

յին իդձերին, հայ մարդու տառապանքներին, հույզերին և կո-
րովին:

Հայոց ցեղասպանությանն առնչվող հրապարակումներն աշխարհաքաղաքական և ներքաղաքական զարգացումների համատեքստում

Դեռևս խրուշչովյան լիբերալիզացման շրջանում ԽՍՀՄ-ում՝ այդ թվում Խորհրդային Հայաստանում հասարակական և մշակութային կյանքը որոշ չափով ձերբազատվեց գաղափարական կապանքներից, ինչը հնարավորություն ընձեռեց հայ մտավորականներին իրենց ստեղծագործություններում անդրադառնալ ոչ միայն սոցիալական, այլ նաև՝ ազգային ինքնությանն առնչվող թեմաներին և հիմնախնդիրներին: Սակայն պատմական հոլովույթով անցած շատ մարտահրավերների, այդ թվում՝ Հայոց ցեղասպանության փաստի մասին պաշտոնապես բարձրաձայնելը ոչ միայն չէր խրախուսվում, այլ նաև հղի էր մի շարք վտանգներով: Իրավիճակը փոփոխվեց 1965 թ., երբ ԽՍՀՄ ղեկավարության թույլատվությամբ ՀՄԽ-ում առաջին անգամ պետական մակարդակով հնարավոր դարձավ ոգեկոչել 1915 թ. անմեղ զոհերի հիշատակը: Խորհրդային ղեկավարության՝ Հայոց ցեղասպանության հարցի շուրջ դիրքորոշման փոփոխությունը պայմանավորված էր ներքին և արտաքին հանգամանքներով:

Հարկ է ընդգծել Հայոց ցեղասպանության 50-ամյակը պետական մակարդակով նշելու հարցում Խորհրդային Հայաստանի ղեկավարների դերակատարությունը: Միջազգային և հայկական օրակարգերի հակադրման/համադրման միջոցով նրանց հաջողվեց հասնել ցանկալի արդյունքի: Այսպես՝ ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յակով Զարոբյանը 1964 թ. դեկտեմբերի 13-ին դիմում է Մոսկվա՝ Հայոց ցեղասպանության 50-ամյակը պետականորեն նշելու թույլտվություն ստանալու համար այն հիմնավորմամբ, թե սփյուռքահայ ուժերն այդ տա-

րեթիվը շահադիտական և սադրիչ նպատակներով են ձգտում նշել, որ «ազգայնական Դաշնակցություն կուսակցությունը պնդում է, թե իբր մեր երկրումանմեղ գոհված մեր հարյուր հազարավոր հայրենակիցների հիշատակին անտարբեր են վերաբերում» և, որ «իբր դրանով իսկ մեզ մոտ ցեղասպանության քաղաքականությունը առարկայաբար արդարացվում է»¹:

Այս հարցում որոշակի դեր խաղաղցին նաև աշխարհաքաղաքական նախադրյալները. այսպես՝ Սառը պատերազմի ընթացքում ՆԱՏՕ-Թուրքիա հարաբերությունների շարունակական խորացումը խիստ անհանգստացրել էր ԽՍՀՄ-ի ղեկավարությանը: Հետևաբար, կարող ենք ենթադրել, որ ԽՄԿԿ կենտկոմը Խորհրդային Հայաստանի քաղաքական և մշակութային վերնախավին թույլատրելով օրակարգ բերել Հայոց ցեղասպանության հանրայնացման և դատապարտման հիմնախնդիրը՝ փորձում էր այդ կերպ նաև համալրել Թուրքիայի դեմ ուղղված իր քաղաքական գործիքակազմը:

Պատահական չէ, որ Հայոց ցեղասպանության մասին քննարկումները նախ և առաջ սկսվեցին ՀԿԿ կենտկոմի գաղափարախոսական բաժնում: 1965 թ. հուլիսի 16-ին Մարքսիզմ-լենինիզմի ինստիտուտի հայկական մասնաճյուղի տնօրեն Ծ. Աղայանը, ՀԽՍՀ ԳԱ արևելագիտության բաժնի վարիչ Հ. Ինճիկյանը և ՀԿԿ Կենտկոմի գաղափարախոսական բաժնի վարիչի տեղակալ Զ. Կիրակոսյանը նամակ են հղում ՀԿԿ Կենտկոմին՝ ներկայացնելով «Արևմտյան Հայաստանում հայերի զանգվածային բնաջնջման 50-ամյակի միջոցառումների անցկացման մասին» 11 կետից բաղկացած **գիտաքարոզչական, մշակութային-զանգվածային միջոցառումների կազմակերպման**, այդ թվում «բնակչության միջոցների հաշվին» հուշարձա-

¹ **Նաջարյան Մ.**, Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ազդեցությունը հայ-թուրքական հարաբերությունների խնդրում 1991-2016 թվականներին, Երևան, 2021, էջ 16: ՀԱԱ, ֆ. 1, ց. 44, գ. 54, թ. 170-174:

նի կառուցման առաջարկություններ²: Վերոնշյալ նամակի բովանդակության համապատասխան ՀԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Յակով Չարոբյանը ՀԿԿ կենտկոմի անունից 1964 թ. Մոսկվա ուղարկեց վերոնշյալ դիմումը: Մտանալով Մոսկվայի թույլատվությունը՝ 1965 մարտի 9-ին ՀԿԿ Կենտկոմի նախագահությունը հաստատում է «Հայերի կոտորածի 50-ամյակի նախապատրաստման հետ կապված միջոցառումների»՝ 15 կետից բաղկացած ծրագիրը³:

Այսպիսով՝ 1965 թ. ՀՄԽՀ-ում պետական մակարդակով առաջին անգամ հնարավոր է դառնում խոսել 20-րդ դարեսկզբի մեծագույն ոճրագործության՝ Հայոց ցեղասպանության մասին: Հարկ է նշել, որ հրապարակային խոսույթի շրջանակը բովանդակային առումով ուներ հստակ շեշտադրումներ, որոնք արտահայտում էին համամիութենական պետության գաղափարաքարոզչական շահերը, սակայն միաժամանակ դրանք արտացոլում էին քողարկված ներագգային շահեր և նպատակներ:

Հայոց ցեղասպանության թեմայի արծարծումները «Մովե-տական Հայաստան», «Ավանգարդ» և «Գրական թերթ» թերթե-րում

1965 թ. վերոնշյալ թերթերը հրապարակել են տասնյակ հոդվածներ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցին: Ըստ բովանդակության դրանք կարող ենք բաժանել հետևյալ խմբերի՝

- Պատմաքաղաքական հոդվածներ,
- Հերոսապատումներ,

²Տե՛ս Հայոց ցեղասպանության 50-ամյակը և Խորհրդային Հայաստանը (Փաստաթղթերի և նյութերի ժողովածու), կազմ. և խմբ.՝ Ա. Հարությունյան, Եր. 2005, էջ 8:

³ Նաջարյան Մ., Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման գործընթացի ազդեցությունը հայ-թուրքական հարաբերությունների խնդրում 1991-2016 թվականներին, Երևան, 2021, էջ 16-17:

- Մշակութային կյանքին առնչվող հոդվածներ:

Պատմաքաղաքական հոդվածներ: Այս հոդվածները բավականին ծավալուն հոդվածներ էին, որոնք նվիրված էին Հայկական հարցի պատմության, Օսմանյան կայսրության և նացիստական Գերմանիայի ցեղասպանական գործողությունների և արևմտյան երկրների ծավալապաշտական քաղաքականության հարցերին:

1965 թ. ապրիլի 24-ին լույս տեսած լայնածավալ **«Արհավիրքից վերածնունդ»** հոդվածը (հեղինակել են Գ. Գալոյանը և Ջ. Կիրակոսյանը) պատմական ակնարկ է, որտեղ հեղինակներն անդրադառնում են համիդյան կոտորածներին, 1908 թ. իշխանության եկած երիտթուրքերի քաղաքականությանը՝ ՀՅԴ-ին մեղադրելով վերջիններիս հետ «ուխտ» կնքելու մեջ, ինչի հետևանքով զգալի չափով թուլացավ հայ ժողովրդի դիմադրությունը: Հոդվածագիրներն այդ ոճրագործությունները համարում են նոր ժամանակների պատմության ամենագանգվածային ցեղասպանական քաղաքականության սկիզբ, որն այնուհետև ավելի կատարելագործված մեթոդներով երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին կրկնեցին ֆաշիստները: Մեղադրանքների սուր անկյունն ուղղված է նաև դեպի արևմտյան իմպերալիզմը և հայ բուրժուաները, որոնք իմպերիալիստական Արևմուտքի հետ էին կապել թուրքական լծից հայ ժողովրդի ազատագրական հույսերը: Ըստ հեղինակների՝ Լենինն իր «Թուրքահայաստանի մասին» դեկրետով պաշտպանել է Արևմտյան Հայաստանի «ազատ ինքնորոշման իրավունքը»: Հոդվածում հիշատակվում է նաև Հայաստանի առաջին Հանրապետությունը՝ այն որակելով որպես սովի, որբերի և թշվառության, համաճարակի, արցունքի և արյան երկիր: Այդ սոսկալի անցյալին հեղինակները հակադրում են լուսավոր ներկան՝ Խորհրդային Հայաստանը, որն ապահովեց հայ ժողովրդի վերածնունդը՝ զարգացնելով տնտեսությունը, գիտությունը և

մշակույթը. հայրենիքը դարձավ սփյուռքահայ աշխատավորության փարոս, որտեղ վերադարձան շուրջ 200 հազ. մարդ⁴:

Ցեղասպանության սահմանման, դրա դրսևորումներին են անդրադաձել ՀԽՍՀ ԳԱ ակադեմիկոս Մ. Ներսիսյանը, ի.գ.դ Ն. Ուշակովն իրենց՝ **«Գենոցիդը ամենածանր հանցագործությունն է մարդկության հանդեպ»** հոդվածով: Հոդվածագիրները, ցեղասպանությունը բնութագրում են որպես «....ազգային, էթնիկական, ռասայական կամ կրոնական խմբի լրիվ կամ մասնակի ոչնչացում»՝ մեջբերելով ՄԱԿ -ի Գլխավոր Անսամբլեայի ընդունած համապատասխան կոնվենցիան, միաժամանակ հավելում են, որ այն «շահագործվող դասակարգի սոցիալ-դասակարգային պայմանների ծնունդ է»: Ելնելով ցեղասպանության դասակարգային պատճառահետևանքային մոտեցման սկզբունքից՝ նրանք գրում են, որ ցեղասպանության կազմակերպիչներն աղետ են պատճառել նաև թուրք ժողովրդին, հատկապես՝ աշխատավորական լայն զանգվածներին: Վերոնշյալ հոդվածում հեղինակները գրում են նաև նոր Թուրքիայի (քեմալական Թուրքիա)՝ հակաիմպերիալիստական քաղաքականության և «երիտասարդ սովետական պետության» (Ռուսաստան) հետ բարիդրացիական հարաբերություններ հաստատելու մասին: Հոդվածագիրներն անդրադառնում են նաև ԱՄՆ-ի քաղաքականությանը. ուղղակիորեն չմեղադրելով ցեղասպանության մեջ՝ քննադատում են վերջինիս վերաբերմունքը հնդկացիների նկատմամբ, ինչպես նաև ակնարկում այդ «ոչնչացման տակտիկայի» կիրառումը Վիետնամի հարավում և Հարավարևելյան Ասիայում⁵:

Նույնաբովանդակ հոդվածներ տպագրեցին Ե. Սարգսյանը և Ջ. Կիրակոսյանը: Սակայն, ի հակադրություն Մ. Ներսիսյանի և

⁴ Տե՛ս «Սովետական Հայաստան», 24 ապրիլի Եր., 1965, թիվ 96;

⁵ Նույն տեղում, 25 ապրիլի, թիվ 97;

Ն. Ուշակովի՝ Ե. Մարգարյանն իր **«Մեծ տերությունների դիվանագիտական խաղերը»** հոդվածում քննադատում է քեմալական Թուրքիային, որն, ըստ հեղինակի, 1920 թ. սեպտեմբերին «անգլո-ամերիկյան իմպերիալիստների թողովությամբ» պատերազմ սկսեց Հայաստանի դեմ: Այս հոդվածը ևս զերծ չէ հակամերիկյան թեզերից. ըստ հեղինակի՝ ԱՄՆ-ը ցանկանում էր իշխանություն հաստատել Մերձավոր Արևելքում և այն Խորհրդային Ռուսաստանի դեմ օգտագործել որպես «պլացդարմ»⁶:

Զ. Կիրակոսյանը **«Գենցիդը ծանրագույն հանցագործություն է»** հոդվածում կրկին անդրադառնում է հայկական կոտորածներին, միջազգային իմպերալիզմի «ժողովրդասպան» դավադրություններին, «գենցիդ» հասկացությանը, «Ցեղապանության հանցագործությունը կանխելու և դրա համար պատժելու» մասին կոնվեցիային՝ նշելով, որ այն վավերացվել է ԽՍՀՄ-ի ԳԽ-ի կողմից⁷:

Հայկական հարցի, մասնավորապես՝ հայկական տարածքների կորստի վերաբերյալ փոքր ինչ տարբերվող տեսակետ է հայտնում պ.գ.դ. Ս. Կարապետյանը: Իր հեղինակած **«Տառապանքից դեպի վերածնունդ»** հոդվածում հեղինակը Վանի, Էրզրումի, Տրապիզոնի նահանգների, ինչպես նաև Կարսի մարզի կորստի մեջ մեղադրում է ոչ միայն Առաջին հանրապետության ՀՅԴ վերնախավին, այլ նաև՝ Ի. Ստալինին: Ըստ հոդվածագրի՝ խորհրդային կառավարությունն իր ստեղծման օրվանից վարել է Հայկական հարցի արդարացի լուծման քաղաքականություն և դա արտահայտվել է 1917 թ. դեկտեմբերի 29-ի «Թուրքահայաստանի մասին դեկրետ»-ում: Եվ չնայած այն հանգամանքին, որ Վ. Լենինը, Գ. Չիչերինը, Ս. Կիրովը կողմ են եղել հայկական

⁶ Տե՛ս «Գրական թերթ», 5 մարտի, 1965, Եր., թիվ 10:

⁷ Նույն տեղում, 23 ապրիլի, 1965, թիվ 17:

հողերի միավորմանը՝ Ի. Ստալինը Գ. Չիչերինի և նրա տեղակալ Կարախանի՝ Արևմտյան Հայաստանի վերոնշյալ նահանգները Հայաստանին միացնելու պահանջը որակել է որպես ընդառաջում «հայ նացիոնալիստների իմպերալիստական ձգտումներին»⁸։ Փաստորեն, հողվածագիրները որևէ կերպ չանդրադառնալով Խորհրդային Ռուսաստանի կողմից ստորագրված Բրեստ-Լիտովսկու և Մոսկվայի պայմանագրերին՝ հայկական տարածքների կորուստը պայմանավորում են արևմտյան տերությունների երկդիմի քաղաքականությամբ, Ալեքսանդրապոլի պայմանագրի կնքման փաստով և Ի. Ստալինի դիրքորոշմամբ։

Խորհրդահայ մամուլն անդրադադարձել է նաև թուրքերի կողմից իրականացված եզդի-քուրդ ժողովրդի կոտորածներին։ Հ. Ջդին «**Բարեկամ ժողովուրդներ**» հոդվածում գրում էր, որ քրդերը ևս տեղահանվել են Վանի, Կարսի, Սուրմալու և այլ բնակավայրերից գյուղերից ու ավաններից։ Հողվածագիրն անդրադառնում է Սարդարապատի ճակատամարտի հաղթանակում քրդերի ներդրմանը, գրում՝ Իրաքի և Սիրիայի անապատներ տեղահանված հայերին՝ քրդերի ցուցաբերած օգնության մասին։ Հ. Ջդին չի անդրադարձել 1915 թ. հայկական կոտորածներին քրդերի մասնակցությանը, սակայն գրել է հայ-քրդական թշնամանքի մասին՝ դրանում մեղադրելով թուրքերին⁹։

Հերոսապատումներ։ Խորհրդահայ մամուլն անդրադարձ է կատարել 1915 թ. Սասունի, Վանի, Տարոնի, Շապին-Գարահիսարի, Մուսա լեռան ինքնապաշտպանական մարտերի, ինչպես նաև՝ 1918 թ. Մայիսյան հերոսամարտերի պատմությանը։ Մանրամասնորեն լուսաբանվել է Մուսա լեռան հերոսամարտը, որի վերաբերյալ լույս են են տեսել մի քանի հոդվածներ,

⁸ «Գրական թերթ», 2 ապրիլի, 1965, թիվ 14։

⁹ Տե՛ս «Գրական թերթ», 23 ապրիլի, 1965, թիվ 17։

որոնցից էր Ա. Քալանթարյանի **«Մուսա լեռան իրական հերոսի հետքերով»** հոդվածը: Հեղինակը նկարագրում է Մուսա լեռան հերոսամարտը, իսկ հերոսի՝ Եսայի Յաղուբյանի հավաքական կերպարով ներկայացնում է հայ մարդու՝ արժանապատվության համար մղած գոյապայքարը¹⁰: Այս հերոսամարտի մասին մեկ այլ հոդված է տպագրել Ռ. Սահակյանը: Հայ պատմաբանն իր **«Ֆրանսիացի պատմաբանը Մուսա լեռան իրադարձությունների մասին»** հոդվածում անդրադարձել է ֆրանսիացի պատմաբան Պոլ Դյու Վեունի «Քրիստոնյաները վտանգի մեջ Մուսա լեռան վրա» գրքին, որն ունի կարևոր աղբյուրագիտական նշանակություն, քանզի հեղինակի մեջբերված փաստերը խարսխված են մուսալեոցիներին օգնության հասած ֆրանսիական ռազմանավի հրամանատար Դարտիժ դյու Ֆուրների կողմից հրատարակված ռազմական հուշերի վրա¹¹:

Մ. Յոթնեղբայրյանի գլխավորությամբ տեղի ունեցած Ուրֆայի ինքնապաշտպանությանը ծավալուն հոդվածով անդրադարձել է Հ. Մուրադյանը: Հոդվածագիրը նաև ներկայացրել է նշյալ մարտերում հայ կանանց ակտիվ մասնակցությունը¹²: **«Հերոսական դրվագներ»** հոդվածում Վ. Պարսամյանը, նկարագրելով Վանի, Շատախի և այլ բնակավայրերի ինքնապաշտպանական մարտերը, խոսում է դրանց օրինականության և օրինաչափության մասին¹³:

«Գրական թերթ»-ն անդրադարձել է նաև զորավար Անդրանիկի հերոսական կերպարին: Հ. Հովհաննիսյանի հեղինակած **«Այսպիսին է եղել Անդրանիկը»** հոդվածում վերջինս ներկայացվում է որպես ռուսական կողմնորոշում (օրենստացիա) ունե-

¹⁰ Տե՛ս «Գրական թերթ», 15 հունվարի, Եր., 1965, թիվ 3:

¹¹ Տե՛ս «Գրական թերթ», 16 ապրիլի, 1965, թիվ 16:

¹² Տե՛ս 'ս նույն տեղում:

¹³ Տե՛ս 'ս նույն տեղում, 23 ապրիլի, թիվ 17:

ցող գործիչ¹⁴։ Անդրանիկի մասին հրապարակվել է մեկ այլ հոդված՝ «**Ռուսական սպաները Անդրանիկ գորավարի մասին**», որտեղ նկարագրվում է հայ քաջորդու պայքարը թուրքերի դեմ Նախիջևանում և Զանգեզուրում¹⁵։

Մշակութային բովանդակության հոդվածներ։ Մշակութային բովանդակություն ունեցող հոդվածները հիմնականում տպագրվել է «Գրական թերթ»-ի տարբեր համարներում։ Հոդվածներն աչքի էին ընկնում իրենց գեղարվեստական ոճով, և մեծ մասամբ նվիրված էին արևմտահայ գրողների գործունեությանը, գրական ժառանգությանը, նրանց հույզերին, ապրումներին և տազնապներին։ Խոսելով արևմտահայ գրողների ստեղծագործությունների մասին, հոդվածագիրները կարծես փորձում են վերջիններիս վերապահել սոցիալիստական գաղափարներ. այսպես՝ Վ. Նորենցն իր «**Ռուբեն Սևակ**» հոդվածում գրում է, որ նրա ստեղծագործություններում հնչում է սոցիալական տրտունջը և կարմիր թելի պես անցնում է «ճնշող և ճնշված» խավերի, «տիրողների և ենթարկվածների» թեման¹⁶։ Այդ համատեքստում է լուսաբանվել նաև Թվկատինցու ստեղծագործությունները՝ վերջինիս նվիրված «**Թվկանտեցի**» հոդվածում¹⁷։

Գ. Մահարու «**Պատիվ ըրեք վսեմական քերթողին**» հոդվածը նվիրված էր արևմտահայ քնարերգու Բանիել Վարուժանին¹⁸։ Ա. Ինճիկյանն իր «**Միամանթո**» հոդվածում ներկայացրել է հայ մեծ գրողի հոգու նրբերանգները, հումանիզմը և գրական տաղանդը¹⁹։

Գրիգոր Զոհրապի քաղաքական և գրական գործու-

¹⁴ Տե՛ս «Գրական թերթ», 19 փետրվարի, 1965, թիվ 9։

¹⁵ Տե՛ս նույն տեղում, 3 սեպտեմբերի, 1965, թիվ 36։

¹⁶ Տե՛ս նույն տեղում, 26 փետրվարի, 1965, թիվ 9։

¹⁷ Տե՛ս նույն տեղում, 9 ապրիլի, 1965, թիվ 15։

¹⁸ Տե՛ս նույն տեղում, 19 մարտի, 1965, թիվ 12։

¹⁹ Տե՛ս նույն տեղում, 2 ապրիլի, 1965 թիվ 14։

նեությանն անդրադարձ է կատարել Հ. Ռշտունին՝ հրապարակելով «Գրիգոր Զոհրապ» հոդվածը: Արևմտահայ գրողին հոդվածագիրը ներկայացրել է որպես ազգային խտրականության դեմ պայքարող առաջամարտիկ, որը հանդես է եկել ճնշված խավերի, ժողովուրդների պաշտպանությամբ: Սակայն հոդվածագիրը հիմնականում անդրադառնում է Զոհրապի գրական ժառանգությանը՝ այն կապակցելով ռեալիստական արձակի հետ²⁰:

Խորհրդահայ պարբերականները Հայոց ցեղասպանության համատեքստում անդրադարձել են նաև արտասահմանյան գրողների գործունեությանը: Գ. Հովնանը «Հայ ժողովրդի մեծ քարեկամ» հոդվածում Անատոլ Ֆրանսին ներկայացնում է որպես հայ ժողովրդի արդար դատի պաշտպան, մեծ հումանիստ, որը համագործակցել է գրող, հրապարակախոս Արշակ Զոպանյանի և նկարիչ Էդգար Շահինի հետ: Հոդվածագիրը ներկայացրել է նաև Անատոլ Ֆրանսի՝ ֆրանսիական մամուլում հրապարակած 1894-1896 թթ. համիդյան ջարդերի, թուրքական ցեղասպանական քաղաքականության մասին հոդվածների բովանդակությունը²¹:

Թերթերը նաև լուսաբանել են Մեծ եղեռնին նվիրված տարբեր հանդիպումներ և միջոցառումներ: Այսպես՝ 1965 թ. ապրիլի 19-ին Հայաստանի արվեստի աշխատողների տանը Սփյուռքահայության հետ մշակութային կապի կոմիտեի նախաձեռնությամբ կազմակերպվեց հանդիպում-միջոցառում սփյուռքահայ ուսանողների հետ: Միջոցառմանը հյուրնկայեցին գրողներ Գ. Էմինը, Ս. Կապուտիկյանը և ակադեմիկոս Ա. Շահինյանը, որոնք հանդես են եկել անցյալում հայ մարդու տառապանքի և հայ ժողովրդի զարթոնքի մասին ելույթներով²²:

²⁰ Տե՛ս «Գրական թերթ», 16 հուլիսի, 1965, թիվ 29:

²¹ Տե՛ս նույն տեղում, 26 մարտի, 1965, թիվ 13:

²² Տե՛ս «Ավանգարդ», 24 ապրիլի, 1965, թիվ 49:

«Ավանգարդ»-ը լուսաբանել է 1965 թ. ապրիլի 20-ին ԵՊՀ -ի դահլիճում տեղի ունեցած ՀԽՍՀ ԳԱ-ի և ԵՊՀ-ի միացյալ գիտական նստաշրջանը (սեսիան), որտեղ ելույթ են ունեցել մի շարք հայտնի մտավորականներ՝ Վ. Համբարձումյանը, Ա. Եսայանը, Ռ. Սահակյանը և այլոք²³:

1965 թ. ապրիլի 23-ին Գրողների միության տանը տեղի է ունեցել 1915 թ. նահատակված արևմտահայ գրողների հիշատակին նվիրված հուշ-երեկո, որին մասնակցել են գրողներ, գիտնականներ, արվեստագետներ. ելույթ են ունեցել Ստ. Զորյանը, Գ. Էմինը, Ա. Սահինյանը, Ս. Կապուտիկյանը, Հ. Հովհաննիսյանը և այլոք²⁴:

Ցավոք, մեր ուսումնասիրության առարկա հանդիսացող թերթերը չեն լուսաբանել 1965 թ. ապրիլի 24-ին Օպերայի շենքում պետական այրերի մասնակցությամբ տեղի ունեցած միջոցառումը և դրան հաջորդած, թույլատրելիի շրջանակներից դուրս եկած իրադարձությունները: Հարկ է նշել, որ 1965 թ. ԼՂԻՄ-ում հրատարակվող հայկական թերթերը չեն անդրադարձել Հայոց ցեղասպանության առջնվող թեմաներին:

Եզրակացություն

Այսպիսով՝ խորհրդահայ մամուլում լույս տեսած Հայկական հարցի և Հայոց ցեղասպանության վերաբերյալ հոդվածները, չնայած իրենց գաղափարաքարոզչական հստակ շեշտադրումներին, մեծ ազդեցություն են ունեցել ազգային զարթոնքի դրսևորումների վրա՝ նպաստելով.

- արևմտահայ գրողների գրական ստեղծագործությունների հանրայնացմանը,

²³ Տե՛ս «Ավանգարդ», 20 ապրիլի, Եր.1965, թիվ 47:

²⁴ Տե՛ս «Մովետական Հայաստան», 24 ապրիլի, 1965, թիվ 96:

- պատմական հիշողության վերականգմանը և ազգային ինքնության ամրապնդմանը,

- խորհրդահայ իրականությանը մեջ հայրենասիրական զգացումների խորացմանը, որը հետագայում դրսևորվեց Արցախյան շարժման ընթացքում:

Ինչպես նաև՝

- հայ ակնառու մտավորականներն իրենց գրչով տառապակից ժողովրդի հետ կիսեցին իրենց ներսում կուտակված հոգեկան ցավը և ցասումը,

- ազգային զարթոնքը զարկ տվեց պատմագիտական նոր ուսումնասիրությունների, ծնվեցին մշակութային նոր արժեքներ՝ Հայոց ցեղասպանության թեման արծարծող գրական ստեղծագործություններ, ֆիլմեր և այլն,

- Հայոց ցեղասպանության ճանաչման և դատատապարտման կոչերը դարձան հայ հասարակական-քաղաքական մտքի անքակտելի մասը՝ խթանելով ազգային պահանջատիրության հետագա դրսևորումների ի հայտ գալուն:

Այս ամենով հանդերձ՝

- վերոնշյալ հոդվածները գերծ էին ազգային պահանջատիրությանն առնչվող գաղափարներից՝ չնայած որ Հայոց ցեղասպանությունը դիտարկվում էր ՄԱԿ-ի կողմից ընդունված համապատասխան կոնվեցիայի համատեքստում,

- մամուլի հրապարակումներին բնորոշ են եղել Սառը պատերազմի գաղափարական պայքարի դրսևորումները, հետևաբար՝ դրանք ունեցել են քարոզչական բնույթ՝ ուղղված կումունիստական համակարգի դերի բարձրացմանը և Արևմուտքի, մասնավորապես՝ ԱՄՆ-ի համաշխարհային հեղինակությունը ստվերելուն: Այս ամենի համատեքստում միակողմանի են ներկայացվել պատմական մի շարք իրադարձություններ, իսկ որոշ թեմաներ՝ Բրեստ-Լիտովսկի և Մոսկվայի պայմանագրեր, Արցախյան հիմնահարց ընդհանրապես շրջանցվել են:

Анна Асатрян
Армения, к.и.н, ЕГЭУ
annaedisoniasatryan@gmail.com
ORCID: 0000-0001-7037-9915

ОСВЕЩЕНИЕ ТЕМЫ ГЕНОЦИДА АРМЯН В СОВЕТСКОЙ АРМЯНСКОЙ ПРЕССЕ 1965 ГОДА

Ключевые слова: пресса, Геноцид армян, Армянский вопрос, Советская Армения, пропаганда, западноармянские писатели, национальное пробуждение.

В данной статье представлены публикации о Геноциде армян, вышедшие в ряде советских армянских газет 1965 года, в частности в «Советской Армении», «Авангарде» и «Литературной газете».

В статье рассматриваются также причины, по которым советско-армянская пресса обратилась к тематике Армянского вопроса и Геноцида армян после длительного молчания, представляется содержание опубликованных материалов, а также их авторы. В зависимости от тематической направленности публикации были разделены на следующие группы: статьи политического характера, героические истории, а также статьи, посвящённые западноармянским писателям. В статьях политического характера авторы описывали и анализировали историю Армянского вопроса и Геноцида армян, а также экспансионистскую политику великих держав.

В героических повествованиях подробно освещались самооборонительные бои в Ване, Урфе, на горе Муса, в Шапин-Карахисаре и других армянских населённых пунктах.

Статьи культурного содержания посвящались жизни, литературному наследию и трагической гибели западноармянских

писателей.

Обобщая, можно отметить, что опубликованные статьи, посвящённые Армянскому вопросу и Геноциду армян, несмотря на их пропагандистскую направленность, оказали значительное влияние на национальное пробуждение, поскольку способствовали:

- признанию и популяризации литературного наследия выдающихся западноармянских писателей,
- восстановлению и укреплению исторической памяти и национальной идентичности,
- формированию патриотических чувств в советско-армянской действительности, которые впоследствии проявились в ходе Карабахского движения.

Anna Asatryan

Armenia, Ph.D. in History, YSEU

annaedisoniasatryan@gmail.com

ORCID: 0000-0001-7037-9915

DISCUSSIONS ON THE TOPIC OF THE ARMENIAN GENOCIDE IN THE SOVIET ARMENIAN PRESS OF 1965

Keywords: the press, Armenian Genocide, Armenian Question, Soviet Armenia, propaganda, Western Armenian writers, national awakening.

This article presents the publications on the Armenian Genocide that appeared in several Soviet Armenian periodicals in 1965, particularly in “*Sovetakan Hayastan*”, “*Avangard*”, and “*Grakan Tert*”. The article also discusses the reasons why the Soviet-Armenian press

turned to the topic of the Armenian question and the Armenian Genocide after a long silence, presents the content of the published materials, as well as their authors. Based on their thematic focus, we have categorized the articles into the following groups: political articles, heroic narratives, and columns dedicated to Western Armenian writers.

In the political articles, the authors described and analyzed the history of the Armenian Question and the Armenian Genocide, as well as the expansionist policies of the great powers.

The heroic narratives provide detailed coverage of the self-defense battles that took place during the genocide in Van, Urfa, Mount Musa, Shabin-Karahisar, and other Armenian settlements. They also depict the emotional experiences of the heroes—the spirit of resistance, their expectations, and the sorrow of loss.

The culturally themed articles focus on the literary works, and tragic deaths of Western Armenian writers Siamanto, Daniel Varoujan, Grigor Zohrap, Ruben Sevak, and Tlkatintsi.

We have identified the propagandistic layers and emphases infused with communist ideology in the published articles and analyzed their underlying causes.

In conclusion, it should be noted that the articles on the Armenian Question and the Genocide published in the Soviet Armenian press, despite their propagandistic nuances, had a significant impact on national awakening, as they contributed to:

- the recognition and popularization of the literary works of prominent Western Armenian writers,
- the restoration and strengthening of historical memory and national identity,
- the generation of patriotic sentiments within the Soviet Armenian context, which later found expression during the Artsakh Movement.

Արփինե Բաբլումյան
Հայաստան, պ.գ.թ., ԳԱԱ ՊԻ
arpinebablumyan05@gmail.com
ORCID: 0009-0001-7840-1440

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄԸ
ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՄԱՍՈՒԼԻ ԷՋԵՐՈՒՄ
(1965-70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ)**

Հիմնադրանք՝ Հայոց ցեղասպանություն, Ազգային զարթոնք, մամուլ, սփյուռք, ապրիլի 24, Խորհրդային Հայաստան, հիշատակում:

Ներածություն

1965 թվականը բեկումնային էր Հայոց պատմության համար, քանի որ նախ՝ Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցի հիշատակմամբ ինչպես Խորհրդային Հայաստանում, այնպես էլ Սփյուռքի տարբեր գաղթօջախներում նոր հնչեղություն ստացավ Հայոց ցեղասպանության խնդիրը, նաև՝ ակտիվացան ջանքերը՝ ցեղասպանության միջազգային ճանաչման ու դատապարտման ուղղությամբ: Թերևս, 1960-ականների զարթոնքի անմիջական հետևանքն էր նաև երկու տասնամյակ անց՝ 1988 թ. ծավալված Ղարաբաղյան շարժումն ու Հայաստանի և Արցախի հանրապետությունների անկախացման գործընթացը: Հետևաբար, այս ամբողջ համատեքստում խիստ կարևոր է ու արդիական կրկին անդրադառնալ 1960-ականների հայ ազգային զարթոնքին ու դրա հետ կապված մի շարք այլ խնդիրների: Սույն հոդվածի շրջանակներում փորձենք անդրադառնալ խնդրի արձարժմանը ժամանակի միջազգային մամուլի հրապարակումներում: Խոսքը նախևառաջ «The New York Times», «The Los Angeles Times» ամերիկյան հեղինակավոր լրատվականների, նաև հատկապես ԱՄՆ Կալիֆոռնիա նահանգի տարբեր բնակավայրերում հրատարակվող մի քանի թերթերի ու եվրոպական հայտնի «The Guardian»,

«The Observer», «Le Mond» թերթերի մասին է: Հրապարակումները վերլուծել ենք ըստ դրանցում արձարժված թեմաների, այս կամ այն խնդրի կարևորման ու առավել օբյեկտիվ ներկայացման տեսանկյունից:

50-ամյա տարելիցը՝ Հայոց ցեղասպանության և հայոց պատմության համատեքստում

Տարիներ շարունակ Հայոց ցեղասպանության թեման լուրջության ու մոռացության էր մատնված հասարակական տարբեր շրջանակների, հետևաբար և՛ մամուլի կողմից, սակայն արդեն 1965 թ. ապրիլի 24-ին Մեծ եղեռնի 50-ամյա տարելիցը ոգեկոչվեց ինչպես Սփյուռքի բազմաթիվ համայնքներում, այնպես էլ Խորհրդային Հայաստանում: Մասնավորապես, Երևանում տեղի ունեցան համազգային երթեր և հանրահավաքներ, որոնք կրում էին խաղաղ բնույթ և միտված էին բացառապես ազգային հիմնախնդիրների վերհանմանը¹: Ավելին, Խորհրդային Հայաստանի ղեկավարության ջանքերով և կենտրոնական իշխանությունների թույլտվությամբ Երևանում անցկացվեց 50-ամյա տարելիցին նվիրված հանդիսավոր ժողով, նաև որոշում կայացվեց կառուցել Եղեռնի զոհերի հիշատակը ոգեկոչող հուշահամալիր և, ինչը ևս աննախադեպ էր, հողված տպագրվեց կենտրոնական մամուլում²: Պատահական չէր, որ հատկապես ապրիլի 24-26-ն ընկած ժամանակահատվածում, ի տարբերություն խորհրդային մամուլի, օտարալեզու մամուլը, այդ թվում և մի շարք հեղինակավոր պարբերականներ լայնորեն անդրադարձան Հայոց ցեղասպանության խնդրին, ինչը ենթադրում էր 50-ամյա տարելիցի միջոցառումների ծիրում որոշակիորեն ներկայացնել նաև Հայոց ցեղասպանության պատմությունը, դրա ընթացքն ու հետևանքները: Այս առումով ուշագրավ է հատկապես ԱՄՆ Միասուրի նահանգի Սփրինգֆիլդ

¹ Տե՛ս **Հարությունյան Ա.**, Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և երկրորդ հանրապետությունը, Եր., 2015, էջ 49:

² Տե՛ս **Մանուկյան Ա.**, Այլախոհության դրսևորման փուլերը Խորհրդային Հայաստանում, Հայոց պատմության հարցեր, Եր., 2017, հ. 18, էջ 177:

քաղաքում լույս տեսնող «Springfield Leader and Press» թերթի «Կոտորած» վերնագրով հոդվածը, որում հայոց պատմությունը որակվում է որպես «ծանր պատմություն», նշվում որ քրիստոնեության ընդունումից ի վեր հայերը նահատակվել են կրոնի համար: Ապա հեղինակը անդրադարձ է կատարում Հայոց ցեղասպանության իրադարձություններին, ապրիլի 24-ի խորհրդին, տեղահանությունների մանրամասներին³:

Ֆրանսիական «Le Mond» թերթում հայազգի հետազոտող Ժերար Շելիանը (Չալյանը) և հայկական կազմակերպության կողմից Վատիկանում Թուրքիայի ներկայացուցչի սպանության դեպքի համատեքստում ներկայացնում է Հայոց ցեղասպանության իրականացման փուլերը, շեշտադրում, որ երկու միլիոն հայերի երկու երրորդը բնաջնջվել է⁴:

Կարևոր է, որ սկսած 1965 թ. հրապարակումներից հանդիպում են նաև հոդվածներ, որտեղ անմիջական ուրվագծեր են անցկացվում Հայոց ցեղասպանություն և Հրեաների հոլոքոստի միջև: Մասնավորապես, «The New York Times» թերթն իր խմբագրականում նշում է, որ «հայ ազգը, աշխարհում ամենուր, այսօր նշում է իր երկարամյա պատմության ամենաողբերգական իրադարձությունը», որի համեմատությունը Հիտլերի կողմից իրագործված ցեղասպանության հետ այնքան էլ տեղին չէ: Հիտլերը ոչնչացնում էր հրեաներին ռասիստական նկատառումներից ելնելով, մինչդեռ թեև թուրքերի կողմից հայերին ոչնչացնելու քաղաքականությունն ուներ ռասայականության տարր, բայց առաջնային պատճառը ազգայնականությունն էր⁵: Ամերիկյան «The

³ Տե՛ս «Springfield Leader and Press», April 25, 1965 Springfield, Missouri.
<https://www.newspapers.com/newspage/300106399/> (01.04.2025)

⁴ Տե՛ս **Chaliand G.**, Le génocide arménien " n'a pas eu lieu Par, "Le Monde", 13 juillet, 1977, Paris. https://www.lemonde.fr/archives/article/1977/07/13/le-genocide-armenien-n-a-pas-eu-lieu_2862027_1819218.html (26.03.2025)

⁵ Armenia Remembers: "Editorial on 50th anniv. of Turkish massacres, "The New York Times", April 24, 1965. <https://timesmachine.nytimes.com/timesmachine/1965/04/24/97194919.html?pageNumber=28> (21.03.2025)

Greensboro Record» թերթի հոդվածագիրը Հայոց ցեղասպանության համատեքստում հիշատակում է նաև Ռաֆայել Լեմկին⁶: Հոլոքոստի հետ համեմատություն և ավելի խորը վերլուծություն է ներկայացնում Ռոբերտ Ստեֆենսը «Վերջնական լուծումը» վերնագրված հոդվածում: Հեղինակը գրում է, որ պատմության հեղանակներից մեկն է, որ եթե նախկինում հայերի ջարդերը այնքան էին հուզել Անգլիային, որ դեռ այդ իրողությունը հիշվում էր, ապա «հայկական խնդիրը լուծելու մեծ համակարգված փորձը», ի վերջո, շատ քիչ ազդեցություն է թողել եվրոպացիների մտքերի վրա և որ քչերն են հիշում այն մասին, որ մոտ «մեկ միլիոն հայեր զոհվեցին թուրքական կառավարության կողմից իրագործված Հոլոքոստի ժամանակ, որն իր մասշտաբով և սարսափով մրցակցում էր Օսվենցիմի հետ»: Ստեֆենսը պարզաբանում է, որ 1,750,000 տղամարդկանց, կանանց և երեխաների կազմակերպված մահվան երթը Հիտլերի գազախցիկների թուրքական համարժեքն էր⁷:

Եթե 50-ամյա տարեկիցը լուսաբանող արդեն իսկ նշված հոդվածներում անդրադարձ կա Հայոց ցեղասպանության պատմությանը, հանցագործության իրականացման փուլերին, ապա հանդիպում ենք նաև մի քանի հոդվածներ, որոնցում խնդիրը ներկայացվում է ընդհանուր՝ Հայոց պատմության համատեքստում: Նման հրապարակումներից է «The New York Times» պարբերականի ապրիլի 24-ի խմբագրականը՝ «Հայաստանը հիշում է» վերնագրով: Այստեղ անդրադարձ կա Հայոց պատմությանը, նշվում է, որ հայերը բարեկիրթ են, խելացի, հայտնի առևտրականներ են ունեցել, սփռվելով տարբեր երկրներում նրանք հարստացրել են այդ երկրները, այդ թվում և ԱՄՆ-ն: Անդրադառնալով արդեն Հայոց ցեղասպանության հանգամանքին՝ հոդվածագիրը եզրակացնում է, որ թեև թուրքերը ծանր բեռ ունեն իրենց

⁶ «The Greensboro Record», April 24, 1965, Greensboro.

<https://www.newspapers.com/newspage/939899230/> (01.04.2025)

⁷ St: 'u **Stephens R.**, The forgotten "Final Solution", The Observer", April 25, 1965, London.
<https://theguardian.newspapers.com/newspage/257990671/> (01.04.2025)

խղճի վրա կես դար առաջ տեղի ունեցած սարսափելի իրադարձությունների համար, սակայն երկու ժողովուրդներն այժմ պետք է անցյալում թողնեն դրանք: Իհարկե, ըստ հեղինակի, «հայերը չեն կարող մոռանալ անցյալը, սակայն նրանք կարող են ներել»⁸:

Ջոհերի թվաքանակի վերաբերյալ տվյալներ

1965-66 թթ. մի շարք հոդվածներում քննարկման առարկա է եղել նաև Հայոց ցեղասպանության զոհերի թվաքանակի հարցը, ընդ որում, որպես կոտորածների տարեթիվ հիմնականում նշվում էր 1915 թվականը: Այսպես, «The New York Times» թերթի 1965 թ. ապրիլի 24-ի համարի հոդվածներից մեկում նշվում է, որ կոտորածների ընթացքում սպանվել է 600.000-ից 1.500.000 հայ⁹: Միևնույն ժամանակ, թերթի նույն համարի խմբագրականում շեշտվում է, որ «թուրքերի կողմից սպանվածների թվերը երբեք հայտնի չեն դառնա. հայերի գնահատմամբ այն հասնում է մինչև 2.000.000-ի, իսկ անգլիացի պատմաբան Հ. Ա. Ֆիշերը այդ թիվը սահմանում է 1.000.000»¹⁰: Թերթի հաջորդ օրվա հրապարակումներում ևս «Տվյալները տարբերվում են» ենթավերնագրով անդրադարձ կա զոհերի թվաքանակին, մասնավորապես նշվում է, որ հայկական աղբյուրների համաձայն 1.5 միլիոն հայ է սպանվել 1915-1918 թթ. տեղահանության ընթացքում, մինչդեռ Բրիտանիկա հանրագիտարանը նշում է, որ Թուրքիայի ընդհանուր 1.800.000 հայ բնակչության մեկ երրորդն է տեղահանվել, հետևաբար, հանրագիտարանի համաձայն, սպանվածների թիվը կազ-

⁸ Armenia Remembers: Editorial on 50th anniv. of Turkish massacres, "The New York Times", April 24, 1965.

<https://timesmachine.nytimes.com/timesmachine/1965/04/24/97194919.html?pagenumber=28> (21.03.2025)

⁹ Armenians to mark massacres of 1915, "The New York Times", April 24, 1965.

<https://timesmachine.nytimes.com/timesmachine/1965/04/24/97194970.html?pagenumber=32> (21.03.2025)

¹⁰ Armenia Remembers: Editorial on 50th anniv. of Turkish massacres, "The New York Times", April 24, 1965. (21.03.2025)

մում էր 600.000¹¹:

«The Los Angeles Times» թերթի հոդվածներից մեկում նշվում է, որ «պատմական ողբերգության ընթացքում մոտավորապես 1.200.000 մարդ էր մահացել»¹²: Բրիտանական «The Observer» թերթում հրատարակված արդեն իսկ հիշատակված հոդվածում հեղինակ Ռ. Ստեֆենսը նշում է, որ առնվազն 600.000 հայ սպանվել է, ևս 600.000-ը, այդ թվում բազմաթիվ առևանգված կանայք, անհետ կորել են¹³: Հայոց ցեղասպանության զոհերի թվի վերաբերյալ թյուր 600.000 թվաքանակը բերվում է արդեն 1966 թ. հրատարակված մեկ այլ հոդվածում, ինչին հաջորդում է պատասխան հոդվածը «The Los Angeles Times» թերթում: Այստեղ հեղինակը նշում է, որ ամբողջ աշխարհում հայերի հստակ պատկերացումն է, որ 1915-ի ընթացքում կոտորված հայերի թիվը ավելի շատ մոտ է 1.500.000-ի, այլ ոչ թե 600.000-ի¹⁴:

Ամփոփելով բերված տվյալները՝ կարող ենք եզրակացնել, որ 1965 թ. նախորդող շրջանում օտար հանրությունը հստակ պատկերացումներ չի ունեցել Հայոց ցեղասպանության թե՛ իրադարձությունների, թե՛ զոհերի թվաքանակի վերաբերյալ: Շրջանառվել են ցեղասպանության զոհերի 600.000-ից 1.500.000 թվաքանակները, ընդ որում թերևս 600.000 թվաքանակը տարածվել է արդեն հիշատակված հոդվածներից մեկում բերված մեկ այլ 600.000-ից անջատ, որը վերաբերում էր կորածների ու առևանգվածների թվաքանակին: Մինչդեռ հիմնականում հայկական ծագումով հեղինակ-նամակագիրները և խնդրին ծանոթ հետազոտողները շրջա-

¹¹ Armenians mark a tragic 1915 day, "The New York Times", April 25, 1965. <https://timesmachine.nytimes.com/timesmachine/1965/04/25/101541102.html> (21.03.2025)

¹² "The Los Angeles Times", April 25, 1965. <https://latimes.newspapers.com/image-382327889/?match=1&terms=Armenians> (21.03.2025)

¹³ Տե՛ս **Stephens R.**, The Forgotten "Final Solution", "The Observer", April 25, 1965. <https://theguardian.newspapers.com/newspage/257990671/> (01.03.2025)

¹⁴ Տե՛ս **Amiryan D.**, Armenian Massacres, "The Los Angeles Times", June 9, 1966. <https://latimes.newspapers.com/newspage/382458876/> (21.03.2025)

նառել են զոհերի 1.500.000 թվաքանակը:

Անդրադարձ Խորհրդային Հայաստանում ծավալվող իրադարձություններին

Ինչ վերաբերում է Եղեռնի 50-ամյա տարելիցին կոնկրետ Խորհրդային Հայաստանում կազմակերպված միջոցառումներին, ապա մի քանի պարբերականներ գրել են հատկապես «Սովետական Հայաստան» թերթի անդրադարձի մասին, առ այն, որ «սովետական մի լրագիր մեղադրել է Թուրքիային 50 տարի առաջ Արևմտյան Հայաստանում իրագործած ցեղասպանության մեջ»: Հայ ուսանողներն էլ, փորձելով ի ցույց դնել իրենց հաճախությունը այս հոդվածի հետ, պլանավորել էին բողոքի ցույց կազմակերպել Թուրքիայի դեսպանատան առջև, սակայն ցրվել են ոստիկանության կողմից¹⁵: Արդեն 1966 թ. ապրիլի 24-ին Երևանում կազմակերպված ցույցերին անդրադարձ կա Կալիֆորնիայում տպվող «Long Beach Independent» թերթում, որում մասնավորապես նշվում է, որ մոտ 5.000 մարդ՝ ուսանողների առաջնորդությամբ թուրքերի կողմից հայերի կոտորածների տարելիցին երթ են կազմակերպել՝ թիրախավորելով խորհրդային պաշտոնյաներին Հայաստանում: Խորհրդային պաշտոնյաները փորձել են կանխել Թուրքիայի դեմ նման բռնկումները, քանի որ սովետական արտաքին քաղաքականությունը շեշտում էր Թուրքիայի հետ բարեկամության կարևորությունը¹⁶: 1965-1966 թթ. ապրիլի 24-ին Երևանում կազմակերպված ցույցերին ու դրանց կարևորությանն է անդրադառնում Վինսենթ Բուրկը «The Los Angeles Times» թերթում տպված իր ծավալուն հոդվածում: Հեղինակը գրում է, որ վերջին 13 ամիս-

¹⁵ St 'u Soviet Article Accuses Turks, "The New York Times", April 25, 1965.
<https://timesmachine.nytimes.com/timesmachine/1965/04/25/101541104.html?pageNumber=80> (21.03.2025). St 'u նաև՝ "Evansville Press", April 25, 1965.
<https://www.newspapers.com/newspage/765639397/> (01.04.2025)

¹⁶ St 'u Armenian Massacre Marked: "Long Beach Independent", 30 April 1966.
<https://cdnc.ucr.edu/?a=d&d=LBI19660430.1.5&srpos=5&e=-----196-en--20--1--txt-txIN-Armenians+in+Soviet+Armenia-----#> (01.04.2025)

ների ընթացքում երկու անգամ Խորհրդային Հայաստանի բնակիչները դժգոհ են Մոսկվայից՝ թուրքերի կողմից հայերի կոտորածների տարեդարձի կապակցությամբ հակաթուրքական ցույցեր կազմակերպելով: Նշվում է, որ իշխանությունները ցույցեր չէին ցանկանում, մանավանդ, որ օտար թերթերը կիմանային այդ մասին: Ավելին, ըստ հեղինակի, այս իրադարձություններին խորհրդային մամուլում ևս ոչ մի անդրադարձ չեղավ: Հեղինակը կարծում է, որ միայն այն փաստը, որ հայ երիտասարդները համարձակվեցին ցույցեր անել՝ ի հեճուկս պաշտոնական ցանկությունների, խոսում է ստալինյան «ահաբեկչության» ավարտից հետո մթնոլորտի փոփոխության մասին: Միևնույն ժամանակ, շեշտվում է, որ Ստալինի մահից անմիջապես հետո Կրեմլը հրաժարվել էր Թուրքիայի նկատմամբ իր բոլոր տարածքային պահանջներից: Վինսենթ Բուրկը անդրադառնում է նաև Քոչինյանի անձին, ելույթներից մեկում նրա հնչեցրած խոսքերին, որ «որոշ անցանկալի իրադարձություններ» տեղի են ունեցել 1965թ. ապրիլի 24-ին, որ երիտասարդության որոշ ներկայացուցիչներ, «ելնելով սխալ դիրքերից», բավական համարձակ, «իրենց ձևով» էին մեկնաբանել ջարդերի տարեկիցը: Ավելին, Բուրկը գրում է, որ երբ քաղաքացիներն այս տարի ևս մեկ հիշատակի հավաք անցկացնելու թույլտվություն են խնդրել, Քոչինյանի ռեժիմը մերժել է: Սակայն մեկ տարի առաջ բորբոքված ոգին չէր կարելի ջնջել և պատահական չէր, որ 1966 թ. ապրիլի 24-ին ցուցարարները կրկին հավաքվել են հրապարակում և կրկին հակաթուրքական կարգախոսներ բարձրաձայնել: Այս անգամ ցույցը ցրվել է ոստիկանների կողմից, և շատ մասնակիցներ ոստիկանների կողմից հեռացվել են հրապարակից, ավելին, տեղական «Intourist» հյուրանոցի սենյակներից զբոսաշրջիկների արված ծեծկոտուքի լուսանկարներն էլ առգրավվել էին ոստիկանության կողմից¹⁷: Ա. Քոչինյանի գոր-

¹⁷ St' u **Burke V.**, Demonstrations Commemorate Anniversary of 600,000 Massacred in World War I, The Los Angeles Times, May 30, 1966. <https://latimes.newspapers.com/newspage/382383748/> (21.03.2025)

ծունեությունն է հիշատակվում մեկ այլ պարբերականում: Անդրադարձն ավելի կոնկրետ վերաբերում է Քոչինյանի պաշտոնականությանը: Հեղինակը գրում է, որ ըստ «Պրավդա»-ի, պաշտոնյան հավակնել է իր կենսաթոշակային իրավունքներին, սակայն իրականում վերջին մեկ տարվա ընթացքում Քոչինյանի դիրքերի թուլացման բազմաթիվ նախանշաններ կային, որոնց անդրադարձել էր նաև «Կոմունիստ» օրաթերթը՝ «դատապարտելով «աշխատանքային կարգապահության ցածր մակարդակը և կադրերի ավելորդ շարժունակությունը», կոչ անելով «ուժեղացնել պայքարը օրենքի խախտումների, մանրբուրժուական անհատականության դեմ» և պահանջելով բարելավել «սովետական հայրենասիրության», այսինքն՝ հայկական ազգայնականության դեմ քարոզչությունը»¹⁸:

Անդրադարձ տարբեր համայնքներում կազմակերպված հիշատակի միջոցառումներին

Օտարալեզու մամուլի էջերում բազմաթիվ են հրապարակումները, որտեղ հիմնականում անդրադարձ է Սփյուռքի տարբեր համայնքներում ապրիլի 24-ին կազմակերպված միջոցառումներին: Այս հոդվածներում առավել կարևոր են այն բնորոշումները, որոնք տրվում են Հայոց ցեղասպանության իրողությանը: Այսպես, «The New York Times» թերթի 1965 թ. ապրիլի 25-ի համարում հրապարակում կա՝ «Հայերը նշում են 1915-ի ողբերգական օրը» վերնագրով: Նշվում է, որ գրեթե 2000 հայեր մասնակցել են քայլերթին՝ կրելով «Թուրքիան՝ ցեղասպանության մեղավոր, անպատիժ, չզոջացող», «Թուրքիան՝ ցեղասպանության հեղինակ», «Թուրքիայի կողմից զավթված հայկական հող» պաստառները: Հոդվածում անդրադարձ կա նաև Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի ոգեկոչմանը Լիբանանում¹⁹: Նույն թերթի հաջորդ

¹⁸ Kotchinian J. A. M., chef du P.C. arménien est "libéré de ses fonctions", "Le Monde", 29 novembre 1974.

https://www.lemonde.fr/archives/article/1974/11/29/m-kotchinian-chef-du-p-c-armenien-est-libere-de-ses-fonctions_2528580_1819218.html (26.03.2025)

¹⁹ St 'u Armenians Mark a Tragic 1915 Day, "The New York Times", April 25, 1965.

համարում հստակեցվում է, որ Լիբանանում կազմակերպված միջոցառմանը մասնակցել են այս երկրում հաստատված 150000 հայերից մոտ 50000-ը²⁰: Լիբանանում կազմակերպված հիշատակի միջոցառումներին է անդրադառնում նաև «Երթերը ոգեկոչում են հայերի կոտորածը» վերտառությամբ մի հոդված՝ Միչիգանի «Lansing State Journal» պարբերականում: Հեղինակ Դ. Լանկաշիրը Բեյրութից նշում է, որ այստեղ ապրում են 130.000 հայեր, որոնց շրջանում ապրիլի 24-ին չեղյալ են հայտարարվել ամուսնական խնջույքները, իսկ Սուրբ Զատիկի սովորաբար ուրախ տոնակատարությունները մեղմացվել են²¹:

Բրիտանական «The Guardian»-ը անդրադարձել է Լոնդոնում կազմակերպված միջոցառումներին: Նշվում է, որ Մեծ Բրիտանիայի 4000 հայերի մեծ մասն ապրում է Լոնդոնում (գուցե 300-ը Մանչեսթերում՝ իրենց եկեղեցով), և նրանցից առնվազն մեկ երրորդը մասնակցելու է միջոցառմանը²²:

Մարդաշատ են եղել հատկապես Հարավային Կալիֆորնիայի հայ համայնքի կազմակերպած միջոցառումները: «Gardena Valley News» պարբերականի հաղորդմամբ կոտորածի 50-րդ տարեկին ընդառաջ՝ հայերը ոչ միայն հարգում են զոհերի հիշատակը, այլև հրավիրում են աշխարհի ուշադրությունը, ընդ որում միջոցառումներին հրավիրված էին մասնակցելու Լոս Անջելեսի տարածքում գտնվող բոլոր դավանանքների առաջնորդները և Միավորված ազգերի կազմակերպության ասոցիացիայի անդամները: Հոդվածում Հայոց ցեղասպանությունը բնորոշվում է որպես

<https://timesmachine.nytimes.com/timesmachine/1965/04/25/101541102.html> (21.03.2025)

²⁰Տե՛ս՝ u Massacre of Armenians by Turks Commemorated, "The New York Times", April 26, 1965.

<https://timesmachine.nytimes.com/timesmachine/1965/04/26/101542435.html?page-Number=10> (21.03.2025)

²¹Տե՛ս՝ u Lansing State Journal: April 25, 1965, Lansing, Michigan.

<https://www.newspapers.com/newspage/207388284/> (21.03.2025)

²²Տե՛ս՝ u 1915- Armenians Remember, "The Guardian", April 24, 1965.

<https://theguardian.newspapers.com/newspage/259584233/> (01.04.2025)

«Նոր ժամանակների առաջին քաղաքական կոտորած», նաև՝ «քսաներորդ դարի առաջին ցեղասպանություն»²³:

«Պատմության ամենավայրագ զանգվածային սպանություններից մեկը»՝ այսպես է բնորոշում Հայոց ցեղասպանությունը մեկ այլ պարբերական: Ըստ թերթի՝ հիշատակի միջոցառումներին մասնակցում էր ամբողջ ԱՄՆ՝ այդ թվում, Հարավային Կալիֆորնիայի 150,000 հայությունը²⁴: Ուշագրավ է, որ 50-ամյա տարելիցի հիշատակման միջոցառումները Կալիֆորնիայում շարունակվեցին 1965 թ. ամբողջ ընթացքում, ինչի մասին է վկայում հրապարակումն այն մասին, որ 1965 թ. հոկտեմբերի 24-ին, Ֆրեզնոյի Ռիդլի քաղաքում տեղի կունենա հիշատակի համերգ՝ նվիրված Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցին²⁵: Հայոց ցեղասպանության թեման արծարծվեց նաև հայ վրիժառուներից Սողոմոն Թեհլերյանի հիշատակին նվիրված միջոցառումները լուսաբանելիս: Այսպես, 1965 թ. մայիսի 23-ին Կալիֆորնիայում հրատարակվող թերթերից մեկում լույս է տեսնում ծավալուն մի հոդված Սողոմոն Թեհլերյանի մասին: Հեղինակը գրում է, որ մինչև 1923 թ. «արդարադատություն իրականացնողները» ավարտել էին 1915 թ. ջարդերի համար անմիջականորեն պատասխանատու թուրք պաշտոնյաներին ոչնչացնելու իրենց առաքելությունը²⁶:

²³ American-Armenians Plan Anniversary of 1915 Massacre, "Gardena Valley News", 22 April 1965.

<https://cdnc.ucr.edu/?a=d&d=GVN19650422.1.11&srpos=3&e=-----196-en--20--1--txt-txIN-Armenian+genocide-----#> (01.04.2025)

²⁴ Տե՛ս Armenian Pair Outlive Turk Horror, "Record-Gazette" (Banning), 29 May 1965.

<https://cdnc.ucr.edu/?a=d&d=BRG19650529.2.33&srpos=1&e=-----196-en--20--1--txt-txIN-Armenians+in+Soviet+Armenia-----#> (01.04.2025)

²⁵ Տե՛ս 50th Anniversary of Armenian Martrydom Fete Is Scheduled For Oct 24, "Reedley Exponent", 20 October 1965.

<https://cdnc.ucr.edu/?a=d&d=REE19651020.1.2&srpos=6&e=-----196-en--20--1--txt-txIN-Armenian+genocide-----#> (01.04.2025)

²⁶ Տե՛ս American - Armenians Honor Hero-Patriot, "Gardena Valley News", 23 May 1965. <https://cdnc.ucr.edu/?a=d&d=GVN19650523.1.9> (01.04.2025)

Թերթն իր հաջորդ համարում գրում է, որ Կալիֆորնիայի բոլոր ծայրերից ամերիկահայերը ուխտագնացություն կկատարեն Ֆրեզնո՝ հարգանքի տուրք մատուցելու Սողոմոն Թեհլիրյանի հիշատակին և «ոգեկոչելու Ազատ Անկախ Հայաստանի Հանրապետության հիմնադրման 47-րդ տարեդարձը մայիսի 28-ին»²⁷:

Նշենք, որ այս շրջանում լրատվամիջոցներն իրենց անդրադարձներում հիմնականում Հայոց ցեղասպանությունը բնորոշում էին որպես կոտորածներ, ինչը շեշտվում էր հատկապես հոդվածների վերնագրերում²⁸, նաև հանցագործությունը պարբերականներից մեկը որակեց որպես «պատմական անտանելի իրադարձության»²⁹ և հոդվածներ կային նաև, որոնցում արդեն իսկ շեշտվում էր Հայոց ցեղասպանություն բնորոշումը:

Թերթերում մի քանի անդրադարձ կա նաև Թուրքիայում ապրող հայերի մտահոգությունների վերաբերյալ: Մասնավորապես «The Guardian»-ը Ստամբուլից արված թղթակցության մեջ նշում է, որ թուրքական պաշտոնական շրջանակները զայրացած են հայերի արշավով Լիբանանում և ԱՄՆ-ում: Նաև այստեղի հայերը վախենում են, որ ապրիլի 24-ի արարողությունները կարող են վնասել իրենց ու թուրքերի հարաբերությունները: Նշվում է, որ 60000 հայեր են ապրում Ստամբուլում, իսկ ընդհանրապես Թուրքիայում ապրող հայերի թվաքանակը նշվում է 80,000³⁰:

Արդեն 1960-ականների վերջերից և հատկապես 1970-

²⁷ Armenian-American Tribute in Fresno, “Gardena Valley News”, 30 May 1965.
<https://cdnc.ucr.edu/?a=d&d=GVN19650530.1.6&srpos=9&e=-----196-en--20--1--txt-txIN-Armenian+genocide-----#>

²⁸ Տե՛ս Rites Will Memorialize Massacre of Armenians, “The Los Angeles Times”, April 24, 1965.
<https://latimes.newspapers.com/image/382343008/?match=1&terms=Armenians>
(21.03.2025)

²⁹ Le massacre des Arméniens de Turquie, “Le Monde”, 12 avril 1973.
https://www.lemonde.fr/archives/article/1973/04/12/le-massacre-des-armeniens-de-turquie_2545188_1819218.html

³⁰ Տե՛ս “The Guardian”, April 19, 1965. (26.03.2025)
<https://theguardian.newspapers.com/newspage/259581845/> (01.04.2025)

ականներին Հայոց ցեղասպանությանը նվիրված միջոցառումների շրջանակում ներառվում է տարբեր համայնքներում կառուցվող հուշարձանների բացման արարողությունների վերաբերյալ լրատվություն: Նման հրապարակումներ ենք հանդիպում հատկապես ֆրանսիական «Le Monde»-ի էջերում: Հոդվածներից մեկում հայտարարվում է հուշարձանի բացման մասին Մարսելում, նաև շեշտվում է այն հանգամանքը, որ կազմակերպիչները հավաստիացրել են, որ «վիրավորական արտահայտություններ չեն հայտնվի հուշարձանի վրա»՝ նկատի ու

նենալով ցեղասպանություն եզրույթը: Հոդվածում հիշատակվում է նաև 1965 թ. Սան Պաուլոյում, 1968 թ.՝ Կալիֆոռնիայի Մոնտբելոյում, 1970 թ.՝ Բեյրութում և 1972 թ.՝ Լիոնի մոտ գտնվող Դեսին քաղաքում նման հուշարձանների բացման մասին³¹:

Ժխտողական անդրադարձներ և դրանց հակադարձող հրապարակումներ

Նշենք, որ 1965-66 թթ. հիշատակի միջոցառումները բացառիկ հնարավորություն էին կրկին միջազգային հանրությանը՝ հիշեցնելու Հայոց ցեղասպանության իրողության, դրա դատապարտման անհրաժեշտության մասին: Պատահական չէ, որ այս միտումներին զուգահեռ թուրքական կողմը պետք է ակտիվացներ իր ժխտողական քաղաքականությունը, ինչն իր արտացոլումը գտավ նաև մամուլի էջերում: Այս առումով հիշարժան էր հատկապես ԱՄՆ-ում Թուրքիայի դեսպանատան տեղեկատվական խորհրդական Ալթեմուր Քըլըչի 1965 թ. ապրիլի 26-ով թվագրված նամակի հրապարակումը «The New York Times» թերթում: Նամակի շեշտադրությունը երկակի ուղղվածություն ուներ, մի կողմից Քըլըչը հայերի մասին արտահայտվում էր որպես տաղանդա-

³¹ St 'u Paris aurait assuré Ankara que des "termes blessants" ne figureraient pas sur le monument arménien de Marseille, "Le Monde", 16 février 1973.

https://www.lemonde.fr/archives/article/1973/02/16/paris-aurait-assure-ankara-que-des-termes-blessants-ne-figureraient-pas-sur-le-monument-armenien-de-marseille_2570632_1819218.html (26.03.2025)

վոր ու հիշարժան ժողովրդի, որը մեծ ներդրում ունի թուրքերի հետ ընդհանուր ժառանգության մեջ և որ ժամանակակից հանրապետությունում հայերը որպես հավասար և խտրականության չենթարկվող քաղաքացիներ են: Մյուս կողմից, հեղինակը նշում էր, որ յուրաքանչյուր պատմություն ունի ամենաքիչը երկու կողմ, սակայն հին ու վատ հիշողությունները վերհանելը և շատ տարիներ ու սերունդներ առաջ կատարված ողբերգական իրադարձությունների մեղքը մի կողմի վրա դնելը գործնական քայլ չէ: Լավագույնը, ըստ Քըլլչի որ կարող ենք անել, դա «այդ մութ օրերը մոռանալն է և լուսավոր ապագայի ձգտելը ավելի լավ աշխարհում Թուրքիայի բոլոր քաղաքացիների համար»³²:

Կարևոր էր, որ վերոհիշյալ հրապարակումից մի քանի օր անց թերթի մեկ այլ համարում հրապարակվում է Գ. Նիկոսյանի պատասխան նամակը Քըլլչին: Նամակի հիմնական շեշտադրությունն այն է, որ եթե ժամանակին աշխարհը ճիշտ ու տեղին արձագանքեր Հայոց ցեղասպանությանը, ապա հնարավոր կլիներ կանխել 6 միլիոն հրեաների ցեղասպանությունը³³: Այս հրապարակման կարևորությունը կայանում էր նրանում, որ Ժխտողականությանն անմիջապես հակադարձվում է հավասարակշռված, փաստագրված պատասխանը, ինչը բնորոշ էր 1960-70-ականներին: Նման մի հակադարձման օրինակ էր նաև «Le Monde»-ի մի հրապարակում, որը թերթի մայիսի 2-ին համարում տպագրված տիկին Ջեյն Լարոշի հեղինակած հոդվածին էր վերաբերում, ինչը մեծ արձագանք և ընդվզում էր առաջացրել հայ ընթերցողների շրջանում: Պատասխան նամակի հեղինակը Արմեն Բարսեղյանն էր, ով Հայոց ցեղասպանության ոգեկոչման կոմիտեի անունից գրում է, որ իրենց նպատակը չէ անդրադառնալ Լարոշի

³² **Kilic A.**, Turkish Citizens All, "The New York Times", May 4, 1965.

<https://timesmachine.nytimes.com/timesmachine/1965/05/04/101544070.html?pageNumber=42> (21.03.2025)

³³ St 'u **Nigosian G.**, Slaughter of Armenians, "The New York Times", May 13, 1965. <https://timesmachine.nytimes.com/timesmachine/1965/05/13/97200823.html?pageNumber=36> (21.03.2025)

տեքստում եղած անճշտություններին, այլ նախևառաջ այն թեզին, որ հայ ժողովրդի կրած ցեղասպանությունը հետևանք էր «զայրության պայթյունի», այն է՝ «ապստամբության»: Հեղինակը շեշտում է, որ այս թեզը բացարձակապես կեղծ է և կրկնում է թուրքերի կողմից կազմակերպված ինտենսիվ քարոզչությունը: Իրականում ապստամբություն չէր եղել, այլ ընդամենը՝ հուսահատ ու տեղայնացված դիմադրություն: Ավելին, հայերի դեմ իրականացվել է ոչ թե ռեպրեսիա, այլ վաղուց խնամքով ծրագրված բնաջնջում³⁴:

Չնայած 1965-66 թթ. միջոցառումների արձագանքին՝ այնուամենայնիվ, Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման խնդիրը օրակարգում հայտնվեց ավելի ուշ: Մասնավորապես, Ֆրանսիայում Մեծ եղեռնի 65-ամյա տարելիցի միջոցառումները լուսաբանելիս արձանագրվում էր, որ նախևառաջ պետք է, որ թուրքական կառավարությունը ճանաչի հայերի ցեղասպանության փաստը: Մինչդեռ, Ժնևում գտնվող ՄԱԿ-ի Մարդու իրավունքների հանձնաժողովը հինգ տարի շարունակ հետաձգում էր ցեղասպանության հանցագործության կանխարգելման և պատժի մասին «նախնական զեկույցում» ներառել անդրադարձը «քսաներորդ դարի առաջին ցեղասպանությանը», քանի որ Թուրքիան պահանջել էր ջնջել այս պարբերությունը³⁵: Ավելին, արդեն իսկ մեջբերված մի քանի հրապարակումներում փոխարենը ընդունելու կատարված հանցագործության եղելությունն ու դատապարտելու այն, հնչում էին հայերին ուղղված հորդորներ՝

³⁴ St 'u Répliques á Mme Jane Laroche une mise au point: "Il n'y a jamais eu d'insurrection", "Le Monde", 26 Mai 1979.

https://www.lemonde.fr/archives/article/1979/05/26/repliques-a-mme-jane-laroche-une-mise-au-point-il-n-y-a-jamais-eu-d-insurrection_3054587_1819218.html
(26.03.2025)

³⁵ St 'u **Bousoglou A.**, Le 65e anniversaire de l'extermination d'un million et demi d'Arméniens, "Le Monde", 25 avril 1980.

https://www.lemonde.fr/archives/article/1980/04/25/le-65e-anniversaire-de-l-extermination-d-un-million-et-demi-d-armeniens_2803326_1819218.html
(26.03.2025)

մոռանալու եղածը և ներելու թուրքերին: Կարծում ենք, նման հորդորների լավագույն պատասխանը Հայոց ցեղապատմության վերապրածների զավակ Տ. Հանեյանի նամակն էր, որ տպագրվեց «The New York Times» պարբերականում: Հանեյանը գրում էր, որ գուցե հայ ժողովուրդը ների թուրքերին իրենց վայրագությունների համար, բայց դա հնարավոր է միայն ապագայում, երբ իրապես ժամանակակից ու առաջադեմ թուրքական ռեժիմը կհայցի այդ ներողամտությունը³⁶:

Եզրակացություն

Այսպիսով, վերլուծելով 1960-70-ականների արտասահմանյան մամուլի հրապարակումները՝ նվիրված Հայոց ցեղասպանության 50-ամյա տարելիցին, ակնհայտ է դառնում, որ թեև դրանց մեծ մասը վերաբերում են կազմակերպվող միջոցառումներին, սակայն կան մի շարք հրապարակումներ, որտեղ ներկայացվում է Հայոց ցեղասպանության պատմությունը, ընթացքն ու հետևանքները՝ ընդ որում երբեմն նաև ամբողջ հայոց պատմության համատեքստում: Ուշագրավ է, որ չեն հանդիպում ակնհայտ ժխտողական հրապարակումներ, այլ դրանցում ավելի հաճախ օգտագործվում էր իրողությունները անուղակի խառնելու, շփոթեցնելու միտումները: Կարևոր է, որ նշված հոդվածներին ժամանակին տրվում էին պարզաբանումներ ու հակափաստարկներ նույն լրատվականների հաջորդ համարներում:

Կարելի է արձանագրել, որ օտարալեզու մամուլը 1965-1966 թթ. ապրիլի 24-ի իրադարձությունները, ինչպես Խորհրդային Հայաստանում, այնպես էլ Սփյուռքի տարբեր համայնքներում, մեկնաբանել է որպես Մեծ եղեռնի հիշատակման միջոցառումներ՝ եզակի ակնարկներով միայն կոնկրետ Խորհրդային Հայաստանի դեպքերը ներկայացնելով որպես այլախոհական

³⁶ St' u **Hanesian D.**, Armenian Genocide, "The New York Times", May 1, 1965.
<https://timesmachine.nytimes.com/timesmachine/1965/05/01/106991823.html?pageNumber=30> (21.03.2025)

շարժման մի մասը: Միննույն ժամանակ, ակնհայտ է, որ ի տարբերություն խորհրդային, նաև հայաստանյան մամուլի, արտասահմանյան լրատվականների արձագանքը մեծ զարթոնքին եղել է ավելի կազմակերպված, ավելի ինֆորմատիվ ու նպատակային: Արդյունքում, օտարազգի հանրության շրջանում Հայոց ցեղասպանության խնդիրը նոր հնչեղություն է ստացել, բարձրացվել է իրազեկվածությունը խնդրի շուրջ, նաև հող է նախապատրաստվել Հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման գործընթացի համար:

Арпине Баблумян

Армения, к.и.н., Институт истории НАН

arpinebablumyan05@gmail.com

ORCID: 0009-0001-7840-1440

ОСВЕЩЕНИЕ ТЕМЫ ГЕНОЦИДА АРМЯН В ЗАРУБЕЖНОЙ ПРЕССЕ (1965-1970-Е ГОДЫ)

Ключевые слова: Геноцид армян, национальное пробуждение, пресса, диаспора, 24 апреля, Советская Армения, поминовение.

1965 год стал переломным моментом в истории армянского народа: поминовение 50-летия Геноцида армян придало этой проблематике новую политическую и общественную значимость как в Советской Армении, так и в различных центрах армянской диаспоры. В статье предпринята попытка проанализировать особенности освещения данной темы в зарубежной периодике 1965–1970-х годов. В рамках исследования были рассмотрены публикации ряда европейских и американских изданий - как ведущих, так и региональных средств массовой информации. Большинство газетных материалов этого периода было посвящено освещению памятных мероприятий, приуроченных к 50-летию Геноцида армян. Вместе с тем в прессе представлены материалы, в которых рассматриваются исторические предпосылки, ход

событий и последствия Геноцида армян, нередко в контексте общей истории Армении.

Примечательно, что прямое отрицание факта Геноцида в этих публикациях, как правило, отсутствует, однако, в ряде случаев можно отметить попытки косвенного искажения, смещения акцентов или умалчивания ключевых обстоятельств. Важно отметить, что на спорные публикации своевременно представлялись разъяснения, приводились контраргументы в последующих выпусках тех же информационных изданий. В то же время очевидно, что, в отличие от советской и, в частности, армянской прессы, реакция зарубежных СМИ на Национальное пробуждение армянского народа была более организованной, информативной и целенаправленной. В результате тема Геноцида армян получила новый резонанс в зарубежной общественности, вырос уровень её информированности, а также была подготовлена почва для дальнейшего процесса международного признания и осуждения Геноцида армян.

Arpine Bablumyan

Armenia, PhD in History,
Institute of History of NAS
arpinebablumyan05@gmail.com
ORCID: 0009-0001-7840-1440

THE COVERAGE OF THE ARMENIAN GENOCIDE IN THE FOREIGN PRESS (1965-1970S)

Keywords: The Armenian Genocide, National Awakening, press, diaspora, April 24, Soviet Armenia, commemoration.

1965 marked a turning point in the history of the Armenian people: the commemoration of the 50th anniversary of the Armenian Genocide brought new political and social significance to the issue, both in Soviet

Armenia and in various centers of the Armenian diaspora. This article seeks to analyze how this topic was covered in foreign periodicals during the 1965–1970s. The study examines publications from a range of European and American media outlets — including both major and regional sources. Most newspaper articles from this period focused on the commemorative events organized in connection with the 50th anniversary of the Armenian Genocide. At the same time, several publications addressed the historical context, the course of events, and the consequences of the Genocide, often within the broader framework of Armenian history. Notably, these publications did not include direct denial of the Genocide; however, in some cases, there were attempts to distort the narrative indirectly, shift the focus, or obscure key facts. It is also important to note that such articles were often followed by timely clarifications and counterarguments in subsequent issues of the same media outlets. Furthermore, it is evident that, in contrast to the Soviet and in particular Armenian press, the response of foreign media to the National Awakening was more organized, informative, and targeted. As a result, the issue of the Armenian Genocide gained new resonance among the international public, contributing to greater awareness and laying the groundwork for its recognition and condemnation.

Մարիամ Հովսեփյան
Հայաստան, ք.գ.թ., ԳԱԱ ՊԻ
mariamhovsepian@mail.ru
ORCID: 0009-0005-9696-4246

**ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՋԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԼԻԲԱՆԱՆԱՀԱՅ
ՄԱՍՈՒԼԻ ԷԶԵՐՈՒՄ («ԱԶԴԱԿ», «ԱՐԱՐԱՏ», «ԶԱՐԹՈՆՔ»
ԹԵՐԹԵՐԻ 1965 Թ. ԱՊՐԻԼՅԱՆ ՀՐԱՊԱՐԱԿՈՒՄՆԵՐԻ
ՀԻՄՆԱՆ ՎՐԱ)**

Հիմնադրանք՝ «Ազդակ» օրաթերթ, «Արարատ» օրաթերթ, «Զարթոնք» օրաթերթ, լիբանանահայ մամուլ, Հայոց ցեղասպանություն, հայոց պահանջատիրություն, թուրքական ժխտողականություն:

Հայոց ցեղասպանության տարիներին և դրանից հետո թուրքական իշխանությունները հետևողականորեն վարեցին այն քաղաքականությունը, որի համաձայն՝ հայրենիքից բռնի տեղահանված և կոտորածները վերապրած հայերը չկարողանային վերադառնալ իրենց հայրենի բնակավայրերը: Այդ նպատակով ոչ միայն տարվում էր քարոզչական աշխատանք, նրանց ներկայացնելով իբրև Թուրքիա պետությանը դավաճանած և անշնորհակալ ժողովրդի, այլև ընդունվում էին օրենքներ՝ հայերի վերադարձն արգելելու, ինչպես նաև նրանց ունեցվածքը հոգուտ պետության բռնագրավելու համար: Այս կապակցությամբ հիշատակենք հետևյալ փաստերը: 1923 թ. ապրիլի 15-ին Թուրքիայի խորհրդարանն ընդունել էր «Լքյալ գույքի մասին» օրենք, ըստ որի՝ այդ երկրում չբնակվող հայերի գույքը ենթակա էր բռնագրավման: Ընդ որում, հաշվի չէր առնվում, թե ինչ պայմաններից ելնելով էին նրանք հեռացել բնօրրան հայրենիքից՝ Արևմտյան Հայաստանից ու նախկինում հայաբնակ այլ բնակավայրերից: Որպես լրացում այս օրենքի՝ 1926 թ. փետրվարի 2-ին ընդունված մեկ այլ օրենքով

արգելվում էր հայերին վերադառնալ մինչև Լոզանի պայմանագիրն ուժի մեջ մտնելը (1924 թ. օգոստոսի 19-ը) նրանցից արդեն բռնագրավված ունեցվածքն ու գույքը: 1923 թ. սեպտեմբերին «Հաշվառման մասին» օրենքի երկրորդ կետում կատարված փոփոխությամբ արգելվում էր Թուրքիա վերադառնալ այն հայերին, որոնք հեռացել էին Արևմտյան Հայաստանից ու Կիլիկիայից՝ նշելով կեղծ փաստարկ. հայերն իրենց կամքով էին արտագաղթել: 1927 թ. մայիսին ընդունված կառավարության օրենքի համաձայն էլ Թուրքիայի քաղաքացիություն չէին ստանում այն անձինք, այդ թվում՝ հայերը, որոնք երկրի տարածքից բացակայել էին 1923-1927 թթ.¹: 1935-1936 թթ. ընդունված կալվածքների մասին օրենքն ու հայտարարագիրը, նաև 1970-ականներին Վճռաբեկ դատարանի Իրավական խորհրդի կայացրած որոշումը Թուրքիայի հայ համայնքի ձեռքից խլեցին համայնքային կալվածքների մեծ մասը²: Թուրքական իշխանությունների որդեգրած այս քաղաքականությունը, բնական է, որ պետք է իր ազդեցությունն ունենար տարագիր արևմտահայերի հոգեվիճակի ու դրսևորելիք վարքագծի վրա: Մայր հայրենիքից բռնի կերպով դուրս քշված հայությունն ապաստանել էր իր բնակության վայրերին մոտ երկրներում՝ հույսով հավատալով աշխարհաքաղաքական նպաստավոր հանգամանքների դեպքում վերադառնալ սեփական տները: 1918-1920-ականների կեսին այդ հույսն ամրապնդվում էր Հայաստանի Առաջին հանրապետության հիմնադրմամբ, Սևրի պայմանագրով, Կ. Պոլսում երիտթուրքերի դատավարության մեկնարկով: Թուրքական իշխանություններն աչալուրջ էին, և դիվանագիտական հմուտ ու փորձառու քաղաքականության շնորհիվ այնպիսի քայլեր ձեռնարկեցին, որոնց հետևանքով գաղթական հայության թվաքանակը հարաբերականորեն նվազեց մասնավորապես Սի-

¹ Տե՛ս «Թուրքիայի Հանրապետության պատմություն», Եր., 2014, էջ 78:

² Տե՛ս նույն տեղում, էջ 79:

րիայում և Լիբանանում: Հիշատակենք Կարլեն Դալլաքյանի հետևյալ փաստարկված պնդումը. «Աշխարհագրականորեն իր տարածքին մերձակա շրջաններում հայության կենտրոնացումը Թուրքիան գնահատեց իբրև հնարավոր վտանգ իր սահմաններին ... 1919 թ. փետրվարին, կազմակերպելով հայերի ջարդը Հալեպում արաբ լյումպենի ձեռքով, Թուրքիայում աստիճանաբար սկսեց ձևավորվել Սիրիայից ու Լիբանանից առհասարակ հայության վտարման մտայնությունը, որն ամբողջանալով, պիտի վերաճեր պետական քաղաքականության: Քաղաքականություն, որն ուղղվեց Թուրքիան շրջապատող տարածքները հայաթափելու գործին և որը, փաստորեն, մնաց շարունակական ընթացքի մեջ»³: Տեղին է նկատել, որ մենք թուրքական այդ քաղաքականության դրսևորման ներկայիս փուլի ականատեսն ու վկան ենք: Հետևողականորեն և մշակված ծրագրով սասանվեցին ու թուլացան սիրիահայ և լիբանանահայ ժամանակին ուժեղ և ամուր համայնքները:

Ինչ վերաբերում է 1920-ականների երկրորդ կեսին, ապա այդ ժամանակահատվածում և հետագա տարիներին դեպքերի հետագա զարգացումն ի դերն է հանում տարագրված արևմտահայերի հայրենադարձության հույսը, թեև արդեն ձևավորվող սփյուռքյան կառույցները կազմակերպված պայքար են սկսում Հայոց ցեղասպանության իրողության մասին համաշխարհային հանրությանն ու միջազգային կառույցներին տեղյակ պահելու, այդ հանցագործությունը նրանց դատապարտմանն արժանացնելու, հայության վնասների փոխհատուցմանը հասնելու և ամենակարևորը՝ հայրենիք վերադառնալու ուղղությամբ: Բավական բարդ էր այդ գործընթացը, լի խոչընդոտներով, կասկածներով և պառակտումով: 1929 թ. «Հառաջ» թերթում տպագրվում է համագլխին համախմբման կոչ⁴: Այս շրջանում սկսում է քննարկվել հա-

³ «Հայոց պատմություն», Եր., 2010, էջ 627:

⁴ Տե՛ս «Հառաջ», Բեյրութ, 02.03.1929:

մասփյուռքյան մարմին հիմնելու հարցը գրեթե բոլոր հայկական համայնքներում: Ավանդական ազգային կուսակցությունները փորձում են մի կողմ թողնել գաղափարական տարաձայնությունները՝ հանուն հայոց պահանջատիրությանը նպաստող այս կարևոր նպատակի: Համարյա բոլոր երկրներում, որոնցում Մեծ եղեռնից հետո հաստատվել էին գաղթական արևմտահայերը, ձևավորվում են ազգային ճակատներ կամ խորհուրդներ⁵: Դրանք ակտիվ գործունեություն են ծավալում հատկապես 1940-ականներին և մասնավորապես Երկրորդ աշխարհամարտի տարիներին, երբ կրկին միջազգային դիվանագիտության ասպարեզում էր հայտնվել Հայկական հարցը: Այս փուլում խորհրդային իշխանությունների շահերին համահունչ էր հայոց պահանջատիրության խնդրի արժարծումբը: Նրանց համաձայնությամբ էր, որ ամենայն հայոց Գևորգ VI Չորեքյան կաթողիկոսը նույնպես ներգրավվում է Խորհրդային Միության, Մեծ Բրիտանիայի, Միացյալ Նահանգների ղեկավարներին, ՄԱԿ-ի Գլխավոր համաժողովի Փարիզյան նստաշրջանին ուղղված դիմումներ կազմելու և ուղարկելու գործում: 1945 թ. ապրիլի 11-ին Կահիրեում աշխատող բրիտանացի մի խումբ դիվանագետներ իրենց երկրի արտգործնախարար Ա. Իդենին գրած նամակում ներկայացնում են սփյուռքահայերի շրջանում տիրող տրամադրությունները. «Հայերը երազում են Թուրքիայից ազատագրված տեսնել հայկական նահանգները և միացված Հայկական Խորհրդային Հանրապետության հետ»⁶: Ավելին, 1945 թ. հունիսի 15-ին Երևանում հրատարակվող «Սովետական Հայաստան» թերթը տպագրում է⁷ նույն թվականի մայիսի 7-ին ՄԱԿ-ի հիմնադիր Սան Ֆրանցիսկոյի նստաշրջանին Ամերիկահայ ազգային խորհրդի կողմից ներկայացված «Հայ ժողովրդի գործը» վերնագրով հուշագիրը⁸: Խորհրդային Հայաս-

⁵ Տե՛ս **Մելքոնյան Ա.**, Հայոց պատմություն (համառոտ ակնարկ), Եր., 2018, էջ 32:

⁶ Նույն տեղում, էջ 30:

⁷ Տե՛ս «Սովետական Հայաստան», Երևան, 15.06. 1945:

⁸ Տե՛ս **Մելքոնյան Ա.**, նշվ. աշխ., էջ 36-38:

տանում որպես լիիրավ քաղաքացիներ ապրում էին եղեռնից մազապուրծ տասնյակ հազարավոր արևմտահայեր, որոնք իրենց մնացած հայրենակիցների հետ բուռն կերպով են արձագանքում Արևմտյան Հայաստանի հողերը Խորհրդային Հայաստանին միացնելու պահանջն արտահայտող այդ հուշագրին:

Հայկական սփյուռքում սկսված ազգային ուժերի միասնության և համազգային պահանջատիրության շարժումը թափ է հավաքում ու դառնում է վերազարթոնքի ազդանշան 1960-ականներին: Որպես ազդակ հանդիսացան թե՛ տարբեր հյուրընկալ երկրներում Հայ դատին հետամուտ կազմակերպությունների իրականացրած արդյունավետ գործունեությունը, թե՛ ԽՍՀՄ-ի վարած արտաքին քաղաքականությունը, որտեղ կրկին մեջտեղ էր բերվում Հայկական հարցը: Նպաստավոր գործոնների մեջ իրենց տեղն ունեին Խորհրդային Հայաստանի ղեկավար կազմում ազգային մտածողության տեղ անձանց ընդգրկումը և հասարակական ու մշակութային կյանքում Հայոց ցեղասպանության թեմային անդրադարձն ու կարևորումը⁹: Տասնամյակներով քննչված ժողովրդական ցասման հրաբուխը պոռթկաց 1965 թ. ապրիլի 24-ին, երբ Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցի կապակցությամբ հուզումներ, հավաքներ ու ցույցեր տեղի ունեցան Երևանում և Սփյուռքում: ԽՄԿԿ Քաղբյուրոն թույլատրել էր, որ Խորհրդային Հայաստանում նշվեր այդ տարելիցը՝ հանձնարարելով կազմակերպել դասախոսություններ, զանգվածային լրատվամիջոցներով դատապարտել թուրքական իշխանությունների իրականացրած ցեղասպանական քաղաքականությունը, հարգանքի տուրք մատուցել Մեծ եղեռնի զոհերի հիշատակին և Սփյուռքի մամուլում ներկայացնել խորհրդահայ իրականության նվաճումներն ու ձեռքբերումները¹⁰:

Համազգային այս հուժկու պահանջատիրական շարժումը Հայկական հարցի լուծման հույսեր արթնացրեց հատկապես

⁹Տե՛ս «Հայոց պատմություն», հ. IV, գիրք երկրորդ, Եր., 2016, էջ 107:

¹⁰ Տե՛ս նույն տեղում, էջ 115-116:

Սփյուռքում, որտեղ Հայ դատի բարձրաձայնման գործում մասնավորապես աչքի էին ընկնում ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Սիրիայում ու Լիբանանում ձևավորված համապատասխան կառույցները: Դեռևս 1945 թ. օգոստոսի 31-ին Բեյրութում հիմնվել էր Սիրիայի ու Լիբանանի Հայ ազգային խորհուրդը, որի նախագահը Ա.Մանվելյանն էր: Հայ դատի խնդրով զբաղվող այս մարմինն իր նպատակներն ամփոփող կոչում համաձայնություն էր հայտնել Ամերիկայի Հայ ազգային խորհրդի կողմից ՄԱԿ-ի Սան Ֆրանցիսկոյի ժողովին ուղարկված հուշագրի դրույթներին¹¹: Այս կազմակերպությունը տարիների ընթացքում Բեյրութում, Հալեպում, Դամասկոսում և այլ քաղաքներում կազմակերպել էր հանրահավաքներ, որոնց մասնակցել էին տասնյակ հազարավոր հայեր: Բնականաբար, այս տրամադրություններն ու անցկացվող միջոցառումների մասին տեղեկատվությունն իրենց արձագանքն են գտել Սիրիայի ու Լիբանանի հայ մամուլի էջերում: Դրանց մեջ իրենց հրապարակումների բույլով և ընթերցող լսարանի վրա ունեցած մեծ ազդեցությամբ աչքի էին ընկնում Բեյրութում հրատարակված հայ ավանդական կուսակցությունների պաշտոնաթերթեր «Ազդակը» (ՀՅԴ), «Արարատը» (ՄԴՀԿ) և «Զարթոնքը» (ՌԱԿ): Հիմնվելով այս պարբերականների 1965 թ. ապրիլ ամսվա հրապարակումների ուսումնասիրության արդյունքների վրա՝ կարող ենք փաստել, որ Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և պահանջատիրության ոգին միավորել ու միասնական էր դարձրել ավանդական կուսակցություններին Հայ դատի պաշտպանության հարցում: Դա բավական բարդ ու դժվար իրականացվող խնդիր էր հայկական սփյուռքում, որտեղ համայնքային կյանքում ղեկավար դիրքերում առաջամարտիկ երևալու կամ լինելու մոլուցքը տասնամյակներ շարունակ, անգամ մեր օրերում, շատ դեպքերում խանգարում է խելամիտ որոշումներ կայացնել հանուն Հայկական հարցի լուծման ու հանուն հայապահպանական

¹¹ Տե՛ս «Ժողովրդի ձայն», Բեյրութ, 02.09.1945:

համատեղ ծրագրերի կենսագործման:

«Ազդակը», «Զարթոնքը» և «Արարատը» մի շարք համարներում և ապրիլքսանչորսյան բացառիկ թողարկումների մեջ հանգամանորեն անդրադարձել են Հայոց ցեղասպանության պատմությանը, փուլերին, դրվագներին: Ներկայացրել են վերլուծական հոդվածներ թուրքական իշխանությունների կողմից մտահղացված այս ոճիրի պատճառների ու հետևանքների մասին: Պատկերացում են տվել հանուն գոյատևման գաղթականների մղած մաքառումների, նրանց տեղաշարժի, հաստատման վայրերի, սփյուռքի ձևավորման և հայապահպանման աշխատանքների վերաբերյալ: Կան Վանում և այլ վայրերում արևմտահայերի հերոսական դիմադրության և ինքնապաշտպանական մարտերին նվիրված նյութեր: Հայության կրած նյութական և հոգևոր կորուստների վերաբերյալ հրապարակումները ևս իրենց տեղ են գտել թերթերի էջերում: Ավելին, նաև բարձրաձայնվել են արևմտահայերի վնասների հատուցման, հայերի՝ Արևմտյան Հայաստանի վերադառնալու ու այն Խորհրդային Հայաստանին միացնելու պահանջները:

Պետք է փաստենք, որ Հայկական հարցի լուծման համար այս թերթերում առաջարկվող տարբերակները ներկայացնելիս հաշվի չէր առնվում նախորդ դառը փորձը, պատմությունից դասեր չէին քաղում՝ նորից դիմումներ ու պահանջագրեր ներկայացնելով աշխարհի հզոր պետություններին, միջազգային կառույցներին և հատկապես չէին խորանում խորհրդային իշխանությունների քաղաքական ու դիվանագիտական բուն նպատակների և հետապնդած շահերի առումով: Երեք կուսակցությունների պաշտոնաթերթերը լուսաբանել են Սիրիայի, Լիբանանի և այլ երկրների հայկական համայնքների կողմից Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցի կապակցությամբ իրականացված միջոցառումները: Այդ բովանդակությամբ լուրեր են արտատպել խորհրդահայ թերթերից, որոնց շնորհիվ իրենց ընթերցողներին տեղեկացրել են Հայաստանի տարբեր վայրերում, հաստատություններում և հիմնարկներում անցկացված միջոցառումների մասին: Խմբագրակազմերի

ուշադրությունից չեն վրիպել Հայաստանում ու սփյուռքում կազմակերպված հիսնամյա տարելիցի միջոցառումների, միտինգների, բողոքի ակցիաների, հանրահավաքների մասին թուրքական մամուլի անդրադարձը, որոնց իրենց վերլուծաբանները տվել են համարժեք մեկնաբանություն և փաստարկված համարժեք պատասխան:

Վերլուծական հոդվածների բույլից կարելի է առանձնացնել «Զարթոնքի» էջերում տեղ գտածները, որոնք աչքի են ընկնում իրենց գիտականությամբ: Այս պարբերականում նաև տպագրել են օտարազգի անվանի դիվանագետների, Մեծ եղեռնը վերապրած հայ մտավորականների հուշագրային մենագրությունները, որոնք Հայոց ցեղասպանության վավերագիր սկզբնաղբյուրի արժեք ունեն: Այդ հրապարակումներից իբրև օրինակ հիշատակենք Յոհաննես Լեփսիուսի՝ «Հայաստանի ջարդերը», Ջեյմս Բրայսի՝ «1915-ի տարագրությունը», Արամ Անտոնյանի՝ «Մեծ ոճիրը» և այլ գրքեր: «Զարթոնքի» խմբագրակազմը համոզված էր, որ Հայ դատն արդար է, իսկ այդ գիտակցումով Մեծ եղեռնի հիսնակյա տարելիցի միջոցառումների մասնակիցները հավատում էին, որ ապրիլի 24-ը հայության համար այլևս լոկ սուգի օր չէր լինելու, այլև՝ պայքարի և իր հարության մասին ազդարարող օր. «Թշնամին, անտարբերն ու բարեկամը պիտի լսեն, տեսնեն ու հաստատեն թեկանք ու պիտի ըլլանք աւելի՛, քան երբեք»¹²: «Ցեղասպանության հանցանքը և հատուցման օրենքը» վերնագրով խմբագրական-վերլուծական հոդվածում թերթը նկատում էր, որ թուրքական իշխանությունները չհասան հայերին մեկընդմիջոց ցեղասպանելու և Հայկական հարցը վերջնակաորեն լուծելու իրենց նպատակներին: Նշվում էր, որ Հայկական հարցը մասնակիորեն լուծվել էր Խորհրդային Հայաստանի գոյության փաստով: «Այսօր հայը կա՛յ. . . Եւ արդարասէր, ինքնավստահ ու խելացի հայը, որ աշխարհի

¹² «Պիտի լսեն, տեսնեն և հաստատեն», «Զարթոնք», Բեյրութ, 1965, №172 (8212):

դիմաց կանգնած է ահա, եւ կը պահանջէ հատուցում, կը պահանջէ իր անառարկելի ժառանգութիւնը, իր իրաւունքները, իր հողէ՝րը: Վերապրող արեւմտահայը, սփիւռքի՝ հայը, հայրենաբնա՝ կ'արեւմտահայը, արեւելահա՛յը,- նո՛յն հայը՝ ՊԱՀԱՆՋԱՏԷՐ, հետա՛մուտ իր հսկայ ժառանգութեան»¹³, - կարդում ենք այդ հոդվածում: Այդտեղ վկայակոչելով 1946 թ.ՄԱԿ-ի Ընդհանուր ժողովում ընդունած Ցեղասպանությունը դատապարտող բանաձևը՝ գրում էին, որ հայերը կարող են հասնել իրենց նկատմամբ իրականացված ցեղասպանության դատապարտմանը, հանցավորների պատժմանը և հայության կրած վնասների հատուցմանը: Պարբերականը հիշատակում է արևմտահայերի ոչնչացնելու՝ երիտթուրքական պարագլուխների հեռագրերն ու հրամանագրերը, դրանց մասին օտարերկրյա դիվանագետների, ականատես վկաների, ցեղասպանությունը վերապրած հայերի վկայությունները: Հայերին ոչ միայն սպանեցին, այլև բռնությամբ տեղահանեցին նրանց իսկ հայրենիքից: Ի հեճուկս թուրքական հայաջինջ ծրագրի՝ «Զարթոնքը» եզրակացնում է հետևյալը. «Կանգնած ենք այսօր շուրջ հինգ միլիոն կենսունակ և քաջառողջ հայ, կանգնած մէկ հոգիի պէս, ու կը խոնարհինք մեր նահատակներու յիշատակին առջեւ, բայց չենք գոհանար միայն խունկ ու աղօթքով եւ յարգանքով, այլ կը վճռենք հաւատարիմ ըլլալ նահատակներու սրբազան առաքելութեան, ու կը պահանջենք թուրքէն ու աշխարհէն՝ հատուցում, արդարութիւն: Եւ կ'ուխտենք տոկալ, յամառիլ ու յարատեւել, կ'ուխտենք պահանջել մեր իրաւունքները մինչեւ որ տիրանաք անոնց, մինչեւ որ իրականանայ մեր սուրբ նահատակներուն Մեծ Երազը: Հայ ժողովուրդը ահա ա՛յս ոգիով կը նշէ Մեծ դէռնին յիսնամեակը: Կեցցե՛՛ յաւերժ հայ ժողովուրդը»¹⁴: «Ազդակի» նյութերին հատուկ է հուզականությունը, զգացմունքայնու-

¹³ «Ցեղասպանության հանցանքը և հատուցման օրենքը», «Զարթոնք», Բեյրութ, 1965, №173 (8213):

¹⁴ «Զարթոնք», Բեյրութ, 1965, №173 (8213) «Ցեղասպանության հանցանքը և հատուցման օրենքը»):

յունը և վրեժի ցանկությունը: Եթե «Զարթոնք» և «Արարատ» թերթերում վրեժի մասին խոսելիս նկատի էին ունենում հայ ժողովրդի վերածնունդը, տարբեր ոլորտներում գրանցած հաջողությունները և թեկուզ ոչ լիիրավ ու լիարժեք կերպով հայկական պետականության գոյության փաստն ի դեմս Խորհրդային Հայաստանի, ապա «Ազդակը» վրեժ բառի հինկտակարանական իմաստն էր գերադասում: Ապրիլի 24-ի համարում այս պարբերականը հանգամանորեն անդրադարձել էր ՀՅԴ կողմից պլանավորված և իրականացված «Նեմեսիս» գործողությանը¹⁵ և ներկայացրել էր բոլոր հայ վրիժառուներին¹⁶:

«Համաշխարհային առաջին պատերազմի աւարտումին... ՀՅ Դաշնակցութեան Պոլսոյ Պատասխանատու մարմինը վճռեց երեւան հանել հայակեր հրէշներու թաքստոցները եւ ահաբեկել զանոնք մէկիկ-մէկիկ», - կարդում ենք այդ հոդվածում, որի վերջաբանում նշվում էր, որ կուսակցության պատուհասող բազուկն իջել էր նաև դավաճան հայերից մի քանիսի վրա¹⁷: «Ոգեկոչումին իմաստը» վերլուծականում Կարո Սասունին վստահեցնում էր, որ ողջ հայ ժողովուրդը, հին ու նոր սերունդներով, «ինքզինքը իրաւատէրը կը հռչակէ բռնագրաւուած հայրենի հողերուն»¹⁸: Նույն օրվա «Մեր խոսքը» վերնագրով խմբագրականում ՀՅԴ Լիբանանի Կենտրոնական կոմիտեի հայտարարությունն է զետեղված, որտեղ հստակորեն նշված էր կուսակցության քաղաքական գիծը Հայկական հարցում: Այնտեղ մասնավորապես գրված էր. «Անթաղ մնացին մեր մեռելները, բայց իրենց հետ անթաղ պահեցին նաև հայ ազգային Դատը: Թող յաւէ ըժ ապրի յիշատակը անոնց, որպէս զգաստութեան և ազգային գիտակցութեան անշէջ

¹⁵ Տե՛ս **Հովսեփյան Մ.**, Պոլսահայ պարբերականները «Նեմեսիս» գործողության մասին (1920–1922 թթ.), «Պատմա-բանասիրական հանդես», N 2, Եր., 2023, էջ 100–114:

¹⁶ «Հայ ժողովուրդի վրիժառու բազուկները», «Ազդակ», Բեյրութ, 1965, №42 (10087):

¹⁷ Նույն տեղում:

¹⁸ «Ոգեկոչումին իմաստը», «Ազդակ», Բեյրութ, 1965, №42 (10087):

հուր՝ հայ սրտերէն ներս»¹⁹: Բոլոր նյութերում նույնն էր՝ վրեժ, վերածնունդ, պայքար հողերի վերադարձի համար. «Հայ ժողովուրդ, չմոռնաս Ապրիլ 24-ը. գիտցի՛ր վրեժխնդիր ըլլալ, արին տուած ես, փոխարեն արին պետք է պահանջես»²⁰:

«Արարատի» 1965 թ. ապրիլի 24-ին լույս տեսած Բացառիկ համարն ամբողջությամբ նվիրված էր Մեծ եղեռնի հիսնամյա տարելիցին: Հոդվածներում ավելի շատ պատմական ասպեկտով է անդրադարձ կատարված Հայոց ցեղասպանությանը և հողերի վերադարձի խնդրին: Բացի այդ՝ առավելապես ՄԴՀ կուսակցության գործունեությունն է առաջին պլան մղված, թեև հայտարարությունների բաժնում ներկայացված է նաև Հայ դատի համագլխին մարմնի մասին տեղեկություն: Բացառիկ համարի խմբագրականում տրված է եվրոպական դիվանագիտության խաղացած բացասական դերը Հայկական հարցի լուծման գրոծընթացում: Թերթի կարծիքով՝ աշխարհի հզոր տերություններին «կոթնելով է, որ թուրքը ջարդած էր հայը: Նոյն տերերուն կոթնելով է, որ շուրջ յիսուն տարի է ի վեր թուրքը կը մերժէ հաշիւ տալ իր գոհին ժառանգորդներուն»²¹: Խմբագրակազմը գտնում էր, որ միջազգային հայանպաստ հանգամանքների դեպքում միայն կարելի էր հասնել Հայ դատի լուծմանը, իսկ մինչ այդ օրը կհասնի, արդար վրեժխնդրության բոցավառվող խարույկը իր սրտում կրող հայությունը չպետք է դադարեցնի հանուն Հայկական հարցի պայքարը: Այդ պայքարը պետք է մղվի համահայկական միասնության վրա հենվելով: Թերթն առաջարկում է երկու պայման. «Առաջին անհրաժեշտությունը մեր դատի հետապնդման շուրջ ազգային միասնությունն ստեղծելն է, այնուհետև՝ հողային դատի ազգային քաղաքականութեան մը որդեգրումը: Դժբախտաբար,

¹⁹ «Մեր խոսքը», «Ազդակ», Բեյրութ, 1965, №42 (10087):

²⁰ «Հայ ժողովուրդ, չմոռնաս ապրիլ 24-ը», «Ազդակ», Բեյրութ, 1965, №42 (10087):

²¹ «Կոտորած, վերածնություն և ազգային վեկելի նոր ուղի», «Արարատ-Բացառիկ», Բեյրութ, 1965:

ցանկացուած գոյավիճակը ստեղծելու ուղղութեամբ ցարդ թափուած ճիգերը ապարդիւն մնացած են: Չկայ անհրաժեշտ միասնութիւնը: Չկայ հասարակաց ազգային քաղաքականութիւնը... Հայութեան առջեւ դրուած հրամայական պահանջը մէկ է ներկայիս. միասնանալ Երեւանէն մինչեւ հեռաւոր Սփիւք եւ հաւաքական ճիգերով քարոզչութիւն ծաւալել միջազգային գետնի վրայ, հայուն պահանջին արդար ըլլալը օտարին ճանչցնելու համար... Այս պահանջը ...կրնայ իրականանալ, եթէ հատուածային շահախնդրութիւնները մէկդի դրուին»²²:

Ամփոփելով կարող ենք փաստել հետևյալը. Բեյրութի հայ մամուլի վերոհիշյալ օրգանների խմբագրակազմերի համոզմամբ՝ անհրաժեշտ էր ոչ միայն ոգեկոչել Մեծ եղեռնի զոհերին, այլև պայքարել Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման, Արևմտյան Հայաստանի հողերը Խորհրդային Հայաստանին միացնելու, աշխարհով մեկ սփռված տարագիր հայերի ու նրանց ժառանգների հայրենադարձության, վնասների հավաքական և անհատական փոխհատուցման ուղղությամբ հաջողություն գրանցելու համար: Անշուշտ, սա ողջունելի մտածելակերպ էր, իսկ արված առաջարկների փաթեթը գովելի էր: Կար մի բայց՝ առանց իրական անկախ ազգային պետականություն ունենալու այդ խնդիրները չէին լուծվելու: Միայն արդարություն պահանջելով՝ այն ձեռք չեն բերում: Հիշենք Սիամանթոյի խոսքերը. «Ո՞վ մարդկային արդարություն, թո՛ղ ես թքնեմ քու ճակատիդ»²³:

Պետականություն, ուժեղ բանակ, ճկուն դիվանագիտություն, համահայկական միասնական պայքար հանուն Հայկական հարցի վերջնական ու հայանպաստ լուծման. Ահա սրանք են հաղթանակի գրավականները:

²²Նույն տեղում:

²³ Վարուժան Դ., Սիամանթո, Եր., 1979, էջ 135:

Мариам Овсепян

Армения, к.ф.н., Институт Истории НАН

mariamhovsepian@mail.ru

ORCID: 0009-0005-9696-4246

**ОСВЕЩЕНИЕ ВОПРОСА АРМЯНСКИХ РЕПАРАЦИЙ НА
СТРАНИЦАХ АРМЯНСКОЙ ПРЕССЫ ЛИВАНА
(НА МАТЕРИАЛАХ АПРЕЛЬСКИХ ПУБЛИКАЦИЙ ГАЗЕТ
«АЗДАК», «АРАРАТ» И «ЗАРТОНК» 1965 ГОДА)**

Ключевые слова: газета «Аздак», газета «Арарат», газета «Зартонк», армянская пресса Ливана, Геноцид армян, армянские репарации, турецкое отрицание.

На протяжении десятилетий армянская община Ливана была одним из самых значительных и многочисленных общин Армянской диаспоры. Сохранение армянской идентичности в этой общине активно поддерживается традиционными армянскими политическими партиями через их институты, ассоциации, образовательные учреждения и средства массовой информации. В 1960-е годы эти партии активизировали свою деятельность по предъявлению армянских национальных требований, что нашло свое отражение, в частности, в публикациях «Аздак», «Арарат» и «Зартонк» - официальных органах трех традиционных армянских политических партий, издававшихся в Бейруте.

Mariam Hovsepyan

Armenia, PhD of Philological Sciences,

Institute of History of NAS

mariamhovsepian@mail.ru

ORCID: 0009-0005-9696-4246

**COVERAGE OF THE PROBLEM OF ARMENIAN REPARATIONS IN
THE ARMENIAN PRESS OF LEBANON (BASED ON THE APRIL
ISSUES OF NEWSPAPERS "AZDAK", "ARARAT" AND "ZARTONK"
OF 1965)**

Keywords: "Azdak" daily, "Ararat" daily, "Zartontk" daily, Lebanese-Armenian press, Armenian Genocide, Armenian reparations, Turkish denial.

For decades, the Armenian community in Lebanon has been one of the most significant and densely populated diasporan centers. The preservation of Armenian identity in this community has been strongly supported by the traditional Armenian political parties through their institutions, associations, educational establishments, and media outlets. In the 1960s, these parties intensified their pursuit of Armenian national demands. In particular, this was reflected in the publications of "Azdak", "Ararat", and "Zartontk" - the official publications of the three traditional Armenian political parties, published in Beirut.

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԴԱՏԻ ԹԵՄԱՆԵՐԻ
ԱՐԾԱՐԾՈՒՄԸ «ՍՓՑՈՒՌՔ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹՈՒՄ**

Հիմնադրանք՝ Հայոց ցեղասպանություն, Հայ Դատ, «Սփյուռք» շաբաթաթերթ, Հայաստան, Սփյուռք, թուրքական ժխտողականություն, «Նեմեսիս»:

Այս օրերին համայն հայությունը թե՛ Մայր հայրենիքում, և թե՛ բուվանդակ Սփյուռքում նշում է Հայոց ցեղասպանության 110-ամյակը: Ապրիլի 24-ը մեր ժողովրդի համար պետք է լինի ոգեկոչման ու խնկարկման, նոր պայքարի սկիզբ՝ ընդդեմ թուրքական ժխտողականության: Եղեռնի տարելիցի նշումը ոչ միայն հարգանքի տուրք է ցեղասպանության անմեղ գոհերի հիշատակին, այլև առիթ՝ մեկ անգամ ևս մերկացնելու Օսմանյան կայսրության հայաջինջ քաղաքականությունը և նրա ակունքները, վերաբժարվելու հայոց պահանջատիրությունը, նոր թափ հաղորդելու Սփյուռքում հայապահպանության մաքառումներին:

Հայոց ցեղասպանության կարևոր հետևանքներից մեկը ժամանակակից հայկական սփյուռքի կազմավորումն էր, երբ կոտորածներից հրաշքով փրկված հարյուր-հազարավոր հայ փախստականներ գաղթի դաժան ճանապարհներով սփռվեցին աշխարհի բազմաթիվ երկրներում: Թեև սփյուռքահայությունը կարողացավ ձեռքագտնել շարդերից ու գաղթից առաջացած հոգեկան ցնցումից և բազում զրկանքների հաղթահարման գնով ապրեց ու գոյատևեց, սակայն կորստի դառնությունը և հրեշավոր անարդարության զգացումը չանհետացավ: Հետեղեռնյան ամբողջ ժամանակաշրջանում, անկախ պատճառներից, գաղափարախոսություններից ու տարբեր

մեկնաբանություններից, սփյուռքահայությունն իր ամբողջության մեջ այն համոզմունքն է ունեցել, թե Հայոց ցեղասպանությունը պատմության անպատիժ մնացած այն ոճիրն է, որը ծանրացած է մարդկության խղճին և պետք է պաշտոնապես ճանաչվի, դատապարտվի, ավելին՝ լուծվի հատուցման հիմնախնդիրը:

Հայաստանում կոմունիստական կուսակցության մենատիրության տարիներին (մինչև 1965 թ.) պաշտոնապես արգելված էր խոսել Հայոց ցեղասպանության մասին: Եղեռնի զոհերի հիշատակին էջմիածնի զանգերը վերջին անգամ դողանջել էին 1926 թ. ապրիլի 24-ին: ՀԿ(բ)Կ ԿԿ 1926 թ. օգոստոսի 31-ի որոշմամբ՝ Արամայիս Երզնկյանին հանձնարարվեց «Բանակցություններ վարել կաթողիկոսության հետ համաշխարհային պատերազմի (24 ապրիլի) զոհերի հիշատակի օրը նշելը վերացնելու անհրաժեշտության մասին»¹: Էջմիածնի հրատարակած օրացույցներում ապրիլի 24-ի մասին հիշատակումը 1926 թ. հետո բացակայում էր՝ ընդհուպ մինչև 1964 թ.: Այնինչ ապրիլի 24-ն, իբրև Մեծ եղեռնի զոհերի հիշատակի օր, տակավին 1920-ական թվականներից սգահանդեսների միջոցով նշվում էր զանգվածային ջարդերը վերապրած սփյուռքահայ գաղթօջախներում: Հատկանշական է, որ ապրիլի 24-ի խորհրդի, Հայ դատի՝ Արևմտյան Հայաստանի հողերի ազատագրման հարցի վերաարձարծման հարցում իր մեծ դերակատարությունն է ունեցել և ունի սփյուռքահայ մամուլը: Հարկավ, սփյուռքահայ գաղթօջախներում ազգային ինքնության պահպանմանն են նպաստում ինչպես կուսակցական, այնպես էլ ազատ մամուլի բովանդակության մեջ պատմական հիշողության վերարտադրումը, ազգային պատմության վերախմաստավորումը: Եղեռնի թեման սփյուռքյան մամուլում դիտարկվում է բավականին բազմաշերտ կերպով՝ ցեղասպանության մասին տեղեկատվության տարածում, ճանաչում և հատուցում, դրան ուղղված գործողություններ և այլն:

¹ Վիրաբյան Ա., Մեծ Եղեռնի հուշահամալիրի ողիսականը. Ազգային հուշարձան և խորհրդային իրականություն, ԲՀԱ, Երևան, 2008, № 1, էջ 292, տե՛ս նաև **Հարությունյան Ա.**, Հայոց ցեղասպանության 50-րդ տարելիցը և Երկրորդ Հանրապետությունը, Երևան, 2015, էջ 15:

Սույն գեկույցի շրջանակներում կներկայացնենք Բեյրութում հրատարակվող «Մփյուռք» գրական, գեղարվեստական, հասարակական-քաղաքական պարբերաթերթում հիմնադրման՝ 1958 թվականից՝ ներառյալ 1974 թ. ընկած ժամանակահատվածում Հայոց ցեղասպանության, Հայ դատի, Հայաստանից օտարված ի բնե հայկական Արցախի, Նախիջևանի, Ախալքալաքի և Ախալցխայի հիմնահարցերին, Հայրենիք-Մփյուռք փոխառնչություններին և այլ թեմաներով արծարծումներին: Այս ժամանակահատվածում շաբաթաթերթի հիմնադիր խմբագիրն էր սփյուռքահայ տաղանդաշատ արձակագիր, դասագրքերի հեղինակ, ականավոր հրապարակախոս, մանկավարժ և բանասեր Սիմոն Սիմոնյանը:

«Մփյուռք» պարբերաթերթը անկախ և իր ուրույն դիմագիծն ունեցող պարբերական էր: Առաջին համարի «Խոսք ճանապարհին» խմբագրականում նշված էր թերթի աշխատանքային ուղենիշը. «Ամենուն հետ և ամենուն դեմ, բայց միշտ և միմիայն հայութեան համար, չենթարկուիլ որեւէ կուսակցութեան թելարկումին, ըլլալ անկախ՝ Արարատի պէս և ըլլալ դարձեալ Արարատի պէս հայկական, նոյնիսկ օտար հողի վրայ»²:

Եղեռնի 43-ամյակի կապակցությամբ շաբաթաթերթը 1958 թ. ապրիլի 27-ի համարի «Առաջին ապրիլ 24-ը» խմբագրականում գրում էր. «Ո՛չ մէկ կոտորած, ո՛չ մէկ թշնամի արշաւանք և վերջապէս անցեալին հայ ժողովուրդի վիճակուած ո՛չ մէկ պատահար ունեցան այնքան վճռական և խորապէս եղերական ու ցնցիչ ազդեցութիւն ու արդիւնք, որքան 1915 թուի ապրիլի 24-ը: Պատմական Հայաստանի ամենէն կարեւոր շրջանները՝ **ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ, ՏԱՐՕՆ-ՏՈՒՐՈՒԲԵՐԱՆ, ԲԱԳՐԵՒԱՆԴ, ԲԱՐՁՐ ՀԱՅՔ, ԾՈՓՔ, ԱՂՋՆԻՔ, ՀԱՅԿԱԿԱՆ ՄԻՋԱԳԵՏՔ**, արմատախիլ եղան ու դատարկուեցան հայութենէ՝ բնաջնջումով եւ բռնագաղթով: Աղէտը իլեց հայութեան երեք-չորորդը, հայրենաբնակ, իրական ու բարձրորակ հայութեան երեք-չորորդը, իսկ պատմական ու ամբողջա-

² «Խոսք ճանապարհի», «Մփիւռք», Պէյրութ, 1958, ապրիլի 4, № 1, էջ 1:

կան Հայաստանի՝ մեծագոյն ու ընտրելագոյն մասը»³:

1960 թ. ապրիլի 23-ի համարում շաբաթաթերթը «24 ապրիլ 1915» խորագրի ներքո գետեղել էր Եղիշե Չարենցի «Մահվան տեսիլ» բանաստեղծությունից հատվածներ, ինչպես նաև՝ նշանավոր քարտեզագիր Զատիկ Խանգադյանի «Քարտեզագրություն հայոց ազգի գոհաբերության» գծապատկերը⁴:

Շարունակելով վառ պահել Հայոց ցեղասպանության թեման՝ թերթը 1965 թ. մարտի 10-ի համարում տպագրել էր մանկավարժ, պատմաբան Երվանդ Քասունու՝ «Շարունակվող ցեղասպանություն» վերտառությամբ ուշագրավ հոդվածը: Անդրադառնալով ապրիլի 24-ի խորհրդին՝ հեղինակը հիշում էր գոհերին, գրում Եղեռնի դրվագների մասին, միաժամանակ փաստերի վկայակոչումով նշում էր, որ Թուրքիայում էթնիկ գտումների միջոցով տակավին շարունակվում էր հայահալած քաղաքականությունը: «Ո՛չ մեկ ժամ ու ո՛չ մեկ վայրկեան կրնանք մոռնալ, թե թուրքը կը շարունակե յիսուն տարիներ առաջ սկսած իր ցեղասպանութիւնը, ու հայը՝ տակաւին կը կոտորուի»⁵, - գրում էր Քասունին: Հոդվածագիրը նաև հույս էր հայտնում արդարության հաղթանակի մասին՝ մատնանշելով հայ ժողովրդի վերապրելու կամքը:

Հայոց ցեղասպանության լուսաբանման ասպարեզում շրջադարձային եղան 1960-ական թթ. սկզբները, երբ նախապատրաստական աշխատանքներ ծավալվեցին 50-ամյա տարելիցը հայ իրականության մեջ նշելու ուղղությամբ: 1965 թ. ապրիլին Մայր հայրենիքում համազգային պոռթկումով նշվեց Հայոց ցեղասպանության տարելիցը: Տեղի ունեցավ չլսված ու չտեսնված մի երևույթ. հազարավոր մարդիկ ինքնաբոլիս դուրս եկան փողոց՝ արտահայտելու իրենց դժգոհությունն ու ներկայացնելու իրենց համազգային պահանջը:

Սփյուռքահայության կյանքում ևս առաջնային իրադար-

³ «Առաջին ապրիլ 24-ը», «Սփիւռք», Պէրոյթ, 1958, ապրիլի 27, № 4, էջ 1:

⁴ «Սփիւռք», Պէրոյթ, 1960, ապրիլի 23, № 15, էջ 1:

⁵ Քասունի Ե., Շարունակվող ցեղասպանութիւն, «Սփիւռք», Պէրոյթ, 1965, մարտի 10, № 9, էջ 3:

ձուլություն դարձավ Մեծ Եղեռնի 50-ամյակը: Բազմապիսի միջոցառումներին զուգահեռ՝ այդ առիթով հրատարակվեցին հուշամատյաններ, ալբոմներ, պարբերականների բացառիկներ, ինչպես նաև պատմագիտական ուսումնասիրություններ, որոնցում մի նոր աստիճանի բարձրացվեց Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրումը:

Պետք է ընդգծել, որ Եղեռնի թեմայի արծածրումը նոր բնույթ ու բովանդակություն ստացավ նաև «Մփյուռք» շաբաթաթերթում: Շաբաթաթերթը ակտիվ պայքար ծավալեց Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման ուղղությամբ: Հատկանշական է, որ շաբաթաթերթի խմբագիր Սիմոն Սիմոնյանի Եղեռնի թեմայով գրված հրապարակախոսական հոդվածներին բնավ յուրահատուկ չէր ողբն ու լալկանությունը⁶: Պայքարի նոր շեշտադրումներով «Այս է նահատակներուն պատգամը» խմբագրականում նա գրում էր. «Յիսուն տարի սզացինք, լացինք, ողբացինք, սզահանդէմներ կազմակերպեցինք, ճառեր արտասանեցինք, բացառիկ թիւեր հրատարակեցինք, ու բաւականացանք այդքանով միայն: Որովհետեւ զգացումներով հրկիզուած, ժամանակ չունեցանք մտածելու: Չմտածեցինք, չուզեցինք մտածել: Յիսնամեակի առիթով դժբախտաբար շարունակեցինք միեւնոյն աւանդութեան գործադրութիւնը, եւ ուզեցինք քնացնել մենք զմեզ: Յիսնամեակը հանգրուան մըն է, վերադարձ մը, զարթօնք մը, եւ հետեւաբար պէտք է ըլլայ լուրջ խորհրդածութեան եւ կազմակերպութեան տարի, որպէսզի զօրանանք գործելու կարողութեամբ»⁷:

Հոդվածագիրը բարձրաձայնելով հայ ժողովրդի օրինական իրավունքն իր պապենական տարածքների նկատմամբ՝ իրավամբ

⁶ Ս. Սիմոնյանի պատմվածքներում («Մուրազ մը ունըմ», «Նա իր հօր զավակն է», «Թող մեռնի երկրորդ Սահակը» և այլն) արծարծված Եղեռնի թեմայի մանրամասն քննությունը տե՛ս **Մարտության Թ.**, Ցեղասպանության արտացոլումը Սիմոն Սիմոնյանի ստեղծագործություններում, «Գիտական Արցախ», Երևան, 2019, № 1 (2), էջ 322-334:

⁷ «Այս է նահատակներուն պատգամը», «Մփյուռք», Պեյրուք, 1965, ապրիլի 28, № 16, էջ 1:

գրում էր. «Կուգենք ապրիլ մեր նախահայրերու հողին վրայ եւ տեսնել մեր օճախներուն ծուխը ծխանի: Ե՛ւ Հայաստանի, ե՛ւ արտասահմանի մէջ իւրաքանչիւր հայու իղձն ու երագն է այս: Այդ հողերուն իրաւական տէրերն ենք մենք, եւ հայ ժողովուրդէն զատ ոչ մէկ ժողովուրդ կրնայ ապրիլ եւ ծաղկեցնել այդ հողերը: Այս կերպով է, որ Յիսնամեակը պէտք է ըլլայ ծրագրուած թե՛ ողբ ու թե՛ աշխատանքի անկիւնադարձ: Յիսնամեակը պէտք է ըլլայ գործ, եւ ոչ յուշ»⁸:

Միմոնյանը առաջադրում էր պայքարի նոր ռազմավարություն, որը պէտք է տարվեր Օսմանյան կայսրության ժառանգորդ Թուրքիային պատասխանատվության ենթարկելու, Հայոց ցեղասպանության հետևանքների հաղթահարման ուղղությամբ: Հռովման ավարտվում էր Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչման պայքարում սերունդներին ավանդվող հետևյալ պատգամով. «Կը մերժենք սգահանդէսները այլեւս: Եւ ուխտած ենք վերջ տալ ողբին, լացին ու կոծին: Կը մերժենք լացը, որովհետեւ լացը ողորմութիւն հայցել է միայն. ու կը հաւատանք զանգատի, բողոքի, ցասումի եւ գործի արդարութեան: Լռութեան ձայնը իշխեց յիսուն տարի: Չի կրնար իշխել ասկէ ետք եւ պիտի չիշխէ: Այլ պիտի իշխէ բազուկի, ոյժի ձայնը: Ոյժի ձայնը միայն, որ պիտի հասցնէ մեզ ծխանի ծուխին»⁹: Եվ որպէս այս պատգամի տրամաբանական շարունակություն, խմբագրականից անմջապէս հետո «Նեմեսիս» գործողության հեղինակներից հայ հասարակական-քաղաքական գործիչ Շահան Նաթալիի «Գիրք մատուցման եւ հատուցման» գրքից թերթում զետեղվել էին հայ վրիժառուներ Սողոմոն Թեւիլիրյանի, Արամ Երկանյանի, Արշավիր Շիրակյանի, Միսաք Թողաքյանի, Արտաշես Գևորգյանի լուսանկարներն ու կենսագրականները¹⁰:

Ինչպէս հայտնի է, ցեղասպանության ընթացքում և հետո թե՛ երիտթուրքերը, թե՛ թուրք քաղաքական գործիչներն ու պատմա-

⁸ «Այս է նահատակներուն պատգամը», էջ 1:

⁹ Նույն տեղում:

¹⁰ Տե՛ս նույն տեղում:

բանները ժխտել և մինչ այսօր շարունակում են ժխտել հայերի զանգվածային բնաջնջման փաստը, մերժում են նրա ծրագրված և կազմակերպված լինելը: Այդ գործընթացը հատկապես նոր թափ ստացավ Եղեռնի 50-ամյակի միջոցառումներից հետո: Թուրքական կողմը մշակեց ու ներկայացրեց այդ հանցագործությունը ժխտող կամ նենգափոխող մի շարք վարկածներ, որոնք հետագայում վերածվեցին Հայոց ցեղասպանության ժխտման ու նենգափոխման թուրքական պետական «հայեցակարգի»: Այս առումով ընդդեմ թուրքական ժխտողականության՝ ուշագրավ էր լիբանանիայ գրող, հրապարակագիր «Աղասի» ստորագրությամբ Հարություն Կարևոյանի հրապարակումը: Հոդվածագիրը ««Հողերը, հողերը, հողերը...» եւ թուրքական սինիզմը» վերտառությամբ հոդվածում դատապարտելով թուրքական իշխանությունների ժխտողական քաղաքականությունը, գրում էր. «Տեսանք, թե թիրք մամուլն ու հանրային կարծիքը ինչպիսի կատաղության ցույց տուին յիսնամյակի առթիվ...Պիտի ըսենք թիրք հակափրփականտի մասնագիտացած օրկաններու կողմէ գունաւոր ու անշնորհ զառանցքներ: Զառանցքներ, որոնք ունին առաւելագոյնս ծիծաղելի ու արգահատելի տարազներ»¹¹:

Թերթը 1965 թ. հուլիսի 14-ի համարում արտատպել էր Բոստոնի «Հայրենիք» ամսագրում 1928 թ. հրատարակված նշանավոր հայագետ, բյուզանդագետ Նիկողայոս Ադոնցի «Մեծ եղեռնի տարելիցին» պատմական փաստերով հարուստ, ուշագրավ հոդվածը, որը Հայոց ցեղասպանության պատմության գիտական ուսումնասիրման համար ունի չափազանց մեծ նշանակություն¹²: Շարադրանքի առանցքը հայ ժողովրդի նախաեղեռնյան ժամանակագրական հաջորդականությամբ պատմությունն էր, Օսմանյան կայսրության դժդնակ լծի տակ հեծող արևմտահայերի ազատագրական շարժման հիմնական ուղղությունները, առանձնահատկություններն ու

¹¹ **Աղասի** [Հարություն Կարևոյան], ««Հողերը, հողերը, հողերը...» եւ թուրքական սինիզմը», «Սփիւռք», Պէրոյթ, 1965, յունիսի 16, № 23, էջ 2:

¹² Տե՛ս **Ադոնց Ն.**, Մեծ Եղեռնի տարելիցին, «Սփիւռք», Պէրոյթ, 1965, յուլիսի 14, № 27, էջ 1, յուլիսի 21, № 28, էջ 4, 8:

անցած փուլերը: Պարզաբանելով իր հոգվածի շարադրման սկզբունքները՝ Ադոնցը եվրոպական դիվանագիտությունից խաբված հայ ժողովրդի մեջ փորձում էր հասունացնել սեփական սխալներն ուղղելու, հետագա արհավիրքներից խուսափելու և ազատագրության հասնելու գաղափարը: Ավելի պարզեցնելով իր միտքը՝ մեծանուն հայագետը նշում էր. «Այսօր մենք մինակ ենք մեր դիակների հետ: Սգաւոր ենք, Մեծ եղեռնը մեր պարանոցին, մեղապարտ ենք բոլորս, ամէն ոք իր չափով, որը գործով, որը անգործութեամբ: Այս գիտակցութեան վրայ պիտի հիմնենք նոր գործունեութիւնը»¹³:

Հայոց ցեղասպանության դատապարտման գաղափարը մեկ այլ ընդգծում ունի սփյուռքահայ մտավորական Նշան Խոշաֆյանի «1965-էն դէպի 1966» պատմաքննական ակնարկը: Հեղինակը կարևորելով Հայոց ցեղասպանության 50-ամյակի համազգային նշումը, առանձնացնում էր այն կարևոր իրականությունը, որ «Յիսնամեակը մեր ազգային կեանքի իմաստնագոյն տեսաբանութիւնը կենսագործեց: Բւրաքանչիւր հայ անհատ, այդ օր զգաց ու ճանչցաւ ինքզինք: Զգաց, թէ ո՛վ է ինքը...1965ը միասնականութեան ու գործակցութեան տարի մը եղաւ...1965ին հայ կեանքին վիմաքարը դրուեցաւ»¹⁴:

Շաբաթաթերթը արձանագրում էր, որ քեմալականները, ընդհանուր առմամբ, շարունակեցին սուլթանական և երիտթուրքական կառավարությունների հայաջինջ և հայահալած քաղաքականությունը: Եվ, իրոք, քեմալականները հայերի ցեղասպանության քաղաքականության շարունակողներն էին: Այս առումով շատ կարևոր պարզաբանում է կատարում հետցեղասպանության շրջանի սփյուռքահայ հասարակական-քաղաքական ու կրթամշակութային ականավոր գործիչ, երեք կոտորածների (1909 թ. Ադանա, 1915 թ. Մեծ եղեռն, 1922 թ., Զմյուռնիա) ականատես Բյուզանդ

¹³ **Ադոնց Ն.**, Մեծ եղեռնի տարելիցին, «Սփիւռք», Պէյրուք, 1965, յուլիսի 21, № 28, էջ 8:

¹⁴ **Խոշաֆյան Ն.**, 1965-էն – դէպի 1966, «Սփիւռք», Պէյրուք, 1965, դեկտեմբերի 31, № 49-52, էջ 3:

Եղիայանը: Նա գրում էր, որ մենք «Մեծ եղեռնը պատերազմի շրջանին կրեցինք, բայց մեծագույնը՝ պատերազմին ետքը եկող «խաղաղության» տարիներուն: Եւ ուստի, որքան նուազ շեղեցուի մեր միտքը դէպի Օսմանեան սուլթանութեան տուած հարուածը, եւ որքան յստակամտութեամբ ծանրացուի շեշտը քեմալիստ կառավարութեան տուած հարուածի մասին, այնքան արդար դատաստանի ճամբուն վրայ կը մնանք: **Արեւմտահայութեան վերջնական կորուստներուն պատասխանատուութիւնը կը ծանրանայ արդի հանրապետական Թիւրքիոյ վրայ**»¹⁵ (ընդգծումը մերն է – Գ. Ս.):

Հայոց եղեռնապատումի հուզառատ էջ էր շաբաթաթերթի 1967 թ. մայիսի 7-ի համարում տպագրված Զորա Բսկենտերյանի՝ «Անտիոքի հայերուն ողբերգութիւնը (1909)» փաստագրական վիպակը: Ողբերգական պատկեր էր պարզում հեղինակը ընթերցողի առջև՝ նկարագրելով Անտիոքի հայերի զանգվածային կոտորածներն ու տեղահանությունը¹⁶:

Հատկանշական է այն հանգամանքը, որ շաբաթաթերթը մշտապես անդրադարձել է «Նեմեսի» գործողության մասնակիցների հետագա ճակատագրին: Այս տեսանկյունից ուշագրավ է հետևյալ դիպվածը: Թերթը լայնորեն լուսաբանելով Ամենայն հայոց կաթողիկոս Վազգեն Ա Պալճյանի 1968 թ. մայիսի վերջերի հովվապետական այցը ԱՄՆ՝ Լոս-Անջելոս, ուշագրավ մանրամասներ էր հայտնում նաև հունիսի 3-ին հիվանդանոց կատարած Վեհափառի այցի և այնտեղ նրա մանկության ընկեր, Բաքվի հազարավոր հայերի 1918 թ. ջարդերի կազմակերպիչ Բեհբուդ խան Ջվանշիրին վնասազերծող հայ վրիժառու, «Նեմեսիսի» ասպետներից Միսաք Թողլաքյանի հետ հանդիպման մասին: Ներկայացնենք երկու վաղեմի ընկերների մէջ տեղի ունեցած խոսակցությունից հետևյալ հատվածը.

«Վեհափառը ձեռքը դրաւ հիւանդի ճակատին և հարցրեց.

¹⁵ **Բիւզանդ Եղիայան**, Արեւմտահայութեան երկրորդ Մեծ եղեռնը (Ե), «Սփիւռք», Պէյրուք, 1966, յուլիսի 21, № 28, էջ 10:

¹⁶ Տե՛ս **Բսկենտերեան Ն.**, Անտիոքի հայերուն ողբերգութիւնը (1909), «Սփիւռք», Պէյրուք, 1967, մայիսի 7, № 19, էջ 4, 11:

-Միսակ ինձ ճանաչո՞ւմ ես:

-Այո:

-Էջմիածնից եմ գալիս, հետո քեզ համար շատ բարեւներ եմ բերել:

-Շա՛տ շնորհակալ եմ...

-Միսակ, իմացիր որ դու մենակ չես, ամբողջ հայութիւնը քեզ հետ է, եւ յատկապէս Հայաստանի հայութիւնը, որը տեղեակ է քո մասին, գիտէ քո ով լինելը եւ սպասում է քեզ տեսնել Հայաստանում:

-Ես էլ էի այդպէս փափագում, Վեհափառ, բայց ինչ արած որ եկայ հիւանդանոց:

-Մի մտածիր, Աստծոյ օգնութեամբ կապաքինուես եւ կը գաս: Յիշո՞ւմ ես, Միսակ, էն ձմերուկը, որ միասին կերանք, երբ սկաւուտ էինք:

-Ինչպէս չէ, լաւ եմ յիշում»¹⁷:

Յավոք, Թոռլաքյանը հիվանդության պատճառով չկարողացավ այցելել հայրենիք. մահացավ նույն թվականի նոյեմբերի 12-ին:

Հիրավի, այս փոքրիկ դրվագում ակնհայտ է դառնում տարիների հեռավոր ոչ միայն երկու մեծերի զգացական ու նվիրական վերաբերմունքը մեկմեկու հանդեպ, բայց առավել ևս՝ հայոց հայրապետի՝ արդարության մարտիկ Միսաք Թոռլաքյանի գործի հանդեպ տաժաժ մեծագույն հարգանքն ու ակնածանքը, ով ազգի ճակատին քսված արատի մուրը իր վրեժխնդիր գնդակով սրբեց մարդկային և հայոց պատմության էջերից:

Մեծ եղեռնի արհավիրքների, հուսահատական ու գերմարդկային ոգորումների պատկերներով էր հյուսված Միմոն Միմոնյանի 1969 թ. մայիսի 25-ի համարում հեղինակած՝ «Ապրիլ 24-ը մեզ կը միացնէ» խմբագրականը: Հոդվածագիրը, տալով եղեռնի տարիներին հայ ժողովրդի անագորոյն վիճակի խտացված նկարագիրը, միաժամանակ լավատեսական մղումներով իր հավատամքն էր

¹⁷ Վերջին գրոյց ահաբեկիչի եւ Վեհափառի միջեւ, «Մփիւռք», Պէյրուք, 1968, յուլիսի 14, № 26, էջ 2:

ներկայացնում: Միմոնյանը պատմության փորձը լուսաբանում էր իր ժամանակի աշխարհաքաղաքական զարգացումների համապատկերում՝ յուրահատուկ կոչ հղելով սերունդներին՝ ուսանելի դասեր քաղել անցյալից, լինել միաբան ոչ միայն օրհասական պահերին, այլև ընդհանրապես, չկտրվել ազգային արմատներից ու վառ պահել պատմական հիշողությունը: Ըստ նրա՝ «Ապրիլ 24-ի գերագոյն խորհուրդը, ապրիլեան մեր նահատակներուն սրտագին բաղձանքը անտարակոյս իրենց յաջորդներուն միասնականութիւնն էր: Արդ, այսուհետեւ ապրիլ 24-ը պէտք է դասենք հայ ժողովուրդը միացնող մեծ սրբութիւնների մէջ եւ ստուգապէս անոր գերագոյն խորհուրդը փնտռենք անոր միարար զօրութեանականութեան մէջ»¹⁸:

Շաբաթաթերթը 1972 թ. ապրիլի 23-ին հատուկ համար էր թողարկել՝ նվիրված Հայոց ցեղասպանության 57-րդ տարելիցին: Առանձնապես սրտառուչ և հուզիչ էր Միմոն Միմոնյանի՝ «Այս ապրիլէն ետք, անպայմա՛ն...» առաջնորդողը: Հեղինակը, եղեռնի իրական պատճառների մէջ խորամուխ լինելու նպատակադրումից բացի, ցավով անդրադառնում էր այն կորուստներին, որոնք ունեցել էր Արևմտյան Հայաստանը՝ հող, ժողովուրդ և մշակույթ: Եվ որպեսզի վերականգնվեին այդ կորուստները, Միմոնյանն առաջադրում էր հետևյալ սկզբունքը. «Երեքն ալ գտանելի եւ դարմանալի են, բայց **հանգրուաններով**: Առաջին հանգրուանով (1918-1972) մաս մը գտանք կորսուած ժողովուրդէն, յարութեամբ, ժողովո՛ւրդ, որ այսօր կը կոչուի Սփիւռք կամ Սփիւռքահայութիւն, եւ որ մասամբ ծորած է հայրենի աւազանին մէջ (պարբերական ներգաղթներով): Պէտք է գտնել կորսուած Արեւմտահայ ժողովուրդին մնացեալ մասը յաջորդ հանգրուանին (1972-2000), բազմապատկութեամբ: Ատիկա պիտի ընեն հայ կիները, իւրաքանչիւր՝ հինգ զաւակ պարգեւելով ազգին»: Այնուհետև ամփոփելով իր մտքերը, Միմոնյանը եզրակացնում էր. «Առաջին հանգրուանով գտանք բեկորները արեւմտա-

¹⁸ **Միմոնեան Ս.**, Ապրիլ 24-ը մեզ կը միացնէ, «Սփիւռք», Պէյրութ, 1969, յուլիսի 25, № 18, էջ 1:

հայ մշակոյթին, բեկորնէ՛ր, որոնք կոչուեցան Սփիւռքի հայ գրականութիւն, մամուլ, դպրոց, եկեղեցի, արուեստ... Ուրեմն ապրիլեան Եղեռնին մեր կրած մեծագոյն **էրեք** կորուստներէն ժողովուրդն ու մշակոյթը դարմանալի են, կրնա՛նք դարմանել, եւ մենք պիտի դարմանենք: Ու առանց յապաղումի, ընդմիջումի, վարանումի եւ թերհաւատութեան... Երրորդ հանգրուանով, ա՛յս **ապրիլէն ետք** անպայմա՛ն պէտք է ձգտինք հանդարտ, ապահով ու խոհական տանամեակներով, վերանուաճելու **հողը**, բազմապատկուած, զօրացած ու գիտնացած **ժողովուրդով** եւ բարգաւաճ եւ տիեզերականացած **մշակոյթով**»¹⁹:

Շաբաթաթերթում հայոց եղեռնապատումն, իհարկէ, վերը շարադրվածով չի սահմանափակվում: Իրենց հուշերը թերթին են հանձնել նաև տարբեր հայացքների ու զբաղմունքի տեր բազմաթիվ վերապրողներ: Շաբաթաթերթի հոդվածագիրներից Նշան Խոջաֆյանը 1974 թ. ապրիլի 24-ի համարում «Դէպի 60-ամյակը ապրիլեան Եղեռնի» վերտառությամբ հոդվածում մեկ անգամ ևս արծարծելով Հայ դատի խնդիրները և դրանց լուծման ուղիները, գրում էր. «Թեթևօրէն վարուիլ Հայ դատի ճակատագրին հետ, ամենէն ողբալի հարուածը պիտի նկատուի, ուղղուած հայ Սփիւռքի սրտին: Որովհետեւ հայ Սփիւռքը կապրի ու կը գոյատեւէ այն յոյսով, թէ անպայման պիտի հասնի իր մուրազին»: Շարունակելով իր միտքը, Խոջաֆյանը եզրակացնում էր. «Մեր նպատակն է՝ ՄԻԱՄՆԱԿԱՆ աշխատանք տանիլ Հայ դատի հետապնդման համար»²⁰:

Հատկանշական է, որ ազգային և քաղաքական համատեքստերում Հայոց ցեղասպանության և Հայ դատի թեմաների պատմական ասպեկտը զուգորդվում էր արդիական խնդիրների հետ. Արևմտյան Հայաստանի ազատագրման հարցին զուգորդվում էր նաև Հայաստանից իլված հողերի (Արցախ, Նախիջևան, Ախալքալաք և այլն) վերադարձի հարցը, որոնք նույնպես շաբաթաթերթի

¹⁹ **Միմոնեան Ս.**, Այս ապրիլէն ետք, անպայմա՛ն..., «Սփիւռք», Պէյրուք, 1972, ապրիլի 23, № 16-17, էջ 1:

²⁰ **Միմոնեան Ս.**, Ինչո՞ւ Սփիւռքի հայութիւնը պէտք է որ պահանջէ հայկական հողերը, «Սփիւռք», Պէյրուք, 1960, օգոստոսի 20, № 32, էջ 2:

ուշադրության կենտրոնում էին: Այդ առումով ուշագրավ էր Ս. Միմոնյանի՝ 1960 թ. օգոստոսի 20-ի համարում հրապարակած «Ինչո՞ւ Սփիւռքի հայութիւնը պէտք է որ պահանջէ հայկական հողերը» առաջնորդողը, որտեղ Հայաստանից օտարված ի բնէ հայկական տարածքների վերամիավորումը Մայր հայրենիքին հիմնավորում էր հետևյալ կերպ. «Սփիւռքի հայութիւնը կապելու համար Մայր հայրենիքին, ինչպէս նաեւ բնական եւ զանգուածային կերպով իրագործելու համար ներգաղթը, անհրաժեշտ է, որ պատմականօրէն, աշխարհագրականօրէն եւ ազգագրականօրէն հայկական այս նահանգները - Ղարաբաղ, Նախիջեւան, Ախալքալաքը վերամիավորուին ներկայ հայրենիքին: Հայկական այդ հողերուն վերամիավորումը պիտի ըլլայ ցայտուն, պայծառ եւ պատուաբեր փաստը սովետական արդարադատութեան եւ արդարագոյն եւ միակ նուէրը Սովետ.[ական] Հայաստանին եւ ԱՄԲՈՂԶ հայ ժողովուրդին»²¹:

Ս. Միմոնյանը, որի պատմաքննական հայրենաշունչ հոդվածներն աչքի էին ընկնում լայնախոհությամբ ու սուր հարցադրումներով, «Կարմիր ծիրէն ներս» խորհրդանշական վերնագրով հոդվածներից մեկում, մերկացնելով ԽՍՀՄ-ի՝ հայկական շահերի ոտնահարման գնով Թուրքիայի հետ հարաբերությունների կարգավորման քաղաքականությունն ու վերջինիս հանդեպ ունեցած խանդավառատանքները, խորին հիապթափությամբ գրում էր. «Սովետական Միութիւնը Թուրքիան իր «կարմիր ծիրէն ներս» (նկատի ունի ԽՍՀՄ սահմանից ներս – Գ. Ս.) առնելու համար, կանգ չառնէր եւ պիտի չառնէ որեւէ զոհութեան առջեւ: Սովետ.[ական] Հայաստանը իր զիջումներուն նուազագոյնը պիտի ըլլայ»: Շարունակելով իր միտքը, հոդվածագիրը միաժամանակ ընդգծում էր. **«Ռուսական այս հրաժարումներն ու զիջումները՝ տակաւին մի միայն ունենալու համար թուրքին ժպտուն երեսը, «Թուրքիոյ բարեկամութիւնը»»**²² (ընդգծումը մերն է – Գ. Ս.):

²¹ **Խոշաֆեան Ն.**, Դէպի 60-ամյակը ապրիլեան Եղեռնի, «Սփիւռք», Պէրուք, 1974, ապրիլի 24, № 16-17, էջ 1:

²² **Ս. Ս. [Միմոն Միմոնեան]**, Կարմիր ծիրէն ներս, «Սփիւռք», Պէրուք, 1963, հունվարի 16, № 1-2, էջ 2:

Ամփոփելով անվարան պետք է արձանագրենք, որ «Մփյուռք» շաբաթաթերթն իր գործունեության առաջին ժամանակահատվածում (1958-1974 թթ.) լուրջ աշխատանք է կատարել Հայոց ցեղասպանության պատմության և Հայ դատին առնչվող հիմնախնդիրների վերհանման ու համակողմանի ուսումնասիրության ուղղությամբ, ինչպես նաև բազմաթիվ անառարկելի փաստերի օգտագործմամբ վճռականորեն հակահարված է տվել թուրքական հերյուրանքներին ու ժխտողականությանը և պատմության տարբեր երանգի կեղծարարներին:

Այսօր Մփյուռքը և նրա մամուլը, հայոց անկախ պետականության առկայության պայմաններում, ավելի ինքնավստահորեն է դնում իր արդար իրավունքների վերականգնման խնդիրը, որի նոր վառ վկայությունը Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցի նշումն էր աշխարհի բոլոր հայկական համայնքներում: Հայոց ցեղասպանությունը մի ողբերգություն է, որը անցյալում չի մնացել: Եթե մի օր, մոտ կամ հեռու ապագայում ոչ միայն թուրք հասարակական-մշակութային գործիչները, այլև թուրքական իշխանություններն էլ Երևանի Ծիծեռնակաբերդի հուշահամալիր այցելեն, Եղեռնի զոհերի հիշատակը հավերժացնող անմար կրակի առջև խոնարհվեն, նույնիսկ իրենց աստծո առջև երդվեն, որ աշխարհի որևէ ծագում թույլ չեն տա նման ողբերգության կրկնություն, հայերը չեն դադարի ցեղասպանությունը հիշելուց և պահանջատեր լինելուց:

Геворг Степанян

Армения, д.и.н., профессор, ИИ НАН

sasun-009@mail.ru

ORCID: 0009-0000-7536-6777

ОБСУЖДЕНИЕ ТЕМЫ ГЕНОЦИДА АРМЯН И АРМЯНСКИХ РЕПАРАЦИЙ В ЕЖЕНЕДЕЛЬНИКЕ «СПЮРК»

Ключевые слова: Геноцид армян, армянские репарации, еженедельник «Спюрк», Армения, Диаспора, турецкое отрицание, «Немесис».

В первый период своей деятельности (1958–1974 гг.) еженедельник «Спюрк» проделал серьёзную работу по раскрытию и всестороннему изучению истории Армянского вопроса и Геноцида армян. На основе многочисленных неоспоримых фактов на страницах еженедельника «Спюрк» выявлялась политика Турции по отрицанию Геноцида армян, аргументированно критиковалась турецкая фальсификация истории Армянского вопроса и Геноцида армян. Помимо этого выдвигались обоснованные тезисы по преодолению тяжёлых последствий совершённого в отношении армян преступления и предъявлению требований Турции как правопреемнице Османской империи с целью восстановления нарушенных прав армянского народа.

Gevorg Stepanyan

Armenia, Doctor of Science in History, Professor,

Institute of History, NAS RA

sasun-009@mail.ru

ORCID: 0009-0000-7536-6777

DISCUSSION OF THE TOPIC OF THE ARMENIAN GENOCIDE AND ARMENIAN REPARATIONS IN THE WEEKLY "SPYURK"

Keywords: Armenian Genocide, Armenian reparations, weekly "Spyurk", Armenia, Diaspora, Turkish denial, "Nemesis".

During the first period of its activity (1958-1974), the weekly "Spyurk" carried out serious work to reveal and comprehensively study the history of the Armenian Question and the Armenian Genocide. Based on numerous indisputable facts, the pages of the weekly «Spyurk» exposed the Turkish policy of denial of the Armenian Genocide, and argued against the Turkish falsification of the history of the Armenian Question and the Armenian Genocide. In addition, it proposed well-founded measures to address the grave consequences of the crime committed against Armenians and to make claims against Turkey, as the legal successor of the Ottoman Empire, with the aim of restoring the violated rights of the Armenian people.

Նաթել Դողոսյան

Հայաստան, պ. գ. թ., ՀՅԹԻ

poghosyan92@bk.ru

ORCID: 0009-0006-4093-5005

«ՑԵՂԱՍԴԱՆՈՒԹՅՈՒՆ» ԵԶՐՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴՅԱԼՆԵՐԸ

Հիմնաբառեր՝ Ռաֆայել Լեմկին, բարբարոսություն, վանդալիզմ, Հայոց ցեղասպանություն, Օսմանյան կայսրություն, «Genocide», «Völkermord», «folk-mord», «γενοκτονία» եզրույթներ:

Միջազգային քրեական իրավունքում ցեղասպանության հանցագործությունը առանձնանում է նրանով, որ դրա հիմքում ընկած է էթնիկ, կրոնական և ռասայական խմբերին ոչնչացնելու մտադրության (intent) առկայությունը: Ի տարբերություն պատերազմական կամ մարդկության դեմ ուղղված հանցագործությունների, որոնք կարող են իրականացվել տարբեր դրդապատճառներով՝ սկսած ռազմաքաղաքական նպատակներից մինչև տարածքային վերահսկողություն, ցեղասպանությունը բացառիկ է իր թիրախավորմամբ: Այն ուղղված է որոշակի էթնիկ, ազգային, կրոնական կամ ռասայական խմբերի ամբողջական կամ մասնակի ոչնչացմանը՝ հենց խմբային պատկանելության պատճառով:

Թեև մարդկության դեմ ուղղված հանցագործությունները կարող են ներառել զանգվածային սպանություններ, բնակչության բռնի տեղահանումներ, խռտանգումներ կամ համակարգված ճնշման այլ ձևեր, սակայն պարտադիր չէ, որ դրանք կատարվեն որոշակի խումբը ոչնչացնելու նպատակով: Իսկ ցեղասպանության դեպքում, ոչնչացման մտադրությունը²³ (dolus specialis) կենտրոնա-

²³ Guénaél M., “Special Genocidal Intent/Dolus Specialis,” International Crimes: Law and Practice: Volume I: Genocide (2019; online edn, Oxford Law Pro), 161–222, <https://doi.org/10.1093/law/9780198843115.003.0008>.

կան նշանակություն ունի:

Այս պատճառով է, որ ցեղասպանությունը դասակարգվում է որպես առանձնակի ծանրության հանցագործություն, որը հաճախ առանձնացվում է նաև որպես «*հանցագործությունների հանցագործություն*»²⁴ (The crime of crimes) կամ «*բոլոր հանցագործությունների հանցագործություն*» (the crime of all crimes)²⁵: Իսկ որոշ իրավաբաններ և քաղաքագետներ ցեղասպանությունն արտահայտիչ կերպով բնութագրում են որպես «մարդկության դեմ ուղղված ամենածանր հանցագործություն»²⁶ (the gravest crime against humanity)՝ դիտարկելով այն որպես քաղաքակրթության գոյությանը սպառնացող մարտահրավեր: «Ցեղասպանություն» (Genocide) եզրույթի հեղինակ, հրեական ծագմամբ լեհ իրավաբան Ռաֆայել Լեմկինը ևս ներկայացնում է, որ ցեղասպանությունն իր բնույթով որպես հանցագործությունների հանցագործություն է, քանի որ այն ուղղված է քաղաքակրթության հիմքերի ու ազգերի ընտանիքների շահերի դեմ²⁷:

1944 թ. «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» աշխատության մեջ Լեմկինը ոչ միայն ձևակերպեց ցեղասպանության հանցագործությունը բնորոշող եզրույթն, այլև ընդգծեց դրա բացառիկ բնույթը²⁸: Եվ որպես «Genocide» եզրույթի ստեղծման հիմնավորում Լեմկինը իր հետազոտություններում նկատում է, որ նախքան 1944 թ., ժողովուրդներին ոչնչացնելու

²⁴ **Schabas W.**, Genocide in International Law: The Crimes of Crimes (Cambridge: Cambridge University Press, 2009).

²⁵ **Rafter N.**, The Crime of All Crimes: Toward a Criminology of Genocide (New York: New York University Press, 2016).

²⁶ “How do you define genocide?,” BBC, April 4, 2022, <https://www.bbc.com/news/world-11108059>.

²⁷ American Jewish Historical Society, Raphael Lemkin Collection, P-154, Box 7, folder 3, Stop Genocide Now, 4.

²⁸ Տե՛ս **Lemkin R.**, Axis Rule in Occupied Europe: Laws of Occupation - Analysis of Government - Proposals for Redress (Washington: Carnegie Endowment for International Peace, 1944), 79-95.

գործընթացը քաղաքակիրթ աշխարհում անուն չի ունեցել²⁹: Եվ այս հարցում նրա վրա ազդեցություն էր ունեցել 1941 թ. օգոստոսին Մեծ Բրիտանիայի վարչապետ Ուինստոն Չերչիլի այն հայտարարությունը ռադիո հեռարձակմամբ, թե «ականատես ենք մի հանցագործության, որն անուն չունի»³⁰:

Իրականում հենց Լեմկինն էր փորձել անուն առաջարկել այս հանցագործությանը: Դեռևս 1933 թ. Մադրիդում գումարված քրեական իրավունքի հիմնահարցերին նվիրված 5-րդ միջազգային կոնֆերանսի ժամանակ Լեմկինը ներկայացրել էր «*բարբարոսություն*» (Barbarity) և «*վանդալիզմ*» (Vandalism) հանցագործությունների վերաբերյալ առաջարկներ, որոնց հիման վրա նա կոչ էր անում ստեղծել բազմակողմ կոնվենցիա, որով մարդկային խմբերի ոչնչացումը դիտարկվելու էր որպես միջազգային հանցագործություն³¹: Հատկանշական է, որ Մադրիդի կոնֆերանսում և դրանից հետո իր առաջարկների մերժումից հետո էլ մինչև 1942 թ. նա չէր հրաժարվել «բարբարոսություն» և «վանդալիզմ» հանցագործությունների վերաբերյալ իր առաջարկներից և նույնիսկ դրանք արգելելու մասին 1 էջանոց պայմանագրի նախագծով դիմել էր ԱՄՆ նախագահ Ֆրանկլին Ռուզվելտին³²: Բայց քանի որ ընդհանուր առմամբ իր այս առաջարկներն ընդունելություն չգտան, Լեմկինը հանդես եկավ լիովին նոր ձևակերպմամբ: 1942 թ. վերջին նա շրջանառության մեջ դրեց «Genocide» բառը, որը ներկայացրեց «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» աշ-

²⁹ St 'u **Lemkin R.**, "Genocide - A Modern Crime," Free World, Vol. 4 (April, 1945), 39-43,

<http://www.preventgenocide.org/lemkin/freeworld1945.htm>.

³⁰ **Lemkin R.**, "Genocide," American Scholar 15, no. 2 (1946), pp. 227-230,

<http://www.preventgenocide.org/lemkin/americanscholar1946.htm>.

³¹ St 'u **Lemkin R.**, "Acts Constituting a General (Transnational) Danger Considered as Offences Against the Law of Nations," Special Report presented to the 5th Conference for the Unification of Penal Law in Madrid, October 14-20, 1933, accessed June 13, 2025, <http://www.preventgenocide.org/lemkin/madrid1933-english.htm>.

³² St 'u **Bartrop P. R., Jacobs S. L.**, Fifty Key Thinkers on the Holocaust and Genocide (New York/London:Routledge), p.183.

խատության մեջ, որն ավարտեց 1943 թ., իսկ հաջորդ տարի այն լույս տեսավ³³: Գրքում վերջինս վերլուծության էր ենթարկում ցեղասպանության հասկացությունը՝ նշելով, որ «նոր պայմանները նոր հասկացություններ են պահանջում»: «Ցեղասպանություն» (Genocide) ասելով հասկացվում է ազգի կամ էթնիկ խմբի ոչնչացումը: Այս նոր եզրույթը ստեղծվել էր հունարեն «Genos» (ռասա, ցեղ) և լատիներեն «cide» (սպանել) բառերի միավորման արդյունքում: Այն ավելի շուտ նշանակում է տարբեր գործողությունների համակարգված ծրագիր, որոնց նպատակն է ոչնչացնել ազգային խմբերի կյանքի հիմքերը՝ նպատակ ունենալով ոչնչացնել հենց այդ խմբերին³⁴: Գրքի հրատարակումից հետո նոր բառն արագորեն տարածում գտավ և դարձավ ոչ միայն գիտական ու պատմական հասկացություն, այլև իրավական կատեգորիա՝ կարևոր տեղ զբաղեցնելով միջազգային իրավունքում:

Սակայն հարկ է նկատել, որ Ռաֆայել Լեմկինը «Genocide» եզրույթը պարզապես «հեղինակային» ներշնչման հետևանքով կամ պատահականության արդյունքում չի ստեղծել: Այս բառի ծնունդը ու սահմանումն ուներ հստակ պատմական, իրավական և անձնական նախադրյալներ, որոնք ձևավորեցին իրավաբանի մտահոգությունն ու տեսլականը: Նախ և առաջ, Լեմկինի հետաքրքրությունը զանգվածային հանցագործությունների նկատմամբ ծագել էր դեռևս 20-րդ դարի սկզբին՝ որպես արձագանք Օսմանյան կայսրությունում տեղի ունեցած հայերի կոտորածներին: Նա ուշադիր ուսումնասիրել էր Հայոց ցեղասպանությունը և դրա օրինակով տեսել, թե որքան սահմանափակ ու անկատար էր այդ ժամանակվա միջազգային իրավունքը՝ նման հանցագործությունները կանխարգելելու տեսանկյունից³⁵:

Միևնույն ժամանակ, փաստերը ցույց են տալիս, թե Օսմանյան

³³ Տե՛ս **Irvin-Erickson D.**, Raphael Lemkin and the Concept of Genocide (Philadelphia: University of Pennsylvania Press, 2017), p. 81.

³⁴ Տե՛ս **Lemkin R.**, Axis Rule in Occupied Europe, p. 79.

³⁵ Տե՛ս **Պողոսյան Ն.**, Հայոց ցեղասպանության խնդիրը Ռաֆայել Լեմկինի ուսումնասիրություններում, Եր., ՀՅԺԻ, 2020):

կայսրության կողմից հայերի նկատմամբ իրականացված գործողություններն արդեն իսկ ստացել էին ցեղասպանություն բնորոշումը: Պատահական չէ, որ ցեղասպանություն (genocide) եզրույթի գերմանական տարբերակը՝ «Völkermord» եզրույթը (գերմաներենից «das Volk» թարգմանվում է ժողովուրդ, ազգ, և «der Mord»՝ սպանություն)³⁶, Գերմանիայի քրիստոնեական ամսագրերում հիշատակվում էր դեռևս 1896 թ. Օսմանյան կայսրությունում հայերի կոտորածների առնչությամբ³⁷: Իսկ Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ Օսմանյան կայսրության կողմից հայերի նկատմամբ իրականացրած գործողությունները բնորոշելու համար գերմանացի դիվանագետներն օգտագործում էին հենց «Völkermord» եզրույթը: Ընդ որում, գերմանացի հասարակական գործիչ, հոգևորական, արևելագետ, մարդասեր Յոհաննես Լեփսիուսը, որի աշխատանքները ազդեցություն են ունեցել Լեմկինի վրա, օսմանյան իշխանությունների կողմից կատարած հանցագործությունները բնորոշելու համար ևս կիրառում էր «Völkermord» եզրույթը³⁸: Մինչև հիմա էլ գերմաներենում ցեղասպանության բնորոշման համար կիրառվում է «Völkermord» բառը, որը լիովին նույնական է ցեղասպանության բնորոշման հետ: Հատկանշական է, որ Գերմանիայում հերերոների ցեղասպանության ճանաչումը կատարվել է հենց «Völkermord» բնորոշման միջոցով³⁹: Պատա-

³⁶ Տե՛ս գերմաներեն լեզվի թվային բառարանի բացատրությունը (Digitales Wörterbuch der deutschen Sprache), “der Völkermord,” <https://www.dwds.de/wb/V%C3%B6lkermord#wb-1>, դիտվել է՝ 10.06.2025:

³⁷ **Ihrig S.**, Justifying Genocide: Germany and the Armenians from Bismarck to Hitler (Cambridge, MA and London: Harvard University Press, 2016), p 55.

³⁸ Տե՛ս **Werkmeister Ch.**, “Johannes Lepsius und die Verbrechen an den Armeniern. Die Vorgeschichte der UN-Genozidkonvention,” in Holocaust und Völkermorde: Die Reichweite des Vergleichs, hg. Sybille Steinbacher (Frankfurt/New York: Campus Verlag, 2012), p. 96, 103.

³⁹ “Deutschland erkennt Kolonialverbrechen in Afrika als Völkermord an,” Der Spiegel, May 28, 2021, <https://www.spiegel.de/politik/deutschland/herero-und-nama-deutschland-erkennt-kolonialverbrechen-in-afrika-als-voelkermord-an-a-e0c59c97-4e80-4adc-9f1a-f887fc8fc348>.

հական չէ նաև, որ Գերմանիայի Դաշնության Բունդեսթագի կողմից Հայոց ցեղասպանությունը ճանաչելու մասին 2005 թ. հունիսի 15-ին ընդունված բանաձևում⁴⁰ միայն «Völkermord» եզրույթն է օգտագործվում, և որևէ հիշատակում չկա «Genocide» եզրույթի վերաբերյալ: Միայն 2016 թ. հունիսի 2-ին Բունդեստագի կողմից ընդունված «1915 և 1916 թթ. Օսմանյան կայսրությունում հայերի ու մյուս քրիստոնյաների ցեղասպանության զոհերի ոգեկոչման և հիշատակի մասին» երկրորդ բանաձևում է, որ Գերմանիայի օրենսդիր մարմինը հայերի նկատմամբ իրագործված հանցագործությունն արդեն որակում է որպես ցեղասպանություն⁴¹:

Արդյո՞ք Լեմկինը տեղյակ էր գերմաներեն «Völkermord» եզրույթի մասին, քանի որ հայտնի է, որ նա տիրապետում էր գերմաներենին: Նա նույնիսկ փիլիսոփայություն ուսումնասիրելու նպատակով հաճախել է Գերմանիայի ամենահին բարձրագույն ուսումնական հաստատություններից Հայդելբերգի համալսարան⁴²: Փաստերը վկայում են, որ Լեմկինը ոչ միայն տեղյակ էր այս եզրույթի գոյության մասին, այլև գործածում էր այն: Նա անգամ ցեղասպանության գերմանական տարբերակը համարժեք է համարել «Genocide» եզրույթին: Դրանով է պայմանավորված, որ «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» գրքի IX գլխի գերմաներեն տարբերակում նա «Ցեղասպանություն» (Genocidium) եզրույթի հետ մեկտեղ այն ավելի հասկանալի դարձնելու նպատակով որպես դրան համարժեք արտահայտություն

⁴⁰St 'u Deutscher Bundestag, "Erinnerung und Gedenken an den Völkermord an den Armeniern und anderen christlichen Minderheiten in den Jahren 1915 und 1916," <https://dserver.bundestag.de/btd/18/086/1808613.pdf>, դիտվել է՝ 10.06.2025:

⁴¹St 'u Germany Parliament Resolution, http://www.armenian-genocide.org/Affirmation.528/currentcategory.7/affirmation_detail.html

⁴²St 'u **Elder T.**, "What You See Before Your Eyes: Documenting Raphael Lemkin's Life by Exploring His Archival Papers, 1900–1959," in *The Origins of Genocide Raphael Lemkin as a Historian of Mass Violence*, eds. Dominik J. Schaller, Jürgen Zimmerer (New York: Routledge, 2009), p. 31.

փակագծում նշում է նաև «Völkermord» եզրույթը⁴³: Այս ամենը վկայում է այն մասին, որ ցեղասպանության հանցագործությունը բնութագրելու նպատակով Լեմկինը դիտարկել է «Völkermord» պատրաստի տարբերակը, սակայն փորձել է ստեղծել նոր եզրույթ իր հեղինակությամբ⁴⁴:

Ուշագրավ է, որ մինչ Լեմկինի կողմից ցեղասպանության հայեցակարգը ներկայացնելը գերմանական մամուլում և տարբեր նյութերում օգտագործվում էին Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ իրագործված ցեղասպանությունը բնութագրող այնպիսի բնորոշումներ, ինչպիսիք են՝ «Ausrottung eines Volkes» (ժողովրդի բնաջնջում), «Ausrottung des armenischen Volkes» (հայ ժողովրդի բնաջնջում), «nahezu völligen Vernichtung seines Volkes» (իր ժողովրդի գրեթե լիակատար ոչնչացում), «barbarische Vernichtung des armenischen Volkes» (հայ ժողովրդի բարբարոսական բնաջնջում), «seine völlige Vernichtung» (նրա լիակատար ոչնչացում)⁴⁵:

Նախքան Լեմկինի կողմից «Genocide» եզրույթի ստեղծումը կիրառվել է նաև ցեղասպանության շվեդերեն համարժեքը՝ «Folkmord» եզրույթը: Կովկաս կատարած ճանապարհորդությունից հետո շվեդ գրող և միսիոներ Մարիա Անհոլմը 1906 թ. գրում է «Det dödsdömda folkets saga» («Դատապարտված մարդկանց պատմությունը») գիրքը, որտեղ նա խոսում է 1894-1896 թթ. համիդյան կոտորածների մասին⁴⁶: Եվ համարվում է, որ Անհոլմը առաջինն էր Շվեդիայում, ով օգտագործեց «folk-mord» բառը:

Ուշագրավ է, որ շվեդ քաղաքական գործիչ Կարլ Յալմար Բրանքինգն, ով 1920-1925 թթ. զբաղեցրել է Շվեդիայի վարչապետի պաշտոնը, 1917 թ. մարտի 26-ին Ստոկհոլմում կայացած հանրա-

⁴³ St 'u AJHS, Raphael Lemkin Collection, P-154, Box 5, Folder 8, "Axis Rule in Occupied Europe," by Lemkin, Chapter 9 of Manuscript (German) on Genocide, 1944, p. 1.

⁴⁴ **Irvin-Erickson D.**, Raphael Lemkin and the Concept of Genocide, p. 83.

⁴⁵ **Ihrig S.**, Justifying Genocide, 271.

⁴⁶ St 'u **Anholm M.**, Det dödsdömda folkets saga (Stockholm: Aktienbolaget Ljus, 1906), p. 3.

հավաքի ժամանակ ևս օգտագործել է «folk-mord» (ցեղասպանություն) բառը՝ հայության հալածանքները կոչելով «կազմակերպված և համակարգված ցեղասպանություն՝ ավելի վատ, քան այն, ինչ երբևէ տեսել են Եվրոպայում»⁴⁷։ Եվ պատահական չէ, որ 2010 թ. մարտի 11-ին Շվեդիայի խորհրդարանի՝ Հայոց ցեղասպանության ճանաչման մասին բանաձևում հատուկ ընդգծվում է, որ Բրանթինգը հենց առաջին մարդն է, ով Լեմկինից վաղ օգտագործել է ցեղասպանություն բառը («folk-mord») ⁴⁸։

Պետք է նկատի ունենալ, որ նացիստների՝ Լեհաստան ներխուժելուց հետո Լեմկինն այդ երկրից Լիտվայով տեղափոխվեց Շվեդիա և 1940-1941 թթ. ապրեց Ստոկհոլմում՝ դասավանդելով տեղի համալսարանի քոլեջում։ Այդ երկրում գտնվելու ընթացքում նա հասցրեց հավաքել «Առանցքի տերությունների կառավարումը բռնազավթված Եվրոպայում» աշխատության համար նյութերի զգալի մասը⁴⁹։ Ուստի ենթադրվում է, որ Լեմկինը, թեմայի շուրջ հետաքրքրված լինելով, կարող էր տեղյակ լինել նաև Հայոց ցեղասպանությանը շվեդերեն տրված բնորոշման մասին։

Նմանատիպ եզրույթ էր կիրառվում նաև Նորվեգիայում։ Նորվեգացի գրականության պատմաբան Քրիստեն Քոլին 1917 թ. գրում էր, որ «folkemord»-ի (ցեղասպանության) պատմությունը սկսվել է 1915 թ. ապրիլին...⁵⁰։ Նույն թվականին Նորվեգիայում գրող Առնե Գարբորգն իր հրատարակած օրագրերում կիրառեց «folkemorde»

⁴⁷ **Avedian V.**, red., *Armeniska Folkmordet 1915: Frågor och svar*. Armeniska riksförbundet i Sverige (Lund: Lund University, 2010), pp. 29-30.

⁴⁸ St 'u Swedish Parliament Resolution, March 11, 2010, http://www.genocide-museum.am/eng/Sweden_Parliament_Resolution.php, դիտվել է՝ 07.06.2025:

⁴⁹ St 'u **Klamberg M.**, Raphaël Lemkin in Stockholm – Significance for his Work on “Axis Rule in Occupied Europe,” *Genocide Studies and Prevention: An International Journal* 13, no 1, (2019), pp. 64-87.

⁵⁰ St 'u **Collin Ch.**, *Verdenskrigen: og det store tidsskifte* (Kristiania, København: Gyldendalske, 1917), p. 161.

եզրույթը՝ նկարագրելով Հայոց ցեղասպանությունը⁵¹: Իսկ դանիացի մտավորական, լեզվաբան և աշխարհագրագետ Ազե Մեյեր Բենեդիկտսենը 1925 թ. ևս օգտագործեց «folkemord» եզրույթը⁵²:

Նկատենք, որ ցեղասպանությանը համարժեք հունարեն «γενοκτονία» (Genoktonia) բառը («γένος» (Genos) բառը հին հունարենում նշանակում է սերունդ, ընտանիք, ազգ, ռասա, իսկ «κτονία» (ktonía) բառը՝ սպանել) 20-րդ դարի սկզբին Հունաստանում նախառաջ կիրառվել է հայերի հալածանքներն Օսմանյան կայսրությունում նկարագրելու համար⁵³: Եվ հենց «γένος» (genos) հունարեն բառն է, որ Լեմկինն օգտագործել է «Genocide» եզրույթը ստեղծելու համար: Իսկ «κτονία» (ktonía) հունարեն բառը համարժեք է լատիներեն «cidium» վերջածանցին, որը սպանել նշանակությունն ունի⁵⁴, ու Լեմկինն այն ևս օգտագործել է «Genocide» եզրույթը ստեղծելիս:

Այս «γενοκτονία» (Genoktonia) եզրույթի միջոցով է հունարենում նաև տրվում Հույների ցեղասպանություն անվանումը (հունարեն՝ Γενοκτονία των Ελλήνων, Genoktonia ton Ellinon), որը ներառում է (1914–1923 թթ.) Օսմանյան կայսրությունում հույն բնակչության համակարգված ոչնչացումը: Մինչ «ցեղասպանություն» եզրույթի ստեղծումը, հույների ոչնչացումը բնութագրվում էր որպես «կոտորած» (հունարեն՝ η Σφαγή), «մեծ աղետ» (հունարեն՝ η Μεγάλη Καταστροφή) կամ «Մեծ ողբերգություն» (հունարեն՝ η Μεγάλη

⁵¹ Տե՛ս **Garborg A.**, Dagbok 1905-1923 (Oslo: H. Aschehoug & Company (W. Nygaard), 1926), p. 81.

⁵² Տե՛ս **Bjørnlund M.**, “‘The Big Death’: Finding Precise Terminology for the Murder of the Armenian People,” April 23, 2015, The Armenian Mirror-Spectator, https://mirrorspectator.com/2015/04/23/the-big-death-finding-precise-terminology-for-the-murder-of-the-armenian-people/#_edn2.

⁵³ Տե՛ս **Trubeta S.**, Physical Anthropology, Race and Eugenics in Greece (1880s–1970s) (Leiden and Boston: Brill, 2013), 251.

⁵⁴ Glosbe Greek-Latin dictionary, “κτονία in Latin,” [https://glosbe.com/el/la/-%CE%BA%CF%84%CE%BF%CE%BD%CE%AF%CE%B1](https://glosbe.com/el/la/-%CE%BA%CF%84%CE%BF%CE%BD%CE%AF%CE%B1,), դիտվել է՝ 08.10.2025:

Τραγωδία)⁵⁵:

Ինչ վերաբերում է Հայոց ցեղասպանությանը տրված անգլերեն բնորոշումներին, ապա Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն դեռևս 1918 թ. իր հուշերը շարադրելիս օգտագործել է «The Murder of a nation» («մի ազգի սպանություն») ձևակերպումը, որով և վերնագրել է իր գրքի 24-րդ գլուխը⁵⁶: Ուշագրավ է, որ Մորգենթաուի աշխատանքներն առանցքային նշանակություն են ունեցել Լեմկինի համար և մեծապես ազդել են նրա հետագա գործունեության վրա: Եվ ԱՄՆ-ում հաստատվելուց հետո, երբ Լեմկինը սկսեց դասավանդել Դյուկի և Յեյլի համալսարաններում, Հիտլերի՝ նոր տարածքներ գրավելու և ժողովուրդներին ոչնչացնելու ծրագրերը բացատրելու համար օրինակներ էր բերում պատմությունից՝ մասնավորապես ներկայացնում էր, թե ինչպես է Օսմանյան կայսրությունում ԱՄՆ դեսպան Հենրի Մորգենթաուն փորձել հայ ժողովրդին փրկել ցեղասպանությունից⁵⁷:

Իր գիտական գործունեության շրջանակներում Լեմկինը մեծապես օգտվում էր նաև պատմաբան Արնոլդ Թոյնբիի հեղինակած գործերից, որոնցում ևս տրվում էր «The Murder of a nation» («մի ազգի սպանություն») ձևակերպումը⁵⁸: Նմանատիպ ձևակերպումներ կարելի է գտնել անգամ 1915 թ. անգլալեզու մամուլում: Օրինակ՝ «The Independent»-ը Օսմանյան կայսրությունում հայերի նկատմամբ կատարվող գործողություններն անվանում էր «The Assassination of a Race» (ցեղի, ռասայի սպանություն)⁵⁹, իսկ «The

⁵⁵ **Hatzidimitriou C. G.**, ed., *American Accounts Documenting the Destruction of Smyrna by the Kemalist Turkish Forces: September 1922* (New Rochelle, NY: Caratzas. 2005), p. 1.

⁵⁶ Տե՛ս **Morgenthau H.**, *Ambassador Morgenthau's Story* (Garden City, N.Y.: Doubleday, 1918), p. 301.

⁵⁷ Տե՛ս ՆՅԹԻ, Բարայել Չառնիի անվանական ֆոնդ, no 2088:

⁵⁸ **Toynbee A.**, “Armenian Atrocities: The Murder of a Nation,” With a speech delivered by Lord Bryce in the House of Lords (London: Hodder & Stoughton, 1915).

⁵⁹ “The Assassination of a Race,” *The Independent*, October 18, 1915.

Lexington Herald»-ը⁶⁰ և «The Daily Telegraph»-ը⁶¹ «The Murder of a nation» («մի ազգի սպանություն»):

Հատկանշական է, որ 1948 թ. դեկտեմբերի 9-ին «Ցեղասպանության հանցագործությունը կանխելու և պատժելու մասին» կոնվենցիայի ընդունման կապակցությամբ անգլալեզու թերթերը գրում էին, որ «Genocide» բառը հորինել է Յեյլի պրոֆեսորը «Race Murder»-ի (ցեղասպանության) դեմ իր խաչակրաց արշավանքի արդյունքում: Մասնավորապես «The Monitor»-ը⁶² և «The Herald»-ը⁶³ նկատում էին, որ «Genocide»-ը հենց «Race Murder» հանցագործությունն է:

Հատկանշական է, որ «The Morning Call» թերթում գրած իր հոդվածում Լեմկինը նշում էր, որ «Genocide» բառը նոր է, սակայն այս հանցագործությունը հին է, ինչպես պատմությունը⁶⁴: Իր անտիպ նյութերում նույնպես նա ընդունում է այս նկատառումը՝ նշելով. ««Genocide»-ը նոր բառ է, բայց դրա նկարագրած չարիքը հին է: Այն նույնքան հին է, որքան մարդկության պատմությունը: Այնուամենայնիվ, անհրաժեշտ էր հորինել այս նոր բառը, քանի որ այս չարիքի կուտակումն ու դրա կործանարար հետևանքները չափազանց ուժեղ դարձան մեր օրերում»⁶⁵:

Ուսումնասիրելով նախկինում օգտագործված տարբեր ձևակերպումները՝ Լեմկինը փորձեց ստեղծել ցեղասպանություն հանցագործության իրավական սահմանում՝ ընդգծելով, որ նման հանցագործությունները պետք է ոչ միայն ճանաչվեն, այլև կանխվեն ու

⁶⁰ “Armenian Atrocities – The Murder of a Nation,” The Lexington Herald, December 5, 1915.

⁶¹ “Murder of a Nation,” The Daily Telegraph, November 16, 1915, p. 4.

⁶² “‘Genocide’ is the Word Coined by Yale Professor in Crusade on Race Murder,” The Monitor, August 4, 1949, p. 17.

⁶³ “Genocide: One Man’s Crusade against Race Murder,” The Herald, August 5, 1949, p. 6.

⁶⁴ “Genocide, Mass Murder by Man, is an Old Crime,” The Morning Call, August 6, 1947, p. 28.

⁶⁵ **Moses D.**, “The Holocaust and World History: Raphael Lemkin and Comparative Methodology,” in The Holocaust and Historical Methodology, ed. Dan Stone, (New York: Berghahn Books, 2012), p. 278.

պատժեն միջազգային իրավունքի մակարդակով: Այսպիսով, «Ցեղասպանություն» եզրույթի ձևավորումը ոչ թե նոր երևույթի բացահայտում էր, այլ արդեն իսկ տեղի ունեցած և տարբեր լեզուներով բնորոշված հանցագործության իրավական ամրագրումը:

Нарек Погосян

Армения, к.и.н., Музей-институт Геноцида армян

poghosyan92@bk.ru

ORCID: 0009-0006-4093-5005

ИСТОРИЧЕСКИЕ ПРЕДПОСЫЛКИ ФОРМИРОВАНИЯ ТЕРМИНА «ГЕНОЦИД»

Ключевые слова: Рафаэль Лемкин, варварство, вандализм, Геноцид армян, Османская империя, термины «Геноцид», «Völkermord», «folk-mord», «γενοκτονία».

Во время Второй мировой войны, а также до её начала уже существовали различные выражения, представляющие феномен геноцида. Несмотря на то, что Уинстон Черчилль охарактеризовал геноцид как «преступление без имени», факты свидетельствуют об обратном – это преступление не было безымянным: на разных языках оно представлялось как убийство народа или этнической группы. В частности, массовые преступления, совершённые Османской империей против армян, получили соответствующие названия в ряде языков.

Именно на этом факте основался юрист Рафаэль Лемкин, когда изобрел термин «геноцид» (Genocide). Изучая ранее употреблявшиеся формулировки и названия, он стремился создать точное правовое определение, подчёркивая, что такие преступления должны не только признаваться, но и предотвращаться и наказываться на международно-правовом уровне.

Сначала Лемкин предлагал использовать понятия «варварство» и «вандализм» для описания этих деяний, но впоследствии отказался от них в пользу термина, отражающего суть уже существовавших выражений, описывающих убийство народа или нации. Так родилось слово «геноцид» (Genocide), которое стало не только научной и исторической, но и юридической категорией, заняв свое место в международном праве. Изобретение и введение в оборот термина «геноцид» не было новым открытием, а, скорее, юридическим закреплением преступления, которое уже совершалось и было обозначено на разных языках.

Narek Poghosyan

Armenia, PhD in History,

Museum-Institute of the Armenian Genocide

poghosyan92@bk.ru

ORCID: 0009-0006-4093-5005

THE HISTORICAL BACKGROUND TO THE FORMATION OF THE TERM "GENOCIDE"

Key words: Raphael Lemkin, barbarism, vandalism, Armenian Genocide, Ottoman Empire, terms "Genocide", "Völkermord", "folk-mord", "γеноκτονία".

Even before and during World War II, various terms existed to describe the phenomenon of genocide. Despite Winston Churchill's description of genocide as "a crime without a name," historical evidence reveals that this phenomenon was, in fact, labeled in multiple languages as the "killing of a people or a nation." Notably, the atrocities perpetrated by the Ottoman Empire against Armenians were already identified with such terminology across different linguistic contexts.

It was precisely this reality that the jurist Raphael Lemkin drew upon

when he coined the term “genocide”. By studying previously used expressions, he sought to create a clear legal definition, emphasizing that such crimes must not only be recognized but also prevented and punished under international law.

Lemkin initially proposed the terms “barbarity” and “vandalism” to characterize these crimes. However, he later abandoned them in favor of a concept that reflected existing expressions describing the destruction of a people or a nation. Thus, the term “genocide” was born - becoming not only a scholarly and historical term, but also a legal category and a key element of international law. The creation of the term “genocide” did not reveal a new phenomenon; rather, it legally codified a crime that had already occurred and had been named in various languages.

Վահրամ Բալայան
Հայաստան, պ.գ.դ., պրոֆեսոր, ԳԱԱ ՊԻ
vahrambalayan@mail.ru
ORCID: 0009-0002-5696-9411

**ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԹՈՆՔԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
1960-70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՐՑԱԽՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ-
ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԾԱՎԱԼՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ**

Հիմնաբառեր՝ Արցախ, ԼՂԻՄ, Ադրբեջան, Հայաստան, խորհրդային, Ռուսաստան, ազատագրական պայքար:

Չնայած Լեռնային Ղարաբաղի ինքնավար կարգավիճակին Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը, օգտվելով միութենական կենտրոնական իշխանությունների հովանավորությունից, ԼՂԻՄ կազմավորման հենց սկզբից կոպտորեն ոտնահարել է հայ բնակչության իրավունքներն ու շահերը: Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը, գիտակցելով, որ բռնակցված տարածքներում հայ ազգաբնակչությունը չի հաշտվի ստեղծված իրավիճակի հետ, սկսեց միջոցներ ձեռնարկել այդ տարածքների ժողովրդագրական վիճակը փոփոխությունների ենթարկելու ուղղությամբ:

Ժողովրդին ղեկավարող և ուղղորդող ուժից զրկելու և իր հակահայ ծրագրերը կյանքի կոչելու նպատակով Ադրբեջանի ղեկավարությունը խաչակրաց արշավանք սկսեց մանավանդ դաշնակցականների և նրանց հետ համագործակցած մարդկանց նկատմամբ: Նրանց մեղադրում էին հակախորհրդային, հակաադրբեջանական գործունեության մեջ: Անգամ գյուղերում ստիպում էին նախկին ազգային գործիչների անունները չօգտագործել, նրանց չհիշելու, մոռացության տալու համար: Օրինակ, ով ուներ Համազասպ անունը, ստիպում էին դարձնել Ստեփան, Անդրանիկը՝

Ալեքսանդր, Թևանը՝ Էնգելս¹:

Այդ ամենին հետևել են բազմաթիվ ձերբակալություններ, որոնց թիվն անցնում էր 500-ից: Ձերբակալվածների թիվում էին ազատագրական պայքարի և արցախահայ պետականության նշանավոր գործիչներ Արտեմ Լալայանը և Աբրահամ Հասան-Ջալալյանը: «Հարյուրներով լցնում են երկաթուղին,- պատմում է ականատեսը,- և ճանապարհում դեպի Ռուսաստան: Իսկ սարերում և անտառներում էլ անհամար փախստականներ կան: Գիշերը հինգովտասով անցնում են սահմանը: Մարդիկ են ուղարկված, որ նրանց էլ հավաքեն բերեն: Եթե Արաքսը չլինի, մի մարդ չի մնա, բոլորն էլ կանցնեն Պարսկաստան: Շատ խիստ բռնագրավումներ կան ... դրամի փոխարեն գրավում են տնային բոլոր տեսակի իրերենները: Ժողովուրդը, թողած իր տունը, ընտանիքը, զավակները, ով որ կարողանում է, իր գլուխն է ազատում: Բաքվից գալիս է հայտնի Բադիրովը մի քանի հարյուր ռուսական զինվորներով և ճառախոսում է. - Պրոլետար ընկերներ, խորհրդային իշխանության անունից եմ խոսում ձեզ հետ: Նրանք, որ ձերբակալված կամ փախած են, մեր թշնամիներն են, դեռ շատերը կան, որ պիտի ձերբակալվեն: ...Ամբողջ Լեռնահայաստանի սարերը դարձել են փախստականների բնակավայրեր»²:

Արցախահայության ազատագրական շարժումը ճնշելու գործում առանձնակի եռանդ էին ցուցաբերում Միր Բաշիր Կասումովը, Ասադ Կարանը և Միր Ջաֆար Բադիրովը: Վերջինս 1930-ական թվականների երկրորդ կեսին ԼՂԻՄ-ում կադրային ջարդ կազմակերպեց: 1931 թ. մարզկոմի ղեկավարությանը մեղադրեց նացիոնալիզմի, նացիոնալ-ուկրնիզմի, Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու փորձերի և դաշնակցական գաղափարների դեմ չպայքարելու մեջ և իբր հակադրվել են Ադրկոմկոմսի (բ) Կենտկոմի ղեկավարությանը³: Նմանօրինակ սին հիմնավոր-

¹ Տե՛ս Խորհրդային Ղարաբաղ, հմ. 24, 30 նոյեմբերի, 1924:

² **Սարուբ.** Կացությունը Ադրբեջանի մեջ, «Դրոշակ», թիվ 4, 1930, էջ 120:

³ Տե՛ս «Заря Востока», 24 мая, 1931:

րումներով 1931 թ. սեպտեմբերի 18-ին աշխատանքից ազատում են ԼՂԻՄ մարզկոմի քարտուղար Քրիստափոր Վարունցին և կազմ-
բաժնի վարիչ Գենյա Մարգարյանին⁴: Օրեցօր ճնշումները ավելի էին
սաստկանում: Միր Ջաֆար Բաղիրովի հրահանգով 1937 թ. մարտ,
ապրիլ ամիսներին Ստեփանակերտում «բացահայտվեց», այսպես
կոչված, նացիոնալիստական հակախորհրդային խմբավորում:
Կուսակցությունից հեռացրին, աշխատանքից ազատեցին և բան-
տարկեցին ԼՂԻՄ ժողկրթության բաժնի վարիչ Մելիք Ջաքարյա-
նին, մարզային սպառկոռայի նախագահ Միսակ Թումանյանին,
«Խորհրդային Ղարաբաղ» թերթի խմբագիր Արմենակ Կարապետ-
յանին, կուսակցական պատասխանատու աշխատողներ Ղևոնդ
Կարապետյանին, Թադե Գրիգորյանին⁵: Միր Ջաֆար Բաղիրովի
կողմից շրջանառության մեջ դրվեց «Ադրբեջանի անբաժանելի մաս
հանդիսացող Լեռնային Ղարաբաղ» արտահայտությունը: Դա
առաջօր, նույնիսկ Արցախը լիովին բռնազավթված, օգտագործ-
վում է Ադրբեջանի տարբեր տրամաշափի պաշտոնյաների կողմից:
Քննարկվող ժամանակահատվածում մարզային և շրջանային մի
շարք գործիչներ անհիմն բռնադատվել են: Ադրբեջանի կոմկուսի
կենտկոմը բազմիցս քննարկել է ղարաբաղյան շարժման հետ կապ-
ված հարցեր: Հարյուրավոր կոմունիստներ են հանվել կուսակ-
ցության շարքերից, լուծարվել են առանձին շրջանային կուսկազ-
մակերպություններ: Արցախահայությունը, չտանելով օտարի լուծը,
հնարավոր և անհնարին միջոցներով իր ազատության համար
պայքարում էր:

Նմանօրինակ քաղաքականությունը հանգեցնում էր մարզի հայ
բնակչության տեսակարար կշռի անընդհատ նվազմանը: Այսպես,
1921 թ. տվյալներով Լեռնային Ղարաբաղում ապրում էր 129 243
մարդ, որոնցից 122 426, այսինքն՝ 94,73 տոկոսը՝ հայեր էին, 6560՝
թուրքեր (5,07 տոկոս), իսկ 0,20 տոկոսը՝ 267 մարդ՝ հույներ, ռուս-

⁴Տե՛ս Խորհրդային Ղարաբաղ, հմ. 66, 5 սեպտեմբերի, 1931:

⁵Տե՛ս ԼՂՀ պետարխիվ, ֆ. 268, ց. 1, գ. 4, թ. 1, 5, 8, 11 և գ. 3, թ. 3, 14:

ներ, քրդեր⁶: Մինչև 1959 թ. հայերի թիվը կրճատվեց և հասավ 110,1 հազարի⁷:

1921–1988 թթ. ԼՂԻՄ–ում ստեղծվեցին աղբբեջանական 36 գյուղեր, որոնցից 15–ը հիմնվել են 1923–1926 թթ., 6–ը՝ 1926–1961 թթ., 12–ը՝ 1961–1977 թթ. և 3–ը՝ 1977–1989 թթ.⁸: Նոր աղբբեջանական գյուղեր հիմնելուն զուգահեռ՝ Բաքվի իշխանությունները եռանդուն կերպով բնակեցնում էին նաև նախկինում լքված և դատարկման ընթացքում գտնվող հայկական գյուղերը: Աղբբեջանի իշխանությունները գիտակցում էին, որ բնական աճի միջոցով մի քանի տասնամյակում կարելի էր լուծել Արցախի հայաթափման և յուրացման գործը: Ստեփանակերտն օրեցօր շրջափակվում էր աղբբեջանական բնակավայրերով:

Հայկական գյուղերի հայաթափման և աղբբեջանական բնակավայրերի ստեղծման գործընթացը մեծ չափեր ստացավ 1970–80–ական թվականներին Հ. Ալիևի ղեկավարության շրջանում: Աղբբեջանի պետական այրերը, հատկապես Հ. Ալիևը, կանխազգացել էին, որ ինքնավարության խորհրդային պետականության ձևը կարող էր օրինական պահանջով փոխարինվել ինքնորոշմամբ և անկախ պետականությամբ: 2001 թ. փետրվարին Միլլի մեջլիսի նիստում Հ. Ալիևը խոստովանել է, որ ինքն ամեն ինչ արել է, որպեսզի հայերը չբարձրացնեն Ղարաբաղի հարցը և այդ նպատակով հնարավորինս շատ աղբբեջանցիներ է բնակեցրել ԼՂԻՄ–ում⁹:

Հարկ է նշել, որ 1950–70–ական թթ. ԼՂԻՄ–ում Բաքվի իշխանությունների վարած ծրագրային ազգային քաղաքականության

⁶ St 'u **Карапетян М.**, Этническая структура населения Нагорного Карабаха в 1921 г. (По сельскохозяйственной переписи Азербайджана 1921 г.), Ер., 1991, с. 10.

⁷ St 'u Нагорный Карабах за 50 лет (1923–1973 гг.), статистический сборник, Степанакерт, 1974, с. 33.

⁸ St 'u **Բալայան Վ.**, Ազատագրության և պետականության համար պայքարի պատմական ու գաղափարական դրսևորումներն Արցախում (17-րդ դարի երկրորդ կես–2002 թ.), Եր., 2022, էջ 238:

⁹ St 'u «Бакинский рабочий», 24 февраля, 2001.

նպատակը ոչ միայն շարունակում էր մնալ երկրամասի աստիճանական հայաթափումը և այդ պարապն ադրբեջանցիներով լցնելը, այլև Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման և ՀԽՍՀ հետ վերամիավորման հնարավորության վերջնական ձախողումը:

Լեռնային Ղարաբաղում ստեղծված բարոյահոգեբանական, սոցիալ-տնտեսական, մշակութային, ինչպես նաև քաղաքական ծանր իրավիճակին Սփյուռքում քաջածանոթ էին: Նրանք ամեն կերպ ձգտում էին օգտակար լինել իրենց հայրենակիցներին: 1920-ական թթ. սկզբներին արցախահայության ազատագրական պայքարը համակարգում էր 1921 թ. Թավրիզում ստեղծված «Ղարաբաղի ազատագրման» միությունը: ՀՅԴ ջանքերով գաղտնի ճանապարհով Արցախում են հայտնվում այդ միության գործիչները, որոնք տեղի հայրենասեր ուժերի հետ միասին, փորձում են ժողովրդի մեջ կենսունակ պահել ազատագրական շարժման գաղափարները: Սփյուռքում, մասնավորապես Մերձավոր Արևելքի համայնքներում հրատարակվող պարբերականներում հայկական ազգային հիմնախնդիրների հետ միասին անընդհատ արծարծվում էր նաև Արցախի ազատագրման հետ կապված թեման: Այն իրավացիորեն համարում էին Հայկական հարցի մի մասը:

Արցախահայությանը փրկելու, ինչպես նաև պատմական արդարությունը վերականգնելու համար խորհրդային Հայաստանի ղեկավարությունը, և մանավանդ, մտավորականությունը նույնպես բազմիցս դիմել են կենտրոնական իշխանություններին:

ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու նպատակով ծավալվող ընդհատակյա պայքարն օրեցօր մեծ թափ էր ստանում: 1962 թ. Ն. Շահնազարովին մարզկոմի առաջին քարտուղարի պաշտոնում փոխարինեց Գուրգեն Մելքումյանը: Հայկական միջավայրում կուսակցական հիերարխիկ համակարգով անցած այս գործիչը լոյալ վերաբերմունք ուներ արցախահայ մտավորականության և ազատագրական շարժման կազմակերպիչների նկատմամբ: Համեմատաբար նպաստավոր պայմաններ ստեղծվեցին ազատագրական շարժման ծավալման համար: 1962 թ. Ստեփանակերտի ավտոշարասյան 300 աշխատակիցներ բողոք-նամակ գրեցին ԽՍՀՄ ղեկա-

վարությանը, որտեղ ներկայացրին մարզի սոցիալ-տնտեսական, մշակութային ծանր կացությունը, իրենց իսկ հայրենիքում ունահարված ազգային իրավունքները: Նրանք խնդրեցին միջոցներ ձեռնարկել ԼՂԻՄ-ը վերամիավորելու ՀԽՍՀ-ին: Մոսկվայից և Բաքվից եկած հանձնաժողովները, հորդորների և սպառնալիքների տակ, փորձեցին «լռեցնել» նամակի հեղինակներին: Չնայած դրան, 1962 թ. մի շարք մտավորականներ նմանօրինակ նամակներով դիմեցին ԽՍՀՄ կենտրոնին: Ադրբեջանի ղեկավարությունը ԼՂԻՄ-ի նկատմամբ վարում էր մտրակի և մեղրաբլիթի քաղաքականություն: Ժողովրդի դժգոհություններն ու ըմբոստացումները կանխելու նպատակով 1962 թ. Ադրբեջանի ԿԿ կենտրոնն ու կառավարությունը շուտափույթ ընդունեցին ծավալուն որոշում «Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի ժողովրդական տնտեսության զարգացման ու աշխատավորների մշակութային-կենցաղային սպասարկումը բարելավելու միջոցառումների մասին»¹⁰: Տեղական (լոկալ) բնույթի դժգոհություններն ահագնանալով վեր էին ածվում համաժողովրդական շարժման: Այս անգամ, 1963 թ., ԽՍՀՄ կենտրոնի առաջին քարտուղար Ն. Խրուշչովին հասցեագրված նամակի տակ կար 2500 ստորագրություն¹¹:

1965 թ. հունիսի սկզբին ԼՂԻՄ-ի 13 ղեկավար աշխատողներ և մտավորականներ առավել հանգամանալից նամակ հղեցին ԽՍՀՄ կենտրոնի, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի ու Մինիստրների խորհրդի ղեկավարությանը: Նամակում տարաբնույթ փաստերով ներկայացված էր մարզի գաղութային վիճակը և հատկապես ցույց էր տրված Ադրբեջանի ղեկավարության շովինիստական վերաբեր-

¹⁰ Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, Եր., 1994, էջ 208:

¹¹ Տե՛ս **Золян С.**, Нагорный Карабах, Проблема и конфликт, Ереван, 2001, с. 46; **Խաչատրյան Կ.**, Խորհրդային Հայաստանի ղեկավարության քայլերը ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ հետ վերամիավորելու ուղղությամբ (1945–1985 թթ.), Լեռնային Ղարաբաղի հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան, միջազգային գիտաժողով, զեկուցումների հիմնադրույթներ, 21–24 հունիսի, 2006, Եր., 2007, էջ 69:

մունքը ԼՂԻՄ-ի նկատմամբ¹²: Ազատագրական շարժման ղեկավարներից Բ. Ուլուքաբյանը հանդիպել է Լ. Բրեժնևի և Ա. Միկոյանի օգնականների և կենտկոմի համապատասխան բաժինների պատասխանատուների հետ: Նրանք խոստացել են անհապաղ միջոցառումներ ձեռնարկել՝ մարզում ստեղծված սոցիալ-տնտեսական ծանր կացությունը շտկելու և հայության համար բարվոք վիճակ ստեղծելու համար: Հարցը փակուղի մտցնելու նպատակով նամակը քննարկվում է Ադրբեջանի հանրապետության Մինիստրների խորհրդի նիստում, և մարզի սոցիալ-տնտեսական ու մշակութային կյանքի վերափոխման մասին 42 կետից բաղկացած որոշում ընդունվում¹³: Ինչևէ, այդ ամենն այդպես էլ մնաց թղթի վրա: Դրանից հետո նամակի հեղինակներից չորսը՝ Բ. Ուլուքաբյանը, Ս. Շաքարյանը, Լ. Գասպարյանը և Գ. Ստեփանյանը, 1965 թ. սեպտեմբերի 22-ին, նոր նամակ հղեցին ԽՄԿԿ կենտկոմի նախագահություն¹⁴: 1965 թ. դեկտեմբերի կեսերին ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու պահանջով, 45 ստորագրությամբ, ԽՍՀՄ ղեկավարությանը մարզից նոր նամակ ուղարկեցին: Չնայած այս նամակներն այդ պահին խորհրդային ամբողջատիրության պայմաններում ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին վերամիավորելու հարցում որևէ գործնական ընթացք չապահովեցին, այնուամենայնիվ, անհետևանք չմնացին: ԼՂԻՄ մտավորականության համարձակ քայլերը ա) գաղափարական թարմ լիցք հաղորդեցին արցախյան շարժմանը, բ) ժողովրդական նոր զանգվածներ ներգրավեցին ազատագրական պայքարի հորձանուտները, գ) հայրենի երկրի ճակատագրի նկատմամբ մատաղ սերնդի մեջ պատասխանատվության մեծ զգացում ներարկեցին, դ) ՀԽՍՀ մտավորականության և ղեկավարության հետագա գործողությունների համար վստահելի և պարարտ հենք նախապատրաստեցին:

Հերթական քայլը չուշացավ: 1966 թ. հուլիսին ազգային ինքնորոշման իր իրավունքից ելնելով՝ արցախահայությունը վերստին

¹²Տե՛ս **Ուլուքաբյան Բ.**, Արցախի պատմություն, Եր., 1994, էջ 260:

¹³Տե՛ս **Ուլուքաբյան Բ.**, Փորձության օրերի խորհուրդը, Ստեփանակերտ, 2010, էջ 77:

¹⁴Տե՛ս **Ուլուքաբյան Բ.**, Արցախի պատմությունը, էջ 261:

բարձրացրեց ԼՂԻՄ–ը ՀԽՍՀ–ին վերամիավորելու հարցը: Այս անգամ ԽՍՀՄ ղեկավարությանը հասցեագրած համախոսականի տակ ստորագրել էին երկրամասի 50 հազար քաղաքացիներ: Ձորաշարժի ենթարկվեց նաև ներքին սփյուռքը: ԽՍՀՄ տարբեր քաղաքներում ապրող հայ մտավորականներ փորձեցին սատարել հայրենակիցներին: ԽՍՀՄ ղեկավարությունն արձագանքեց ժողովրդական դժգոհություններին: 1966 թ. օգոստոսի 8–ին ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարությունը հանձնարարում է ՀԽՍՀ և ԱԽՍՀ իշխանությունների բարձրագույն մարմիններին՝ համատեղ քննարկել Լեոնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու հնարավորությունը և հարցի վերջնական լուծման համար համապատասխան առաջարկություն ներկայացնել ԽՄԿԿ կենտկոմ¹⁵: Վերոհիշյալ որոշումը հարցը խճճելու և այն օրակարգից հանելու բազմիցս փորձարկված լավագույն միջոցն էր: ՀԽՍՀ իշխանություններն այս խայծը հեշտությամբ կուլ տվեցին: Արցախում ծավալվող ազատագրական շարժմանը համահայկական բնույթ տալու նպատակով 1966 թ. օգոստոսին Երևանից 2000 հայ մտավորականների, այդ թվում Մ. Սարյանի, Պ. Սևակի, Հ. Սահյանի, Ե. Քոչարի ստորագրությամբ նամակ հղեցին ԽՄԿԿ կենտկոմի գլխավոր քարտուղար Լ. Բրեժնևին¹⁶: Չնայած 1966 թ. օգոստոսի 8–ի ԽՄԿԿ կենտկոմի քարտուղարության որոշումը քննարկումների փուլում էր, ՀԽՍՀ կուսակցական և խորհրդային ղեկավարները տեղեկացված էին, որ Ադրբեջանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Վ. Ախունդովը, Մ. Սուլյովի հետ համագործակցաբար, հայության նկատմամբ նոր դավեր են նյութում: ԽՍՀՄ ղեկավարությանը համայն հայության համար Արցախյան հիմնահարցի լուծման հրատապությունը հասու դարձնելու նպատակով ՀԿԿ

¹⁵ Տե՛ս *Перестройка и национальные отношения (о событиях в Нагорном Карабахе и вокруг него)*, Ер., 1989, с. 40.

¹⁶ Տե՛ս **Խաչատրյան Կ.**, Խորհրդային ղեկավարության քայլերը ԼՂԻՄ–ը ՀԽՍՀ հետ վերամիավորելու ուղղությամբ (1945-1985 թթ.), Լեոնային Ղարաբաղի հանրապետություն. անցյալը, ներկան և ապագան, միջազգային գիտաժողով, գեկուցումների հիմնադրույթներ, 21–24 հունիսի, 2006, Եր., 2007, էջ 69–70:

կենտկոմի առաջին քարտուղար Ա. Քոչինյանը և ՀԽՍՀ Մինիստրների խորհրդի նախագահ Բ. Մուրադյանը բազմաթիվ հիմնավորումներով 1966 թ. սեպտեմբերի 30-ին ԽՄԿԿ կենտկոմին նոր նամակ ուղարկեցին: «Լեոնային Ղարաբաղի վերամիավորումը Հայաստանին,- ասված է նամակում,- հնարավորություն կտա շտկել ստեղծված վատ կացությունը: Հանձին Հայաստանի միութենական հանրապետության և նրա հարևանությամբ գտնվող ազգային միատարրություն ունեցող ինքնավար մարզի, Խորհրդային Միության պայմաններում հայ ժողովուրդն ունի երկու պետություն: ...Նախիջևանի և Լեոնային Ղարաբաղի ՀԽՍՀ-ին վերադարձնելու հարցերի քննարկումը հրատապ անհրաժեշտություն ենք համարում: ...Հարցի դրական լուծումը կարևոր քաղաքական նշանակություն կունենա»¹⁷: ԽՄԿԿ Կենտկոմի քարտուղար Մ. Սուսլովի աջակցությամբ՝ Ադրբեջանի ղեկավարությունը, ինչպես միշտ, այս անգամ էլ քաղաքական շանտաժի և ազգամիջյան կոտորածի սպառնալիքով կասեցրեց հիմնահարցի հետագա որևէ քննարկում: Դեռ ավելին, ԽՍՀՄ կենտրոնական մարմինների թողտվության պայմաններում Ադրբեջանի ղեկավարությունը ճնշումներ սկսեց գործադրել ազատագրական շարժման ղեկավարների նկատմամբ: Բ. Ուլուբաբյանին, Ս. Շաքարյանին, Ա. Մանուչարյանին, Յա. Բաբալյանին, Բ. Ջանյանին, Ժ. Անդրյանին արտաքսեցին ԼՂԻՄ-ից, Լ. Գասպարյանին, Գ. Գաբրիելյանին, Գ. Ստեփանյանին ազատեցին զբաղեցրած պաշտոններից: Տասնյակ մարդիկ հեռացվեցին կուսակցությունից: Ժողովրդական հուզումները կանխելու նպատակով մարզում և նրան հարակից շրջաններում հայերի նկատմամբ բռնարարքներ ու սպանություններ կազմակերպվեցին: 1965-68 թթ. ազգամիջյան ընդհարումների, ժողովրդական հուզումների և բողոքների ճնշման ընթացքում 50 հայեր ազատագրվեցին: Նրանցից 20 հոգի գնդակահարվեցին կամ էլ այս կամ այն ձևով սպանվեցին բանտերում և աքսորավայրերում: 10 մարդ անհայտ կորավ, ավելի քան 150 հոգի բռնատեղահանվեց: Շարունակվող հետապնդումներ-

¹⁷ ՀԱԱ, ֆ. 1, ց. 46, գ. 65ա, թ. 1-9:

րի պատճառով 100 ընտանիք հեռացավ Լեոնային Ղարաբաղից¹⁸։ Չնայած այդ ամենին՝ 1971 թ. երևանաբնակ մի քանի տասնյակ նշանավոր մտավորականներ, այդ թվում՝ Մարտիրոս Սարյանը, Պարույր Սևակը, Գոհար Գասպարյանը դիմեցին ՀԽՍՀ և ԽՍՀՄ ղեկավարությանը՝ տագնապով ընդգծելով այն անօրինությունների մասին, որ կատարվում էր ԼՂԻՄ-ում։ «Բաքվից անվերջ եկող միլիցիան և պետական անվտանգության այլազգի զինվորներ, գրված էր նամակում, - լցվել ու պաշարել են մարզի կենտրոնը։ Չղադարող հարցաքննությունների ու հետապնդումների միջոցով ստորացնում են նրա բնակիչներին։ Ամեն օր բանտ են քշվում ազնիվներն ու համարձակները։ ... Այս բոլորի վերջը չի երևում։ Իսկ եթե երևում է, ապա դա վերջն է ամեն հայկականի, որ կենաց ու մահու գոյամարտերում պաշտպանվել է մինչև այսօր»¹⁹։

1960–70–ական թթ. Լեոնային Ղարաբաղում ազատագրական խմորումներին, հակաադրբեջանական շարժումներին բազմիցս անդրադարձել է Հ. Ալիևը։ Դեռևս 1960–ական թթ. վերջերին Ադրբեջանի ՊԱԿ-ի նախագահի պաշտոնում նա փորձել է ճնշել արցախահայության ազատագրական պայքարը։ Հ. Ալիևը 2002 թ., արդեն անկախ Ադրբեջանի նախագահի կարգավիճակով, ասել է. «Դա նոր հիմնահարց չէ (խոսքը վերաբերում է Լեոնային Ղարաբաղին - Վ. Բ)։ Այսինքն՝ դա սուր հակամարտություն է։ Այս հիմնահարցը սկսվել և շարունակվում է XX դարի սկզբից։ Անգամ խորհրդային ժամանակաշրջանում լավ վիճակում չէր։ Չնայած դրան, Լեոնային Ղարաբաղում մենք իրավիճակը վերահսկում էինք»²⁰։ 1970–ական թթ. Արցախում ազգային ազատագրական պայքարը զսպելու, հարցը ժողովրդագրական քաղաքականության միջոցով փակուղի մտցնելու և, այն վերջնական ճնշելու Ադրբեջանի իշխանությունների և մասնավորապես, Ալիևի գործողությունների մասին պատմել են ԼՂԻՄ-ի ադրբեջանցի նախկին բնակիչները։ Նրանցից Խո-

¹⁸ Տե՛ս **Սարումյան Ն.**, Լեոնային Ղարաբաղի ինքնավար մարզը 1960-1988 թվականներին, Եր., 2008, էջ 93 և 95։

¹⁹ «ԼՂ հանրապետություն», 23 նոյեմբերի, 1994։

²⁰ «Бакинский рабочий», 25 июля, 2002.

ջալուի նախկին բնակիչ Շուքուր Բաղիրովն ասել է. «Լեռնային Ղարաբաղի իրադարձությունները կարող էին տեղի ունենալ 1974 թ.: Սակայն Դուք, որպես տաղանդավոր անհատականություն. (խոսքը վերաբերում է Հ. Ալիևին, - Վ. Բ), կարողացաք մի գիշերվա ընթացքում այն կանխել: Ես դրա վկան եմ»²¹:

Դեռևս 1920–ական թթ. կոմունիստական գաղափարախոսության կողմից շրջանառության մեջ դրված, այսպես կոչված, «հայկական նացիոնալիզմի» դեմ համակարգված պայքար մղելու, ազգային ազատագրական ընդվզումները ճնշելու գործընթացին նոր լիցք հաղորդելու նպատակով Հ. Ալիևը 1973 թ. հոկտեմբերին փոխեց մարզի ղեկավարությունը: Գուրգեն Մելքումյանին ազատեցին կուսակցության մարզկոմի առաջին քարտուղարի պաշտոնից և նրա տեղը նշանակեցին Բորիս Կևորկովին: Առաջին հերթին աշխատանքից ազատեցին երկրամասի հոգսերով ապրող հայ ղեկավարներին: Նրանց փոխարինեցին Բաքվում մեծացած և դաստիարակված աղբրեջանամետ հայ գործիչներ: Սակայն տարիների ընթացքում հայկական միջավայրի ազդեցության տակ այսպես կոչված «հայկական նացիոնալիզմի» մասին Բ.Կևորկովի պատկերացումները լիովին փոխվեցին: Նա տեղում լավ հասկացավ Ադրբեջանի ղեկավարության ԼՂԻՄ-ում իրականացրած հակահայ քաղաքականության նպատակները: Նա դիմաշրջվեց դեպի սեփական ժողովուրդը և իր գործունեության առանցքը դարձրեց հայկական Արցախի զարգացումը:

ԼՂԻՄ-ում Ադրբեջանի վարած հակահայ քաղաքականությանը դիմակայելու նպատակով հրապարակավ հանդես եկան ՀԽՍՀ մտավորականության ներկայացուցիչները: ՀԽՍՀ իշխանությունները նույնպես այս հարցին անհաղորդ չմնացին: Խորհրդային Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Կարեն Դեմիրճյանի հանձնարարությամբ Բ. Ուլուբաբյանը 1975 թ. մարտի վերջին արցախյան հիմնահարցի և ԼՂԻՄ-ում տիրող կացության

²¹ Նույն տեղում, 2 июня, 1997.

մասին հանգամանալից տեղեկանք է պատրաստել²²: Հայաստանի գրողների միության վարչության անդամների հետ ունեցած հանդիպման ժամանակ Կ. Դեմիրճյանն ասել է. «Կգա հարմար ժամանակը, մենք կձեռնարկենք խոհուն և կտրական միջոցներ և կլուծենք գործյան հանգույցը. Լեոնային Ղարաբաղը կմիանա Հայաստանին»²³:

1976 թ. ԽՍՀՄ նոր սահմանադրության նախագծի համաժողովրդական քննարկման ժամանակ նորից արծարծվեց Արցախյան հիմնահարցը: Այս անգամ էլ Հ. Ալիևի և նրա համախոհների ճնշումների տակ հարցը հանվեց օրակարգից: Չնայած դրան՝ արցախահայությունն այդպես էլ չհաշտվեց ստեղծված իրավիճակի հետ: 1980-ական թթ. հասարակության մեջ տեղի ունեցող խմորումներն իրենց զգալուն արտահայտությունն ու դրսևորումները գտան երիտասարդության, հատկապես՝ ուսանողության շրջանում: Ազատագրական պայքարի վարակիչ գաղափարներով տարված՝ ուսանողները գաղտնաբար իրենց ջանքերն էին գործադրում գաղափարա-քարոզչական ու կազմակերպական աշխատանքների ուղղությամբ: Հատկանշական է այն փաստը, որ 1980-ական թթ. Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի մի խումբ ուսանողներ, որոնց թվում նաև այսօր Բաքվում պատանդության մեջ գտնվող ԱՀ ԱԺ նախագահ Դավիթ Իշխանյանը Երևանում ծաղիկներ են խոնարհել Մեծ եղեռնի զոհերի հուշարձանին: Այդ փաստը չի վրիպել ԼՂԻՄ պետական անվտանգության ծառայակիցների աչքից:

Այսպիսով, Լեոնային Ղարաբաղը խորհրդային Ադրբեջանին բռնակցվելուց և ԼՂԻՄ-ի կազմավորումից հետո, խորհրդային ամբողջատիրության պայմաններում արցախահայությունը, հաղթահարելով տեսանելի և անտեսանելի բոլոր խութերը, անընդհատ պայքարեց իր ազատության, Հայաստանին վերամիավորման և ազգային պետականության վերակերտման համար: Այդ ամենին

²² Ուլուբաբյան Բ., Արցախյան գոյապայքարը, էջ 287:

²³ Ուլուբաբյան Բ., Արցախի պատմությունը, էջ 268:

նոր լիցք հաղորդեցին Սփյուռքում և Խորհրդային Հայաստանում քննարկվող ժամանակահատվածում համազգային նշանակության հարցերի, մասնավորապես 1915 թ. Հայոց ցեղասպանության ճանաչման շուրջ ծավալված խմորումները:

Չնայած ծանր ժամանակներին, ԼՂԻՄ-ում հանդես եկեն ազատագրական պայքարը ուղղորդող գործիչներ, որոնք իրենց շուրջը համախմբելով ժողովրդին, հայկական երկրամասը ՀԽՍՀ-ին վերամիավորելու ակնկալիքով հազարավոր քաղաքացիների ստորագրությամբ համախոսական նամակներ էին հղել ԽՍՀՄ ղեկավարությանը: Ստեփանակերտից Մոսկվա հասած պատվիրակությունների անդամները խորհրդային ղեկավարության հետ քննարկել էին վերոհիշյալ կենսական նշանակության հարցի լուծման հնարավորությունները: Սակայն ամեն անգամ, հիմնահարցը փակուղի մտցնելու նպատակով, ԽՍՀՄ ղեկավարության աջակցությամբ Ադրբեջանի օրվա իշխանությունները ճնշումներ էին գործադրել ազատագրական շարժման ղեկավարների նկատմամբ: Նրանց մի մասին արտաքսեցին մարզից, հարյուրավոր մարդիկ հեռացվեցին կուսակցությունից և ձերբակալվեցին: Արձանագրվել են նաև բռնարարքների և սպանությունների դեպքեր:

Ակնհայտ է, որ խորհրդային տարիներին արցախահայության՝ վերելքներով ու վայրէջքներով ընթացող պայքարը 1988 թ. փետրվարին սկսված համաժողովրդական ու համազգային ազատագրական շարժման հենքը հանդիսացավ:

Ваграм Балаян

Армения, д.и.н., профессор, ИИ НАН

vahrambalayan@mail.ru

ORCID: 0009-0002-5696-9411

ВЛИЯНИЕ ОБЩЕАРМЯНСКОГО ПРОБУЖДЕНИЯ НА АКТИВИЗАЦИЮ НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНОЙ БОРЬБЫ В АРЦАХЕ В 1960–70-ЫХ ГОДАХ

Ключевые слова: Арцах, НКАО, Азербайджан, Армения, советский, Россия, освободительная борьба.

После насильственного присоединения Нагорного Карабаха к Советскому Азербайджану и формирования НКАО (Нагорно-Карабахской автономной области), в условиях тоталитарного режима, армяне Арцаха, преодолевая все видимые и скрытые препятствия, постоянно боролись за свою свободу, за воссоединение с Арменией и за восстановление национальной государственности. Новый импульс этой борьбе придали обсуждаемые в Диаспоре и в Советской Армении в тот период вопросы общенационального значения, в частности, вопрос о международном признании Геноцида армян.

Несмотря на трудные времена, в НКАО появились деятели, которые возглавили освободительное движение. Объединив вокруг себя народ, они отправляли коллективные письма, с тысячами подписей граждан в адрес руководства СССР с требованием воссоединения армянского региона с Армянской ССР. Прибывшие из Степанакерта в Москву делегации с советским руководством обсуждали возможности решения этого жизненно важного вопроса. Однако каждый раз, при содействии руководства СССР, азербайджанские власти оказывали давление на лидеров освободительного движения, с целью завести вопрос в тупик.

Некоторых из них выслали из региона, сотни людей были исключены из партии и арестованы. Были зафиксированы случаи насилия и убийств.

Борьба армян Арцаха в советские годы, проходившая с подъёмами и спадами, стала основой для всенародного и общенационального освободительного движения, начавшегося в феврале 1988 года.

Vahram Balayan

Armenia, Doctor of Science in History, Professor,

Institute of History, NAS RA

vahrambalayan@mail.ru

ORCID: 0009-0002-5696-9411

THE IMPACT OF THE PAN-ARMENIAN AWAKENING ON THE ACTIVATION OF THE NATIONAL LIBERATION STRUGGLE IN ARTSAKH IN THE 1960S–1970S

Keywords: Artsakh, NKAO, Azerbaijan, Armenia, Soviet, Russia, struggle for liberation.

Following the forced annexation of Nagorno-Karabakh to Soviet Azerbaijan and the formation of the NKAO (Nagorno-Karabakh Autonomous Oblast), under a totalitarian regime, the Armenians of Artsakh, overcoming all visible and hidden obstacles, constantly fought for their freedom, for reunification with Armenia, and for the restoration of national statehood. This struggle was given new impetus by the issues of national importance discussed in the Diaspora and in Soviet Armenia at that time, in particular, the issue of international recognition of the Armenian Genocide.

Despite difficult times, activists emerged in the NKAO to lead the liberation movement. Having rallied the people, they sent collective letters, containing thousands of signatures, to the USSR leadership

demanding the reunification of the Armenian region with the Armenian SSR. Delegations from Stepanakert arrived in Moscow to discuss possible solutions to this vital issue with the Soviet leadership. However, each time, with the assistance of the Soviet leadership, the Azerbaijani authorities exerted pressure on the leaders of the liberation movement, aiming to stalemate the issue. Some were expelled from the region, hundreds were expelled from the party and arrested. Cases of violence and murders were recorded.

The struggle of the Armenians of Artsakh during the Soviet years, which had its ups and downs, became the basis for the nationwide liberation movement that began in February 1988.

Իսկուհի Ավանեսյան
Հայաստան, պ.գ.թ., ԳԱԱ ՊԻ
iskuhi82@mail.ru
ORCID: 0009-0005-2491-5058

**ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ ՎԵՐԵԼՔՆ
ԱՐՑԱԽՈՒՄ 1980-ԱԿԱՆ ԹԹ.**

*Հիմնադրանք*¹ բռնակցում, Լեոնային Ղարաբաղ, Խորհրդային Ադրբեջան, հայաթափում, ազգային զարթոնք, հանրահավաքներ, համազգային պայքար:

Արցախյան շարժման սկզբնավորումը: ԼՂԻՄ կազմավորումից սկսած Խորհրդային Ադրբեջանի ղեկավարությունը կոպտորեն ոտնահարում էր ԼՂԻՄ հայ բնակչության իրավունքներն ու շահերը: Այդ ամենը դրսևորվում էր մարզի սոցիալ-տնտեսական զարգացումն արհեստականորեն կասեցնելու, ԼՂԻՄ-ը Ադրբեջանի հումքային կցորդը դարձնելու, ԼՂԻՄ-ի և Խորհրդային Ադրբեջանի միջև արտադրանքի ոչ համարժեք փոխանակում իրականացնելու, հայերի նկատմամբ խտրական կադրային քաղաքականություն վարելու, ԼՂԻՄ-ին հարող հայկական շրջանների վարչատարածքային կառուցվածքը մասնակիորեն վերափոխելու, հայկական արժեքները ոչնչացնելու և դրանք յուրացնելու, երկրամասն հայաթափելու փորձերի մեջ: Մարզը զրկված էր ամեն տեսակ տնտեսական ինքնուրույնությունից: Գործնականորեն վերացված էին բոլոր կապերը Հայաստանի հետ: Լեոնային Ղարաբաղի բռնակցման, երկրամասում տեղի ունեցող անօրինականությունների, խորհրդային Ադրբեջանի հակահայ դրսևորումների հետ արցախցիները երբեք էլ չհաշտվեցին: Նրանք իրենց դժգոհություններն ու բողոքը արտահայտում էին ներքին տարբեր ժողովներում, դիմումներ, հանրագրեր, նամակներ ուղարկում իշխանության տարբեր ներկայացուցիչներին: Լեոնային Ղարաբաղում ստեղծված բարոյահոգեբանա-

կան, սոցիալ-տնտեսական, մշակութային, քաղաքական ծանր իրավիճակից արցախահայությանը փրկելու, նաև պատմական արդարությունը վերականգնելու համար Խորհրդային Հայաստանի ղեկավարությունը, հատկապես մտավորականությունը բազմիցս դիմել են կենտրոնական իշխանություններին: Դեռևս 1945 թ. նոյեմբերին Խորհրդային Հայաստանի կոմկուսի կենտկոմի առաջին քարտուղար Գ. Հարությունյանը նամակով դիմել էր Ի. Ստալինին՝ խնդրելով վերանայել Լեռնային Ղարաբաղը Հայաստանին վերամիավորելու մասին հարցը¹: Նամակը ՀամԿ(Բ)Կ կենտկոմի քարտուղար Մալենկովն ուղարկում է Ադրբեջանի Կ(Բ)Կ կենտկոմի առաջին քարտուղար Մ. Ջ. Բադիրովին՝ ծանոթանալու, առաջարկություններ անելու, սակայն վերջինս տալիս է իր համաձայնությունը ԼՂԻՄ-ը առանց Շուշիի շրջանի Հայկական ԽՍՀ-ին միացնելուն՝ պայմանով, որ Ադրբեջանի կազմի մեջ մտցվեն ՀԽՍՀ երեք շրջանները, որոնք հարակից են Ադրբեջանին և ունեն նաև ադրբեջանցի բնակչություն: ՀԽՍՀ ղեկավարությունը մերժեց այդ տարբերակը, Լեռնային Ղարաբաղի հարցը նորից մտավ փակուղի²: Չնայած այդ ամենին, 1960-70-ական թթ. ընթացքում ԼՂԻՄ-ում և Հայկական ԽՍՀ-ում մարզը Մայր Հայրենիքին միավորելու հարցը չդադարեց քննակվել³: Արդեն 1970-1980-ական թթ. Արցախյան շարժումը շարունակեց ծավալվել, ստացավ համահայկական բնույթ:

1980-ական թթ. ԽՍՀՄ-ը հայտնվեց տնտեսական և քաղաքական խոր ճգնաժամի մեջ: 1985 թ. մարտին ԽՄԿԿ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընտրված Միխայիլ Գորբաչովը, հաշվի առնելով

¹ Տե՛ս **Բալայան Վ.**, Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, (1813-2006թթ.), Ստեփանակերտ, 2012, էջ 271:

² Տե՛ս **Բալայան Վ.**, Դրվագներ արցախահայության ազատագրական պայքարի և պետականակերտման պատմության, էջ 271:

³ Տե՛ս **Ուլուբաբյան Բ.**, Արցախի պատմությունը, սկզբից մինչև մեր օրերը, էջ 118:

երկրում առկա լուրջ տնտեսական և քաղաքական խնդիրները, ձեռնամուխ եղավ տնտեսության վերափոխմանը և կառավարման ձևերի կատարելագործմանը: ԽՍՀՄ Կենտկոմի 1985 թ. ապրիլյան պլենումն ընդունեց հասարակության արմատական «վերակառուցման» քաղաքականության կուրսը, որն ամրապնդվեց ԽՍՀՄ 27-րդ համագումարի (1986թ.) որոշումներով⁴: Հռչակված «վերակառուցման» ընթացքում յուրահատուկ կարևորություն տրվեց ազգային հարցին և այն առաջին պլան մղվեց Արցախում, որտեղ ազգային-ազատագրական պայքարն իր տարբեր դրսևորումներով ու ծավալներով, ընդհանուր առմամբ, չէր դադարել: Արցախի հայությունը, ոգեշնչված արմատական փոփոխություններ ենթադրող «վերակառուցման» քաղաքականության հռչակմամբ, կրկին բարձրացրեց դեռևս 1920-ական թթ. սառեցված Ղարաբաղյան հիմնահարցը⁵: 1985-1987 թթ. Արցախում մեծացավ բնակչության դժգոհությունը, ինչը հանգեցրեց լայն բացատրական աշխատանքների ծավալմանը ԼՂԻՄ ճնշող մեծամասնություն կազմող բնիկ հայ բնակչության շրջանում: ԼՂԻՄ-ը Հայաստանի հետ վերամիավորելուն նվիրված քարոզչական աշխատանքներն ակտիվացան, մանավանդ՝ 1986 թ. ամռանը: 1985 թ. հունիսից մինչև 1986 թ. մայիսն ընկած ժամանակահատվածում ժամանակակիցների վկայությամբ Ղարաբաղյան շարժումը դրսևորվում էր ոչ մեծ հավաքներով, որոնց շատ քիչ մարդ էր մասնակցում: Ստեփանակերտում ստորագրահավաքը հիմնականում իրականացվում էր քաղաքի պոլիկլինիկայի գրանցման բաժնի աշխատողների օգնությամբ: Իրականացվող «կիսաբացահայտ» գործունեությունը համակարգվում էր շարժման կազմակերպիչների կողմից: Ստեփանակերտում ստեղծվեցին շարժումը խթանող փոքր խմբեր, որոնք հրավիրում էին գաղտնի ժողովներ, հանգանակում դրամական միջոցներ, պատրաստում թռուցիկներ և կատարում մի շարք այլ կազմակերպչական աշխատանքներ:

⁴ Տե՛ս **Ազիզբեկյան Ռ.**, Հայաստանը վերակառուցումից մինչև անկախություն, Եր., 1992, էջ 8:

⁵ Տե՛ս **Карабахский вопрос. Истоки и сущность в документах и фактах (сост. Товмасян В., Атаджанян В., Нерсисян Ю., Балаян В.)**, Степанакерт, 1991, с. 96.

Նախաձեռնվում էին գումարել գյուղական, շրջանային ու քաղաքային տեղական մարմինների նիստեր՝ «Հայկական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին» օրակարգային հարցով: Այս աշխատանքներն ընկալվում էր որպես պատմական առիթ, որը վերջապես կարող էր ուղղել նախկինում թույլ տրված սխալը:

1986-1987 թթ. ընթացքում իրականացվեցին ստորագրահավաքի, ապա՝ հեռագրերի և հանրագրերի ձևակերպման աշխատանքները: Գործող խմբերը ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու խնդրանք-պահանջով, ինչպես նաև շրջանի բնակչությանը հուզող այլ խնդիրների վերաբերյալ հանրագրեր էին ուղարկվում շրջանային ու մարզային աստյաններ, Ադրբեջանական ԽՍՀ, Հայկական ԽՍՀ բարձրագույն ղեկավար մարմիններ և միութենական կենտրոն: Եթե կազմակերպիչների մի մասն աշխատանքներ էր տանում հանրագրերի պատրաստման ուղղությամբ՝ Մոսկվա մեկնող պատվիրակություններին հանձնելու նպատակով, ապա մեկ այլ խումբ նախապատրաստում էր կոլտնտեսություններում անցկացվող հաշվետու ժողովներում ներկայացնել ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու մասին հարցը: Արցախը Հայաստանին վերամիավորմանն ուղղված քարոզչական աշխատանքներ էին կատարում նաև 1986 թ. Ստեփանակերտում հիմնված «Արցախյան միություն» ընդհատակյա կազմակերպության կողմից⁶: Այն ղեկավարվում էր 11 հոգուց բաղկացած կոմիտեի կողմից և ուներ ծրագիր ու կանոնադրություն: Կազմակերպության բաժանմունքներ հիմնվեցին մարզի շրջաններում: Գաղտնի ստորագրահավաքներ իրականացնելուց բացի, կառույցը ձեռնամուխ եղավ նաև վերջին տասը տարիներին մարզի սոցիալ-տնտեսական վիճակի մասին տեղեկանք պատրաստելու գործին՝ ԽՄԿԿ Կենտկոմ ներկայացնելու նպատակով: Միությունը 1987 թ. ամռան և աշնան ընթացքում իրագործվեց նվազագույն ծրագիրը՝ հավաքվեց ավելի քան 80 հազար ստորագրություն, որը նոյեմբերի վերջին ներկայացվեց ԽՄԿԿ

⁶ Տե՛ս «Հայրենյաց պաշտպան» Ստեփանակերտ, 18.03.2003:

Կենսոկում⁷: Հարկ է նկատել, որ իրականացվող աշխատանքները նպաստեցին Հայաստանի հետ Արցախի վերամիավորման պահանջի բարձրացմանը:

Դրան հակառակ՝ բոլորովին այլ ծրագրեր ունեին Խորհրդային Ադրբեջանի ղեկավարները: 1987 թ. բացահայտ դարձան հայերին բռնի տեղահանելու նրանց ձգտումները, հատկապես Հյուսիսային Արցախում: Այդ ուղղությամբ առաջին քայլերն իրականացվեցին Շամխորի շրջանի Չարդախլու հայկական գյուղում, որի համախմբումը վստահություն էր ներշնչում շրջակա հայկական ամբողջ գյուղախմբին⁸: Պատմական հայրենիքի ազգային գոյատևման և Մայր Հայաստանի հետ նրա վերամիավորման համար, Հյուսիսային Արցախի հայերը 1987 թ. միացան ստորագրահավաքին և սկսեցին համագործակցել ԼՂԻՄ-ում գործող ընդհատակյա խմբերի հետ: 1988 թ. սկզբներին շարժումը նոր, հուժկու թափ առավ: Անհրաժեշտ էր ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ հետ վերամիավորելու մասին Հռչակագիրը⁹ դնել համաժողովրդական քննարկման ու համապատասխան որոշում կայացնել: Շարժման նախաձեռնող խմբերը կազմեցին ժողովների անցկացման ժամանակացույց, որը հիմնականում համապատասխանեցվեց ԼՂԻՄ-ում ավանդաբար փետրվարին անցկացվող տնտեսությունների ղեկավարների հաշվետու ընտրական ժողովների ժամանակացույցի հետ: Այդ ժողովներում ներկայացվեց Լեռնային Ղարաբաղը Հայկական ԽՍՀ հետ վերամիավորելու մասին Հռչակագիրը, որն ամենուրեք հավանության արժանացավ: Այդ գործընթացը նոր հույսեր արթնացրեց

⁷Տե՛ս «ԼՂ Հանրապետություն», Ստեփանակերտ, 22.01.1998:

⁸ Տե՛ս «Сельская жизнь», Москва, 24.12.1987. Մի քանի ամիս շարունակված բռնությունները հասցրին նրան, որ ոստիկանության կազմակերպած ուժերով շուրջ 200 ադրբեջանցիներ զինված հարձակում գործեցին Չարդախլուի վրա: Իշխանության մարմիններն ամեն կերպ քողարկեցին այդ իրողությունը: Միայն «Սելվակյա ժիզն» թերթում, ուշացումով, հաջողվեց նկարագրել, թե ինչպիսի ահավոր բռնություններ ու ապօրինություններ են թույլ տրվել Չարդախլու գյուղի հայ բնակիչների նկատմամբ:

⁹ Տե՛ս «Լուսարար», Ստեփանակերտ, թիվ 2-3, 11.02. 2013:

մարդկանց մեջ և հավատ կար, որ Արցախի հարցը կարող է լուծվել խաղաղ ճանապարհով: Միաժամանակ շարունակվում էր ստորագրությունների փաթեթների հոսքը Մոսկվա: Շարժումը խեղդելու նպատակով, 1988 թ. փետրվարին Ադրբեջանի ԿԿ կենտկոմի ներկայացուցիչները ժամանեցին Լեռնային Ղարաբաղ: Փետրվարի 11-12-ին մարզի շրջաններում կուսակցական ակտիվի նիստեր գումարեցին, որտեղ Ադրբեջանի ԿԿ կենտկոմի ներկայացուցիչները պահանջեցին ԼՂԻՄ-ը ՀԽՍՀ-ին միավորելու պահանջը դատապարտող որոշումներ կայացնել¹⁰: Պետք է նշել, որ նրանց այդ նախաձեռնությունն արդյունք չտվեց: Մարզի շրջաններում և Ստեփանակերտում նախաձեռնող խմբերի համառ աշխատանքների արդյունքում Ադրբեջանի իշխանությունների բոլոր նախաձեռնությունները ձախողվեցին, և փետրվարի 12-ից մարզի հայ բնակչության պայքարը դարձավ զանգվածային: Շարժման ակտիվիստներին հաջողվեց փետրվարի 13-ին Ստեփանակերտում անցկացնել համաժողովրդական հանրահավաք, որին մասնակցում էին ուսանողներ, ձեռնարկությունների աշխատավորական կոլեկտիվներ՝ իրենց ցուցապաստառներով: Այդ օրը թերևս դարձավ Ղարաբաղյան ազգային-ազատագրական շարժման ժամանակակից փուլի ելակետը: ԼՂԻՄ մարզային խորհրդի արտահերթ նստաշրջան հրավիրելու և մարզը Ադրբեջանի կազմից դուրս բերելու հարցի քննարկումը դարձավ հրամայական պահանջ:

Մարզխորհրդի նստաշրջանի անցկացման համար ստեղծվեց նախաձեռնող խումբ, որի անդամների ուսերին էր ծանրացած նստաշրջանի անցկացման և ակնկալվող պատմական փաստաթղթի ապահովման պատասխանատվությունը: Այդ օրը Ստեփանակերտում գտնվող Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Ք. Բադիրովի հրահանգով ամենուրեք խոչընդոտներ էին ստեղծվում, որպեսզի պատգամավորները շրջաններից չկարողանան հասնել մարզկենտրոն:

Ուժերի մեծ լարումով 1988 թ. փետրվարի 20-ի երեկոյան ԼՂԻՄ

¹⁰ Տե՛ս «Բերդ», Ասկերան, 10.01.2008:

պատգամավորների 20-րդ գումարման մարզային խորհրդի գումարած արտահերթ նստաշրջանն ընդունեց որոշում, որտեղ, մասնավորապես, ասվում էր. «...միջնորդել ԽՍՀՄ Գերագույն խորհրդի առջև՝ ԼՂԻՄ-ը Ադրբեջանական ԽՍՀ կազմից Հայկական ԽՍՀ կազմ հանձնելու հարցին դրական լուծում տալու մասին»¹¹: Փաստորեն նստաշրջանի որոշումը հիմնվել է ԽՍՀՄ գործող Սահմանադրության և օրենքների վրա, որոնք ինքնավար կազմավորումների ժողովուրդներին և հոծ ապրող ազգային խմբերին ԽՍՀՄ-ից կամ միութենական հանրապետությունից դուրս գալու և իրենց ճակատագիրը տնօրինելու հնարավորություն էին ընձեռում: Կենտրոնն արցախահայության նկատմամբ անհանդուրժողական դիրք գրավեց, իսկ Բաքուն որդեգրեց բիրտ ուժի և բռնության քաղաքականությունը՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի հայ բնակչության սահմանադրական պահանջների չեզոքացմանը, նպատակ ունենալով այդ ճանապարհով կասեցնել համաժողովրդական պայքարը: Դրա մասին է վկայում պետական ահաբեկչության քայլը՝ Սումգայիթի հայերի կոտորածը, որը սկիզբ դրեց Ադրբեջանի հայության բռնազաղթի առաջին փուլին: Երեք օր ջարդարարների խմբերը ներխուժում էին հայերի բնակարանները և կոտորում անպաշտպան մարդկանց: Ոճրագործությունը ոչ միայն չընկճեց հայ ժողովրդին, այլև, ընդհակառակը, նրան էլ ավելի համախմբեց իր ազգային նպատակների իրագործման գաղափարի շուրջ: Այլևս ակնհայտ էր, որ Ղարաբաղյան հիմնախնդիրը չի կարող լուծվել խաղաղ և ժողովրդավարական ճանապարհով:

Համազգային պայքարի վերելքը: Ղարաբաղյան շարժմանը սատար կանգնելու համար 1988 թ. փետրվարի 21-ին Հայկական ԽՍՀ-ում զանգվածային ելույթների մեծ ալիք սկիզբ առավ: Ազատագրական շարժումը համակարգելու նպատակով փետրվարի 22-ին ստեղծվեց «Ղարաբաղ» կոմիտեն¹²: 1988 թ. մարտի սկզբներին Հայաստանում գործող «Ղարաբաղ» կոմիտեին համան-

¹¹ «Խորհրդային Ղարաբաղ», 21.02.1988:

¹² ՀԱՍ, ֆ. 1678, ց. 1, գ. 1, թ. 18-19:

ման հասարակական-քաղաքական կառույց ստեղծվեց նաև Արցախում՝ «Կոունկ»-ը¹³։ Այս մարմիններն էլ դարձան ապագայում ստեղծվելիք հայկական ազգային երկու պետությունների իշխանությունների նախաշավիղը։ Երկու կառույցների ակտիվ մասնակցությամբ Երևանում և Ստեփանակերտում կազմակերպվում էին բազմահազարանոց հանրահավաքներ, դրան զուգահեռ տարբեր կոլեկտիվների կողմից կազմում էին դիմում-նամակներ՝ ուղղված տեղական իշխանությանը, կենտրոնին, ինչպես նաև պատվիրակություններ ուղարկում Մոսկվա՝ հիմնախնդրին դրական լուծում ստանալու հույսով։ Հանրահավաքներին զուգահեռ ինքնավար մարզում և Երևանում տարբեր կոլեկտիվների կողմից կազմվում էին դիմում-նամակներ՝ ուղղված տեղական իշխանությանը, կենտրոնին, որտեղ հանրային կարծիքից զատ նաև պահանջ էին ներկայացնում։ Հայկական ԽՍՀ Գերագույն խորհրդի 1988 թ. հունիսի 15-ի նստաշրջանում քննարկվեց և համաձայնություն տրվեց ԼՂԻՄ-ը Հայկական ԽՍՀ-ին վերամիավորելու վերաբերյալ մարզային խորհրդի որոշմանը։ Միաժամանակ, հանրապետության Գերագույն խորհրդի նստաշրջանը դիմեց ԽՍՀՄ Գերագույն խորհրդին խնդրելով քննարկել և դրականորեն լուծել այդ հարցը¹⁴։ Նման գործելակերպն անակնկալ էր կենտրոնի համար և, շատ չանցած, 1988 թ. հուլիսի 18-ին, ԽՍՀՄ Գերագույն խորհրդի նախագահության նիստում ընդունվեց որոշում, որի համաձայն, մերժվեցին Լեռնային Ղարաբաղի մարզային և Հայկական ԽՍՀ Գերագույն խորհուրդների խնդրանքները¹⁵։ Արցախում և Հայաստանում հանրահավաքները, ցույցերը, գործադուլները, դասադուլները շարունակվեցին 1988 թ. հոկտեմբեր-նոյեմբեր ամիսներին, չնայած, որ Մոսկվան և Ադրբեջանը սաստկացնում էին բռնությունները շարժման կազմակերպիչների և առհասարակ ողջ հայ ժողովրդի նկատմամբ։ Այդ օրերին Ադրբեջանում ամենուրեք հայ ազգաբնակ-

¹³ Տե՛ս **Աբրահամյան Հ.**, Կոունկ, Ստեփանակերտ, 2013, էջ 40։

¹⁴ Տե՛ս «Խորհրդային Հայաստան», 16.06.1988։

¹⁵ Տե՛ս «Правда», 20. 08.1988.

չության նկատմամբ իրագործվում էին բռնարարքներ՝ ստիպելով հեռանալ իրենց բնակության վայրերից և ըստ էության տեղահանության ենթարկվել: Որքան էլ հայ ժողովրդի համար ծանր էր 1988 թ., այնուամենայնիվ, այն պատմության մեջ մտավ որպես համազգային զարթոնքի տարի:

Հաշվի առնելով ստեղծված բարդ իրադրությունը, կենտրոնի որոշմամբ 1989 թ. հունվարի 12-ին ԼՂԻՄ-ում ստեղծվեց Հատուկ կառավարման կոմիտե ԽՄԿԿ Կենտկոմի բաժնի վարիչ Ա. Վոլսկու գլխավորությամբ¹⁶: Կենտրոնը կատարեց ոչ ստանդարտ քայլ՝ ԽՍՀՄ ԳԽ նախագահության 1989 թ. հունվարի 12-ի որոշմամբ դադարեցվեց ԼՂԻՄ մարզխորհրդի և մարզկոմի գործունեությունը, ինչը ԽՍՀՄ Սահմանադրության և ԽՄԿԿ կանոնադրության կոպիտ խախտում էր: Հատուկ կառավարման կոմիտեին վերապահվեցին մարզի պետական իշխանության լիազորությունները: Նոր վարչակարգի ստեղծումը հայ ժողովրդի մեջ Արցախյան հիմնահարցի լուծման աղոտ հույս արթնացրեց: Կոմիտեն որոշակի միջոցառումներ ձեռնարկեց ԼՂԻՄ-ի, Հայաստանի և կենտրոնի հետ ուղիղ տնտեսական կապեր ստեղծելու ուղղությամբ, սակայն՝ իրավական անորոշ կարգավիճակով: Կոմիտեն երբեք էլ լիազորված չէր բավարարելու արցախահայության պահանջը, ինչն էլ նպաստեց մարզում լարվածության սրմանը: Եթե շարժման առաջին ամիսներին Մոսկվայի քայլերում դեռ կարելի էր տեսնել որոշակի տրամաբանություն, այն է՝ քաղաքական խնդիրը տեղափոխել սոցիալ-տնտեսական հարթություն և լրացուցիչ ներդրումների խոստումներ տալ, ապա արդեն 1989 թ. ԼՂ Հատուկ կոմիտեի ստեղծմամբ և կարճ ժամանակ անց դրա լուծարմամբ՝ կենտրոնական իշխանությունն ակնհայտորեն հեռացավ ժողովրդավարության՝ նույնիսկ իր կողմից պատկերացվող ուղեգծից: ԼՂԻՄ-ում հիմնահարցի շուրջ լարվածությունը մի քանի ամսում այնքան աճեց, որ Արցախի հայությունը ստիպեց արտակարգ քայլի դիմել. ժողովրդի բախտը տնօրինելու նպատակով 1989 թ. օգոստոսի 16-

¹⁶ Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 15.01.1989:

ին Ստեփանակերտում տեղի ունեցավ Լեոնային Ղարաբաղի լիազոր ներկայացուցիչների համագումար, որն ընտրեց Ազգային խորհուրդ¹⁷: Սա կարևոր, միաժամանակ նաև հարկադրված քայլ էր, որի նպատակն էր ներկայացուցչական մարմիններից ապօրինի զրկված արցախահայությանը վերադարձնել ընտրելու և ընտրվելու նրա անքակտելի իրավունքը, որը կարտահայտեր ԼՂ-ի հայության միասնական կամքը: Խորհրդի համագումարում ընդունվեց որոշում, համաձայն որի մինչև ժողովրդական պատգամավորների մարզխորհրդի ու կուսակցության մարզկոմի գործունեության վերականգնումը՝ երկրամասի բարձրագույն գործադիր իշխանության լիազորությունները հանձնվում են Ազգային խորհրդին: Համագումարն ընդունեց Հռչակագիր, որի մեջ նշվում էր, որ Լեոնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի գործերին Ադրբեջանական ԽՍՀ-ի միջամտությունը գնահատվելու է որպես ագրեսիայի ակտ և կստանա համարժեք պատասխան¹⁸: Փաստորեն ժողովրդաընտիր իշխանությունը Ադրբեջանին պարզ դարձրեց ուժի դիրքերից արցախահայության հետ խոսելու անհեռանկարայնության մասին: Ադրբեջանի և Մոսկվայի իշխանությունների կողմից Ազգային խորհուրդն անօրինական համարվեց, որի հետևանքը հանդիսացավ Արցախի դեմ հայահալած քաղաքականության ուժեղացումը: 1989 թ. հուլիսի 21-ից Ադրբեջանի կողմից Հայաստանը և Լեոնային Ղարաբաղը ենթարկվեցին տնտեսական շրջափակման: Այդ օրերի համապատկերում առանձնացվում է շահումյանցիների քայլը: Հուլիսի 26-ին Շահումյանի շրջանային խորհրդի նստաշրջանում որոշում ընդունվեց շրջանը ԼՂԻՄ-ին միավորելու մասին¹⁹: Այսպիսով, Հյուսիսային Արցախը, որն ընդգրկված էր ազգային ազատագրական պայքարի մեջ, առաջ քաշեց կենսական նշանակություն ունեցող հարց: Ադրբեջանի Գերագույն խորհուրդը թշնամանքով ընդունեց ԼՂԻՄ-ի հետ միավորվելու մասին շահումյանցիների և գետաշեն-

¹⁷ Տե՛ս **Բաղդյան Վ.**, Ֆենոմեն, Ստեփանակերտ, 1998, էջ 19:

¹⁸ Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ» 17.08.1989:

¹⁹ Տե՛ս «Մոռվի դողանջներ», 30.06. 1995:

ցիներին որոշումը: Հյուսիսային Արցախի համար փակվեց Ադրբեյջանի տարածքով ԼՂԻՄ-ին կապող միակ մայրուղին, դադարեցվեցին բոլոր կարգի մատակարարումները, ընդհատվեցին կապի միջոցները, ինչը ստիպեց հայերին քայլեր ձեռնարկել ինքնապաշտպանության համար: Մարզի հայ բնակչությունն ուժերի գերլարումով փորձում էր պաշտպանել իր ֆիզիկական գոյությունը, իսկ ԽՍՀՄ կենտրոնական իշխանությունները այդ օրերին շարունակում էին վարել հակահայկական քաղաքականություն: Դրա մասին է վկայում նոյեմբերի 28-ի որոշումը, ըստ որի Լեռնային Ղարաբաղը նորից բռնակցվում է Ադրբեյջանի: Սույն որոշումը²⁰ մարզը պետք է տնօրիներ հանրապետական Կազմկոմիտեն, որը գլխավորում էր Ադրբեյջանի Կոմկուսի կենտկոմի երկրորդ քարտուղար Վ. Պոլյանիչկոն: Նրա առջև ադրբեյջանական իշխանությունները խնդիր էին դրել երկրամասում հոգուտ ադրբեյջանցիների փոխել ժողովրդագրական իրավիճակը: Ելնելով դեպքերի զարգացման նման ընթացքից՝ ՀԽՍՀ Գերագույն խորհուրդը և Լեռնային Ղարաբաղի Ազգային խորհուրդը 1989 թ. դեկտեմբերի 1-ին համատեղ որոշում են ընդունում Հայկական ԽՍՀ-ին Լեռնային Ղարաբաղի վերամիավորման մասին²¹: Այդ որոշումը ոչ միայն արտահայտում էր մարզի հայ բնակչության իդեերն ու ցանկությունները, այլև որոշակորեն ապահովում նրա անվտանգությունը: Այսպես, իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված ժամանակաշրջանում ծավալված զանգվածային բռնությունների ալիքը չկարողացավ կոտրել հայ ժողովրդի համառ կամքը, ավելին համագլխին պայքարը նոր փուլ մտավ և հասավ հայ ժողովրդի համար խիստ կարևոր իրողությանը՝ ԼՂՀ կազմավորման գործընթացին:

Ամփոփելով, արձանագրենք հետևյալ եզրակացությունները.

1. Արցախահայության ազգային-ազատագրական շարժումը երբեք էլ հանկարծակի չի սկսվել, այն հասունացել էր տասնամյակների ընթացքում, սակայն խորհրդային ամբողջատիրության պայ-

²⁰ Տե՛ս «Խորհրդային Ղարաբաղ», 30.11.1989:

²¹ «Խորհրդային Հայաստան», 03.12.1989:

մաններում՝ միութենական կենտրոնի հանցավոր թողտվությամբ Ադրբեջանի իշխանությունների կողմից այն հակազդվել է ուժային ճնշումներով:

2. Իրադարձությունների վերլուծությունը ցույց է տալիս, որ նշված ժամանակաշրջանում ծավալված զանգվածային բռնությունների ալիքը չկարողացավ կոտրել հայ ժողովրդի համառ կամքը: Արցախյան շարժումը ճնշելու նպատակով Ադրբեջանը Լեռնային Ղարաբաղի բնիկ բնակչության դեմ իրականացրեց պատժիչ քայլեր՝ հայերի բռնի տեղահանման գործողություններ: Չնայած այդ ճնշումներին, արցախահայերը դիմակայեցին բոլոր մարտահրավերներին և համազգային պայքարի արդյունքում կազմավորվեց Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

3. Ադրբեջանը չհամակերպվելով իր կողմից սանձազերծած պատերազմի արդյունքում Արցախի ազատագրության և արցախահայության պետականակերտման փաստի հետ, տասնամյանկեր շարունակ փորձում էր խնդիրը հոգուտ իրեն լուծել ռազմական ճանապարհով: Վերջինիս ռազմական ագրեսիայի հետևանքը եղավ 2023 թ. Արցախի ամբողջական հայաթափումը: Ստեղծված վիճակում առավել քան հրատապ են միջազգային անվտանգային երաշխիքներով Արցախի ժողովրդի հավաքական, արժանապատիվ վերադարձի և նրանց ինքնիշխանության իրավունքի վերականգնման հարցերը:

Искуи Аванесян

Армения, к.и.н., ИИ НАН

iskuhi82@mail.ru

ORCID: 0009-0005-2491-5058

НОВАЯ ВОЛНА БОРЬБЫ ЗА НАЦИОНАЛЬНЫЕ ИДЕИ В АРЦАХЕ В 1980-Х ГОДАХ

Ключевые слова: Нагорный Карабах, аннексия, Советский Азербайджан, выселение армян, национальное пробуждение, митинги, общенациональная борьба.

Борьба за Арцах в 1918-1920 гг. завершилась решением Кавказского бюро Коммунистической партии, принятое 5 июля 1921 года, согласно которому Карабах был незаконно передан в состав Советского Азербайджана. В 1923 году в составе Азербайджанской Социалистической Советской Республики была образована Нагорно-Карабахская автономная область, что фактически заморозило Карабахский конфликт. Однако, в связи с армянофобской политикой, проводимой Советским Азербайджаном в НКАО, а также стремлением восстановить историческую справедливость и добиться воссоединения НКАО с Армянской ССР, борьба в Арцахе, начавшаяся в 1960-х годах, активизировалась особенно в 1980-е годы. В ответ на национальное пробуждение арцахских армян в Азербайджане были предприняты карательные действия и совершены преступления в отношении коренного населения. Исследования показывают, что на протяжении десятилетий в Арцахе и Армянской ССР не смирились с незаконной аннексией этих территорий Советским Азербайджаном, настаивая на изменении сложившейся ситуации и восстановлении исторической справедливости. Однако, существующая политическая система СССР поддерживала Советский Азербайджан, а общенациональное

движение воспринималось как проявление национализма и антисоветской деятельности.

Результаты проведенного исследования позволяют утверждать, что в годы советской власти борьба армян Арцаха, несмотря на периодические взлеты и падения, с февраля 1988 года превратилась в общенациональное освободительное движение. Исходя из проведенного исследования, можно сделать вывод, что в рассматриваемый период общенациональная борьба, начавшаяся в Нагорном Карабахе, благодаря внутренней самоорганизации армян Арцаха, сыграла ключевую роль в восстановлении их государственности.

Iskuhi Avanesyan

Armenia, PhD in History,

Institute of History of NAS

iskuhi82@mail.ru

ORCID: 0009-0005-2491-5058

THE NEW FASE OF STRUGGLE FOR NATIONAL IDEAS IN ARTSAKH IN THE 1980S

Keywords: Nagorno-Karabakh, annexation, Soviet Azerbaijan, expulsion of Armenians, national awakening, rallies, nationwide struggle.

The struggle for Artsakh during 1918–1920 concluded with the decision of the Caucasus Bureau of the Communist Party, adopted on July 5, 1921, which placed Karabakh under the jurisdiction of Soviet Azerbaijan. In 1923, the Nagorno-Karabakh Autonomous Region was established within the Azerbaijan Soviet Socialist Republic, effectively freezing the Karabakh conflict for several decades. However, due to the Armenophobic policies implemented by Soviet Azerbaijan in the NKAR, as well as the desire to restore historical justice and achieve the

reunification of the NKAR with the Armenian SSR, the struggle in Artsakh, which began in the 1960s, particularly intensified in the 1980s. In response to the national awakening, Azerbaijan took punitive actions and committed crimes. Research shows that for decades, both in Artsakh and in the Armenian SSR, there was no acceptance of the annexation of these territories by Soviet Azerbaijan, with demands for changing the existing situation and restoring historical justice. However, the existing political system of the USSR was harsh and unequivocally supported Soviet Azerbaijan, while the nationwide movement was perceived as a manifestation of nationalism and anti-Soviet activity.

The results of the conducted research suggest that during the Soviet period, the struggle of the Armenians of Artsakh, despite periodic ups and downs, became the foundation of a popular and nationwide liberation movement starting in February 1988. Based on the conducted research, it can be concluded that during the considered period, the nationwide struggle that began in Nagorno-Karabakh, thanks to the internal self-organization of the Armenians of Artsakh, played a key role in the restoration of their statehood.

Մհեր Հարությունյան
Հայաստան, պ.գ.թ., ԳԱԱ ՊԻ
mherharout@gmail.com
ORCID: 0000-0002-0719-8860

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՅԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ «ՄԱՐՏԻԿ» ԹԵՐԹԻ ԷԶԵՐՈՒՄ

Հիմնադրանք՝ Արցախ, «Մարտիկ» թերթ, ԽՍՀՄ ազգային քաղաքականություն, իրավունքների պաշտպանություն, Պաշտպանության բանակ, էթնիկ խտրականություն, պետական ռեպրեսիաներ, պատմահամեմատական վերլուծություն, ազգային ինքնություն, մեղիա:

Արցախի հիմնահարցի ուսումնասիրման առանցքային ուղղություններից մեկը խորհրդային տարիներին Արցախի բնիկ հայության հիմնարար իրավունքների ոտնահարման փաստերի վերախմաստավորումն ու դրանց հետադարձ վերլուծությունն է՝ համադրելով պաշտոնական ու ոչ պաշտոնական աղբյուրները: Ներկայացվող հետազոտության առարկան է Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակի «Մարտիկ» պաշտոնաթերթի հրապարակումների համակարգային վերլուծությունը՝ ԽՍՀՄ ազգային քաղաքականության, իրավունքի և ինքնության խնդրի համատեքստում:

Ուսումնասիրության նպատակն է բացահայտել, թե ինչպես է «Մարտիկ»-ը՝ որպես մեղիա հարթակ, հետևողականորեն անդրադարձել Արցախի բնիկ հայության նկատմամբ խորհրդային շրջանի քաղաքական և մշակութային ճնշումներին, ինչ դերակատարում է ունեցել Արցախյան շարժման իրավաքաղաքական և պատմական հիմքերի ձևավորման մեջ, ինչպես նաև ինչպիսի փաստավերազրական արժեք են ներկայացնում թերթի հրապարակումները արդի պատմագիտական ուսումնասիրությունների համար: Դրա շրջանակում դիտարկվում են միաժամանակ հետևյալ խնդիրները՝

թերթի թեմատիկ և գաղափարական ուղղությունների բնութագրում, ԽՍՀՄ ազգային քաղաքականության քննադատության մեխանիզմների բացահայտում, Արցախյան շարժման վերափաստավորման ու իրավական հիմնավորման գործում թերթի դերի վերլուծություն, «Մարտիկ»-ի հաղորդակցային ռազմավարության սոցիալ-քաղաքական ազդեցության գնահատում:

Հետազոտությունն արդիական է մի քանի տեսանկյունից: Նախ, «Մարտիկ»-ի մեղիա գործունեությունը երկար ժամանակով դուրս է մնացել ակադեմիական ուշադրությունից, թեև նրա բովանդակային և գաղափարական նշանակությունը ակնառու է Արցախի ազգային-ազատագրական պայքարի վերափաստավորման համատեքստում: Երկրորդ՝ Արցախի անկախության շրջանի մամուլի՝ որպես ազգային ինքնության հենասյան գործառույթը, մեր կարծիքով, անբավարար է արժևորված Հայաստանի Հանրապետության և Արցախի պատմագրության մեջ: Երրորդ՝ հետխորհրդային քաղաքացիական գիտակցության և իրավաքաղաքական հիշողության վերակազմավորումը հնարավոր չէ առանց նման մեղիա աղբյուրների ընդգրկման: Եվ չորրորդ՝ նորագույն պատմության վերարժևորումը՝ խորհրդային ժառանգության մասով, պահանջում է դիմել մեղիա հարթակների իրականացրած վերհուշի և փաստավավերագրման ջանքերին: «Մարտիկ»-ը, որպես հետխորհրդային իրողությունում ձևավորված գաղափարաքաղաքական մամուլ, կարողացել է վերածվել պատմական հիշողության վերականգնման հանրային տարածքի՝ միաժամանակ արձագանքելով ինչպես ազատագրական պայքարի ընթացքին, այնպես էլ խորհրդային անցյալի հետ առերեսվելու հանրային պահանջին:

Մեթոդաբանական առումով կիրառվել են մեղիա վերլուծություն, պատմահամեմատական և պատմական հետազոտական մեթոդներ, որոնք թույլ են տալիս համադրաբար ուսումնասիրել ինչպես բովանդակային թեմատիկան, այնպես էլ դրա հաղորդակցային գործառույթը: Հիմնվելով «Մարտիկ» պաշտոնաթերթի տասնյակ համարների բովանդակային վերլուծության վրա՝ հետազոտությունը կառուցվում է թե՛ թերթում զետեղված խմբագրական-

ների, հարցազրույցների, ընթերցողական արձագանքների, և թե՛ քաղաքական փաստաթղթերի ու մենագրությունների հրապարակումների համադրությամբ:

Ուսումնասիրության աղբյուրագիտական բազան ներառում է ինչպես «Մարտիկ» թերթի համարների հավաքածուն և ընտրյալ տեսականին, այնպես էլ՝ թեմային առնչվող արխիվային նյութեր, իրավական փաստաթղթեր, մասնագիտական աշխատություններ և մամուլի արձագանքներ: Առանձնահատուկ արժեք ունեն այն հրապարակումները, որոնք կապված են ԽՍՀՄ բարձրագույն մարմիններին հասցեագրված բողոքների, գաղափարական արձագանքների և պատմական անարդարությունների փաստագրման հետ՝ մասնավորապես Բագրատ Ուլուբաբյանի¹ և Սուրեն Բաղդասարյանի² օրինակներով, կամ՝ Լեոնային Ղարաբաղի հայության դիմումներով ու համախոսականներով:

Տեսական առումով հողվածը նպաստում է խորհրդային ժամանակաշրջանի ազգային հարցի վերանայման, մեղիայի՝ որպես ազգային ինքնության գործիքի ըմբռնման խորացմանը, ինչպես նաև Արցախյան շարժման պատմական հիմնավորումներին նոր դիտանկյունից մոտենալուն: Գործնական իմաստով, այն կարող է ծառայել ոչ միայն որպես պատմագրական նյութ, այլև որպես մեղիալրության, ազգային հիշողության քաղաքականության, և մարդու իրավունքների ոլորտներում հանրային գիտակցման բարձրացման հիմք:

«Մարտիկ»-ը հիմնադրվել է 1993 թ. մարտի 16-ին՝ որպես

¹ Տե՛ս Նալաստանի ազգային արխիվ(ՀԱԱ), ֆ. № 1159, ց. № 12, գ. 1(Улубабян Б. А., Последние события в Нагорном Карабахе (март-апрель 1975 г.), Ереван, апрель 1975, 69 с.).

² Տե՛ս «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ, ֆ. № 52, գ. № 1(Заявления от 20 июля 1985 г, адресованного в Политбюро ЦК КПСС, Генеральному секретарю ЦК КПСС тов. Михаилу Сергеевичу Горбачеву, копии -первому секретарю ЦК КП Армении тов. Демирчяну К. С., Председателю Президиума Верховного Совета Армянской ССР тов. Саркисову Б. Е., Председателю Совета Министров Армянской ССР тов. Саркисяну Ф. Т.), թթ. 1-145:

Պաշտպանության բանակի գաղափարաքաղաքական պատրաստության ու ռազմահայրենասիրական դաստիարակության միջոց³: Սակայն իր գործունեության ընթացքում այն գերազանցել է պաշտոնաթերթի սահմանները՝ վերածվելով կարևորագույն լրատվամիջոցի, որը համակողմանիորեն լուսաբանել է ոչ միայն պատերազմի ընթացքը⁴, բանակի առօրյան, հրամանատարների ու զինծառայողների գործունեությունը, այլև ընդգծել է Արցախյան շարժման պատմական, քաղաքական և իրավական առանցքները: Թերթի էջերում հրապարակվել են հուշագրություններ, վերլուծական հոդվածներ, ընթերցողների արձագանքներ, որոնք վերախմաստավորել են հայ ժողովրդի ազգային պայքարի դրվագները ինչպես խորհրդային շրջանում, այնպես էլ՝ հետխորհրդային իրականության պայմաններում:

«Մարտիկ» պաշտոնաթերթը, որի հրատարակիչը Արցախի Հանրապետության Պաշտպանության բանակը, ապա և պաշտպանության նախարարությունն էին, առանձնանում էր ոչ միայն իր բովանդակային ուղղվածությամբ, այլև՝ տեղեկատվության տարածման լայն ծավալով: Թերթի տպաքանակը հասնում էր մոտ **5000 օրինակի**, ինչը, հաշվի առնելով տարածաշրջանի չափերն ու բնակչության խտությունը, այն դարձնում էր **առաջատար պարբերական ոչ միայն Արցախում:**

Թերթը նպատակային կերպով **տարածվում էր Պաշտպանության բանակի ստորաբաժանումներում**, տրամադրվում էր բոլոր **դպրոցներին, ուսումնական հաստատություններին, գրադարաններին**, ինչպես նաև հասանելի էր զինծառայողների ընտանիքներին: Այս հանգամանքը պայմանավորում էր թերթի լսարանի բազմաշերտ կառուցվածքը՝ ներառելով ինչպես զինվորական կազ-

³ Տե՛ս **Հարությունյան Մ.**, Արցախի պարբերական մամուլի պատմությունից: Արցախի պարբերական մամուլի մատենագտություն (1874-2009թթ.), Պատմաքննական ներածությամբ, ծանոթագրություններով, մեկնաբանություններով, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս», 2010, էջ 79-80:

⁴ Տե՛ս **Հարությունյան Մ.**, Պատերազմի լուսաբանումը «Մարտիկ» թերթի էջերում (1993-1994 թթ.), «Մարտիկ», № 12 (514), 14-20 մարտ 2003 թ., էջ 4:

մը, այնպես էլ քաղաքացիական հանրությանը՝ ուսուցիչներ, աշակերտներ, գիտաշխատողներ, մշակութային ու հասարակական գործիչներ: Ըստ այդմ՝ թերթը գործարկվում էր որպես **հասարակական հաղորդակցության կարևոր հարթակ**, որտեղ զուգակցվում էին պաշտոնական, գաղափարաքաղաքական, պատմագիտական և հանրակրթական բովանդակությունները:

Թերթի խմբագրական կազմը, հատկապես երկար տարիներ պաշտոնավարած լրագրողների վկայությամբ, գործում էր բարձր պատասխանատվությամբ՝ խորապես գիտակցելով յուրաքանչյուր հրապարակման ազդեցությունը տարբեր թիրախային լսարանների վրա: Խմբագրության աշխատանքն իրականացվում էր հստակ ընկալմամբ, որ յուրաքանչյուր տպագրվող նյութ՝ անկախ իր ժանրային պատկանելությունից, ուղղված է ոչ միայն տեղեկացնելու կամ վերլուծելու, այլև՝ ձևավորելու հասարակական գիտակցությունը, արթուն պահելու պատմական հիշողությունը և ամրապնդելու ազգային ինքնությունը:

Այս առումով, «Մարտիկ»-ը պետք է դիտարկել ոչ միայն որպես բանակի պաշտոնաթերթ, այլ՝ որպես **հասարակական-քաղաքական հիշողության ձևավորման և ազգային ինքնության պահպանման կարևոր մեղիա գործիք**, որի գործունեությունն ընդլայնվում էր զուտ ռազմական դաշտից դեպի լայն մշակութային, պատմական և կրթական ոլորտներ:

«Մարտիկ» թերթի առանձնահատուկ արժեքը պայմանավորված էր ոչ միայն նրա թեմատիկ ընդգրկմամբ կամ լսարանի տարաբնույթ կազմով, այլև այն փաստով, որ թերթի խմբագրական քաղաքականությունն ու հրապարակումների մշակման սկզբունքները կրել են ակնհայտ մասնագիտական հիմք: Խմբագրությունում աշխատող լրագրողները մեծ մասամբ մասնագիտությամբ պատմաբաններ էին, ինչը ձևավորել էր նյութերի ներկայացման հատուկ մոտեցում՝ հիմնված փաստաթղթային վերլուծության, պատմական համատեքստավորման և իրավաքաղաքական մեկնաբանությունների վրա: Այս հանգամանքը կարևոր դեր է խաղացել այն առումով, որ թերթի էջերում Արցախի հիմնահարցի լուսաբանումը

ստացել է **համակողմանի և մասնագիտորեն հիմնավորված բնույթ**:

Հատկանշական է, որ «Մարտիկ»-ում առաջին անգամ հրատարակվել են մի շարք հայտնի հայ մտավորականների, պատմաբանների, գիտնականների ու քաղաքական գործիչների ազդորինակ աշխատանքները կամ դրանց նախնական տարբերակները: Այդ հրապարակումներն իրականացվել են ոչ միայն տեղեկատվական ու ճանաչողական նպատակներով, այլ նաև որպես յուրատեսակ **հանրային փորձաքննության հարթակ**: Օրինակ, Վահան Հարությունյանի «Արցախ. հիմնահարցի ակունքները» մենագրության (Ստեփանակերտ, «Մոնա», 1998, 128 էջ) բովանդակությունը նախապես հատվածաբար տպագրվել է թերթի տարբեր համարներում՝ հնարավորություն տալով ընթերցող հանրությանը անմիջական մասնակցություն ունենալու աշխատանքի գիտագործնական քննարկմանը:

Թերթը դարձել էր նաև **հիմնարար գաղափարական հարթակ**՝ Արցախի հիմնախնդրի պատմական, իրավաքաղաքական և մարդասիրական կողմերի լուսաբանման համար: «Մարտիկ»-ի էջերում պարբերաբար հարցազրույցներով, հուշագրություններով և վերլուծական հոդվածներով հանդես էին գալիս հեղինակավոր մտավորականներ⁵, որոնք քննության էին առնում հայ ժողովրդի նկատմամբ իրականացված խտրականության քաղաքականությունը, վեր էին հանում պայքարի արդարության հիմքերը և մատնանշում հակագղման հնարավոր ուղիները: Այդ հրապարակումները ծառայել են ոչ միայն տեղեկատվության տարածման, այլև **հասարակական ինքնագիտակցության բարձրացման նպատակին**:

Մեղիա դաշտում թերթը հաճախ ունակ էր մենաշնորհային գործառույթ իրականացնել՝ լուսաբանելով այնպիսի կարևոր դրվագներ, որոնք դուրս էին մնացել այլ լրատվամիջոցների ուշադրությունից: Խոսքը ոչ միայն զուտ բանակային առօրյայի, ռազ-

⁵ Տե՛ս Մ. Անյան Մ., Երկրի վաղը՝ այսօրվա հոգս (հարցերին պատասխանում են ակադ. Ռաֆայել Ղազարյանը, ՀՀ ԱԺ պատգամավոր Դավիթ Շահնազարյանը, պրոֆեսոր Ալեքսանդր Մանասյանը), «Մարտիկ», 4 – 10 մարտի 1998 թ., № 8 (253), էջ 7:

մագիտական թեմաների լուսաբանման մասին է, այլ նաև Արցախի Հանրապետության միջազգային ճանաչմանը կամ հակամարտության խաղաղ կարգավորմանը առնչվող իրադարձությունների: Այս տեսակետից ակնառու օրինակներ կարող են լինել Մերձավոր Արևելքից և Հյուսիսային Կովկասից Արցախում աղբբեջանցիների ագրեսիային մասնակցած վարձկանների մասին նյութերի հրապարակումը, ինչպես նաև Ռուսաստանի արտաքին գործերի նախարար Ե. Պրիմակովի՝ ռազմագերիներին և պատանդներին «բոլորը բոլորի դիմաց» սկզբունքով ազատ արձակելու առաջարկով Ստեփանակերտ 1996 թ. մայիսի 8-9-ի այցի մասին տեղեկույթի տպագրումը: Հատկանշական է, որ միայն «Մարտիկ»-ի լրագրողներին հաջողվեց արձանագրել այդ հանդիպումը՝ դարձնելով թերթը այն սկզբնաղբյուրը, որից հանրությունը տեղեկացել էր այդ այցի մանրամասներին:

Բացի պատմական ակնարկներից և վերլուծություններից, պարբերաբար տպագրվում էին նաև 1918–1920 թթ. ազատագրական շարժման մասնակիցների հիշողությունները, այդ թվում՝ Քիրս Սարոտի, Արամայիսի, Եղիշե Իշխանյանի հուշերը, որոնք ծառայում էին թե՛ որպես փաստագրական վավերագրեր, և թե՛ որպես հոգևոր ժառանգության մաս: Հետադարձ կապի ապահովման նպատակով ակտիվ էին թերթի արտահաստիքային թղթակիցները, որոնք նյութեր էին փոխանցում գորամասերից՝ ընթերցողների արձագանքներով և տեսակետներով: Այս երկկողմ շփման միջոցով թերթը վերածվել էր **կուլեկտիվ մտածողության և գաղափարական շարժման միջավայրի**, ուր արձանագրվում և նորովի մեկնաբանվում էր Արցախի հայության իրավունքների պաշտպանության ընթացքը:

Հատկանշական է նաև այն իրողությունը, որ Պաշտպանության բանակի զինծառայողների զգալի մասը ծնվել էր արդեն անկախության շրջանում և դպրոցներում չէր ստացել համապարփակ պատկերացում շարժման պատմության ու հիմնավորումների վերաբերյալ: Այդ բացը լրացնելու, շարժման արդարացիության գաղափարական հիմքերը ներկայացնելու առաքելությամբ «Մար-

տիկ»-ը իրականացնում էր **զինվորական կրթության ու ազգային ինքնագիտակցության բարձրացման գործառույթ**: Խմբագրակազմը նպատակաուղղված էր աշխատում՝ հաշվի առնելով թիրախային լսարանների կրթական և հոգևոր պահանջները, ինչն էլ թերթի հրապարակումներին հաղորդում էր բարձր արդյունավետություն:

Ակնհայտ է, որ նման մամուլի վերլուծությունն ինքնին կարող է վերածվել գիտական ուսումնասիրության առարկայի՝ հատկապես եթե դիտարկվում է ժամանակաշրջանի ազգային քաղաքականության և մարդու հիմնարար իրավունքների համատեքստում: Խորհրդային Ադրբեջանը, շուրջ յոթ տասնամյակների ընթացքում, հետևողականորեն իրականացրել է ազգային խտրականության, յուրացման և բռնաճնշման քաղաքականություն՝ ուղղված Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի տիտղոսակիր ազգի՝ հայերի դեմ: Սա հանգեցրել է Արցախի բնիկ հայության տարրական իրավունքների համակարգային ոտնահարման, ինչը հակասում էր ԽՍՀՄ սահմանադրական հիմունքներին և հռչակված ազգային քաղաքականության սկզբունքներին:

Իշխանությունների քաղաքական կամքի բացակայության պայմաններում Արցախի հայ ժողովուրդը դիմել է տարբեր միջոցների՝ իր իրավունքների պաշտպանությունը միջազգային և ներխորհրդային հարթակներում բարձրաձայնելու նպատակով: Այս համատեքստում առանձնահատուկ նշանակություն ունի Հաղորդի շրջանի Կեմրակուճ գյուղից Սուրեն Բաղդասարյանի մտավոր ժառանգությունը: Նա բազմիցս դիմել է ԽՍՀՄ Կենտրոնական կոմիտեին, համագումարներին և տարբեր պետական կառույցների՝ փաստագրելով և դատապարտելով Արցախի հայ ժողովրդի դեմ ուղղված համակարգային խտրական քաղաքականությունը: Նրա փաստական նամակները, վերլուծություններն ու արձանագրությունները հետագայում հավաքվել և տպագրվել են **«Կաճառ» տարեգրքի 14-րդ հատորում**, որը ներկայում հասանելի է Հայաստանի ազգային գրադարանի Հայկական շարունակական հրատա-

րակությունների համահավաք գրացուցակում⁶:

Այս նյութերը ոչ միայն համալրում են նորագույն պատմության աղբյուրագիտական հենքը, այլև արդիականացնում են մամուլի վերլուծության դերը՝ որպես պատմաքաղաքական պրոցեսների վավերագրող և հանրային հիշողության կրող:

Հետադարձ հայացք ձգելով Արցախյան պատերազմի և հրադադարին հաջորդած շրջանի տեղեկատվական հարթությանը՝ հարկ է արձանագրել, որ այս տարիներին հաճախ արձանագրվել են պետական մակարդակով թույլ տրված **հրապարակային դիրքորոշման լրջագույն անհամապատասխանություններ**, երբ արտաքին գերատեսչության պատասխանատուներ, դիվանագետներ և քաղաքական գործիչներ հանդես էին գալիս **հակասական և հոգեբանորեն խոցող ձևակերպումներով**: Դրանց թվում կարելի է նշել «օկուպացված տարածքներ» արտահայտության գործածումը, կամ Լեռնային Ղարաբաղի շուրջ շրջանների՝ որպես «զիջման ենթակա տարածքների» մեկնաբանումը⁷: Այսպիսի հայտարարություններն արվել են այն պայմաններում, երբ հայկական զինուժը արդեն վերահսկողություն էր հաստատել հիշյալ շրջանների նկատմամբ, և երբ հայ զինվորը **իրականում պաշտպանել է այդ տարածքները՝ անձնվիրաբար և հայրենասիրությամբ**:

Այս տեսակ արտահայտությունները, փաստացիորեն, հարված էին մարտնչող զինվորի թիկունքին: Դրանք խարխլում էին զինճառայողների հավատը պետական դիրքորոշման և ազգային պայքա-

⁶ St' u [https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Kacar2006/2020\(14\)_ocr.pdf](https://tert.nla.am/archive/NLA%20AMSAGIR/Kacar2006/2020(14)_ocr.pdf) (մուտք՝ 14.06.2025):

⁷ **Հարությունյան Մ.**, Տարածքների և փախստականների հիմնախնդիրների պատմաքաղաքական և իրավական մի քանի ասպեկտների մասին, «Ազատ Արցախ», 8 փետրվար, № 15 (1684), էջ 4, 10 փետրվար, № 16 (1685), էջ 4, 2005 թ., **Арутюнян М.**, О некоторых историко-политических и правовых аспектах проблем территорий и беженцев, «Азат Арцах», но. 8(485), 26 февраля 2005 г., с. 7-8, հմմտ. Տարածքների ու փախստականների հիմնախնդիրների պատմաքաղաքական և իրավական մի քանի տեսանկյունների մասին, Միջազգային գիտաժողովի նյութեր՝ նվիրված ԱրՊՀ հիմնադրման 40-ամյակին, պրակ I, Ստեփանակերտ, «Դիզակ պլուս», 2009, էջ 215-217:

րի արդարության նկատմամբ: Ուշադրության է արժանի, որ բանա-
կում ծառայող երիտասարդների զգալի մասը դեռևս ձևավորման
փուլում գտնվող աշխարհայացք ունեն, և նմանօրինակ դիվանագի-
տական «սայթաքումները» ուղղակի ազդեցություն էին ունենում
նրանց ինքնագիտակցության, հոգեբանության ու արժեքային ըն-
կալումների վրա:

Այս իրադրության պայմաններում «Մարտիկ» թերթի խմբագ-
րակազմն իրեն պարտավորված էր զգում **մշակելու և ներկայացնե-
լու տեղեկատվական հակազդման միջոցներ**, որոնց նպատակն էր
չեզոքացնել այդ սայթաքումների հետևանքները: Խմբագրությունը
նախաձեռնեց **հատուկ հոդվածաշար՝ նվիրված ազատագրված և
աղբբեջանական ոսնձգություններից պաշտպանվող շրջաններին⁸
ու ռազմավարական նշանակություն ունեցող բարձունքներին⁹**, որ-
տեղ պատմական, քաղաքական և ռազմավարական դիտանկյուն-
ներից ներկայացվում էին այն տարածքները, որոնց շուրջ միջազ-
գային հոետորաբանությունը հաճախ խեղաթյուրված էր: Օրինակ՝
Ջրականի, Սև ջուրի և այլ շրջանների մասին հրապարակումնե-
րում ընդգծվում էին **նրանց պատմական կապը հայկական պետա-
կանության և բնակչության հետ**, ինչպես նաև ժամանակակից
պաշտպանության ռազմավարական և բարոյահոգեբանական հիմ-
նավորումները: Այս հրապարակումների միջոցով թերթը ձգտում
էր վերականգնել **հասարակական վստահությունը**, ձևավորել
պաշտպանական գիտակցություն, ինչպես նաև ապահովել **զինծա-
ռայողների հոգեբանական կայունությունն ու գաղափարական**

⁸ Տե՛ս **Ահյան Մ.**, Ջաբրայիլ [Երկրամասը, որտեղ ես ծառայում եմ], «Մարտիկ»,
№ 21-22 (1143-1144), 17 հունիսի-1 հուլիսի 2015 թ., էջ 9, **Ահյան Մ.**, Ջաբրայիլ
(Ջրական) [Երկրամասը, որտեղ ես ծառայում եմ], «Մարտիկ», № 25-26 (1147-
1148), 14-28 հուլիսի 2015 թ., էջ 9, **Ահյան Մ.**, Սև ջուր [Ֆիզուլի], «Մարտիկ», №
25-26 (1147-1148), 14-28 հուլիսի 2015 թ., էջ 9:

⁹ Տե՛ս **Ահյան Մ.**, [Ռազմապատմական բարձունքներ] Թագախաչին-յալ
(Պուշկեն-յալ), «Մարտիկ», 11- 25 մարտի 2015 թ., № 7-8 (1129-1130), էջ 10,
Ահյան Մ., Ոսկեբլուր [Հաղթանակների բարձունքները], «Մարտիկ», № 23-24
(1145-1146), 1-14 հուլիսի 2015 թ., էջ 10,

վատահոությունը: Այս գործունեությունը վկայում է, որ «Մարտիկ» պաշտոնաթերթը հանդես էր գալիս ոչ միայն որպես լրատվամիջոց, այլև որպես **ազգային գաղափարախոսության ամրապնդման ինստիտուցիոնալ հարթակ**,¹⁰ հանդիսանալով ազգային ինքնության պաշտպան և կրող:

Խորհրդային շրջանի ամբողջ ընթացքում Արցախի հայությունը, ենթարկվելով Ադրբեջանական ԽՍՀ վարչաքաղաքական համակարգում հաստատված խտրական և ազգային ճնշման քաղաքականությանը, տարբեր ժամանակներում դիմել է ԽՍՀՄ բարձրագույն իշխանություններին՝ բարձրաձայնելով իր իրավունքների ոտնահարման փաստերը և պահանջելով արդարության վերականգնում: Այդ դիմումները, որոնք պարբերաբար հրապարակվել են մասնավորապես «Մարտիկ» թերթում, ներկայումս կարևոր վկայագրեր են՝ ներկայացնելու այն իրավական և քաղաքացիական պայքարը, որը թելադրված էր ինքնության պահպանման հրամա-յականով:

Թեև տվյալ դիմումների մի մասը արժանացել է ֆորմալ արձագանքի կամ նույնիսկ ընդգրկվել է բարձրագույն քաղաքական ատ-յանների ներքին փաստաթղթերում, դրանց ազդեցությունը քաղա-քական որոշումների վրա, ընդհանուր առմամբ, եղել է աննշան կամ ընդհանրապես բացասական: Այդ մասին հստակ վկայություն է ԽՍՀՄ Կենտրոնական կոմիտեի 1979 թ. քաղբյուրոյի որոշման տեքստը, որտեղ նշվում է՝ *«մեզ են հասել բազմաթիվ նամակներ, որոնցում հիմնավորվում է, որ Լեռնային Ղարաբաղը հանիրաժի կցվել է Ադրբեջանական ԽՍՀ-ին, և որ անհրաժեշտ է քննարկել նրա վերադարձը Հայաստանին»*¹⁰: Այնուամենայնիվ, նմանօրինակ փաստաթղթերը ոչ միայն չհանգեցրին քաղաքական դիրքորոշման վերանայման, այլև **անդառնալիորեն ճնշվեցին՝ Ադրբեջանի ղեկա-վարության նախաձեռնած հակահայ քարոզչությամբ ուղեկցվող**

¹⁰ «Чадан» գիտական կենտրոնի արխիվ, ֆ. № 52, գ. № 1, թ. 2: Հմմտ.՝ Факты о геноцидной политике Азербайджана, Сост., отв. ред., авт. вступ. ст. и коммент. к. и. н., доцент **М. А. Арутюнян**, «Качар» (Ежегодник НЦК). Книга 14 (167-178), Шуши. Издательство научного центра «Качар», 2020, с. 185:

ռեպրեսիաներով: Վերջինս միջազգային հանրության աչքին այդ ձգտումները ներկայացնում էր որպես «ազգայնամոլության դրսևորում», իսկ ԽՍՀՄ կենտրոնական իշխանություններին համոզում, որ նման տարածքային պահանջները իբր կարող են խարխիլել միության ամբողջականությունը՝ առաջացնելով «քսան փոքր Ղաբաֆաղների» էֆեկտ:

Արցախցի դիմումագիրների ճակատագիրը ևս վկայում է իշխանությունների արձագանքի անարդարացի, կողմնակալ բնույթի մասին: Դիմումներ ներկայացնողները, լինելով առավելապես շարքային քաղաքացիներ, ուսուցիչներ, մտավորականներ կամ կուսակցական համակարգից դուրս գտնվող անձինք, հաճախ ենթարկվել են հետապնդումների, պաշտոնանկ արվել կամ անգամ ձերբակալվել: Բազմաթիվ դեպքերում թիրախավորվել են ոչ թե իրավախախտները, այլ հենց արդարությունը պահանջողները:

Միայլ չէ դիտարկումը, թե Ադրբեջանական ԽՍՀ իշխանությունները դեռ խորհրդային տարիներից գործադրել են քաղաքական ահաբեկման և պատմության նենգափոխման մեթոդներ, որոնք հետագայում իրենց շարունակությունն են գտել ինքնահեռացված Ադրբեջանի ռազմաքաղաքական պրակտիկայում: Վկայակոչելի է 1960-ականներին Բերդաշենի 10-ամյա երեխայի դաժան սպանության դեպքը, ինչի հետևանքով բանտարկվեցին ոչ թե հանցագործները, այլ զոհի հարազատներն ու բողոքող քաղաքացիները¹¹: Ավելին, ադրբեջանական իշխանությունները ոչ միայն չդատապարտեցին հանցագործներին, այլև հերոսացրին մարդասպան Արշադին՝ նրա պատվին հուշարձան կանգնեցնելով Մուղանլու գյուղում՝ դրա բացման միջոցառմանը մասնակցելով նույնիսկ Ադրբեջանական ԽՍՀ Կենտկոմի առաջին քարտուղար Ախունդովի մակարդակով: Այս արարքը նախանշում է հետագա տխրահեռացված ռամիլսաֆարովյան քաղաքականության ակունքները:

Հիշատակման արժանի է նաև Բանանցի հուշարձանի դեպքը,

¹¹ Տե՛ս Հայրենական ձայներ, կազմ. և ծանոթագր.՝ Լ. Մկրտչեան, Մյունխեն (Մյունխեն), 1978, էջ 102-103:

երբ աղբբեջանական իշխանությունները մեկ գիշերվա մեջ ապամոնտաժեցին Հայրենական Մեծ պատերազմում զոհված **մոտ 600 հայ ռազմիկների հիշատակը հավերժացնող կոթողը**, այդ կերպ ջնջելով պատմական հիշողության հետքը այդ հնուց ի վեր հայաբնակ տարածքում¹²:

Վերոնշյալ փաստերն ապացուցում են, որ ԽՍՀՄ կուսակցական ամբողջատիրության շրջանակներում հայության դիմումներն ու արդարության ձգտումները **համակարգված կերպով չեզոքացվում էին**, և, ավելին՝ հետապնդվում, դարձնելով իրավունքի իրացումը վտանգավոր գործունեություն: Այս համայնապատկերին, Արցախի պատմական իրավունքների լուսաբանմամբ և ճշմարտության հանրայնացմամբ հանդես եկող «Մարտիկ» թերթը հետադարձ ու քննախույզ հայացքով իրականացնում էր ոչ միայն տեղեկատվական, այլև **իրավաքաղաքական պայքարի տարեգրության պահպանման առաքելություն**, որն ունի թե՛ ակադեմիական, թե՛ հասարակական նշանակություն:

Ներկայացվող ուսումնասիրությունը հանգեցրեց այն եզրակացությանը, որ «Մարտիկ» պաշտոնաթերթը՝ որպես Պաշտպանության Բանակի գաղափարաքաղաքական մարմին, դարձել էր կարևոր հարթակ՝ հետխորհրդային շրջանում արձագանքելու խորհրդային տարիների ընթացքում կուտակված պատմական անարդարություններին: Թեև թերթը գործել է ԽՍՀՄ փլուզումից հետո, այն հետևողականորեն հետադարձ գնահատել է խորհրդային ազգային քաղաքականությունը՝ փաստարկելով Արցախի հայության նկատմամբ իրականացված խտրականության և բռնաճնշման դեպքերը:

Թերթի հրապարակումներում հստակ արտացոլվել են ոչ միայն ազգային դիմադրության պատմական հիշողությունները, այլև՝ դրանց արդիականացման փորձերը՝ հետխորհրդային երիտասարդության ինքնագիտակցության մեջ: «Մարտիկ»-ը հանդես է եկել

¹² Տե՛ս «Կաճառ» գիտական կենտրոնի արխիվ, ֆ. № 52, գ. № 1, թ. 75: Հմմտ.՝ Факты о геноцидной политике Азербайджана, с. 85-86 и прим.: 43,44, с. 209-213:

որպես մեղիա հարթակ, որը գուցակցել է տեղեկատվություն, պատմություն, գաղափարախոսություն և հանրային հաղորդակցություն՝ դրանով իսկ հաստատելով իր բազմաշերտ դերակատարությունը:

Հետազոտությունը վկայում է, որ նմանօրինակ մեղիա վերլուծություններն ունեն ոչ միայն ակադեմիական, այլև հանրային հիշողության կառավարման, քաղաքացիական գիտակցության և ազգային ինքնության պահպանման կարևոր գործառնություններ: Այս առումով, «Մարտիկ»-ի ուսումնասիրությունը կարելի է դիտարկել որպես այն եզակի դեպքերից մեկը, երբ հետխորհրդային լրատվամիջոցը հանդես է գալիս որպես անցյալի պատմական ճշմարտությունների վերականգնման միջոց:

Мгер Арутюнян

Армения, к.и.н., ИИ НАН

mherharout@gmail.com

ORCID: 0000-0002-0719-8860

ТЕМА ЗАЩИТЫ ПРАВ АРМЯН АРЦАХА В СОВЕТСКИЙ ПЕРИОД НА СТРАНИЦАХ ГАЗЕТЫ «МАРТИК»

Ключевые слова: Арцах, газета «Мартик», национальная политика СССР, защита прав, Армия обороны, этническая дискриминация, государственные репрессии, историко-сравнительный анализ, национальная идентичность, медиа.

Проблема Арцаха в контексте национальной политики Советского Союза выступает не только как требование территориального самоопределения, но и как борьба за восстановление коллективной памяти, сохранение культурной идентичности и преодоление дискриминационной политической

практики. Настоящее исследование сосредоточено на роли официальной газеты «Мартик» в освещении процессов последних десятилетий СССР и в формировании повестки по защите национальных прав. В статье показано, что «Мартик», являясь идеологическим и информационным органом Армии обороны Арцаха, стал важной платформой для выявления укоренившихся политических и культурных неравенств советского периода, а также для аргументированного представления истории движения за освобождение Арцаха и его правовых и национальных оснований.

Исследование основано на сочетании медиаанализа, исторического и историко-сравнительного методов и охватывает комплексный анализ десятков публикаций, редакционных статей, интервью и откликов читателей, опубликованных в газете «Мартик». Такой многометодический подход позволяет выявить как тематические направления и информационную стратегию газеты, так и её влияние - как инструмента оборонной прессы - на формирование исторической памяти, правосознания и постсоветской гражданской идентичности.

Результаты анализа свидетельствуют о том, что газета «Мартик» выступила настойчивым и целенаправленным голосом коренного армянского населения Арцаха в их стремлении к восстановлению исторической справедливости. Газета документировала случаи правового неравенства, этнической дискриминации и культурных репрессий в условиях советской системы, превратившись не только в ценный источник документальной памяти, но и в опору национальной идентичности и духа сопротивления. В статье утверждается, что газета «Мартик» сыграла ключевую роль в мобилизации информационного сопротивления, формировании идеологической рамки Арцахского движения и в развитии исторического и правового самосознания в постсоветском общественном пространстве. Таким образом, деятельность газеты «Мартик» рассматривается как один из редких примеров медиаресурса, который в условиях распада СССР и становления

армянской государственности в Арцахе одновременно выполнял функции носителя исторической памяти, хранителя национальной идентичности и инструмента правополитической борьбы.

Mher Harutyunyan

Armenia, PhD in History,

Institute of History of NAS

mherharout@gmail.com

ORCID: 0000-0002-0719-8860

THE THEME OF THE PROTECTION OF THE RIGHTS OF ARMENIANS IN ARTSAKH IN THE SOVIET PERIOD ON THE PAGES OF "MARTIK" NEWSPAPER

Keywords: Artsakh, "Martik" newspaper, Soviet nationalities policy, protection of rights, Defence Army, ethnic discrimination, state repression, comparative historical analysis, national identity, media.

The issue of Artsakh, within the broader context of Soviet nationalities policy, emerges not only as a claim for territorial self-determination, but also as a struggle for the restoration of collective memory, the preservation of cultural identity, and the overcoming of discriminatory political practices. This study focuses on the role of the official newspaper "Martik" in shaping the discourse on national rights and in covering the developments of the final decades of the USSR. The article demonstrates that "Martik", serving as the ideological and informational medium of the Artsakh Defence Army, became a critical platform for exposing the entrenched political and cultural inequalities of the Soviet period and for articulating the historical, legal, and national foundations of the Artsakh liberation movement.

The research combines media analysis with historical and comparative-historical methodologies, drawing upon a comprehensive

study of dozens of "Martik"'s publications, editorials, interviews, and readers' responses. This multi-method approach allows for a nuanced understanding of the newspaper's thematic orientations and communicative strategies, while also assessing its influence as a militarised media outlet on the formation of historical memory, legal-political awareness, and post-Soviet civic identity.

The findings of the analysis indicate that "Martik" served as a persistent and purposeful voice for the indigenous Armenian population of Artsakh in their pursuit of historical justice. It documented instances of legal inequality, ethnic discrimination, and cultural repression under the Soviet system, evolving into not only a documentary source of record but also a cornerstone of national identity and resistance. The article argues that "Martik" played a pivotal role in mobilising informational resistance, articulating the ideological contours of the Artsakh movement, and shaping historical and legal consciousness in the post-Soviet public sphere. As such, "Martik" is interpreted as one of the rare examples of a media institution that, during the collapse of the Soviet Union and the emergence of Armenian statehood in Artsakh, functioned simultaneously as a bearer of historical memory, a guardian of national identity, and an instrument of legal-political struggle.

ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ / СООБЩЕНИЯ / REPORTS

Վահրամ Էմիյան

Լիբանան, «Հայ Դատ»-ի գրասենեակի ատենապետ

Ваграм Эмиян

Ливан, председатель комитета «Ай Дата»

Vahram Emiyan

Lebanon, Chairman of the «Hay Dat» committee

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱՉՈՒՄՆ ՈՒ

ԴԱՏԱՊԱՐՏՈՒՄԸ

ԼԻԲԱՆԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ԿՈՂՄԷ

ПРИЗНАНИЕ И ОСУЖДЕНИЕ ГЕНОЦИДА АРМЯН

ПАРЛАМЕНТОМ ЛИВАНА

**RECOGNITION AND CONDEMNATION OF THE ARMENIAN
GENOCIDE BY THE PARLIAMENT OF LEBANON**

Լիբանանի խորհրդարանը երկու ամիսներով որդեգրած է Հայոց ցեղասպանութիւնը ճանչցող ու դատապարտող որոշումներ. առաջինը, որ 3 Ապրիլ 1997 թ. միաձայնութեան որդեգրուեցաւ, կոչ ուղղել Լիբանանի ժողովուրդին՝ զօրակցելու հայ ժողովուրդին¹, իսկ երկրորդը, որ 11 Մայիս 2000 թ. դարձեալ միաձայնութեամբ որդեգրուեցաւ, համոզում յայտնել, որ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը ապագային նոյնպիսի ոճիրներու կանխարգիլման անհրաժեշտ պայման է²:

¹ Տե՛ս Lebanon Parliament Resolution, https://www.armenian-genocide.org/Affirmation.162/current_category.7/offset.50/affirmation_detail.html

² Տե՛ս Lebanon Parliament Resolution, https://www.armenian-genocide.org/Affirmation.161/current_category.7/offset.50/affirmation_detail.html

Լիբանանը այդպիսով դարձաւ Արաբական լիկայի անդամներէն Հայոց ցեղասպանութիւնը ճանչցած ու դատապարտած առաջին պետութիւնը, եւ երկար ժամանակ մնաց միակը, մինչեւ Սուրիոյ Արաբական Հանրապետութեան կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման եւ դատապարտման բանաձեւի որդեգրումը:

Այս իրողութիւնը պատահական չէ, այլ արդիւնք հայ համայնքին Լիբանանի մէջ ունեցած կարգավիճակին, որ իւրայատուկ է ամբողջ սփիւռքի տարածքին: Լիբանանը Հայաստանի Հանրապետութենէն դուրս միակ պետութիւնն է, ուր հայեր հաւասարապէս մաս կը կազմեն երկրին թէ՛ օրէնսդիր, թէ՛ ալ գործադիր իշխանութիւններուն, ինչպէս նաեւ պետական տարբեր կառոյցներուն: Նշանակալից է, որ մայրիներու երկրին մէջ հայ ժողովուրդին ունեցած այս կարգավիճակը երկրի իշխանութիւններուն բարեացակամութեան կամ հանդուրժողականութեան արտայայտութիւնը չէ, այլ երկրին ազգային ուխտով ու պետական օրէնքով ամրագրուած իրաւունք, ուստի եւ կը կրէ պաշտօնական բնոյթ՝ հեռու ամէն տեսակի կամայականութենէ:

Ահա հայութեան Լիբանանի մէջ վայելած նշեալ դիրքին իբրեւ արդիւնք է, որ Լիբանանի մէջ Միացեալ Նահանգներու դեսպան Տորոթի Շէան 25 Ապրիլ 2022 թ. հրապարակեց Հայոց ցեղասպանութեան 107-ամեակի առիթով յայտարարութիւն մը, որուն մէջ նշեց. «107 տարիներ առաջ, 24 Ապրիլ 1915-ին, Օսմանեան իշխանութիւնները սկսան ձերբակալել Կոստանդնուպոլսոյ մէջ հայ մտաւորականներն ու համայնքային ղեկավարները: Յաջորդող տարուան ընթացքին, մէկուկէս միլիոն հայեր տարագրուեցան, ջարդուեցան կամ դէպի իրենց մահը քալեցին, ինչ որ նախագահ Պայտըն հրապարակաւ ցեղասպանութիւն որակեց: Մինչ անոնց ողբերգական պատմութիւնը երբեք պիտի չմոռնանք, մենք նաեւ կը նշենք անոնց հոյակապ ներդրումները ոչ միայն մեր երկու երկիրներուն մէջ, այլ նաեւ ամէն տեղ, ուր հայկական սփիւռք գոյութիւն ունի»:

Հայաստանի Հանրապետութեան մէջ օտարերկրեայ դեսպան-

ները ամեն 24 Ապրիլին բնականաբար Հայոց ցեղասպանութեան զոհերուն յիշատակը ոգեկոչող ուղերձներ կը յղեն կամ յայտարարութիւններ ու գրառումներ կը կատարեն, սակայն Հայաստանի Հանրապետութենէն դուրս օտարերկրեայ դեսպանի մը նման յայտարարութիւնը պատմական է ու աննախադէպ, ոչ միայն Լիբանանի մակարդակի վրայ, այլ նաեւ համաշխարհային մակարդակով:

Անոր յայտարարութեան մէջ ուշագրաւ է Միացեալ Նահանգներու դեսպանին կողմէ փոխան Իսթանպուլի անոր պատմական անուան՝ Կոստանդնուպոլիսի օգտագործումը: ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը, որ մնայուն կապի մէջ է օտարերկրեայ դեսպանատուներուն հետ ու ծանօթ Միացեալ Նահանգներու դեսպան Շէպին, բնականաբար չէր կրնար անտարբեր մնալ այսպիսի նշանակալից ու պատմական քայլի մը նկատմամբ, ուստի դեսպանին հետ կապ հաստատելով ըստ արժանւոյն գնահատեց անոր յայտարարութիւնը: Նշենք, որ ՀՅԴ Լիբանանի Հայ դատի մարմինը իր աշխատանքին ընթացքին ուշադրութեան կիզակէտ կը դարձնէ Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման ու դատապարտման, Հայաստանի Հանրապետութեան եւ Արցախեան հարցին առնչուած բոլոր իրադարձութիւնները, եւ այդ գծով Լիբանանի մէջ օտարերկրեայ դեսպանատուներու հետ տարբեր մակարդակներու վրայ ուղղակի հանդիպումներու կամ նամակագրութեան ճամբով հաղորդակցութիւն ու կապ կը հաստատէ:

Դեսպանատուներու հետ յարաբերութեան կողքին Հայ դատի մարմինը նաեւ լիբանանեան լրատուամիջոցներուն մէջ հայկական օրակարգով կարեւոր իրադարձութիւններու վերաբերեալ յաճախ նշմարուող լրատուական բացին լոյսին տակ այդ մասին լրատուամիջոցներուն հաղորդագրութիւններ ու լրատութիւն կը յղէ՝ իրազեկելու համար լիբանանեան հանրութիւնը:

Նշանակալից էր նաեւ 8 ապրիլ 2025 թ. Լիբանանի Կեդրոնական դրամատան կառավարիչ Քարիմ Սուէյտի հրապարակած շրջաբերականը, որով ան Կեդրոնական դրամատան հայ պաշտօնեաներուն կ'արտօնէր «հայ համայնքներու մօտ նահատակներու յի-

շատակման առիթով» իրենց գործէն բացակայիլ, այդպիսով առիթ ընծայելով, որ անոնք մասնակցին աւանդաբար 24 Ապրիլին նախատեսուած ժողովրդային տարեկան հաւաքին, որ 2025 թ. տեղի ունեցաւ Պէյրութի «Նահատակաց Հրապարակ»-ի վրայ, ուր 6 Մայիս 1916 թ. լիբանանցի ազգային գործիչներ կախաղան բարձրացուելով Օսմանեան կայսրութեան կողմէ մահապատիժի ենթարկուեցան: Վայրի ընտրութիւնը պատահական չէր, այլ խիստ խորհրդանշական ու պատգամալից, մասնաւորաբար յիշելու եւ յիշեցնելու առումով: Լիբանանի Կեդրոնական դրամատան կառավարիչի շրջաբերականին մէջ նշուած «հայ համայնքներ» արտայայտութիւնը վստահաբար շփոթ ու զարմանք կը պատճառէ ոչ լիբանանցի հայերուն: Ճիշդ է, մեզի համար՝ ներազգային առումով հայ ժողովուրդը եւ Լիբանանի հայ համայնքը մէկ է, սակայն, համայնքային դրութեան վրայ հիմնուած Լիբանանի օրէնքով գոյութիւն ունին երեք «անջատ» հայ համայնքներ՝ հայ առաքելականները, հայ կաթողիկէներն ու հայ աւետարանականները, եւ այդ հիմամբ ալ դասաւորուած են անոնցմէ իւրաքանչիւրին իրաւունքները:

Հայ առաքելականները, 1989 թ. կնքուած եւ Լիբանանի 15-ամեայ քաղաքացիական պատերազմին վերջ տուած Թայֆի համաձայնագիրին հիմամբ, կը նկատուին երկիրի 7 մեծ համայնքերէն մէկը, եւ իբրեւ այդպիսին, 30 նախարարներէ բաղկացած նախարարաց խորհուրդի մը մէջ կը ներկայացուին 2 նախարարներով, իսկ 24 նախարարներէ բաղկացած կառավարութեան մը մէջ՝ 1 հայ նախարարով: Այս վերջին պարագային, հայ կաթողիկէ մը կրնայ ներկայացնել փոքրամասնութիւն նկատուող լիբանանեան համայնքները:

Արդ, Լիբանանի համայնքային դրութիւնը, ժողովրդավարական համակարգն ու խօսքի ազատութիւնը դրական ազդակներ են, որոնք մեծապէս կը նպաստեն հայ համայնքին կողմէ հայկական օրակարգերու շուրջ գործնական, քաղաքական ու քարոզչական աշխատանքներու ծաւալման: Լիբանանի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչումը ահա այդ ընդհանուր բարենպաստ մթնոլորտին ու աշխատանքին արգասիքն է:

Հովիկ Քասաբյան
Յունաստան, Սալոնիկի «Հայ Դատի» յանձնախումբի անդամ
Овик Касабян
Греция, член комитета «Ай Дата» в Салониках
Hovik Kasabian
Greece, member of the «Hay Dat» committee in Thessaloniki

**ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ ՃԱՆԱԶՈՒՄԸ ՅՈՒՆԱՍՏԱՆԻ
ԽՈՐՀՐԴԱՐԱՆԻՆ ԿՈՂՄԷ**

ПРИЗНАНИЕ ГЕНОЦИДА АРМЯН ПАРЛАМЕНТОМ ГРЕЦИИ

**RECOGNITION OF THE ARMENIAN GENOCIDE BY THE GREEK
PARLIAMENT**

Յունաստանի կողմէ Հայոց ցեղասպանութեան ճանաչման գործընթացին մասնակցած էի, որպէս գործունեայ յունահայ եւ Հ. Յ. Դ Յունաստանի Երիտասարդական Միութեան անդամ: Մեր համայնքի հին անդամները յաճախ կ'ըսէին, որ իրենց սերունդը ստացաւ Հայոց ցեղասպանութիւնը որպէս հոգեհանգստեան արարողութեան առարկայ եւ վերածեց համաշխարհայն գիտական-քաղաքական հարցի եւ պահանջատիրութեան:

Կը ներկայացնենք Հայոց ցեղասպանութեան մասին օրէնքը, որ ընդունեց Յունաստանի խորհրդարանը:

ՕՐԷՆՔ ԹԻԻ՝2397 «Կառավարութեան Թերթ», Ա 80/10.5.1996

ՅՕԴՈՒԱԾ 1

24 Ապրիլը կը հռչակուի որպէս, Թուրքիոյ կողմէ կատարած Հայոց ցեղասպանութեան յիշատակի օր:

ՅՕԴՈՒԱԾ 2

Նկարագիրը, բովանդակութիւնը, հաստատութիւնը եւ յիշատակի ձեռնարկներու կազմակերպման ձեւը կը յստականայ Նախագահական հրովարտակով, որ կը հրատարակուի Ներք. [ին] Գործոց - Հանրային Կառավարման եւ ապակեղրոնացման նախարար-

րի առաջարկով, նկատի առնելով ճանաչուած հայկական միութիւններու եւ կազմակերպութիւններու կարծիքը:

ՅՕՂՈՒԱԾ 3

Ներկայ օրէնքը ուժի մէջ կը մտնայ Կառավարական Թերթի հրապարակումով:

Կը պատուիրենք իր հրապարակումը Կառավարական Թերթին մէջ եւ իր կատարումը որպէս պետական օրէնք¹:

Վերը նշուած բանաձեւով Յունաստանի Հանրապետութիւնը ընդունեց Հայոց ցեղասպանութեան փաստը 1996 թ., իսկ 2014 թ. վերահրապարակելով 927/1979 վերամշակուած օրէնքը կը քրէականացնէ ցեղասպանութիւններու եւ ռազմական կամ զանգուածային այլ ռճրագործումներու հրապարակային մերժումը: Սոյն օրէնքին մէջ չի նշուիր, անշուշտ, որպէս առանձին Հայոց, Պոնտոսի Յոյներու կամ այլ ազգային միաւորի ցեղասպանութեան օրինակ, սակայն օրէնքը կը ներառէ այն բոլոր ռճրագործական արարքները, որոնք ճանչցուած են Յունական Պետութեան կողմէ:

Այս երկու օրէնքները, երկարատեւ, շարունակական իրազեկման աշխատանքի արդիւնք մըն են, որ տեղի ունեցաւ Յունաստանին մէջ, ինչպէս նաեւ զանազան այլ երկիրներու պարագային, ուր հայկական համայնքներու եւ կազմակերպութիւններու ջանքերով տեղի ունեցան Հայոց ցեղասպանութեան ճանաչումներ: 1965 թ. համասփիւրքեան զարթոնքը խթան մը եղաւ, որ ներշնչեց սփիւռքացած հայութեան երկրորդ սերունդը՝ ստեղծելով նոր հրամայականներ: Տարագրութեան եւ գաղթականութեան վերքերը, որ անտարակոյս կը պատկանին Սփիւրքի առաջին սերունդին, եղան քաղաքական պայքարի գաղափարական հենարանը: 1915 թ. վերապրողներու, Առաջին Հանրապետութեան յայտնի գործիչներու եւ ազատագրական պայքարի յեղափոխական անցեալ ունեցող հաւաքական կերպարներու յուշերը ստեղծեցին նոր ռճի ազգային գաղափարախօսութիւն մը, որ բաւական բնորոշ եւ յատկանշական

¹ Տե՛ս Hellenic Parliament Resolution 2397/1996, https://www.armenian-genocide.org/Affirmation.156/current_category.7/offset.50/affirmation_detail.html

է մինչեւ այսօր սփիւռքահայ գործունէայ շրջանակներուն մէջ: Այդ ժամանակուան հայ մամուլը ինչպէս նաեւ սփիւռքահայ գրողներ եւ յօդուածագիրներ սնուցանեցին եւ նախապատրաստեցին 1965 թ. շարժումը՝ ոգեւորելով այդ օրերու հայ երիտասարդութիւնը եւ ստեղծելով քաղաքականացուած Սփիւռքի տեսակ մը, որ այնքան ալ յատկանշական երեւոյթ մը չէ այլ ժողովուրդներու սփիւռքացման պարագային: Ամենակարեւոր ներքին փոփոխութիւնը, որ տեղի ունեցաւ փաստօրէն սփիւռքահայութեան մէջ այն էր, որ 1915-ի վերապրողները փոխանցեցին արդար պայքարի գաղափարը, որպէսզի աշխարհը իմանայ, որ թուրքերը ջարդեցին հայերուն: Զուտ անձնական միջավայրես ալ կը յիշեմ, օրինակ, մեծ մօրս Վարդանուշ Տօնիկեանի եւ այլոց խօսքերը, երբ կը պատմէր մեզի Մեքաստիոյ դէպքերը որպէս ջարդ եւ աքսոր: Այս պարագային կարելի է ոչ մասնագիտացած մէկը համաձայն ըլլայ Թուրքիոյ վերջերս որդեգրած քաղաքավար մերժման բանաձեւին, որու համաձայն 1915-ի դէպքերը պարզ ջարդ մըն էր, որ ստացաւ աւելի գրաւիչ եւ քաղաքական արժէք պարունակող վերնագիր:

Այս է ուրեմն այն ճգնաժամային պահը, որ պէտք է ի միտին ունենալ, երբ կը վերլուծենք 1965-էն առաջ կամ անկէ ետք օգտագործուած սահմանումները կամ իրերու անուանակոչումը: Երբ սկսաւ 50-եակի պահանջատիրութիւնը, ընդունուած սահմանումները, որ կ'օգտագործէին այն ժամանակ հետեւեալներն էին՝ ԶԱՐԴ, ԱՔՍՈՐ, ԿՈՏՈՐԱԾ, ՈՐԲՈՒԹԻՒՆ, ԱՂԷՏ, ՍՊԱՆԴ եւն: Յեղապանութիւն բառը այնքան ալ տարածուած չէր, հակառակ որ շրջանարութեան մէջ մտած էր 1944-48 թթ. եւ ի վեր եւ անոր պատասխանը շատ պարզ եւ տրամաբանական բացատրութիւն մը ունի՝ այն որ, գիտական կամ գրական բնոյթ կրող բառերը ունին նեղ կիրարական ասպարէզ հանրութեան մէջ: Հայկական հարցի պահանջատիրական մօտեցումի անմիջական արդիւնքներէն մէկը այն էր, որ ստեղծուեցաւ պատմաբանական - գիտահետազօտական հետաքրքրութիւն մը 1915-ի պատահածներու շուրջ: Անկասկած, 1915-ին տեղի ունեցածներու, որպէս ցեղասպանութիւն որակաւորելու հիմնաքարը զետեղեց Ռաֆայէլ Լեւնիքիւն 1944-46 թթ.՝ կարե-

նալով նկարագրել մէկ բառով եւ մէկ բանաձեւով, թէ ինչ կատարուեցաւ Եւրոպայի Հրեաներու եւ Օսմանեան Կայսրութեան Հայերու պարագային: Բայց եւ այնպէս Հայոց ցեղասպանութեան շուրջ հետազոտութիւնները սկսան զարգանալ 70-80-տասնամեակներուն ընթացքին զանազան երկիրներու համալսարաններու մէջ եւ կը շարունակուին անշուշտ ցայսօր:

Վերադառնալով Յունաստանի պարագային, 70-ականներուն վերջերը, Թեսաղոնիկէի մէջ Հայ Դատի Յանձնախումբի ներկայացուցիչները, մտերմանալով Թեսաղոնիկէի Արիստոտելեան Համալսարանի Նորագոյն Պատմութեան դասախօս՝ պ. Իոաննիս Խաւիոթիսին, իրեն առաջարկեցին ուսումնասիրել Հայոց ցեղասպանութեան հարցը եւ բանախօսութիւն մը կատարել Ապրիլ 24-ի նուիրուած քաղաքական ձեռնարկին: Յաջորդիկ տարիներուն Հայոց ցեղասպանութեան հարցը սկսաւ դառնալ գիտական խնդրոյ առարկայ յոյն պատմաբանական շրջանակներուն մէջ՝ ներառելով նաեւ Պոնտոսի Յոյներու եւ Ասորիներու բնաջնջման հարցը որպէս ցեղասպանութիւն. հարց մը, որ ընդհանրապէս անտեսուած կը մնար կամ մասամբ կը շօշափուէր, կամ ալ կը շօշափուէր Պոնտական ծագում ունեցող գիտնականներու կողմէ, ինչպէս օրինակ Փոլիպոնիս Ենեփեքիտիս Եֆսթաթէոս Փելաղիտիս, Կոնստանտինոս Ֆոթիատիս եւն: Պատմաբան Խաւիոթիսի առաջարկով Հայոց ցեղասպանութեան հարցը սկսաւ դասաւանդուիլ Յունաստանի պատմագիտական ամպիոններէն ներս, մտաւ որպէս առարկայ դպրոցական բարձր դասարաններու պատմութեան գիրքին մէջ, եղած է համալսարանի ընդունելութեան քննութիւններու թեմա եւն . : Արդիւնքը այն էր, որ վերջին տասնամեակներու ցեղասպանութեան հարցով զբաղած են նոր գիտնականներ ինչպէս օրինակ՝ Վլասիս Աղծիտիս, Ֆանիս Մալքիտիս, Բաքովոս Միլաաիլիտիս, Կոստաս Սամուրքասիտիս, Կիրիակոս Խաճիկիրիակիտիս, Թեոտոսիս Կիրակիտիս, Իոաննիս Մազիս, Եորդոս Մենեսեան եւն: Այս բոլոր գիտնականները առնուազն յօդուածով մը կամ հրապարակային ելոյթով մը անդրադարձած են Հայոց ցեղասպանութեան:

Այսպէս ի յայտ կու գայ, որ համաշխարհային կտրուածքով, Հա-

յոց ցեղասպանութեան մանրամասնօրէն ուսումնասիրուած ըլլալը այսօր, 1965 թ. շարժման եւ Ուժեղ Պայքարի արդիւնքներէն մէկն է: Այդ հողին վրայ նաեւ տեղի ունեցան տարբեր երկիրներու կողմէ ճանաչումները, որոնք կարելի է ենթակայ եղած ըլլան երբեմն տուեալ երկրի շահադիտական քաղաքական մօտեցումներու, բայց անկախ անկէ հիմնուած են համաշխարհային գիտական հաստատութիւններու՝ հետազօտական փաստերու վրայ: Նաեւ կրնանք ըսել, որ ցեղասպանութեան հարցի ծանուցմամբ առանձին հետաքրքրութիւն մը յառաջացաւ այլ հայկական նիւթերի սերտորոշեան շուրջ, ինչպէս օրինակ ազգագրութիւն, մշակոյթ, ճարտարապետութիւն եւն: Կ'արժէ ուրեմն նշել անուանի ճարտարապետութեան դասախօս՝ Նիկոս Մուցովիուոսի ուսումնասիրութիւնը հայկական տաճարաշինութեան շուրջ եւ իր այցելութիւնը Խասիոթիսին հետ Սովետական Հայաստան թեսադոնիկահայ ազգային գործիչ՝ հնագէտ Անահիտ Գալֆայեանին ուղեկցութեամբ: Նոյն թեմային շուրջ ուսումնասիրական հրատարակութեամբ՝ հանդես եկած է նաեւ ճարտարագէտ Եորդոս Տիմիդոքալիսը: Կ'արժէ անպայման նշել 1994 թ. աշնան, պարոն Խասիոթիսի ջանքերով կազմակերպուեցաւ պատմաբանական միջազգային գիտաժողով, որ գումարուեցաւ Սալոնիկի Արիստոտելեան Համալսարանի Փիլիսոփայութեան դահլիճէն ներս, ուր հրաւիրուեցան նաեւ պատմաբաններ Երեւանի Համալսարանէն: Գիտաժողովի նիւթը նուիրուած էր աւելի լայն պատմագրութեան ներառեալ, անշուշտ, ցեղասպանութեան թեման: Բաւական յստակ է, որ սփիւռքահայութեան քաղաքական պայքարը եւ արմատացումը առաջին հերթին հրաւիրեցին ակադեմական եւ պատմագիտական աշխարհի հետաքրքրութիւնը 1915-ի եղելութիւններուն վրայ: Եթէ ուշադիր ըլլանք պիտի տեսնենք, որ ճանաչումներու ստուար մասը տեղի ունեցաւ 1990-2000-ական տասնամեակներուն ընթացքին, այսինքն, երբ արդէն իսկ Հայոց ցեղասպանութեան հարցը բաւական լաւ ուսումնասիրուած էր զանազան կրթական հաստատութիւններու կողմէ: Նոյն ժամանակաշրջանին, նորանկախ Հայաստանի Հանրապետութիւնն ալ ձեռնարկեց Հայոց ցեղասպանութեան թանգարան-

ինստիտուտի կառուցումը, հրաւիրեց միջազգային գիտաժողովներ, խրախուսեց ցեղասպանագիտական եւ հայագիտական ուսման առարկան Երեւանի Պետական Համալսարանէն ներս, ընդառաջեց նոր հրատարակութիւններ, վաւերագրական տեսաերիզներ եւն:

Կասկածէ վեր է, որ 1988-էն անդին Արցախի հարցն ալ մտաւ լոբբիստական եւ գիտական իրազեկման օրակարգը սփիւռքահայ իրականութեան մէջ, բայց որպէս առկայ ընթացիկ հակամարտութիւն վերապահութեամբ կ'ընկալուէր օտարերկրեայ քաղաքական շրջանակներուն կողմէ: Հակառակ անոր Արցախեան հարցի շուրջ ալ եղաւ լուրջ, հետեւողական աշխատանք եւ կը շարունակուի մինչ օրս Եւրոպայի եւ Ամերիկայի քաղաքական կեդրոններու շուրջ բայց ասիկա այլ վերլուծումի նիւթ մըն է:

Այս գեղյոյցը շատ հակիրճ ձեւով ներկայացուց Հայոց ցեղասպանութեան միջազգային ճանաչման իրազեկման պայքարի ոճը եւ ընդհանուր միտքը:

Առ այդ, կրնանք հետեւեալ եզրակացութիւնները ընել.

Ա. 1965-ի ցեղասպանութեան միջազգայնացման շարժումը եւ 1975-84-ականներուն արմատացումը հրաւիրեցին օտար հասարակութեան եւ գիտական հաստատութիւններու հետաքրքրութիւնը:

Բ. 1915-ին Թուրքիոյ կողմէ բռնութիւնները Հայերու դէմ, որպէս ցեղասպանութիւն որակաւորելը արդիւնք է համաշխարհային գիտահետազօտութեան եւ պատմագիտական վերլուծութեան:

Գ. Պետութիւնները, որ ճանչցան Հայոց ցեղասպանութիւնը, ընդունեցին որպէս հիմք գիտական հաստատութիւններու փաստերը անկախ թէ եթէ տուեալ պահին յարմար էր իրենց շահերուն կամ ոչ:

Դ. Հայոց ցեղասպանութեան հարցի հրապարակայնացումը ստեղծեց ընդհանուր հետաքրքրութիւն մը աւելի լայն հայագիտական հարցերու շուրջ:

Ե. Հայոց ցեղասպանութեան ուժականութիւնը ներքաշեց նաեւ Պոնտոսի Յոյներու եւ Ասորիներու ցեղասպանութեան հարցը եւ ուսումնասիրութիւնը:

Հովիկ Ավանեսով
Հայաստան, ԳԱԱ ՊԻ

Овик Аванесов
Армения, ИИ НАН

Ovik Avanesov
Armenia, Institute of History of NAS
hovikavanesov@gmail.com

**ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔԻ ԴԵՐՈՂ ԱՐՑԱԽՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՈՉՆՉԱՑՄԱՆ
ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐՈՒՄ (1950–1980)**

**РОЛЬ НАЦИОНАЛЬНОГО ПРОБУЖДЕНИЯ В БОРЬБЕ ПРОТИВ
ПОЛИТИКИ УНИЧТОЖЕНИЯ АРМЯНСКОГО КУЛЬТУРНОГО
НАСЛЕДИЯ В АРЦАХЕ
(1950–1980 ГГ.)**

**THE ROLE OF NATIONAL AWAKENING IN THE STRUGGLE
AGAINST THE POLICY OF DESTRUCTION OF ARMENIAN
CULTURAL HERITAGE IN ARTSAKH (1950–1980)**

Արցախի պատմամշակութային ժառանգությունը ոչ միայն տա-
րածաշրջանի հինավուրց անցյալի վկայությունն է, այլև հայ ժո-
ղովրդի ազգային ինքնության, պատմական հիշողության և հոգևոր
շարունակականության խորհրդանիշը: Սակայն խորհրդային ժա-
մանակաշրջանում՝ հատկապես 1950–1970-ական թթ., Ադրբեյջա-
նական ԽՍՀ իշխանությունների վարած հետևողական քաղաքա-
կանությունը միտված էր հայկական մշակութային ներկայության
համակարգված ջնջմանը:

Նշված տասնամյակների ընթացքում Արցախում հայկական
եկեղեցիների, խաչքարերի և գերեզմանոցների զգալի մասը են-
թարկվեց նպատակային ավերման: Հուշարձանների քարերը լայ-

նորեն օգտագործվում էին շինարարական և տնտեսական նպատակներով՝ նոր շենքերի, ճանապարհների կառուցման համար: Այս գործընթացը հատկապես նկատելի էր Շուշիում՝ Արցախի պատմական, կրթական և հոգևոր կենտրոնում: Խորհրդային տարիներին արցախահայությանը երկար ժամանակ հոգեբանական տեսանկյունից զոհի կարգավիճակում պահելու, բերդաքաղաքի նախկին ազգաբնակչությանն իրենց օջախները վերադառնալու և վերաշինելու գործին խոչնդոտելու նպատակով Ադրբեջանի իշխանությունների հրահանգով Շուշիի ավերակները¹ պահպանվեցին մինչև XX դարի 60-ական թթ. կեսերը: Հրաշքով փրկված Սուրբ Ամենավրկիչ եկեղեցին ու Կանաչ Ժամը երկար ժամանակ մնացին կիսավեր վիճակում: Այդ ամենի փոխարեն արագ վերանորոգվեց Շուշիի մզկիթը, հին հայկական շինությունների մի մասի կամարաձև լուսամուտներն ու շքամուտքերը դարձրին սլաքաձև՝ փորձելով դրանք որպես մահմեդական ճարտարապետական արվեստի նմուշներ ներկայացնել²:

Արցախի տարբեր բնակավայրերում արձանագրված են հուշարձանների համակարգված ոչնչացման բազմաթիվ դեպքեր. մասնավորապես՝

• Ծար գյուղի (Արցախ, Քարվաճառի շրջան) գյուղամեջի 1950-ական թթ. ոչնչացված **Մայր և Սբ. Սարգիս եկեղեցիների**, ինչպես նաև խաչքարերով ընդարձակ գերեզմանոցի հարյուրավոր բեկոր-

¹ 1920 թ. մարտի 23-ին Շուշիում տեղի ունեցած հայերի զանգվածային կոտորածների ժամանակ քաղաքի զգալի մասը հրկիզվեց, այրվեցին և հիմնահատակ ավերվեցին շուրջ 7000 հայկական տներ և մշակութային օջախներ: Մուսավաթական Ադրբեջանի ցեղասպանական քաղաքականությանը Շուշիում զոհ գնաց 8000-ից ավել հայ: Ավելի քան մեկ դար անց՝ 2023 թ. սեպտեմբերին, Արցախի ամբողջական բռնազավթումից և հայաթափումից հետո Ադրբեջանի իշխանությունները շարունակեցին նույն քաղաքական գիծը՝ ոչնչացնելով Ստեփանակերտ քաղաքի Թումանյան փողոցի պատմական շենքերը, որոնք կառուցված էին Շուշիին բնորոշ հայկական ճարտարապետական ոճով:

² Տե՛ս **Բալայան Վ.**, Շուշի. Տեղն ու դերը Հայոց քաղաքակրթական համակարգում, Եր., 2017, 461:

ներ որպես շինանյութ գործածվել են նույն գյուղի աղբբեջանական դպրոցի կառուցման համար³:

- Կուսանաց վանքի կից շինություններն ու տապանաքարերը 1960-ական թթ. կեսերին բուլդոզերներով քանդվել են, իսկ տեղում աղբբեջանցիների համար կառուցվել են բնակելի տներ:

- **Ագուլեցոց Մբ. Աստվածածին** եկեղեցին 1905 թ. հայ-թաթարական ընդհարումների ժամանակ հրկիզվել է, իսկ հետագայում ավիրարածությունների ենթարկվել 1920 թ. մարտին Շուշիի հայկական թաղամասի ոչնչացման ժամանակ: Կիսավեր մնացել է մինչև 1972 թ., երբ աղբբեջանցիները հիմնահատակ քանդել ու տեղը կառուցել են Շուշիի թիվ 4 աղբբեջանական դպրոցը: Ըստ ականատեսների վկայության, եկեղեցու շենքը քանդվել է Այվազ Հուսեյնովի բրիգադի կողմից: Մեծ դժվարությամբ քանդված եկեղեցու քարերը տեղափոխվել ու որպես հիմնաքար են օգտագործել նոր կառուցվող շենքերի համար:

- **Մեղրեցոց Սուրբ Ամենափրկիչ եկեղեցին** 1960-ական թթ. քանդվել, հարմարեցվել և վերածվել է ամառային բացօթյա կինոթատրոնի: Եկեղեցուց մնացել էր միայն խորանը: Ժամանակակիցները պնդում են, որ գրեթե անհնար էր քանդել եկեղեցու ամուր և հաստ պատերը: Խորհրդային տարիներին աղբբեջանական իշխանությունների հրահանգով պայթեցումներով քանդվել է պատերի մեծ մասը, իսկ մեկ մետրից բարձր պահպանված հիմնապատերը ներառել ասֆալտի տակ⁴:

Նյութական ոչնչացումից բացի, տեղի էր ունենում նաև պատմական հիշողության խեղաթյուրում և վերացում, որի նպատակն էր ջնջել հայկական ներկայությունը և տարածաշրջանը ներկայացնել որպես «աղվանական» կամ «թուրքական» մշակույթի օջախ: Այս գործընթացները վկայում են այն մասին, որ խորհրդային իշխանությունների թողտվությամբ և Աղբբեջանի տեղական կառույցնե-

³ Տե՛ս Կարապետյան Ս., Աղբբեջանը քաղաքակրթությունից դուրս, Եր., 2017, էջ 84-85:

⁴ Տե՛ս Հայրապետյան Ա., Շուշի Գիսաստղի դժբախտ ճակատագրով հպարտության քաղաք, <https://step1.am/blog/2024/03/16/12648/>.

րի անմիջական մասնակցությամբ իրականացվում էր հայերի նյութական մշակութային ժառանգության ոչ միայն ոչնչացում, այլև յուրացում:

1950–1980-ական թթ. ընթացքում հայությունը ապրում էր ազգային զարթոնքի նոր փուլ, և Արցախում դրա դրսևորումները դարձան ազգային ինքնության ու մշակութային ժառանգության պահպանման համար մղված պայքարը: Արցախի հայ մտավորականությունը՝ պատմաբաններ, գրողներ, ուսուցիչներ և արվեստաբաններ, հաղթահարելով բռնաճնշումների, հալածանքների և քաղաքական-գաղափարական հետապնդումների հարուցած արգելքները, հնարավոր բոլոր միջոցներով պայքարեց ազգային ինքնության ու մշակութային ժառանգության պահպանման համար՝ ընկալելով այն ոչ միայն որպես գիտաստեղծագործական և գեղագիտական խնդիր, այլև որպես ազգային գոյության երաշխիք: Այդ համոզմունքը կյանքի կոչվեց մի քանի ուղղություններով՝

- Հուշարձանների պահպանման տեղական նախաձեռնություններ, որոնք իրականացվում էին համաժողովրդական ջանքերով:

- Պատմագիտական և ազգագրական փաստագրական հետազոտություններ, որոնց նպատակն էր պահպանել վտանգված հուշարձանների նկարագրությունները, լուսանկարներն ու բանավոր վկայությունները:

- Հասարակական վերահսկողություն և մասնակցություն, որի միջոցով բնակչությունը սկսեց դիտարկել մշակութային ժառանգության պաշտպանությունը որպես ազգային պարտք և հոգևոր դիմադրության ձև:

1960–1980-ական թթ. ազգային զարթոնքը ձևավորեց այն գաղափարական և բարոյական հիմքերը, որոնց վրա հետագայում ծավալվեց Արցախի ազգային-ազատագրական շարժումը: Մշակութային ժառանգության պաշտպանությունը վերածվեց քաղաքական և բարոյական ինքնության խորհրդանիշի, իսկ մշակութային ինքնապաշտպանությունը՝ հոգևոր դիմադրության գործոնի:

Այս շրջանում հասարակական ակտիվությունը նպաստեց ոչն-

չացման դեպքերի նվազմանը և ձևավորեց նոր՝ գիտակցված վերաբերմունք սեփական ժառանգության նկատմամբ: Մշակութային դիմադրությունը վերաճեց ազգային գոյության գաղափարախոսության:

Այսպիսով, Արցախում 1950–1970-ական թթ. արձանագրված մշակութային ոչնչացման գործընթացները փաստում են Ադրբեյջանի իշխանությունների հետևողական քաղաքականությունը, որն ուղղված էր հայկական պատմական հիշողության ջնջմանը և տարածքի ինքնության յուրացմանը: Սակայն, 1960–1980-ական թթ. ազգային զարթոնքը դարձավ այդ քաղաքականության արդյունավետ հակազդեցությունը՝ վերածվելով համազգային շարժման: Այն ոչ միայն կանխեց մշակութային ժառանգության լրացուցիչ կորուստները, այլև ձևավորեց մշակութային դիմադրության գաղափարախոսություն, որն իր հերթին դարձավ Արցախի ազատագրական շարժման նախադրյալներից մեկը:

Արցախի օրինակը ցույց է տալիս, որ երբ ազգային ինքնագիտակցությունը զարթոնում է պատմական վտանգի պայմաններում, մշակութային ժառանգության պաշտպանությունը կարող է վերածվել ոչ միայն ինքնության ու պատմական հիշողության, այլև պետականության պահպանման հիմնական հենասյան:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ավագ Հարությունյան

ԻՆՉՊԵՍ ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՆՇՎԵՅ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ 50- ԱՄՅԱԿԸ 3

Արմեն Մարուքյան

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ
ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՅԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆ
ԱՅԴ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ
ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ 19

Mohammad Reza Alam, Abbas Eghbal Mehran

EXAMINING THE ROLE OF DIASPORA COMMUNITIES IN
THE INTERNATIONAL PROCESS OF RECOGNIZING AND
CONDEMNING THE ARMENIAN GENOCIDE 35

Վահրամ Հովյան

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՃԱՆԱՉՄԱՆ ԵՎ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ՀԱՐՑԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԻՐԱՊԱՇՏՈՒԹՅԱՆ (REALPOLITIK) ԼՈՒՅՍԻ ՆԵՐՔՈ ... 48

Մարիամ Թովակյան

ՖՐԱՆՍԱՀԱՅ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ
ՃԱՆԱՉՄԱՆ ՀԱՐՑՈՒՄ 61

Արծվի Բախչիյան

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՃԱՆԱՉՈՒՄԸ
ՇՎԵԴԻԱՅՈՒՄ 78

Անի Ֆիշենկճեան

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ
ՍՈՒՐԻԱՀԱՅ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒ
ԿՈՂՄԷ 1960-1980-ԱԿԱՆ ԹԹ. 97

Սեդա Օհանեան

ՀԱՅ ԺՈՂՈՎՈՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՕՆՔԸ ԵՒ ՀԱՅՈՑ
ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՃԱՆԱՉՄԱՆ
ԳՈՐԾԸՆԹԱՅԸ ԻՐԱՔՈՒՄ 112

Կարեն Մկրտչյան ԹեՀՐԱՆԻ «ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒ- ԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԻ» ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՁ	123
Նաիրա Պողոսյան ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՅ ՀԱՄԱՅՆՔԸ ԵՎ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱ- ՆՈՒԹՅԱՆ ՈԳԵԿՈՉՈՒՄԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ 140	140
Աննա Ասատրյան ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԾԱՐԾՈՒՄՆԵՐԸ 1965 Թ. ԽՈՐՀՐԴԱՀԱՅ ՄԱՍՈՒԼՈՒՄ.....	156
Արփինե Բաբլումյան ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԼՈՒՍԱԲԱ- ՆՈՒՄԸ ԱՐՏԱՍԱՀՄԱՆՅԱՆ ՄԱՍՈՒԼԻ ԷՋԵՐՈՒՄ. 1965-70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐ.....	172
Մարիամ Հովսեփյան ՀԱՅՈՑ ՊԱՀԱՆՁԱՏԻՐՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔԸ ԼԻԲԱ- ՆԱՆԱՀԱՅ ՄԱՍՈՒԼԻ ԷՋԵՐՈՒՄ («ԱԶԴԱԿ», «ԱՐԱՐԱՏ», «ԶԱՐԹՈՆՔ» ԹԵՐԹԵՐԻ 1965 Թ. ԱՊՐԻԼՅԱՆ ՀՐԱՊԱ- ՐԱԿՈՒՄՆԵՐԻ ՀԻՄԱՆ ՎՐԱ).....	191
Գևորգ Ստեփանյան ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՅ ԴԱՏԻ ԹԵՄԱՆԵՐԻ ԱՐԾԱՐԾՈՒՄԸ «ՍՓՅՈՒՌՔ» ՇԱԲԱԹԱԹԵՐԹՈՒՄ	205
Նարեկ Պողոսյան «ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ» ԵԶՐՈՒՅԹԻ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ.....	221
Վահրամ Բալայան ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ԶԱՐԹՈՆՔԻ ԱԶԴԵՅՈՒԹՅՈՒՆԸ 1960- 70-ԱԿԱՆ ԹՎԱԿԱՆՆԵՐԻՆ ԱՐՅԱԽՈՒՄ ԱԶԳԱՅԻՆ- ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԻ ԾԱՎԱԼՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ.....	235

Իսկուհի Ավանեսյան	
ԱԶԳԱՅԻՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԻ ՇՈՒՐՋ ՊԱՅՔԱՐԻ ՆՈՐ	
ՎԵՐԵԼՔՆ ԱՐՑԱԽՈՒՄ 1980-ԱԿԱՆ ԹԹ.	251
Մհեր Հարությունյան	
ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏԱՐԻՆԵՐԻՆ ԱՐՑԱԽԻ ՀԱՅԵՐԻ	
ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՆ	
«ՄԱՐՏԻԿ» ԹԵՐԹԻ ԷԶԵՐՈՒՄ	266
ՀԱՂՈՐԴՈՒՄՆԵՐ / СООБЩЕНИЯ / REPORTS	
Վահրամ Էմիեան	283
Հովիկ Քասապեան.....	287
Հովիկ Ավանեսով	293

**ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԻ ԱԶԳԱՅԻՆ ԶԱՐԹՈՆՔԸ ԵՎ
ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ
ՃԱՆԱԶՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ**

**ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳԻՏԱԺՈՂՈՎԻ ՆՅՈՒԹԵՐԻ
ԺՈՂՈՎԱԾՈՒ**

(22-23 ԱՊՐԻԼ 2025)

Տպաքանակ՝ 100

infocopy05@gmail.com